

Վ. Ենգիբարյան և Դավթյան Ա. Զախոյան

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁՄԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

(Ըստուժաբառային գաղափարների
արդի շրմականութիւնները
եւ կատարելագործուն
շեռնակարները)

Վ. Ենգիբարյան, Լ. Դավթյան, Ա. Չախոյան

**ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
(ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԿԱՆՆԻՒՐՆԵՐԸ ԵՎ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ)**

Գիտական ձեռնարկը պատրաստվել և հրատարակվել է
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ քեմատիկ հետազոտության շրջանակներում
(ծածկագիր 11-5e179)



Երևան
«Անտարես»
2012

ՀՏԴ 340.6 (479.25)

Գ.Ա.Դ. 67.99 (22)94

Ե 472

Հեղինակներ՝

Վ. Ենգիբարյան

Լ. Դավթյան

Ա. Չախոյան

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

իրավ. գիտ. թեկնածու

իրավագիտության մագիստրոս,

ԵՊՀ դասախոս

Գիտական խմբագիր՝

Վ. Գ. Ենգիբարյան

ԵՊՀ դոցենտ, ՀՀ ԳԱԱ ավագ

գիտաշխատող, իրավ. գիտ. թեկնածու,

դոցենտ

- Ե 472 Դատական փորձագիտության տեսություն (Ծագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները / գիտական ձեռնարկ: Խմբ. Վ. Գ. Ենգիբարյան: - Եր.: Անտարես, 2012.- 264 էջ:

Սույն ձեռնարկը նվիրված է դատական փորձաքննությունների տեսության և պրակտիկայի հիմնախնդիրներին: Աշխատանքում հիմնականում վերլուծված են դատական փորձաքննության հասկացության, փորձագետի կարգավիճակի, հատուկ գիտելիքների կիրառման ձևերի, ինչպես նաև փորձագետի եզրակացության գնահատման գիտական չափանիշների վերաբերյալ հիմնադրույթներն ու մոտեցումները:

Աշխատանքն իրենից ներկայացնում է դատական փորձագիտության բնագավառի հիմնարար հետազոտություն, որն էլ կարող է հիմք հանդիսանալ այս բնագավառում հետազոտ ուսումնասիրությունների համար: Այն կարող է օգտակար լինել դատական փորձագիտության բնագավառում հետազոտություններ կատարող անձանց, փորձագետների, իրավակիրառ և իրավապահ մարմինների աշխատակիցների համար, ինչպես նաև՝ օգտագործվել գիտառումնական և գիտամեթոդական նպատակներով:

ISBN 978-9939-51-362-1

© Ենգիբարյան Վ., 2012

© Դավթյան Լ., 2012

© Չախոյան Ա., 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ I. ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ	
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՍԱՑԱԲԱՆԱԿԱՆ	
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ	
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 8	
§ 1. Հատուկ գիտելիքների և դատական փորձագիտության պատմական զարգացումը Հայաստանում 8	
§ 2. Հատուկ գիտելիքների էությունը և դրանց դերը փորձագետի եզրակացության ձևավորման գործընթացում 27	
§ 3. Հատուկ գիտելիքների կիրառման ձևերի ընդհանուր բնութագիրը 61	
§4. Հատուկ գիտելիքների կիրառման ոչ ավանդական ձևերի ընդհանուր բնութագիրը 80	
ԳԼՈՒԽ II. ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-	
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ	
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 99	
§1. Դատական փորձաքննության և փորձագետի եզրակացության էությունն ու նշանակությունը ՀՀ քրեական դատավարությունում 99	
§ 2. Փորձագետը որպես քրեական դատավարության առանձնահատուկ սուբյեկտ 126	

§3. Փորձագետի եզրակացության գնահատման իրավական կարգավորումը և գիտական չափանիշները.....	145
---	-----

ԳԼՈՒԽ III. ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ	
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՋՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ	
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՇԱՆԿԱՐՆԵՐԸ	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ.....	199
§1. Հատուկ գիտելիքների ու դատական փորձաքննությունների արդյունավետության բարձրացման քրեադատավարական և կրիմինալիստիկական ասպեկտները	199
§ 2. Դատական փորձաքննությունների նշանակման քրեադատավարական հիմնախնդիրներն ու զարգացման ուղղությունները	217
§3. Դատական փորձաքննությունների արդի վիճակը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում	246

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի իրողություն է, որ փորձագիտական հետազոտությունների որակի բարձրացման ու դրանց կատարելագործման համար էական նշանակություն ունի տվյալ ժամանակաշրջանում գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակը, բնական ու տեխնիկական գիտություններում արձանագրված նվաճումները:

Վերը շարադրվածն առավել հրատապ խնդիր է մեր երկրի համար, եթե նկատի ունենանք փորձագիտական գործունեության իրականացման համար միասնական օրենսդրական դաշտի բացակայությունն ու ներկայումս դրա մշակմանն ուղղված նախապատրաստական միջոցառումների իրականացումը:

Ինչ խորք, հանրապետությունում գործող փորձագիտական հաստատությունների կողմից իրականացվում են դատական փորձաքննություններ, ընդ որում, դրանք ընդգրկում են հետազոտությունների բավականին լայն շրջանակ: Այնուամենայնիվ, թե՛ դրանց որակի բարձրացման, նյութատեխնիկական վերագինման, և թե՛ կադրերի վերապատրաստման հարցում դեռևս անելիքները բազմաթիվ են:

Բացի ժամանակակից խնդիրներից, դատական փորձաքննությունների կատարելագործման, դրանց դերի ընդգծման նպատակով, դատական փորձաքննությունների տեսության մեջ դեռևս կան նաև հրատապ լուծում պահանջող դատավարական ու կրիմինալիստիկական բազմաթիվ հարցեր:

Այլ կերպ ասած՝ պատշաճ մակարդակով փորձագիտական հետազոտությունների կատարման համար ի թիվս տեխ-

նիկական ու մեթոդական խնդիրների լուծման, հարկ է նաև հստակեցնել որոշ ընթացակարգային, քրեադատավարական ու կրմինալիստիկական բնույթի հիմնախնդիրներ, որոնք կոչված են կանոնակարգելու ինչպես փորձագիտական հետազոտության բուն ընթացքը, այնպես էլ դրան նախորդող ու հաջորդող փուլերը: Ավելին, քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների կիրառումը փորձագիտական հետազոտությունների կատարման ճանապարհով բավականին նույը կարգավորման և հստակ մոտեցումների ձևավորման կարիք ունի, քանզի դրանց կիրառման արդյունքում ստացվում է քրեադատավարական ապացույցի նոր տեսակ՝ ի դեմս փորձագետի եզրակացության, որն էլ կարող է քրեական գործի լուծման համար վճռորոշ նշանակություն ունենալ:

Այս և փորձագիտական պրակտիկային ու տեսությանը հույզող բազմաթիվ այլ հիմնահարցերի ներկայացմանն ու վերլուծմանն է նվիրված սույն աշխատանքը:

Հետազոտությունը ներառում է հետևյալ կարևորագույն հիմնախնդիրների գիտական ուսումնասիրությունը.

ա) մարդու իրավունքների պաշտպանության և հանցավորության դեմ պայքարի գործում փորձագետի եզրակացության դերն ու նշանակությունը,

բ) փորձագետի եզրակացության ձեռքբերման, գնահատման և օգտագործման հետ կապված ՀՀ օրենսդրության և դատական պրակտիկայի առանձնահատկությունները,

Փորձագետի եզրակացության դատավարական ինստիտուտի վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է գիտատեխնիկական առաջընթացով և հասարակական կյանքի պահանջներով՝ հանցավորության դեմ պայքարի

իսնդիրմերի հաջող լուծման հրատապությամբ ու արդիականությամբ:

Կարծում ենք՝ նշված ինստիտուտի առնչությամբ սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները կամ առանձին հեղինակների տեսակետների կամ օրենսդրական դրույթների վերլուծությունն ու յուրովի մեկնարանումն ինչ-որ չափով կնպաստեն փորձագետի եզրակացության հետ կապված հիմնահարցերի առավել խորը ուսումնասիրմանն ու տեսական գրականության մեջ դրանց կապակցությամբ գիտականորեն հիմնավորված նոր գաղափարների մշակմանը, հնարավորության սահմաններում կաջակցեն քրեադատավարական օրենսդրության բարեփոխումներին՝ փորձագիտական գործունեության և դրա արդյունքի՝ փորձագետի եզրակացության ձեռքբերման, հետազոտման և օգտագործման մասով, ինչպես նաև կնպաստեն քրեական գործերով միջազգային իրավական համագործակցությանն ու արդյունավետ փոխօգնությանը:

Վ. Գ. Ենգիբարյան

*ԵՊՀ դոցենտ, ՀՀ ԳԱԱ ավագ գիտաշխատող,
իրավ. գիտ. քեկնածու, դոցենտ*

**ԳԼՈՒԽ I. ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՍՍՑԱԲԱՆԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸՆՈՒՄ**

**§ 1. Հատուկ գիտելիքների և դատական փորձագիտության
պատմական զարգացումը Հայաստանում**

Հանցագործությունների քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման պատմության ուսումնասիրությունը հնարավորություն կտա ավելի լիարժեք և բազմակողմանի պատկերացում կազմել դրա կիրառման հրատապ խնդիրների վերլուծության համար:

«Հայաստանի Հանրապետությունում կրիմինալիստիկայի գիտության և կրիմինալիստիկական փորձաքննությունների ծագումն ու զարգացումը կապված է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Ռուսանիայի կրիմինալիստ գիտնականների և դատավորագիտական հիմնարկների հետ¹»: Այն, մեր կարծիքով, ունի նաև իր օբյեկտիվ պատճառները, քանի որ կրիմինալիստիկայի գիտության ձևավորման ժամանակաշրջանում Հայաստանը ԽՍՀՄ հանրապետություններից մեկն էր, և ինչպես շատ հարցերում, այսուղ ևս, մեր հանրապետությունը ուղղակի թե անուղղակի կապված էր Ռուսաստանի հետ:

Նախ նշենք, որ թեև Հայաստանում դատական փորձաքննությունների ծագման պատմությունը համարվում է քիչ լուսա-

¹ Տե՛ս *Օհանյան Հևոն* Կրիմինալիստիկան Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007թ., էջ 144:

բանված, սակայն հիմ հայկական ձեռագրերի ուսումնասիրությունը վկայում է, որ այն սկիզբ է առել դեռևս 4-րդ դարում¹:

Հնագույն ժամանակներից պետությունների օրենսդրություններում ցուցումներ են եղել հանցագործությունների քննության և բացահայտման ժամանակ հատուկ գիտելիքների օգտագործման մասին: Օրինակ՝ Հին Հռոմում, Հին Հունաստանում, Չինաստանում, Հնդկաստանում և Հայաստանում մարդկանց մահվան հետ կապված հարցերի քննարկման ժամանակ հրավիրվել են գիտակ անձիք: Հայաստանում հատուկ գիտելիքների զարգացման վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ կան հիմ հայկական ձեռագրերում՝ բժշկարաններում, պատմական աշխատություններում, դատաստանագրքերում:

Հայ մատենագիրների աշխատություններից կարելի է հանգել այն եզրակացության, որ միջնադարյան Հայաստանում դիակի արտաքին զննմամբ որոշվել է ոչ միայն մահվան պատճառը, այլ այն, թե ինչպիսի գործիքի հարվածից է առաջացել մահը: Այդ է վկայում Անիի Սմբատ քագավորի դիակի արտաշիրումը և ուսումնասիրությունը, որը տեղի է ունեցել 989թ.: Ապացուցվել է նաև, որ Սմբատ Բ քագավորը մահացել է բնական մահով:

Դժվար է ասել, թե երբ է Հայաստանում առաջին անգամ քրեական գործերի քննության ընթացքում կիրառվել հատուկ գիտելիքներ: Սակայն տարբեր աղբյուրների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանցում հատուկ գիտելիքների կիրառման վերաբերյալ տեղեկություններ կան պատմաբանների, մատենագիրների աշխատություններում, իրավունքի

¹ Այս մասին առավել մանրամասն տես՝ **Աձաջիւ Ա.Ա.** Կենսագործության ամենամեծ համակարգը՝ ՀՀ օրենսդրությունը՝ 1995 թվականի մայիսի 1-ի օրուն, Տ. 1, էջ 5-10:

տարբեր հուշարձաններում, դատաստանագրքերում, ինչպես նաև տարբեր հետազոտողների աշխատություններում։ Հայաստանի իրավական հուշարձանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նոյնիսկ միջնադարում մեծ տեղ է հատկացվել հատուկ գիտելիքներին, և որ հանցագործությունների քննության ժամանակ լայնորեն օգտագործվել են այլ գիտությունների նվաճումները¹։

Հին հայկական ձեռագրերի, ինչպես նաև տարբեր աշխատությունների ուսումնասիրությունը վկայում է, որ հատուկ գիտելիքների կիրառումը Հայաստանում սկիզբ է առել դեռևս IV դարից, մասնավորապես խոսվում է այն պատմական փաստի մասին, որը վերաբերում է 368թ.-ին, իսկ ավելի որոշակի Տիրան թագավորի սպանությունը, որը կատարվել էր իր որդի Արշակի հրամանով²։

18-րդ դարում Հայաստանում հատուկ գիտելիքների կիրառման առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև հայերեն ձեռագիր իիշատակարանները, որոնք իրականացվում էին գրիչների կողմից։

«Գրիչ անվանում էին անձանց, որոնք արտագրում էին հսկայածավալ մատյաններ, գիտության տարբեր քնազավառի ստեղծագործություններ, բարգմանություններ³։»

Որպեսզի պայքարեն իրենց աշխատանքը «սեփականացնողների» դեմ, գրիչները թողնում էին տարբեր գրառումներ և ծածկագրեր։

¹ Տե՛ս Չախոյան Ա. Հանցագործությունների քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառումը միջնադարյան Հայաստանում, Պետություն և իրավունք, թիվ 2, էջ 56, 62։

² Աձանյի Ա. Ա. Յեռվածքաւության ամենահայտնի գործականությունների մասին, 1995, էջ 5։

³ Տե՛ս Օհանյան Լևոն Կրիմինալիստիկա, Երևան, 2004, էջ 152։

Պրոֆ. Ա. Աբրահամյանը գրում է. «Մագաղաքյա և խունացած թղթերի գորշ էջերի վրա հաճախ կարելի է կարդալ մեր գրիչների սրտառուց գրառումները....«Զեռքս երթայ դառնայ ի հող, զիրքս մնայ յիշատակող¹»:

Նմանօրինակ գրառում է ներկայացնում նաև Հ. Տաշյանը. «Ես Ղազար արեղայս բոլոր գրեցի մինչև հոս, նօսոր ուսայ՝ նօսոր գրեցի²»:

Իսկ որոշ գրիչներ, ինչպես նշված է Տաշյանի օրինակում, բողնում էին իրենց անունները, ուղղակի կամ ծածկագրված: «Գրիչներն իրենց անունները ծածկագրելիս նպատակ ունեին թույլ չտալ, որ տղետ գրիչները ջնջեն իրենց ծածկագրված անունները հիշատակարանից. նրանք ցանկանում էին, որ իրենց անունները հայտնի լինեն միայն գիտուն մարդկանց, որոնց կատարելապես վստահում են և հավատացած են, որ վերջիններս չեն ջնջի մշակների անունները և չեն յուրացնի նրանց «ողորմիսը»³:

Ծածկագրող գրիչները գրության սկզբում կամ վերջում կատարում էին ուշադրություն գրավող կարճ արձանագրություններ՝ էպիգրամներ. օրինակ՝ «Այս է փակագիր, իմաստունն իմանայ և անիմաստն զարմանայ⁴»: «Ով եղբայր, զայս փակագիրս դու կարդա, թե ոչ, փքիտ տուր և հազայ», «թե դպիր ես՝ լնթերցիր, թե տղետ՝ յիմարացիր⁵»:

¹ Տե՛ս *Աբրահամյան Ա.* Հայ գրի և գրչության պատմություն, 1959, էջ 16:

² Տե՛ս *Տաշյան Հ.* Ակնարկ մը հայ հնագրության վրա, էջ 32:

³ Տե՛ս Հայկական պետական մատենադարան, ձեռ. N 7709, էջ 395:

⁴ Տե՛ս *Աբրահամյան Ա.* Հայ գրի և գրչության պատմություն, 1959, էջ 186:

⁵ Տե՛ս *Սարգսյան Հ. Թ.* Սայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Սիսիրարյանց ի Վիեննա, 1914-1924թ., հ. «Ա», էջ 823:

Օրինակները ցույց են տալիս, որ Հայաստանում նման-օրինակ կեղծիքների կատարումը եղել է, բայց պայքարը դրանց դեմ իրականացվել է բանասիրական վերլուծություններով, անեծքով:

18-րդ դարում հանցագործությունների քննության ընթացքում նույնպես կիրառվել են հասուկ զիտելիքներ: Հասուկ զիտելիքները նշված ժամանակահատվածում լայնորեն կիրառվել են նաև հասարակական կյանքում: Օրինակ՝ ձեռագրերի ոչ փորձագիտական, այլ բանասիրական հետազոտություններ կատարվել են համապատասխան մասնագետների կողմից, զուտ զիտական նկատառումներով: Օրինակ՝ Վենետիկի Միսիքարյան մատենադարանի թիվ 1738 Ձեռագրի մասին Վ. Հովհաննիսյանը գրում է. «Ոչ մեկ կասկած կարելի է հարուցանել հիշատակարանի հարազատության մասին. զիրը, մելանը, ձևը բացարձակապես նույնն են բնագրին հետ, նույն անձը գրած է և ուրիշ ոչ մեկը ժամանակակից կամ հետևյալ դարելու»¹:

Որոշ աղբյուրներում նշվում է, որ Հայաստանում մինչև հեղափոխությունը ձեռագրաբանական փորձաքննություններ էին կատարում Երևանի հզական և արական զիմնազիաների ուսուցիչներ Դ. Մ. Պոպովը, Պ. Ա. Կուշմանյանը, Ա. Սահակովը և այլոք²:

¹ Տե՛ս **Պիվացյան Է.Ա.** Միսիքար Գոշի դատաստանագրքի բանասիրական քննություն, Երևան, 1987, էջ 29:

² Տե՛ս Դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորություններն ու կատարելագործման ուղիները Սովետական Հայաստանում. (ՀՀ արդարադատության նախարարության դիմուլի կազմակրոնան 25 ամյակին նվիրված զիտապրակտիկ կոնֆերանսի նյութերը), Երևան 1984թ., էջ 81-82:

Ըստ Բ. Հովհաննիսյանի, 1920թ. հետո էլ Դ. Ս. Պոպովը շարունակել է կատարել ձեռագրաբանական փորձաքննություններ դատաքննչական մարմինների հանձնարարությամբ: Բացի աղբյուրը ցույց չտալուց, զեկուցման հեղինակը չի նշում նաև այդ անձանց կրթական մակարդակի վերաբերյալ տեղեկություններ և այն, թե հիշյալ Պոպովը և Սահակովը տիրապետո՞ւմ էին արդյոք հայոց լեզվին ու գրչությանը: ԵՎ ընդհանուրապես ի՞նչ կրթություն ունեին¹:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում մինչև 20-րդ դարը չհանդիպեցինք կոնկրետ դեպքի, երբ հանցագործությունների քննության ընթացքում հատուկ գիտելիքներով օժտված անձի կողմից կատարված լիներ որևէ տեսակի փորձաքննություն, բայց փաստ է, որ հատուկ գիտելիքները լայնորեն օգտագործվել են այլ ձևերով:

Նման հետևողությունների են հանգել նաև պրոֆեսոր Լևոն Օհանյանը և դոցենտ Վահե Ենգիբարյանը. «Չաստ տեղեկություններ էին հաղորդում ձեռագիր մատյանները, բայց դրանց կատարողին փոխելու և նման այլ հարցերը պարզելու համար չէր խոսվում ոչ ձեռագրերում, ոչ որևէ օրենսդրական ակտում: Մի խոսքով, Հայաստանում չէր գործել ու չէին գործում դատավորակիտական կամ դրա նման որևէ հաստատություն: Մեզ չհաջողվեց պարզել նաև անհատ գիտնականների կողմից կատարված էալիգոտիկ փորձաքննությունների փաստեր²»:

«Փաստորեն մինչև 20-րդ դարը նամակագրերն ու գրասենյակային ծառայողները հետազոտման ընթացքում դեկավար-

¹ Տե՛ս *Օհանյան Լևոն* Կրիմինալիստիկա, Երևան, 2004, էջ. 156:

² Տե՛ս *Օհանյան Լևոն* Կրիմինալիստիկան Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 150:

վում էին սուբյեկտիվ չափանիշներով՝ զննության ընթացքում առաջացած տպավորություններով։ Որևէ փորձաքննություն գիտական մակարդակով չէր անցկացվում, թեև դա ուներ իր օրյեկտիվ պատճառները՝ փորձաքննություն կատարող անձանց մասնագիտական ոչ բավարար պատրաստվածությունը և այլն¹։

Հայաստանում հանցագործությունների քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառումը լայն բափ ստացավ 20-րդ դարի կեսերից։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Հայաստանի երկրորդ Հանրապետությունում Արտակարգ հանձնաժողովները, քննչական խմբերը, բանվորագյուղացիական միլիցիան, քրեական հետախուզությունը լարված պայքար էին տանում հանցագործությունների դեմ։ Սակայն, 20-րդ դարի սկզբին Հայաստանում հանցագործությունների քննության ընթացքում լայնորեն չէր կիրառվում հատուկ գիտելիքները, չկար հանցագործությունների քննությունը՝ կրիմինալիստիկան, չկային ձեռավորված փորձագիտական հիմնարկներ։

1922թ. մայիսի 22-ին հիմնադրվեց դատախազությունը, որպես օրենքների կատարման վրա հսկող մարմին։

Այդ տարիներին վերակազմավորվեցին նախաքննության մարմինները։ Սակայն փորձաքննական մարմիններ, որոնք անհրաժեշտ էին գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում շատ հարցեր լուծելու համար, Հայաստանում չկազմավորվեցին։

¹ Տե՛ս Ենթաքայլան Վ. Գ. «Փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտման պրոբլեմները», Երևան, 2002, ատեմախոս.ի.գ.թ. գիտ. աստիճ. հայցման, էջ 19։

1920թ. դեկտեմբերին Հայաստանում ստեղծվեց առողջապահության ժողովրդական կոմիսարիատ: Այս ժողովունատը օրինականության պահպանման և ամրապնդման նպատակով պահանջում էր Հայաստանում անմիջապես ստեղծել դատաքաղական փորձաքննություններ կատարող հիմնարկ:

1921թ. օգոստոսի 3-ին Արդարադատության նարկունատի երկրորդ քաժինը նամակով դիմեց Առողջապահության նարկունատին, խնդրելով հայտնել, թե Առողջապահության նարկունատում կա արդյոք հատուկ քաժին, որը կարող է զբաղվել բժշկահրավարանական փորձաքննությամբ: Դրան հաջորդեց երկրորդ նամակը, որով խնդրվում էր արագացնել այդ գործի կազմակերպումը:

ՀԽՍՀ Առողջապահության կոմիսարիատի կոլեգիայի օգոստոսի 19-ի և 27-ի որոշումներով 1921թ. Երևանում ստեղծվեց քաղաքային գլխավոր դատա-բժշկական փորձագետի հաստիք: Այդ պաշտոնում նշանակվեց քարձորակ մասնագետ, դատական բժշկության հմուտ կազմակերպիչ Վ. Ի. Կրժիվինսկին, որի վրա դրվեց նաև Հայաստանի բոլոր շրջանների սպասարկումը¹:

ՀԽՍՀ Առողջապահության ժողովուն 1924թ. մարտի 1-ի N 22 հրամանով ստեղծվեց փորձագետների պաշտոններ Հայաստանի շրջաններում աշխատելու համար:

1924-1929թթ.. Հայաստանում գործել են հաստիքով նախատեսված հինգ գավառային դատական բժիշկներ՝ Երևանի, Լենինականի, Էջմիածնի, Նոր-Բայազետի, Փամբակ-Լոռու գավառների:

¹Տե՛ս *Աձնեցի Ի. Դ., Դ ձեռնություն Ա. Ա. Օժճառյութ Ա. Ա.* Ի ժամանակ է աճեց էնօն ծեռ ոճական նույնականություն առ առ 1970, էջ 116-117:

Անհրաժեշտ է նշել, որ այս շրջանում Հայաստանում ինչպես կենդանի անձանց, այնպես էլ դիակների ուսումնասիրությունները պարտադիր են եղել այն դեպքերում, երբ այն կապված է եղել հանցագործության հետ: Սկզբնական շրջանում եզրակացությունները տրվել են մեծ մասամբ դիակների արտաքին գննման հիման վրա, իսկ հետագայում օրինականացվում է դիակների պարտադիր ուսումնասիրությունը բժշկի կողմից: Այդպիսի դիահերձումները ունեցել են դատարժշկական նշանակություն և իրագործվել են ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական բժիշկների կողմից, քննիչի և ընթերակաների մասնակցությամբ, կազմելով համապատասխան դատարժշկական փաստաթուղթ՝ «Վկայական»¹:

Չնայած Ե. Ա. Մակարյանի ուսումնասիրությունների հիման վրա կարելի է պնդել, որ դեռևս 19-րդ դարում հայ մասնագետները դատական բժշկությամբ զբաղվել են ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանի սահմաններից դուրս: 1846թ. Թուրքիայում հիմնվում է Կալբա-Սերայի բժշկական բարձրագույն վարժառունը, որտեղ և գործում է «օրինական բժշկության» (դատական բժշկության) ամբիոն, որը մինչև 1876թ. դեկավարել է հայազգի գիտնական Սերովքե Վիչենյանը: Իսկ 1876թ. մինչև 1894թ. նշված ամբիոնը դեկավարել է Հակոբ Խանդանյանը²:

1927թ. Երևանի պետական բժշկական ինստիտուտի բժշկական ֆակուլտետին կից ստեղծվեց դատական բժշկութ-

¹ Տե՛ս **Վարդանյան Ը. Ա., Նազարեթյան Կ. Լ.** «Դատական բժշկություն», Երևան, 1995, էջ 11:

² Տե՛ս **Մակարյան Ե. Ա.** Նյութեր Հայաստանի դատական բժշկության պատմությունից, ՀՍՍԴ, ԳԱԱ «Տեղեկագիր», N 10, Երևան, 1955:

յան ամբիոն¹: Նշված ամբիոնի վարիչ է նշանակվում Ե. Թ. Շեկ-Հովսեփյանը:

1929թ. ստեղծվում է Հանրապետության Գլխավոր դատաքաղական փորձագետի պաշտոնը, որը մինչև 1939թ. գրադեցրել է պրոֆեսոր Ե. Թ. Շեկ-Հովսեփյանը: Պրոֆեսոր Ե. Թ. Շեկ-Հովսեփյանը բացի դատաքաղական ոլորտից, գրադադարի նաև կրիմինալիստիկական որոշակի հարցերի ուսումնասիրմամբ:

Դա է վկայում պրոֆեսոր Ե. Թ. Շեկ-Հովսեփյանի կողմից հրատարակված կրիմինալիստիկական բնույթի մի քանի հոդվածներ, օրինակ. «Փոքր տրամաչափի Զ 03-7 հրացանից կրակոցի տարածությունը որոշելու հարցի մասին», «մատերիանտեսանելի դրոշմների հայտնաբերման հարցի մասին», «պոկված թերթերի նույնացման հարցի մասին»:

«Այս հոդվածները, թեև պարզունակ, բայց պետք է համարել կրիմինալիստիկական բնույթի առաջին աշխատանքները մեր Հանրապետությունում²»:

«Պրոֆ. Ե. Թ. Շեկ-Հովսեփյանի գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում նրա գիտական ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են դատական բժշկության և քրեազիտության զանազան հարցերին³»:

Շեկ-Հովսեփյանին փոխարինեց (նա մահացավ 1939թ.) Վ. Կրժիվինսկին, իսկ վերջինիս մահանալուց հետո՝ 1940թ.-ին, հանրապետության Գլխավոր դատաքաղական փորձագետի

¹ Տե՛ս *Աձեռնություն Խ. Ղ. Ղ Ճեռաջյիւղ Ա. Ա., Օժժոնություն Ա. Ն. Ղ* ։ Ճանաչության մեջ ներառված է աճած աճած նույնականությունը, Աճած աճած, 1970, էջ 117:

² Տե՛ս *Օհաճյան Լևոն* Կրիմինալիստիկա, Երևան, 2004, էջ 155:

³ Տե՛ս *Վարդապետյան Շ. Ա., Նազարեթյան Կ. Լ.* «Դատական բժշկություն», Երևան, 1995, էջ 12:

պաշտոնում նշանակվեց Ալեքսանդր Ադամի Հովսեփյանը:
Վերջինս, բացի դատարժչկական գործունեությունից, զբաղ-
վում էր նաև իրեղեն ապացույցների հետազոտություններով:

Ընդգծենք, որ կենսարանական և քիմիական բնույթի իրե-
ղեն ապացույցները լաբորատոր պայմաններում Հայաստա-
նում հետազոտվել են Ա. Ա. Հովսեփյանի կողմից, կրիմինալիս-
տիկական բնույթի Էպիզոտիկ հետազոտությունները՝ Ե. Թ.
Շեկ-Հովսեփյանի կողմից:

1953թ. Ա. Ա. Հովսեփյանի մահվանից հետո Հանրապե-
տության գլխավոր դատարժչկական փորձագետ նշանակվեց
պրոֆեսոր Ն. Մ. Ավագյանը, ում անվան հետ է կապվում Հա-
յաստանի Հանրապետությունում դատական բժշկության հե-
տագա զարգացումը: Նրա ջանքերով ստեղծվեց Հանրապե-
տության դատական բժիշկների և կրիմինալիստների միությու-
նը:

Դատարժչկական փորձաքննությունների լաբորատորիա-
յում մի քանի քաժինների թվում գործում էր նաև ֆիզիկոսեխի-
նիկական բաժնամունք, որը կազմակերպվեց 1954թ. և ղեկա-
վարում էր Ռ. Այղինյանը, (հետազոյում՝ Ս. Սարգսյանը և Գ.
Տեր-Մովսեսյանը):

Կրիմինալիստիկական լաբորատորիաների բացակայութ-
յունը վկայում էր նաև գիտության բացակայությունը, իսկ դրա
անհրաժեշտությունը ակնհայտ էր և անկասկած կարող էր
հանգեցնել ինչպես գործերի քննության բարդությունների,
այնպես էլ, վերջին հաշվով, դատական սխալների:

Էպիզոտիկ փորձաքննություններ դատական ձեռագրաբա-
նության գծով Խորհրդային իշխանության տարիներին հանձ-

նարարվել է հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱ Ակադեմիկոս Սկրտիչ Արամի Մազմանյանին:

Փաստորեն՝ մինչև Երևանի պետական համալսարանի կրիմինալիստիկայի գիտահետազոտական լաբորատորիայի կազմավորումը Հայաստանում Կրիմինալիստիկական փորձաքննություններ թեև կարող էին նշանակվել և հանձնարարվել այս կամ այն բնագավառում աշխատող մասնագետների, սակայն որոշակի արդյունք չէր լինում՝ աշխատող-մասնագետների անբավարար հատուկ գիտելիքներ ունենալու պատճառով։ Այս առումով հարկ ենք համարում մեջքերել ՀՀ դատական փորձաքննությունների գիտահետազոտական լաբորատորիայի պետի տեղակալ (1984թ.) Հ. Բ. Գեղամյանի ելույթից մի հատված։

«Ես երկար տարիներ քննիչ եմ եղել և շատ լավ եմ հիշում (լավ հիշում են նաև իմ սերնդի քննիչները), որ այն ժամանակ նույնիսկ ամենաավանդական փորձաքննություններ նշանակելու հնարավորություն չունեինք՝ համապատասխան մասնագետների պակասության պատճառով։ Օրինակ՝ դատաձեռագրային փորձաքննությունների կատարումը մենք հանձնարարում էինք կուսակցության արխիվի վարիչ Անուշավան Թումանյանին, որը շնայած իր մեծ բարեխսդությանը, առաջադրված հարցերին որոշակի պատասխան տալ չէր կարողանում¹։»

1920-ական թվականներին ներքին գործերի քրեական հետախուզության վարչությունում գործում էր գիտատեխնիկա-

¹ Տե՛ս Դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները ու կատարելագործման ուղիները սովետական Հայաստանում, Երևան 1984թ., էջ 26։

կան խումբ, որն իրականացնում էր մասնագետի այժմյան գործառույթները: 1940-ական թվականների սկզբներին այդ գիտատեխնիկական խումբը վերակազմավորվեց գիտատեխնիկական բաժնի (այսուհետ՝ ԳՏԲ):

ԳՏԲ-ն նույնպես, իրականացնում էր մասնագետի ֆունկցիաներ: Այդտեղ փորձաքննություններ չեն կատարվում: Այդ բաժնի աշխատակիցներն օգնում էին քննիչներին՝ քննչական գործողություններ կատարելիս հետքերի, իրեղեն ապացույցների հայտնաբերման, ֆիքսման, վերցման, հարցերում: ԳՏԲ-ն ղեկավարում էր Սերգեյ Սմակովինը: Այդ բաժինը, որը հետագայում վերանվանվեց օպերատիվ-տեխնիկական բաժին, փաստորեն համարվում է առաջին կրիմինալիստիկական հիմնարկը Հայաստանի Հանրապետությունում:

Դատա-փորձագիտական լաբորատորիաների բացակայությունը բացասաբար էր անդրադառնում դատա-քննչական մարմինների գործունեության վրա և դատական փորձաքննությունների իրականացման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում ակնհայտ էր և բացակայությունը անկասկած կարող էր հանգեցնել ինչպես գործերի քննության բարդությունների, այնպես էլ դատական սխալների:

Այս հանգամանքով էլ պայմանավորված, օրինակ, արյունուտ բվացող հագուստը և այլ իրեղեն ապացույցները վերցվում էին, կցվում քրեական գործին և զնահատվում էին միայն զննությամբ, ինչը, բնականաբար, կարող էր առաջացնել ոչ ճիշտ հետևություններ: Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական հիմնարկների և համապատասխան փորձագետ կադրերի բացակայությունը բացասաբար էր անդրադառնում քննչական և դատական մարմինների աշխատանք-

Աերի վրա: Դատա-քննչական մարմիններն առանձին կարևոր գործերով, այն էլ բացառիկ դեպքերում, դիմում էին Թրիլիսի լաբորատորիային, իսկ փորձաքննության ենթակա շատ նյութեր մնում էին անկատար:

«Զնայած ճրա, որ դատարժշկական ծառայությունը հագեցված չէր որևէ ապարատով, չկային կրիմինալիստիկական լարորատորիաներ, բայց և այնպես, արյունոտ թվացող հագուստը և այլ իրեղեն ապացույցները վերցվում էին, մտցվում ակտի մեջ և ներկայացվում էին համապատասխան դեկավարությանը, գործին կցելու համար: Այդ իրեղեն ապացույցները զնահատվում էին միայն զննությամբ և, իհարկե, կարող էին առաջացնել ոչ ճիշտ հետևություններ¹:»

Հանցավորության դեմ տարվող պայքարում և հանցագործներին հայտնաբերելու համար առաջնային խնդիր է դառնում գիտության և տեխնիկայի նվաճումների օգտագործումը:

Այդ հարցն իր լուծումն ստացավ 1959թ., երբ Հայաստանի խորհրդային հանրապետության կառավարության ապրիլի 25-ի №149 որոշմամբ Երևանի պետական համալսարանում կազմակերպվեց կրիմինալիստիկայի գիտահետազոտական լաբորատորիա: Այս կապակցությամբ Բ. Մ. Հովհաննիսյանը գրում է. «1959թ. դեկտեմբերը մեր լաբորատորիայի համար պատմական ամիս էր. այդ ժամանակ կազմակերպչական աշխատանքները հիմնականում ավարտվեցին. լաբորատորիան պատրաստ էր գործելու:

¹ Stú Í ÷áðé èñðí ðé è ñóáá í ï é ì áäèöéí û Áðì áí èé, tq 99:

Դեկտեմբերին կազմվեցին լաբորատորիայի կանոնադրությունը, փորձաքննությունների մասին հրահանգը և այլ փաստաթղթեր, ընդունվեց իրավաբանական ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը, որով վստահվեց և թույլատրվեց լաբորատորիայի երիտասարդ ընկերներին սկսելու փորձաքննական աշխատանքները¹: 1959թ. դեկտեմբերի 8-ին Հայաստանի խորհրդային հանրապետության կառավարությունը նոր որոշում է ընդունում՝ Գիտահետազոտական կրիմինալիստիկական լաբորատորիայում կազմակերպել ավտոտեխնիկական փորձագետների խումբ՝ ավտոճանապարհային պատահարների գործերով փորձաքննություններ կատարելու համար: «Ավելի ուշ, 1959թ. դեկտեմբերի 8-ին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը երկրորդ որոշումն ընդունեց՝ Գիտահետազոտական կրիմինալիստիկական լաբորատորիայում կազմակերպել ավտոտեխնիկական փորձագետների խումբ՝ ավտոճանապարհային պատահարների գործերով փորձաքննություններ կատարելու համար²»:

Լաբորատորիայի դեկավար նշանակվեց իրավաբանական ֆակուլտետի ուսումնական կարինետի ավագ լաբորանտ, ՆԳՆ բազմափորձ նախկին օպերատիկ աշխատող, կենսաբուժակի անցած ներքին ծառայության մայոր՝ Բագրատ Մարգարի Հովհաննիսյանը: Փորձագետներ նշանակվեցին 1959թ.

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Բ. Մ.** Գիտահետազոտական կրիմինալիստիկական լաբորատորիայի գոյության երեք տարին և մեր հետագա խնդիրները, «Դատական փորձաքննության հարցեր», Ժողովածու 1, Երևան, 1962, ԵՊՀ հրատարակչություն, էջ 4:

² Տե՛ս **Հովհաննիսյան Բ. Մ.** Գիտահետազոտական կրիմինալիստիկական լաբորատորիայի գոյության երեք տարին և մեր հետագա խնդիրները, «Դատական փորձաքննության հարցեր», Ժողովածու 1, Երևան, 1962, ԵՊՀ հրատարակչություն, էջ 3-4:

ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտներ Լ. Օհանյանը, Ռ. Բաբաջանյանը, Վ. Սահակյանը. «Լաբորատորիայի կազմակերպման ու նրա հետագա գործունեության ընթացքում իրենց եռանդուն աշխատանքով աչքի են ընկել երիտասարդ մասնագետներ, իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտներ Լ. Օհանյանը, Վ. Սահակյանը.....¹»:

Լաբորատորիան կատարում էր երեք հիմնական ֆունկցիա, այն է՝ գիտահետազոտական, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ուսանողների ուսուցում և դատաքննչական օրգանների պահանջով փորձաքննությունների կատարում: ՀՀ - Գիտահետազոտական կրիմինալիստիկական լաբորատորիա փորձաքննության համար նյութեր էին ուղարկվում Աղբեջանից և Վրաստանից. «Փորձաքննության համար բազմաթիվ նյութեր են ստացվում ոչ միայն մեր ռեսպուբլիկայից, այլև Աղբեջանից և Վրաստանից:

Այժմ լաբորատորիայում կատարվում են ձեռագրային, տեխնիկական, հետքաբանական, ձգաբանական, ֆիզիկական փորձաքննություններ, շուտով կատարվեն նաև քիմիական և այլ փորձաքննություններ: Համեմատաբար շատ տեղ են գրավում ձեռագրային և ավտոտեխնիկական փորձաքննությունները²:

«Սկզբնական ժամանակաշրջանում լաբորատորիայում կատարվում էին հիմնականում ձեռագրային, տեխնիկական, հետքաբանական, ձգաբանական, ավտոտեխնիկական և այլ

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 8:

² Տե՛ս **Հովհաննիսյան Բ. Մ.** Գիտահետազոտական կրիմինալիստիկական լաբորատորիայի գոյության երեք տարին և մեր հետագա խնդիրները, «Դատական փորձաքննության հարցեր», Ժողովածու 1, Երևան, 1962, ԵՊՀ հրատարակչություն, էջ 6:

տեսակի փորձաքննություններ: Լաբորատորիայում Լ. Պ. Օհանյանի և Ռ. Գ. Բաբաջանյանի ջանքերով հաջողությամբ կատարվել են նաև փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկան փորձաքննություններ¹:

Հայաստանի Հանրապետությունում առաջին փորձաքննությունը՝ որոշակի եզրակացությամբ, իրականացվել է 1960թ.՝ վաստակաշատ գիտնական, Հայաստանում կրիմինալիստիկայի գիտության նախահայր և հիմնադիր, պրոֆեսոր Լ. Պ. Օհանյանի կողմից: Դա անձի նույնացումն էր ստորագրությամբ: Այն իրականացվեց որոշակի եզրակացությամբ:

Լ. Օհանյանի կողմից են կատարվել նաև ՀՀ ԳԱ-ի Հին Զեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի պատվերով կատարված փորձաքննությունը, որն իրականացվեց ուլտրամանուշակագույն ճառագայթների կիրառմամբ և գոհունակությամբ ընդունվեց Մատենադարանի դեկավարության կողմից, և հայ մեծ վիպասան Ռաֆֆուն վերագրվող գրչի վրա եղած գրառումների նույնացման հետազոտությունը:

Պետք է նշել, որ Հայաստանում դատական փորձաքննություններին վերաբերվող առաջին գիտական գեկուցումը նույնպես կարդացվել է Հայաստանում այս գիտության հիմնադրի կողմից՝ «Դիֆուզիոն պատճենահանման մեթոդի կիրառումը փաստաթղթերի հետազոտության ընթացքում» թեմայով:

¹ Տես Ենթերարյան Վ. Գ. «Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման ալորելեմնները», Երևան, 2002, ատենախոս.ի.գ.թ. գիտ. աստիճ. հայցման, էջ 37:

Նախաքննության մարմինները և դատարանի պրակտիկ աշխատողները գնալով ավելի հաճախ էին դիմում փորձագետ-կրիմինալիստների օգնությանը: Կրիմինալիստիկական մեթոդները կիրառվում էին ոչ միայն հանցագործությունների քննության, հանցագործների հետախուզման և հաշվառման նպատակով, այլև քաղաքացիական գործերի դատական լուծման, իսկ առանձին դեպքերում ոչ դատական բնույթի խնդիրների լուծման, օրինակ՝ պատմական փաստաթղթերի հետազոտման:

Տարիներ անց լաբորատորիայում սկսեցին կատարվել նաև այլ փորձաքննություններ. բացի ավտոտեխնիկականից ավելացան դատա-հաշվապահական, իրեղեն ապացույցների ֆիզիկո-քիմիական հետազոտություններ և այլն: Վերջինս կազմակերպվեց 1962թ. և օգնում էր նաև կրիմինալիստիկական որոշ փորձաքննությունների լուծմանն առաջադրվող հարցերը պարզաբանելուն (օրինակ՝ կրակոցի վաղեմության պարզաբանում և այլն): Բաժինը դեկավարում էր քիմիկ-տեխնոլոգ Գ-րիշա Կարապետի Հովհաննիսյանը՝ նշված փորձաքննությունների սկզբնավորող Հայաստանում: Հաշվի առնելով լաբորատորիայի բովանդակային փոփոխությունը, այն վերանվանվեց «դատական փորձաքննությունների գիտահետազոտական լաբորատորիա (ԴՓԳՀՀԼ)»:

Ստեղծման առաջին տարիներին ԴՓԳՀՀԼ-ում արդեն կատարվում էին բարդ և այնպիսի հետազոտություններ, որոնցից շատերը առաջինն էին Հանրապետության փորձագիտական պատմության մեջ: Այդպիսիք էին.

1. *Տեսանելի ճառագայթներով հարուցված լումինեսցենցիա-յի պատկերի լուսանկարումը ինֆրակարմիք ճառագայթնե-րում,*
2. *Լուսանկարահանում անդրադարձող ուլտրա-մանուշակա-գույն ճառագայթներում և ուլտրա-մանուշակագույն ճառա-գայթներով հարուցված լումինեսցենցիայի պատկերի լուսանկարում,*
3. *Ստվերային լուսավորությամբ վերծանված ռելեֆային անգույն տեքստ,*
4. *Ճեռագիր տեքստ, գրված «փնճնասպան» կնոջ անունից, որում նա խնդրում էր փնճնասպանության համար ոչ մեկին չմեղադրել: Փորձագիտական հետազոտմամբ պարզվեց, որ ճեռագիրը կատարված էր ամուսնու կողմից՝ կնոջ ճեռագրին և գրավոր խոսքին նմանեցնելով:*

ՀՀ Գիտահետազոտական կրիմինալիստիկական լաբո-րատորիան իրականացրեց կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքներ, ինչպես նաև քննչական և դատական մար-մինների պահանջով փորձաքննություններ կատարեց քրեա-կան և քաղաքացիական գործերով:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Հայաստանում հանցա-գործությունների քննության ժամանակ հատուկ գիտելիքների կիրառման դերն ու նշանակությունը 20-րդ դարում զգալիորեն բարձրացավ՝ առանց դրանց կիրառման գրեթե անհնարին էր պատկերացնել որոշակի խումբ հանցագործությունների բա-ցահայտումը:

Իսկ արդեն նշված դարաշրջանի երկորդ կեսին գործում էին մի քանի փորձագիտական հիմնարկներ, որոնք իրենց աշ-խատանքով նպաստում էին այլիսի հանցագործությունների բացահայտմանը, ինչպիսիք անհնար էր բացահայտել որևէ այլ կերպ: Ավելին, 1961թ. քրեական դատավարության օ-

թենսօքրով ներմուծվեց հանցագործությունների քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման նոր ինստիտուտ, այն էր՝ մասնագետի մասնակցությունը քրեական դատավարությանը. «Ռեսպուբլիկայի 1961թ. Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է նաև մասնագետի մասնակցությունը քրեական դատավարությանը: Այս ինստիտուտը առաջին անգամ է իր օրենսդրական ձևակերպումը ստանում: Բայց, չնայած դրան, լայն տարածում է գտել պրակտիկայում¹»:

§ 2. Հատուկ գիտելիքների էռթյունը և դրանց դերը փորձագետի եզրակացության ձևավորման գործընթացում

Հանցագործությունների քննության բարձր որակի ապահովման կարևորագույն պայմաններից է ապացույցների հավաքման ու գնահատման ընթացքում հատուկ գիտելիքների լայն օգտագործումը: Բազմաթիվ հանցագործություններ հաջողվում է բացահայտել քննության ընթացքում հատուկ գիտելիքների արդյունավետ կիրառման միջոցով:

Հայտնի է, որ դատավորական գործունեությունն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառման ճանապարհով, որոնք հմարավորություն են տալիս բացահայտելու գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանք-

¹Տե՛ս **Պիվազյան Հ. Մ.** Փորձաքննությունն ըստ Հայկական ՍՍՌ քրեական դատավարության նոր օրենսգրքի, Դատական փորձաքննության հարցեր, Ժողովածու I, 1962, էջ 15:

Աեր, որոնց բացահայտումն անհնարին կլինի առանց այդպիսի գիտելիքների կիրառման: Ընդ որում, «հատուկ գիտելիքների» էության բացահայտումը հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում փորձաքննության նշանակման, կատարման և փորձագիտական եզրակացության օգտագործման գործում, *իմչը պայմանավորված է «հատուկ գիտելիքների» ճիշտ և միանշանակ ընկալմամբ ու դրանց նշանակության համընդիանուր բնույթով:*

Իսկ «հատուկ գիտելիք» հասկացության ճիշտ ընկալումը կարևոր է ինչպես փորձագիտական խնդիրների բարեհաջող լուծման, այնպես էլ քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների՝ տարբեր դրսերումներով կիրառման համար: Հատուկ գիտելիքների արդյունավետ և ճիշտ կիրառումը՝ քննչական և դատական սխալներից խուսափելու տեսանկյունից, մեծ նշանակություն ունի ինչպես օրինականության ապահովման, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության համար:

Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում, երբ իրավական համակարգի արդյունավետությունը սերտորեն կապված է դատավարության օբյեկտիվացման հետ, հատուկ գիտելիքների դերն էականորեն աճում է ոչ միայն հանցագործությունների բացահայտման և քննության գործում, այլ նաև քաղաքացիական և վարչական դատավարություններում՝ քաղաքացիական և վարչական վեճեր լուծելիս: Բացի դրանից, դատավարության ոլորտում ինտեգրվում են արագ զարգացող

գիտության և տեխնիկայի նորանոր բնագավառներ¹, որպիսի հանգամանքը չի կարող չանդրադաշնալ «հատուկ գիտելիքներ» հասկացության և դրա էության վրա: Հատկապես քրեական գործերով միջազգային իրավական համագործակցության խորացումն ու այդ համագործակցության նորանոր եղանակների զարգացումը պահանջում են հատուկ գիտելիքների էության և հիմնական բնութագրիչների վերանայում ու կատարելազործում:

Նախ, հարկ է նշել, որ «հատուկ գիտելիքներ» հասկացությունն ունի *թե՛ դատավարական և թե՛ ճանաչողական նշանակություն*: Հատուկ գիտելիքներ ասելով՝ օրենսդրությունը, մի կողմից, դատավարության սուբյեկտին՝ փորձագետին տարբերակում է այլ սուբյեկտներից, մյուս կողմից՝ այն վարույթն իրականացնող մարմնին իրավունք է վերապահում որոշակի բնագավառի հարցերի լուծման գործում ներգրավել հատուկ գիտելիքների տիրապետող անձի՝ փորձագետի: Բացի դրանից, հատուկ գիտելիքների կիրառման արդյունքում գործով ձեռք բերված ապացույցների շրջանակը լրացվում է դատավարական այնպիսի փաստաթղթով, ինչպիսին փորձագետի եզրակացությունն է:

Հատուկ գիտելիքների բնագավառը կանխորոշում է նաև փորձաքննության դասը, տեսակը և ենթատեսակը՝ կախված կիրառման ենթակա հատուկ գիտելիքների շրջանակից, ինչն էլ իր հերթին ունի էական գործնական նշանակություն, քանի որ փորձաքննության տվյալ տեսակի միջոցով լուծվող հարցե-

¹ Տե՛ս **ԹԻՌՅԵՒՇԱՀԵՂ Ա.Պ.** Նվազագույնը թիվ 6117 վեհափոխական մասին մասնակից պատրաստության մասին դատավարական կառավագանքը՝ կապված կիրառման ենթակա հատուկ գիտելիքների շրջանակից, ինչն էլ իր հերթին ունի էական գործնական նշանակություն, քանի որ փորձաքննության տվյալ տեսակի միջոցով լուծվող հարցե-

<http://www.lawmix.ru/comm.php?id=6117>, 14.07.2011:

թի շրջանակով է պայմանավորված անհրաժեշտ հատուկ գիտելիքների այն բնագավառը, որոնք ենթակա են կիրառման այդ հարցերի լուծման համար:

Ծանաչողական առումով հատուկ գիտելիքները գիտության, տեխնիկայի, արհեստի կամ արվեստի այս կամ այն բնագավառի տվյալներն են, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս ստանալ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական տվյալներ¹:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ քր. դատ. օր.-ի 85-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական գործով վարույթին իրավաբանական հարցերով փորձագետ չի ներգրավվում»:

Քրեադատավարական, դատափորձագիտական և կրիմինալիստիկական գրականության մեջ բազմիցս փորձեր են արվել կոնկրետացնելու «հատուկ գիտելիքներ» հասկացությունը, սակայն այդ փորձերը մինչ այսօր հաջողության չեն հասել: Այս առումով, փորձաքննության էության, քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզաբնաման գործում փորձագետի եգրակացության ոերի բացահայտումն և դրա գնահատման հետ կապված ամենաբարդ հարցերից մեկը «հատուկ գիտելիքներ» հասկացության բացահայտումն է²:

¹ Մանրամասն տե՛ս **Ենթաքարյան Ա.Գ.** Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Եր., 2007, էջեր 30-38:

² Տե՛ս **Օճախօթեալ Լ.Է.** Նոճական նա ան էաշանական պարագաների մասին, ՀՀ օրենսդրություն, 2004 թ., էջեր 190-193:

Իրավաբանական գրականության մեջ, ավանդականորեն, «հատուկ գիտելիքներ» եզրույթի ներքո հասկացվում է գիտության կամ տեխնիկայի, արվեստի կամ արհեստի կոնկրետ բնագավառում տեսական և գործնական գիտելիքների համակարգը, որոնք ձեռք են բերվել մասնագիտական փորձի, հատուկ պատրաստվածության կամ այլ ճանապարհով։ Ընդ որում, ըստ մի շարք հեղինակների՝ դրանց մեջ չեն մտնում ինչպես հանրահայտ, այնպես էլ իրավաբանական գիտելիքները¹։

Հարկ է նշել, որ հատուկ գիտելիքներին այս կամ այն շափով կարող են տիրապետել դատավորը, քննիչը, սակայն ՀՀ - գործող քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ դա որևէ նշանակություն չունի փորձաքննության նշանակման անհրաժեշտության հարցում, քանի որ միայն փորձագետի եղակացությունը կարող է համարվել ապացույց, իսկ հատուկ գիտելիքների կիրառման դատավարական ձևերից մեկն էլ հենց փորձաքննության նշանակումն ու կատարումն է²։

¹ Տե՛ս *Անձնության օրենսդրությունը՝ ՀՀ Ազգային պատասխանական օրենսդրություն*, 2003 թվականի հունվարի 1-ի օրը, էջեր 5-7։

² Նշենք, որ տարրեր երկրներում այդ հարցը տարրեր կերպ է լուծվում։ օրինակ՝ Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի §244-ի 4-րդ մասի համաձայն՝ փորձաքննության նշանակման մասին միջնորդությունը կարող է մերժվել, եթե դատավորը ումի համապատասխան հասուն գիտելիքներ, որոնք կարող են կիրառվել նշանակվելով փորձաքննությունում։ Տվյալ դեպքում դատավորը համատեղում է ինչպես դատավորի, այնպես էլ փորձագետի գործառույթները, քանի որ իր հատուկ գիտելիքների կիրառմամբ գնահատում է գործի լուծման համար նշանակություն ունեցող այնպիսի հանգանանքներ, որոնց բացահայտումը պահանջում է փորձաքննության կատարում։ Մինչդեռ ՀՀ-ում, եթե անզան դատավորը տիրապետում է համապատասխան հասուն գիտելիքների, միևնույն ժամանակ կատարում է փորձաքննությունը կատարում է միայն փորձագետը։ ՀՀ դր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «... Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետների, ընթերակաների հասուն գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»։

Գրականության մեջ «հատուկ գիտելիքներ» բառակապակցության փոխարեն հանդիպում է նաև «հատուկ իմացություն» եզրույթը, որը, որոշ հեղինակների կարծիքով (Վ.Կ. Լիսիչենսկո, Վ.Վ. Ցիրկալ և այլոք), համարժեք է «հատուկ գիտելիքներ» եզրույթին: Սակայն մի շարք հեղինակներ ել (Տ.Վ. Սախնովա, Վ.Ն. Մախով և որիշներ) «հատուկ գիտելիքներ» եզրույթի օգտագործումն ավելի ճիշտ են համարում:

Հենակետային է համարվում Ա. Եյսմանի բնորոշումն այն մասին, որ հատուկ են համարվում հանրամատչելի, զանգվածային տարածում ունեցող գիտելիքների սահմաններից դուրս գտնվող գիտելիքներ, այսինքն՝ գիտելիքները, որոնց տիրապետում է մասնագետների նեղ շրջանակ¹: Զնայած այս հենակետային բնորոշմանը, այնուամենայնիվ, պարզ չէ, թե որոնք են «հանրամատչելի, զանգվածային տարածում ունեցող գիտելիքների սահմաններից դուրս գտնվող գիտելիքները», և որոնք են դրանց սահմանազատման չափանիշները:

Յու.Կ. Օրլովը, Ե.Ռ. Ռոսինսկայան համարում են, որ հատուկ գիտելիքները պետք է դուրս լինեն, այսպես կոչված, հանրահայտ և կենցաղային գիտելիքների սահմաններից: Սակայն նման մոտեցումն էլ չի կարող լիովին ճիշտ համարվել, քանի որ ժամանակի ընթացքում «հանրամատչելի գիտելիքները» կարող են դառնալ «հատուկ», և՝ ընդհակառակը²:

«Հանրամատչելի» և «հատուկ գիտելիքների» հարաբերակցությունն իր բնույթով փոփոխական է, քանի որ դա կախված է հասարակության զարգացման մակարդակից և հատուկ

¹ Տե՛ս *Եզրի ձև Ա.Ա. Չառչիշվիլի համարում* 1967, էջեր 90-91:

² Տե՛ս *Ահաջոցի Ձ.Ա., Ահաջոցի Ռ.Ն., Էլոճօքի Ռ.Ա.* Նույնականացնելու ամենահայտնի աղյուսակը 1999 թվականի դրույթում: Տե՛ս էջեր 7-8:

գիտելիքների հնարավոր ինտեգրման ինտենսիվությունից: Գիտատեխնիկական նվաճումները, գիտության տարբեր ոլորտների զարգացումը և խորացումը հանգեցնում է նրան, որ նախկինում հատուկ համարվող գիտելիքները հասանելի են դառնում լայն շրջանակի անձանց, իսկ դա էլ իր հերթին ենթադրում է հատուկ գիտելիքի «հասարակայնացում»:

Ի հակասություն Ա. Էյսմանի բնորոշման, Կ.Ա. Բուրլակո-վը նշում է, որ Ա. Էյսմանի նշած հանգամանքը (ըստ Ա. Էյսմա-նի՝ «հասուկ են համարվում այն գիտելիքները, որոնց չի տի-րապետում փորձաքննությունը նախաձեռնողը՝ դատարանը, քննիչը, գործին մասնակցող անձինք»¹) չի կարող ճիշտ հա-մարվել, քանի որ, որպես կանոն, նախաձեռնող մարմինը միշտ էլ տիրապետում է փորձաքննության վերաբերյալ որոշակի գիտելիքների, որոնք, սակայն, կրում են կենցաղային բնույթ²:

Զ.Մ. Սոկոլովսկին գտնում է, որ հատուկ գիտելիքների սահմանները որոշվում են՝ ելեկտր կոնկրետ քննարկվող դեպքից³: Յու.Գ. Կորխունովը հատուկ գիտելիքներ է համարում գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստի այն իմացությունները, որոնք կիրառվում են ապացուցման գործընթացում⁴:

¹ Ավելի մանրամասն տեսն *Yēnī at A.A.* Ծահեթ-ակ էա յենի ածօ. Նօծութեան է իաօ-ի ա ի պի լ հակ էա. Լ ., 1967, էցեր 89-91:

2 **Stiu Aðóðæðra E.A.** Þenni eru ááí éa níi aðóðæðví ûðo ói áðði áðaa-áñneðo i í ci áí ée ía ía ðáðaa-áððæða-éu ñeáðnóða-é, I .: Eç-áððæðu-ñóða- Ñaððo-i áñei áí ói éa-áððn-ðóða-ó, 1982, tø 13-14; **Olli-ri Á.A.** I íi ýðea è níi áððæðai éa níi aðóðæðví ûðo i í ci áí ée a óáí ei áí i í ðið oðanáa // <http://www.lawmix.ru/comm.php?id=6117> 14.07.2011:

⁴ yæðar ce. Aðóriðað. aðm. a. þ. T. Guðmundar, 1968, tý 6.
 Stú **Eððóriði P.Á.** Í ðáðan áðu Íñi hán íðæl ái ái eý íáð-í-í-ðáðói eð-áñneðó
 ñðáññói ýðe ðáñneðái ái ái eé iðáññói éai eé, I., 1974. tþgtp 17-18.; **Aðóriði Á.Á.**
 Æ ái í ði ní ó i ðáðan áuði í í áaéal í eí ðóðið eði íñi e íai ðáðæái íñi ñòe// Yéñi áðo-
 éðæl eý áæðñó N 1. 2010. tþgn 13-18:

Սկսած 70-ական թվականներից՝ դատավարագետներն սկսեցին «հատուկ գիտելիքների» բնորոշումը սերտորեն կապել ապացուցման գործընթացի հետ: Այսպես՝ Վ. Ի. Շիկանովը հատուկ է համարում այն գիտելիքները և պրակտիկ փորձը, որոնք անհրաժեշտ են ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրության համար¹:

Բանավեճերի տեղիք է տվել Պ.Պ. Իշնենկոյի տված բնորոշումը, համաձայն որի՝ քրեական դատավարությունում օգտագործվող հատուկ գիտելիքներն այն գիտելիքներն են, որոնք կրում են այլոքեսիոնալ բնույթ և կարող են օժանդակել ապացույցների հայտնաբերման և արձանագրման գործին²: Այդ բնորոշումն ունի իր բերությունը. եթե այն ընդունենք որպես հիմք, հենակետային դրույթ, ապա կստացվի, որ փորձաքննություն կատարելիս հատուկ գիտելիքների օգտագործումը չի վերաբերի քրեական դատավարությանը, քանի որ, ինչպես հայտնի է, դատական փորձաքննության հիմնական նպատակներից մեկը ապացույցների ուսումնասիրումը՝ հետազոտությունը (ոչ միայն հայտնաբերումը և արձանագրումը):

Գ.Գ. Չույկովը հատուկ գիտելիքների թվին առաջին հերթին դասում է հիմնական տեսությունները և գործնականում ամրագրված կրիմինալիստիկական տեխնիկայի միջոցների և հնարքների խոր և բազմակողմանի իմացությունը, որոնք ապահովում են ապացույցների հայտնաբերումը, ամրագրումը

¹ Տե՛ս *Օժեռագիր Ա.Է.* Եղի 1 էնցի համար 1976, էջեր 4-6:

² Տե՛ս *Էնալիտ Ի.Ի.* Նո աօէնէնն ա նէանննան 1 նօ ական ական 1990, էջ 8:

և ուսումնասիրությունը: Նշված հեղինակը հատուկ գիտելիք-ների թվին է դասում նաև դատական բժշկության, քիմիայի, ֆիզիկայի բնագավառի, ինչպես նաև ցանկացած այլ գիտելիքներ (լեզվաբանական, մաթեմատիկական, մեթոդաբանական), որոնք կարող են անհրաժեշտ լինել հանցագործության լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության համար¹:

Հարկ է նշել, որ, ճիշտ է, տարբեր հեղինակներ, տալով «հատուկ գիտելիքների» սահմանումը, առանձնացնում են *գիտության որոշակի ճյուղեր*, որոնք հանդիսանում են համապատասխան հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտներ², սակայն այդ գիտելիքների կիրառման նպատակի առումով հանգում են միևնույնին. հատուկ գիտելիքներն անհրաժեշտ են հանցագործության լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության համար և կոչված են լուծելու որոշակի ոլորտի խմբիներ:

Համեմատության համար հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ոչ միայն չի պարզաբանվում «հատուկ գիտելիքներ» հասկացությունը, այլև չեն սահմանվում այդպիսի գիտելիքների պատկանելության հնարավոր ոլորտները, ինչպես դա արված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի օրինակ՝ ՈԴ քաղ. դատ. օր.-ի 79-րդ հոդվածը նախատեսում է, որ գործի քննութ-

¹ Տե՛ս *Ծովով Ա.Ա.* Ի անեա ձի օգոստոսի 1966 թվականի 1 համար է պահանջվում այս գործությունը: Եթե այս գործությունը կատարվի, ապա այս գործությունը պահանջվում է պահանջվում այս գործությունը: Եթե այս գործությունը կատարվի, ապա այս գործությունը պահանջվում է պահանջվում այս գործությունը:

² Ե.Ն. Զուևն առանձնացնում է դատական բժշկությունը, քիմիան, ֆիզիկան, իսկ Գ.Ե. Մորոզովն ավելացնում է նաև մաթեմատիկան, բնագիտությունը, կենսաբանությունը, մանկավարժությունը:

յան ընթացքում այնպիսի հարցերի ծագման դեպքում, որոնց պարզաբնումը պահանջում է հատուկ գիտելիքներ գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի տարբեր ոլորտներում, դատարանը նշանակում է փորձաքննություն:

Արտասահմանյան դատափորձագիտական գրականության մեջ հատուկ գիտելիքների կիրառմամբ ձեռք բերված փաստական տվյալներն ընդունված է անվանել «գիտական փաստական տվյալներ» (scientific evidence, scientific data) կամ «գիտական ապացույցներ» (scientific proof)¹:

Եվրոպական որոշ երկրների քրեալատավարական օրենսդրությամբ նույնպես նշվում են հատուկ գիտելիքների այն բնագավառները, որոնց գիտական տվյալները կարող են օգտագործվել դատափորձագիտական գործունեության մեջ: Օրինակ, Գերմանիայի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձը, ով նշանակված է որպես փորձագետ, պետք է համապատասխանի իր կոչմանը, եթե նա պետականորեն (հրապարակայնորեն) նշանակված է պահանջվող տեսակի կարծիք (եղակացություն) տալու համար, կամ եթե նա պետական կամ մասնավոր մակարդակով կիրառում է գիտությունը, արվեստը կամ առևտուրը, որոնց բնագավառի գիտելիքները նախադրյալ են հանդիսանում կարծիք (եղակացություն) տալու համար, կամ եթե նա պետականորեն նշանակվել կամ ճանաչվել է այդ մասնագիտությունը կիրառելու համար»:

¹ Տե՛ս *Ahmad Mousa Hayajne, Sami Hamdan AL.* Theoretical Approaches to Admitting Scientific Evidence in the Adversarial Legal System European Journal of Scientific Research, Vol.41 No.2 (2010), էջ 182-193; *Beecher-Monas E.* Evaluating Scientific Evidence: an Interdisciplinary Framework for Intellectual Due Process, Cambridge University Press, Cambridge, 2007, էջեր 4-17:

Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի համաձայն՝ «Գործով տեխնիկական հարցեր ծագելու դեպքում հետաքննություն կամ դատաքննություն իրականացնող ցանկացած դատարան պետական մեղադրողի կամ սեփական նախաձեռնությամբ կամ կողմերի միջնորդությամբ իրավունք ունի դիմելու փորձագետին՝ եզրակացություն ստանալու համար։ Պետական մեղադրողը կամ կողմը, որը միջնորդում է այդպիսի փորձագիտական եզրակացություն ստանալու համար, կարող է նշել այն հարցերը, որոնք նա անհրաժեշտ է գտնում, որպեսզի դրանք առաջարկեն փորձագետին»։

Ըվեյցարիայի Համադաշնության քրեական դատավարության օրենսգրքում հատուկ գիտելիքների կամ դրանց պատկանելության ոլորտի մասին ընդհանրապես խոսք չկա։ Մասնավորապես, Ըվեյցարիայի քրեական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե փորձագետը կարող է իր հետևողություններով կամ եզրակացությամբ օգնել գործի հանգամանքների պարզաբանմանը, դատավորը կարող է նշանակել փորձաքննություն»։

ԱՄՆ ապացուցման իրավունքում «հատուկ գիտելիքների» վերաբերյալ դրույթները, որոնք արտացոլում են փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության շափանիշները, իրենց ամրագրումն են գտել ԱՄՆ Դատական ապացույցների դաշնային կանոններում։ Պատմականորեն փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության ապահովման վերաբերյալ հիմնական դրույթն Ամերիկայի Սիացյալ Նահանգներում հաստատվեց 1923 թ.՝ Ֆրիեն ընդդեմ Սիացյալ Նահանգների գործով։ ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից

այդ գործով հաստատված կանոնի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը կարող է ապացույցի ուժ ունենալ, եթե կիրառված փորձագիտական մեթոդն ընդունելի է համապատասխան գիտական համայնքի կողմից¹:

Հետագայում՝ 1975 թ.-ին, ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից ընդունվեցին «Դատական ապացույցների դաշնային կանոնները, որոնք հաստատվեցին ԱՄՆ կոնգրեսի կողմից, որի 702-րդ կանոնը սահմանում էր. «Եթե գիտական, տեխնիկական կամ այլ հասունությունները կօգնեն փաստերը որոշող անձին (երդվյալ ատենակալներին՝ հ.խ².) ապացույցները հասկանալու և վիճելի փաստերը որոշելու համար, իր գիտելիքների, հմտությունների, փորձի, ուսուցման կամ կրթության ուժով որպես փորձագետ որակավորված վկան կարող է այդ մասին վկայություն տալ եզրակացության կամ այլ ձևով»:

1993թ. ԱՄՆ Գերագույն դատարանն ընդունեց դատական ապացույցների հիմնավորվածության վերաբերյալ նոր չափանիշներ, որոնք հայտնի են «Դուրերյան կրիտերիաներ» անվանումով³: Այդ չափանիշները, ըստ էության, դատավարությանը փորձագետի եզրակացության բույլատրելիությունը կանխորոշող չափանիշներ են⁴:

«Դուրերյան կրիտերիաների» համաձայն՝

ա) փորձագետը պետք է ունենա բավարար հասունություններ, հմտություններ և փորձ համապատասխան բնագավառում,

¹ St'u Frye v. United States, 293 F. 10 13. (App D.C. 1923):

² Ծանոթ. հեղինակային խումբ:

³ St'u Daubert v. Merrell Dow Pharmaceuticals, INC. The U.S. Supreme Court, No. 92-102. Argued March 30, 1993 - Decided June 28, 1993:

⁴ St'u **Kiely F.** Terrence. Forensic Evidence: Science and the Criminal Law. CRC Press, Florida, 2000, էջեր 12-14:

բ) փորձաքննական մեթոդը պետք է սոսուզի կամ սոսուզելի լինի փողոքով,

գ) մեթոդը պետք է ենթարկված լինի փորձագիտական գնահատականի և հրապարակման,

դ) փորձագետը պետք է կարողանա որոշել հճարավոր սխալների հավանականության աստիճանը,

ե) մեթոդը պետք է ի վիճակի լինի բացատրել երևոյթները բավարար պարզությամբ և հստակությամբ՝ այնպես, որ դատարանին հասկանալի լինի դրա լրիվ նշանակությունը¹:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության առնչությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի կողմից 1975թ. հրապարակված և 2000թ. փոփոխված Դատական ապացույցների դաշնային կանոնների 7-րդ հոդվածի 702-րդ կանոնի («Փորձագետի եզրակացությունը») համաձայն՝ «Եթե գիտական, տեխնիկական կամ այլ հատուկ գիտելիքները կօգնեն փաստերը որոշող անձին (երդվյալ ատենակալներին՝ հ.խ.) ապացույցները հասկանալու և վիճելի փաստերը որոշելու համար, իր գիտելիքների, հմտությունների, փորձի, ուսուցման կամ կրթության ուժով որպես փորձագետ որակավորված վկան կարող է այդ մասին վկայություն տալ եզրակացության կամ այլ ձևով, եթե՝

ա) վկայությունը հիմնված է բավարար փաստերի կամ տվյալների վրա,

բ) վկայությունը վստահելի սկզբումների և մեթոդների արդյունք է,

գ) սկզբունքներն ու մեթոդները ճշգրիտ կերպով կիրառվել են գործի փաստերի մկանմամբ»:

¹ Տե՛ս **Olsson J.** Forensic Linguistics: An Introduction to Language, Crime, and the Law, Published by Continuum International Publishing Group, London, 2004, էջեր 41-42:

Կարծում ենք՝ ՀՀ օրենսդրությամբ հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտների սպառիչ թվարկումն արդարացի չէ, ինչի հետ կապված հատկապես ողջունելի է ԱՍՆ փորձը, որը Դատական ապացույցների դաշնային կանանոնների 702-րդ կանոնում չի սահմանափակում այն հնարավոր բնագավառները, որոնց կարող են պատկանել գործի քննության ընթացքում կիրառման ենթակա հատուկ գիտելիքները։ Այսպիսի մոտեցումը, իրոք, առավել արդարացի է թվում։ Բանն այն է, որ քրեադատավարական հարաբերություններում կարող է անհրաժեշտություն առաջանալ գործի որոշակի հանգամանքների բացահայտման համար կիրառել այնպիսի գիտելիքներ, որոնք չպատկանեն գիտության, տեխնիկայի, արհեստի կամ արվեստի ոլորտին, սակայն, որպես այդպիսին՝ հանդիսանան հատուկ գիտելիքներ՝ իրենց ոչ հանրամատչելիության և տվյալ մասնագիտությանը, որակավորմանը, փորձին կամ հմտություններին որոշակի անձի կողմից տիրապետելու ուժով, և ենթակա լինեն կիրառման կոնկրետ գործով։ Ավելին, հատուկ գիտելիքների բնագավառների սպառիչ թվարկումը կարող է արգելք հանդիսանալ դատական պրակտիկայում այդ բնագավառներից դուրս այլ հատուկ գիտելիքների կիրառման համար, ինչն անարդարացի է։ Ուստի, կարծում ենք, դատական փորձաքննությունների նշանակման հնարավորությունների ընդլայնման և դրանով իսկ քրեական գործերի արդյունավետ քննության և լուծման համար անհրաժեշտ է վերացնել հատուկ գիտելիքների պատկանելության հնարավոր ոլորտների սպառիչ թվարկումը և համապատասխան բնագավառները թվարկող դրույթներում (մասնավորա-

պես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի հոդվ. 243-ի 1-ին մաս, հոդվ. 85-ի 1-ին մաս) դրանք շարադրել ոչ սպառիչ ցանկով:

Մեր կարծիքով՝ նման իրավական կարգավորումը հատկապես կարևոր նշանակություն ունի քրեական գործերով միջազգային իրավական օգնության գործընթացներում՝ հաշվի առնելով կիրառման ենթակա հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտների վերաբերյալ պետությունների օրենսդրության տարբերությունները։ Քննարկվող ոլորտների ոչ սպառիչ բնույթը կարող է խթան հանդիսանալ քրեական գործերով միջազգային համագործակցության առավել արդյունավետ կազմակերպման համար՝ առանց հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտի սահմանափակումների պետությունների դատափորձագիտական, արդարադատության և իրավապահ մարմինների կողմից միմյանց դիմելու հնարավորությունների ընդլայնման տեսանկյունից։

Հարկ է նշել, որ քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների օգտագործման անհրաժեշտությունը որոշվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից, բացի փորձաքննություն նշանակելու պարտադիր դեպքերից¹։ Վարույթն իրա-

¹ ՀՀ քր. դատ. օր-ի 108-րդ հոդվածում շարադրված են այն դեպքերը, երբ որոշակի տեսակի փորձաքննության նշանակումն ու կատարումը պարտադիր է։ Մասմանկության բառը նշված հոդվածի՝ «Քրեական գործով վարույթով ստորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ պացույցները նախապես ստանալով և հետազոտելով»

1) մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը՝ դատարժվական փորձագետի եզրակացությունը։
2) հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով մեղադրյալի ունակ չինելը դեպքի պահին գիտակցելու իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ դեկալիարելու դրանք՝ դատահոգերուժական կամ դատահոգեական փորձագետի եզրակացությունը.

կանացնող մարմնի որոշումը՝ փորձաքննություն նշանակելու մասին, պետք է հիմնված լինի հետևյալ օբյեկտիվ նախադրյալների վրա.

1. *իրավական նախադրյալ (համապատասխան նյութաիրավական նորմի առկայություն)*.
2. *հասուն նախադրյալ (փորձագիտական գիտելիքների համապատասխան մակարդակի առկայություն, որը հնարավորություն է տալիս որոշելու փորձաքննության առարկան)*.
3. *արամաբանական նախադրյալ (փորձաքննության առարկայի և քննարկվող իրավաբանական փաստի միջև հնարավոր կապի առկայություն)*:

Նշված նախադրյալները որոշ հեղինակների կարծիքով համարվում են նաև չափանիշներ, որոնք հնարավորություն են տալիս կոնկրետ իրավիճակներում տարանջատել առօրեական, հանրամատչելի և հասուն գիտելիքները¹:

Այսպիսով, հասուն գիտելիքների վերաբերյալ վերը շարադրված տեսական մոտեցումների և օրենսդրական դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ՝ «հասուն գի-

-
- 3) վկայի կամ տուժողի ոմակ շիմելը ճիշտ ընկալելու և վերաբարեկելով քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները՝ դատահոգերուժական փորձագետի եզրակացությունը.
 - 4) գործի համար նշանակություն ունենալու դեպքում՝ տուժողի, կասկածյալի, մեղադրյալի որոշակի տարիքի հասմելը՝ տարիքի մասին փաստաթուղթը, իսկ դրա բացահայտված դեպքում՝ դատարժաշկական և դատահոգերանական բնագավանների փորձագետների եզրակացությունները.
 - 5) կասկածյալի և մեղադրյալի մոտ նախկին դատվածության առկայությունը և նրան որոշակի պատիճ նշանակելը՝ համապատասխան տեղեկանքը, իսկ հնարավորության դեպքում՝ նաև դատարանի դատավճռի պատճենը»:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված հոդվածով սահմանված դեպքերից բացի, մնացած բոլոր դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը որոշվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից:

¹ Տե՛ս *Նաօթիք Օ.Ա. Նօօանա նա ան էակածանանանան*. Ե., 2000, էջ 8:

տելիքները» գիտության, տեխնիկայի, արհեստի, արվեստի, առևտուրի կամ ցանկացած այլ բնագավառի վերաբերյալ գիտական տվյալներն են, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս բացահայտելու գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնք չեն կարող բացահայտվել առանց համապատասխան մասնագիտություն, որակավորում և փորձ ունեցող մասնագետի ներգրավվածության և վերջինիս կողմից համապատասխան գիտելիքների կիրառման: Հատուկ գիտելիքները՝ որպես դատավարական կատեգորիա, պետք է համապատասխան են ոչ միայն հատուկ նախապայմաններին, այլ նաև քրեադատավարական ձևին և առանձնացված լինեն դատավարական գործունեության այլ ձևերից, այսինքն՝ հատուկ գիտելիքները պետք է կիրառվեն դատավարական կարգով և համապատասխան նորմերով սահմանված պահանջներին համապատասխան: Ընդ որում, գիտական տվյալների պատկանելության ոլորտն էական նշանակություն չունի դատավարությունում՝ մասնավորապես, քրեական, հատուկ գիտելիքների բնորոշման համար: Կարևոր այդ գիտելիքների կիրառման նպատակն է, այն է՝ դրանց կիրառմամբ բացահայտել գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնք այլ քննչական գործողություններով կամ այլ կերպ չեն կարող բացահայտվել: Այս առումով, քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում փորձագետի եզրակացության ձեռքբերման և օգտագործման գործընթացում պետք է հաշվի առնել հատկապես կիրառման ենթակա գիտելիքների ոչ հաճրամատչելի, առանձնահատուկ բնույթը՝ անկախ դրանց պատկանելության բնագավառից:

«Հատուկ գիտելիքների» հետ կապված՝ հատկապես տարակարծությունների տեղիք է տալիս մասնավորապես *իրավական* (իրավաբանական) փորձաքննությունների կամ, այսպես կոչված, իրավական հարցերով փորձաքննությունների նշանակման և իրականացման հնարավորությունը: Այս առումով, «հատուկ գիտելիքներ» հասկացության և դրանց շրջանակի հետ կապված՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել, հատկապես, «իրավական փորձաքննության» էությունը, նշանակությունը և դրա դերը քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում իրականացվող հանցագործությունների քննության և բացահայտման գործընթացում:

«Իրավաբանական հարցերով» փորձաքննություն նշանակելու արգելվը ենթադրում է, որ փորձաքննություն չի կարող նշանակվել և կատարվել իրավագիտության բնագավառի գիտելիքների կիրառման անհրաժեշտության դեպքում: Իրավաբանական գրականության մեջ ընդունված է այն մոտեցումը, ըստ որի՝ իրավագիտության բնագավառի գիտական տվյալները հատուկ գիտելիքների շրջանակի մեջ չեն մտնում¹: Այդ իսկ նկատառումներից ելնելով՝ իրավական հարցերով փորձաքննության նշանակումն անթույլատրելի է:

Ինչպես հայտնի է, իրավական հարցերով փորձաքննություն նշանակելու արգելվն իր ամրագրումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85 հոդվածի 3-րդ մասում,

¹ Տե՛ս Դավթյան Ա.Ի. Էկспертиза в гражданском процессе. М., 1995, էջեր 13-18; Էնցման Ա.Ա. Заключение эксперта (Структура и научное обоснование). М., 1967, էջ 91:

համաձայն որի՝ «Քրեական գործերով վարույթին իրավական հարցերով փորձագետ չի ներգրավվում»:

Հարկ է նշել, որ այս դրույթը ձևակերպվել է դեռևս ԽՍՀՄ տարիներին, երբ ԽՍՀՄ Գերազույն դատարանի պենսումն իր՝ 16.02.1971թ. որոշմամբ արգելեց որևէ «իրավական» փորձաքննության անցկացումը։ Այս որոշմամբ մեկ անգամ ևս կրկնվեց ԽՍՀՄ 1961թ. քրեական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը, ըստ որի՝ փորձագետին պետք է առաջարկվեն հարցեր միայն իր հատուկ գիտելիքների սահմաններում, իսկ դատարանները պետք է հսկեն, որպեսզի փորձագետին չառաջարկվեն իրավական բնույթի հարցադրումներ։

Իրավական հարցերով փորձաքննության կատարումն արգելող դրույթներ են բովանդակում նաև այլ իրավական ակտեր։ Օրինակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Փորձագետի եզրակացության՝ իրավական հարցերին վերաբերող մասը չունի ապացուցողական նշանակություն»։

Միաժամանակ, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն իրավական (իրավաբանական) հարցերով փորձաքննության կատարումն արգելող որևէ դրույթ չի նախատեսում։ Դեռ ավելին, մեր քաղաքացիադատավարական օրենսդրությունը, այս կամ այն կերպ չահմանափակելով հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտը, կարծես թե բույլատ-

րում է փորձաքննություն նշանակել նաև իրավական բնույթի հարցերի պարզաբանման համար¹:

Հայտնի է, որ իրավունքի հարցերով փորձաքննություն նշանակելու օրենսդրական արգելքի գոյությունը պայմանավորված է նրանով, որ դատավորներն իրենք են հանդիսանում «իրավունքի փորձագետները», և իրավական (իրավաբանական) հարցերով փորձաքննության կատարման անիրաժեշտություն չկա:

Մ.Կ. Տրեուշնիկովի սահմանմամբ՝ «Դատավորները գիտեն օրենքը և իրավունքը», այդ իսկ պատճառով նորմերի մեկնարանության, կիրառման և այլ իրավաբանական հարցերի լուծումը պետք է իրականացնեն հենց նրանք, իսկ փորձագետները «փաստերի վկաներն են». Վերջիններս միայն փաստերն են հաստատում կամ ժխտում²:

Այս մոտեցման հիմքում հատկապես ընկած է թե՛ ոռմանագերմանական և թե՛ անզլո-սաքսոնական իրավական համակարգերում ավանդաբար գործող *jura novit curia* սկզբունքը (կանխավարկածը), որը լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ «դատավորները գիտեն իրավունքը», «դատարանին իրավունքը հայտնի է»³:

Ուստաшանի Դաշնությունում (ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում), նույնպես գործում է *jura novit curia* կանխավարկածը, այդ իսկ պատճառով իրավունքի նորմերի

¹ Տե՛ս **Պարսյան Ա.**, Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական դատավարությունում // Դատական իշխանություն, Երևան, 2010, No 1-2 (126-127), էջեր 49-57:

² Տե՛ս **Օծանքի էջման Հ. Է.** Նոճական նախարարություն, 2004, էջ 190:

³ Տե՛ս **Derlén M.** Multilingual Interpretation of European Union Law, The Netherlands, 2009, էջեր 315-316:

բացահայտման, հետազոտման և ուսումնասիրման, այսինքն՝ իրավունքի հարցերի ընկալման և մեկնարանման համար դատավարությունում նախատեսված չէ իրավական փորձաքննության նշանակման հնարավորություն: Փորձագետները «փաստի վկաներն են»¹: Փորձագետը պետք է պատասխան տա ոչ թե իրավունքի, այլ փաստի հարցերով²:

Կարծում ենք, ժամանակակից պայմաններում քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարությունում իրավունքի հարցերով փորձաքննության նշանակման և անցկացման հնարավորությունը վերանայման կարիք ունի, հատկապես, եթե հաշվի առնենք նաև, որ *Jura novit curia* սկզբունքը թույլ է տալիս մի շարք բացառություններ դրանից: Այս առումով պետք է նշել, որ, օրինակ, Անգլիայի 1972թ. «Ապացույցների մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ անձը, ով համապատասխան որակավորում ունի իր գիտելիքների կամ փորձի համաձայն, իրավասու է տալ փորձագիտական եզրակացություն օտարերկրյա պետության իրավունքի կապակցությամբ: Այսինքն՝ Անգլիայում օտարերկրյա իրավունքի հարցերով թույլատրվում է ստանալ փորձագետի (մասնագետի) եզրակացություն, որը *Jura novit curia* սկզբունքի բացառություններից է³: Ավելացնենք նաև, որ օտարերկրյա իրավունքի հարցերով փորձաքննության նշանակման և նման փորձագիտական եզրակացության թույլատրելիությունը բնո-

¹ Տե՛ս *Третийников М. К.*, Судебные доказательства, М., 2005, էջ 201:

² Տե՛ս *Պետրոսյան Ռ. Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երևան, 2007թ., էջ 387:

³ *Jura novit curia* սկզբունքի բացառություններից է նաև, օրինակ, օրենքի սահմանադրականության որշումը մասնագիտացված դատարանների կողմից կամ միջազգային իրավունքի կիրառման հիմնավորումը միջազգային իրավական վեճերով և այլն:

բոշ է հատկապես ընդհանուր իրավունքի երկրներին՝ Ավստ-
րալիա, Նոր Զելանդիա, Հարավային Աֆրիկա և այլն¹:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որևէ քաց-
ոռություն չի նախատեսում *jura novit curia* սկզբունքից: Ինչ վե-
րաբերում է քաղաքացիական դատավարությանը, ապա
պետք է նկատել, որ մեր քաղաքացիադատավարական
օրենսդրությամբ օտարերկրյա իրավունքի հարցերով մասնա-
գիտական օժանդակության անհրաժեշտության դեպքում ՀՀ
դատարաններն իրավասու են ոչ թե նշանակել փորձաքննութ-
յուն, այլ ընդամենը ներգրավել համապատասխան մասնա-
գետների: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավա-
րության օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝
«Օտարերկրյա իրավունքի նորմերի գոյությունը և բովանդա-
կությունը պարզելու նպատակով՝ դատարանը կարող է սահ-
մանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետությունում և
արտասահմանում գտնվող իրավասու մարմինների աջակ-
ցությանը կամ ներգրավել մասնագետների»²:

Չնայած այս իրավակարգավորմանը, ՀՀ քաղաքացիա-
կան դատավարության օրենսգիրքը դատավարության մաս-
նակիցների ցանկում չի նախատեսել «մասնագետ» սուբյեկ-
տին՝ չսահմանելով վերջինիս իրավունքները և պարտակա-
նությունները: Ի տարրերություն այս բացքովման, ՀՀ քրեա-
կան դատավարության օրենսգիրքը մասնագետին համարել է
քրեական դատավարության մասնակից (ՀՀ քր. դատ. օր.-ի

¹ *Freckleton I. Selby H.* Expert evidence. Holmes Beach, Florida, 1993, էջեր
1/1558-1/1560:

² ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ բաժինն ամբողջա-
պես նվիրված է օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի
վարույթին:

հոդված 6, կետ 32), սակայն, ինչպես արդեն նշել ենք, սահմանափակել է իրավական հարցերով մասնագիտական օժանդակությունը:

Այսպիսով, մեր կարծիքով, քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում իրականացվող՝ հանցագործությունների քննության գործընթացում, ինչպես նաև օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթի ընթացքում ծագող իրավական հարցերով, համապատասխանաբար, ՀՀ քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրությամբ վարույթն իրականացնող մարմնին պետք է իրավունք վերապահել այդ հարցերով նշանակելու իրավական փորձաքննություն՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները համապատասխան փորձագիտական եզրակացությամբ հաստատելու համար։ Նման կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է անդրազգային և միջազգային հանցագորության զարգացման տեմպերով, ինչպես նաև այն հանգամանքով, որ տնտեսական հարաբերությունների զարգացման և կատարելագործման հիմքի վրա անընդհատ զարգացող հանրային, օտարերկրյա, ինչպես նաև միջազգային մասնավոր իրավունքը, դրանց բովանդակությունը կազմող դրույթները և միջազգային իրավական եզրարանությունը կազմում են հասուն գիտելիքների առանձին բնագավառ, որին կարող են տիրապետել միայն այդ բնագավառում մասնագիտացված (որակավորված) իրավագետները։ Չնայած այդ գիտելիքները վերաբերում են իրավունքի հարցերին և իրենց բնույթով իրավաբանական են, այնուամենայնիվ, չպետք է սահմանափակել այդ հարցերով փորձաքննություն նշանակելու՝ վարույթն իրակա-

նացնող մարմնի իրավունքը: Օտարերկրյա իրավունքի հարցերով փորձաքննություն նշանակելու իրավասության սահմանման անհրաժեշտությունը բխում է նաև գործի արդարացիքնության և ողջամիտ ժամկետում որակյալ արդարադատության իրականացման շահերից:

Բացի օտարերկրյա նորմի ճիշտ մեկնաբանման և կիրառման անհրաժեշտությունից, իրավական փորձաքննության նշանակման և կատարման հնարավորության նախատեսման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև հասարակական հարաբերությունների բազմազանությամբ, որոնք ենթարկված են իրավական կարգավորման: Ներկայիս պայմաններում ընդունվում են բազմաթիվ նորմատիվ իրավական ակտեր, որոնք կոչված են կարգավորելու տարատեսակ հասարակական հարաբերություններ, և արագ զարգացող այդ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումներին հետևելը պարզապես անհնարին է: Ինչպես արդարացիորեն նշում է Յու. Ա. Տիխոնիխովը՝ «Իրավունքը օրենքների կարծրացած հավաքածու չէ: Այն փոփոխվում և զարգանում է պետության ու հասարակության զարգացմանը զուգահեռ»¹:

Ընդ որում, քրեական գործերի քննության գործընթացում հաճախ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել մի շարք իրավական ակտեր, որոնք առնչվում են քրեական գործով ապացուցման ենթակա տարատեսակ հանգամանքների: Միաժամանակ, շատ դեպքերում իրավական ակտերն առանձնանում են իրենց երկիմաստությամբ, բովանդակում են բաց-

¹ Տե՛ս **Тихомиров Ю.Э.** Коллизионное право. М., 2000, էջեր 9-11:

թողումներ, թերություններ կամ հակասություններ, ձևակերպված են լինում բարդ օրենսդրական լեզվով, ինչը վարույթն իրականացնող մարմնի համար էականորեն դժվարացնում կամ անհնարին է դարձնում դրանց անխառ կիրառման հնարավորությունն առանց համապատասխան ոլորտի մասնագետների մասնագիտական օժանդակության: Այս առումով, ինչպես արդարացիորեն նշում է Լ. Գառիխմանը, առանց իրավական փորձաքննության գրեթե անհնարին է կիրառել քրեական նորմերը, հատկապես, որոնք ունեն բլանկետային դիսպոզիցիա¹:

«Քննիչի, հետաքննության մարմնի աշխատակցի, դատախազի, դատավորի վրա պարտավորություն դնել, որ նրանք պետք է տիրապետեն իրավունքի այսօր հայտնի բոլոր ճյուղերին և ենթաճյուղերին, որոնց իմացությունը կարող է պահանջվել նախաքննության ընթացքում կամ քրեական գործերի քննության ժամանակ, կնշանակի նրանց դնել դժվարին, նույնիսկ անելանելի իրավիճակի մեջ. յուրացնել այդ գիտելիքները որակյալ և պատասխանատու որոշումներ ընդունելու պահանջվող ծավալով, անհնար է դառնում»²:

¹ Նշենք, որ բլանկետային են համարվում այն դիսպոզիցիաները, որոնցում հերուս է կատարված այլ իրավական ակտերի: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսդրքի 22-րդ գլուխ («Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները») հոդվածների մեծ մասը պարունակում են այնպիսի եզրույթներ, որոնք հասկանար համար անհրաժեշտ է ուսումնասիրել իրավունքի այլ ճյուղեր. այսպես՝ հոդք. 194-ը նվիրված է կեղծ սնննկությանը, որտեղ նշված են հանցագործության հատկանիշները, սակայն հոդվածը ճիշտ մեկնարանելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև «Մնանկության մասին» ՀՀ օրենքը:

² Տե՛ս **Զախարյան Ա.**, Հատուկ գիտելիքների հասկացությունը և նշանակությունը քրեական դատավարությունում // Պետություն և իրավունք, Երևան, 2005, № 2 (28), էջ 77:

Հարկ է նշել, որ իրավական գիտելիքներն առաջին անգամ դասվեցին հատուկ գիտելիքների շարքը 1994թ., երբ ՈՒ-ում սկսեց կիրառվել իրավական փորձաքննության պրակտիկան: «ՈՒ սահմանադրական դատարանի մասին» 21.07.1994թ. դաշնային օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ ՈՒ սահմանադրական դատարանի նիստերին կարող է որպես փորձագետ հրավիրվել այն անձը, ով տիրապետում է քննարկվող գործին վերաբերող հատուկ գիտելիքների:

Իրավական փորձաքննությունների հարցը սուր վիճաբանությունների տեղիք տվեց հատկապես դատավարագետների շրջանում: Ոմանց կարծիքով իրավական փորձաքննությունը մեծ նշանակություն ունի քրեական գործերի արդյունավետ քննության համար, քանի որ ոչ դատավորները, ոչ էլ դատախազները չեն կարող ամբողջությամբ տիրապետել բոլոր իրավական գիտելիքներին¹:

Դատավարագետների մյուս խումբը կարծում է, որ իրավական փորձաքննության դեպքում հնարավոր չէ օբյեկտիվ կերպով գնահատել եզրակացությունը, քանի որ միշտ կլինի «ավելի հմուտ իրավաբանի կողմից տրված եզրակացություն» սուրյեկտիվ գործոնը: Բացի դրանից, ծագում են մի շարք երկրնորանքներ, օրինակ՝ ինչպես որոշել իրավագետ-փորձագետի ծեռնհասության սահմանները, կամ ինչպես սպեც է որոշել, որ եզրակացությունը սխալ է կամ տրվել է սխալ եզրակացություն, եթե նկատի ունենք ասածվածային, բայց արդարացիորեն ասված՝ «երկու իրավաբան՝ երեք կարծիք» արտահայտություն:

¹ Տե՛ս *Աժ՛՛ Ի Ժ Ի, Ն Ի Ժ՛՛ Ժ Ա, Ն Ի Ժ՛՛ Ա Ա*. Ծանոթագրական գիտելիքների շարքը 1998, N 8, էջեր 25-27:

նը¹: Ըստ որում, նման վիճաբանությունները լայն տարածում ստացան նաև Եվրոպական երկրներում, որոնք, սակայն, չգալով ընդհանուր հայտարարի, այդ հարցը լուծել են՝ ելնելով իրենց իրավական համակարգի առանձնահատկություններից²:

Յու. Կորուխովը «իրավական» կամ «իրավաբանական» փորձաքննությունը համարում է արատավոր և թերի: Հեղինակն իրավական գիտելիքները դասում է հատուկ գիտելիքների թվին, սակայն նշում է, որ այդ հատուկ գիտելիքներին պարտավոր են տիրապետել բոլոր դատավորները, քննիչները, դատախազները, բոլոր նրանք, ովքեր իրականացնում են նախնական և դատական քննությունը³: Ըստ նշված հեղինակի՝ իրավական փորձաքննությունները թույլատրելի կարող են լինել միայն սահմանադրական դատարանում օտարերկրյա նորմի կիրառման ժամանակ, սակայն դրանց կիրառումը քրեական դատավարությունում բացառված է: Համապատասխան մարմինն, իրավական փորձաքննություն նշանակելով՝ ապացուցման բեռլ դմում է փորձագետի վրա, ինչը հակասում է վերջինիս կողմից իրականացվող գործառույթներին: Այնուամենայնիվ, Յու. Կորուխովը համաձայն է Լ. Գառիսմանի հետ՝ գտնելով, որ բլանկետային դիսպոզիցիաների հետ կապված խնդիրները պետք է լուծում ստանան իրավական փորձաքննության կատարման ճանապարհով:

¹ Տե՛ս **Բե՛ I.** “Ի ծառակաց” յե՞նի ածծեցա ա օա՛ քանակ ա աաէա // Չաե՛ 1 1 նո՞ւ, 2001, N 9, էջեր 21-25:

² Տե՛ս **Անաեա Ջ., ԱՇՕՇՃ-ՆՐԵՒՇԵ Է.** Ի մի մաս ի ծառակաց ն նո՞ւ ածծակ ա ի նո՞ւ. Լ ., 2000, էջեր 50-51:

³ Տե՛ս **ԷՌՋԵՇՃ Բ.** Ա ի օնծել ն ք է ի ծառակաց է ի ծեա ա յե՞նի ածծեցն ա օա՛ քանակ ա աաէա // Չաե՛ 1 1 նո՞ւ, 2001, N 4, էջեր 31-34:

Ինչպես արդեն նշել ենք, բլանկետային դիսպոզիցիաների շատ ենք հանդիպում հատկապես տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող հոդվածներում։ Նման իրավիճակում իրավասու մարմինը, փաստորեն, պարտավոր է առաջին հերթին առանց բացառության իմանալու այն բոլոր իրավական նորմերը, որոնք կարգավորում են համապատասխան հարաբերությունների համակարգը, երկրորդ՝ վերլուծել այդ նորմերն ինչպես առանձին-առանձին, այնպես էլ համակցության մեջ, երրորդ՝ այդ վերլուծության արդյունքում գտնել այն նորմերը, որոնցում նշված իրավախախումները պարունակում են հանցագործության հատկանիշներ, և, վերջապես որոշել՝ արդյո՞ք այդ իրավախախումը քրեորեն պատժելի է¹։

Ե.Ռ. Ո-սինսկայան նշում է, որ իրավունքի տարբեր ոլորտներում գիտակ անձինք արդեն երկար ժամանակ է, ինչ ներգրավվում են ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական և վարչական գործերում՝ որպես խորհրդատուներ։ Այլ կերպ ասած՝ նրանց հատուկ գիտելիքներն օգտագործվում են ոչ դատավարական ձևով։ Նման խորհրդատվությունները հիմնականում իրենցից ներկայացնում են իրավունքի ոլորտի կոնկրետ հարցերի ուսումնասիրություններ, ներկայացվում են գրավոր ձևով՝ որպես մասնագետի կարծիք։ Այդ փաստաթուղթը չունի դատավարական կարգավիճակ և պրակտիկայում դրա օգտագործումը երկակի բնույթ է կրում։ Կանոնական պարունակվող տեղեկությունները փաստարանը (երբեմն նաև քննիչը կամ դատավորը) «ներառում» է դատավարական

¹ Տե՛ս *Гаукман Л.* Нужна ли правовая экспертиза по уголовным делам // <http://www.lawmix.ru/comm.php?id=6117>, 14.07.2011:

փաստաբղերում (ընդ որում՝ վերը նշված փաստաբղի անվանումը շատ դեպքերում չի էլ հիշատակվում), կամ օրենքով սահմանված կարգով այն կցվում է գործի նյութերին՝ որպես գրավոր ապացույց (քաղաքացիական դատավարությունում) կամ այլ փաստաթուղթ (քրեական դատավարությունում)¹:

Քրեական և քաղաքացիական մի շարք գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրավագետ-փորձագետների կողմից կատարվող ուսումնասիրության արդյունքները կցվում են գործին ինչպես պաշտպանության, այնպես էլ մեղադրանքի կողմից ներկայացմանք:

Ավելին, վերոշարադրյալի համատեքստում իրավական հարցերով փորձաքննության հետ կապված անհրաժեշտ է պարզել, թե որոշակի տեսակի փորձաքննությունների կատարման գործընթացում որքանո՞վ է հնարավոր խուսափել իրավական հարցերից և «իրավական գնահատականներից», և արդյո՞ք այդ դեպքում «իրավական գնահատականներ» պարունակող փորձագիտական եզրակացությունը պետք է համարել իրավական փորձաքննության արդյունքում տրված եզրակացություն և այդ հիմքով մերժել գործով որպես թույլատրելի ապացույց օգտագործելու հնարավորությունը՝ հաշվի առնելով *jura novit curia* սկզբունքի պահանջը:

Հարցի էությունն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մի շարք հանցագործությունների քննության գործընթացում նշանակվող փորձաքննությունների կատարման ժամանակ փորձագետների կողմից վերլուծվում և գործի փաս-

¹ Տե՛ս **Թվային նշանակություն Ա. Պ.** Նույնագործությունների քննության գործընթացում նշանակվող փորձաքննությունների կատարման ժամանակ փորձագետների կողմից վերլուծվում և գործի փաս-

տերի նկատմամբ համադրվում են համապատասխան իրավական ակտերի դրույթները: Խոսքը, օրինակ, վերաբերում է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին, որոնցով նշանակվող ֆինանսատնտեսագիտական-դատահաշվապահական փորձաքննությունները կատարվում են հարկային օրենսդրության դրույթների լայնակի կիրառման ճանապարհով¹: Կամ, ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով հարուցված քրեական գործերի քննության ժամանակ նշանակված ավտոտեխնիկական կամ ՇՏՊ մեխանիզմի որոշման փորձաքննությունների ժամանակ կիրառվում են ճանապարհային երթևեկությունը կարգավորող իրավական ակտերի մի շարք կանոններ² և այլն: Ահա նշված և այլ դեպքերում արդյո՞ք փորձագետների կողմից համապատասխան իրավական ակտերի կիրառումը պետք է

¹ Փորձագիտական վարույթներ՝ ՀՀ Գ.ԱՍ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ արխիվ, փորձագիտական վարույթներ՝ թիվ 08-0904, 04.03.2009թ., ըստ թիվ 16110708 քրեական գործի, թիվ 09-1639, 18.09.2009թ., ըստ թիվ 83169408 քրեական գործի, թիվ 09-1714, 22.09.2009թ., ըստ թիվ 83159908 քրեական գործի, թիվ 09-2348, 04.12.2009թ., ըստ թիվ 69104909 քրեական գործի, թիվ 09-719, 07.09.2009թ., ըստ թիվ 83153108 քրեական գործի, թիվ 09-1160, 23.06.2009թ., ըստ թիվ 83158508 քրեական գործի, թիվ 09-0005, 14.04.2009թ., ըստ թիվ 49104408 քրեական գործի, թիվ 09-2291, 25.05.2010թ., ըստ թիվ 19120909 քրեական գործի, թիվ 09-1049, 15.06.2009թ., ըստ ՀՀ ԿՍ ՊԵԿ քննչական վարչության կողմից նախապատրաստված նյութերի:

² Փորձագիտական վարույթներ՝ ՀՀ Գ.ԱՍ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ արխիվ, փորձագիտական վարույթներ՝ թիվ 10-0694, 16.07.2010թ., ըստ թիվ 56101409 քրեական գործի, թիվ 09-1144, 06.07.2009թ., ըստ թիվ 83166508 քրեական գործի, թիվ 09-2337, 12.05.2010թ., ըստ թիվ 84100209 քրեական գործի, թիվ 09-0078, 14.04.2009թ., ըստ թիվ 83155408 քրեական գործի, թիվ 09-1161, 23.03.2009թ., ըստ թիվ 83158508 քրեական գործի, թիվ 09-2359, 03.12.2009թ., ըստ թիվ 84102109 քրեական գործի, թիվ 09-1094, 28.01.2010թ., ըստ ՀՀ Արարատի մարզի մարզային նստիկանության քննչական բաժ. կողմից նախապատրաստված նյութերի:

դիտել որպես «իրավական փորձաքննություն» կամ «իրավական գնահատական»:

Դատական պրակտիկայում հնարավոր է նաև հակառակ իրավիճակը, երբ փորձագետը պարտավոր չէ և իրավունք չունի «իրավական գնահատականներ» տալ գործի հանգամանքների վերաբերյալ:

Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 5-րդ - մասը սահմանել է քմբամիջոցների և հոգեմետ նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը՝ համաձայն քրեական օրենսգրքին կից N 1 հավելվածի, 275-րդ հոդվածի 5-րդ - մասը սահմանել է բունավոր նյութերի ցանկը՝ համաձայն նույն օրենսգրքի N 2 հավելված, իսկ նույն հոդվածի 6-րդ մասում օրենսդիրը շարադրել է խիստ ներգործող նյութերի խոշոր չափերը՝ համաձայն օրենսգրքի N 3 հավելված:

Փաստորեն քրեական գործերով որոշելու համար, թե փորձաքննության ներկայացված նյութն ընդգրկված է, արդյոք, նշված հավելվածներում թվարկված նյութերի ցանկում, փորձագիտական և դատական պրակտիկայում փորձագետը եղակացությունը շարադրելիս հղում է կատարում քրեական օրենսգրքի նշված հավելվածներին՝ հաստատելով կամ ժխտելով նյութի՝ թմրանյութ, հոգեմետ կամ բունավոր լինելը:

Հարց է առաջանում՝ որքամո՞վ է արդարացված նման պրակտիկան, և արդյո՞ք այն չի հակասում իրավական հարցերով փորձաքննություն նշանակելու արգելքին: Չե՞ որ քրեական օրենսգրքը կիրառող սուբյեկտը վարույթն իրականացնող մարմինն է, և փորձագետի խնդիրը պետք է լինի միայն նյութի բաղադրությունը և քանակը որոշելը, իսկ դրա՝ քրեա-

կան օրենսգրքի վերը նշված ցանկերից որևէ մեկում ընդգրկված լինելը վարույթն իրականացնող մարմնի իրավասությունն է:

Խնդիրը հատկապես ակնհայտ է դառնում քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում տրվող փորձագիտական եզրակացությունների դեպքում: Բանն այն է, որ փորձագիտական համապատասխան մեթոդիկաների բացակայության դեպքում կարող է անհրաժեշտություն առաջանալ քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտին համապատասխան փորձաքննությունը կատարել մեկ այլ երկրում, որտեղ փորձաքննությամբ պարզված նյութն այդ պետության օրենսդրությանը համապատասխան կարող է չդասվել քունավոր, հոգեմետ կամ թմրամիջոց հանդիսացող նյութերի ցանկին և չառաջացնել պատասխանատվություն, և՝ հակառակը: Այնուամենայնիվ, քրեական պատասխանատվության հարցը որոշելը փորձագետի խնդիրը չէ. փորձագետն այդ դեպքում ընդամենը պետք է եզրակացություն տա փորձաքննության ներկայացված նյութի և դրա չափաբանակի մասին, իսկ եզրակացության օգտագործումը որպես ապացույց՝ համապատասխան հանձնարարությունը ներկայացրած պետության վարույթն իրականացնող մարմնի խնդիրն է:

Այսպիսով, ելնելով վերը շարադրված վերլուծությունից, կարծում ենք, իրավական հարցերով փորձաքննություն նշանակելու հնարավորությունը օրենսդրություն սահմանափակելն արդարացի չէ: Հատկապես, քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում իրականացվող՝ հանցագործությունների քննության ժամանակ (ինչպես նաև օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթի ըն-

թացքում ծագող իրավական հարցերով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին համապատասխան) ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ վարույթն իրականացնող մարմնին պետք է իրավունք վերապահել այդ հարցերով նշանակելու իրավական փորձաքննություն՝ օտարերկրյա իրավունքի կիրառման անհրաժեշտության դեպքում գործի համար նշանակություն ունեցող հաճգամանքները համապատասխան փորձագիտական եզրակացությամբ հաստատելու համար:

Իրավական փորձաքննության նշանակման և կատարման անհրաժեշտությունը, ինչպես արդեն նշել ենք, շատ դեպքերում ծագում է նաև ներպետական օրենսդրության ճիշտ մեկնարանման և կիրառման գործընթացում՝ հատկապես քրեափրավական բլանկետային նորմերին առնչվելիս: Այդպիսի նորմերի ճիշտ կիրառման և իրավունքի միատեսակ զարգացման ապահովման գործում, մեր կարծիքով, իրավական փորձաքննությունը կարող է մեծ դեր ունենալ:

Հարկ է նկատել, որ իրավական բնույթի հետազոտություններին կամ իրավական փորձաքննությանը բնութագրական են դատական փորձաքննություններին բնորոշ հիմնական հատկանիշները՝

- ◆ *այդ հետազոտությունները կատարվում են հասուն գիտելիքների հիման վրա,*
- ◆ *հետազոտություններն իրականացվում են քրեական դատավարության առանձին սուբյեկտի՝ իրավագետ-փորձագետի կողմից,*
- ◆ *իրավական հետազոտությունների արդյունքում կազմվում է առանձին դատավարական փաստաքույր, որը կարող է օգտագործվել որպես փորձագիտական եզրակացություն,*

- ♦ իրավագետ-փորձագետի կողմից տրված եզրակացությունը գնահատվում է քրեակամ գործով վարույթի լճթացքում ձեռք բերված այլ ապացույցների հետ համակացությամբ:

Ստացվում է, որ կան բոլոր նախադրյալները՝ վերացնելու քրեադատավարական օրենսդրությամբ առկա արգելքն իրավական փորձաքննություն նշանակելու առնչությամբ և հնարավորություն ընձեռել դատափորձագիտական պրակտիկայում զարգացնելու դատաիրավական փորձաքննությունը՝ որպես դատական փորձաքննության ինքնուրույն տեսակ, որը կումենա իր խնդիրները, մերությունը, առարկան, օրյեկտը:

Մեր կարծիքով, իրավական փորձաքննության նշանակման և կատարման արգելքի վերացման կամ *jura novit curia* սկզբունքից բացառություններ նախատեսելու դեպքում իրավագետ-փորձագետի կողմից տրված եզրակացությունը՝ գործի համար ապացուցողական նշանակություն ունենալուց, ինչպես նաև դատավարական ժամկետների արդյունավետ օգտագործմանը, ճիշտ և հիմնավորված դատական ակտի կայացմանն օժանդակելուց բացի, կնապաստի նաև կանխել և վերացնել օրենքներում առկա հակասություններն ու բացառել իրարամերժ դրույթների առկայությունը կամ դրանց կիրառությունը: Բացի դրանից, իրավական փորձաքննությունների կատարման օրենսդրական կարգավորումը հնարավորություն կտա առավել արդյունավետ դարձնել օտարերկրյա նորմի կիրառությունը՝ դրանով նպաստելով ազգային օրենսդրության զարգացմանը՝ միջազգային իրավունքին համապատասխան:

Ավելացնենք նաև, որ «իրավական փորձաքննության» կատարումը և իրավագետ-փորձագետի կողմից փորձագիտական եզրակացություն տալը չի նշանակում, որ նախնական քննության մարմինների կամ դատարանի համար իրավական

գիտելիքների իմացությունը դառնում է ոչ պարտադիր կամ ապացուցման բեռը դրվում է փորձագետի վրա՝ խախտելով մրցակցության սկզբունքը քրեական դատավարությունում։ Իրավական փորձաքննությունը, ինչպես մյուս դատական փորձաքննությունները, կունենա իր հստակ խնդիրները, հետազոտության առարկան, օբյեկտը, մեթոդները։ Ընդ որում, օրենսդրություն կարող են սահմանվել նաև այն դեպքերը, երբ անհրաժեշտ է նշանակել իրավական փորձաքննություն՝ կանխելու համար բոլոր հնարավոր չարաշահումները։ Բացի դրանից, իրավական փորձաքննության արդյունքում տրված փորձագիտական եզրակացությունը վարույթն իրականացնող մարմնի կողմից կգնահատվի որպես ինքնուրույն ապացույց՝ գործով ձեռք բերված մյուս ապացույցների համակցությամբ, և ապացույցների ազատ գնահատման սկզբունքին համապատասխան՝ չի կարող ավելի կամ նվազ նշանակություն ունեցող այս կամ այն հանգանանքը հաստատելու համար։

§3. Հատուկ գիտելիքների կիրառման ձևերի

ընդհանուր բնութագիրը

Հանցագործությունների քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման ձևերի հարցի վերաբերյալ իրավաբանական գրականությունում միասնական մոտեցում չկա։

Իրավաբան-գիտնականների մի մասի կարծիքով քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների կիրառման

ձևերը բաժանվում են դատավարականի և ոչ դատավարականի, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվածի և կարգավորվածի, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվածի, բայց չկարգավորվածի և քրեական դատավարության օրենսգրքով չնախատեսվածի և չկարգավորվածի¹:

Մեզ համար, համենայնեպս, անհասկանալի է, թե որտեղ և ինչպիսի հանգամանքներում հատուկ գիտելիքները կարող են օգտագործվել ոչ դատավարական ձևով:

«Ոչ դատավարական» և «քրեադատավարական օրենսդրությամբ հատուկ գիտելիքների կիրառման ձևերը չնախատեսված և չկարգավորված» հասկացությունները, մեր կարծիքով, անբույլատրելի են: Հակառակ դեպքում կստացվի, որ քննիչը քրեական գործերի քննության ընթացքում, ինչը դատավարական գործունեությունն է, կարող է հատուկ գիտելիքները կիրառել ոչ դատավարական ձևով: Այդ դեպքում ինչպես պետք է այդ փաստը երևա քրեական գործի նյութերում: Չէ որ հատուկ գիտելիքների կիրառման փաստը պետք է արտացոլվի քրեական գործի նյութերում:

Ընդհանրապես անհասկանալի է, թե ինչպես կարող է դատավարական գործունեությունում հատուկ գիտելիքները ոչ դատավարական ձևով կիրառվել, եթե ՀՀ քր. դատ. օր.-ի 1-ին հոդվածը սահմանում է.

¹ Տե՛ս *Աժամանակակից պարագաների մասին օրենսդրություն*՝ Եղիշեական Հանրապետություն, 1980, էջ 109; *Աժամանակակից պարագաների մասին օրենսդրություն*՝ Եղիշեական Հանրապետություն, 1987, էջ 10-11; *Խաղաղության պահպանի մասին օրենսդրություն*՝ Խաղաղության պահպանի մասին օրենսդրություն, 1964, էջ 52:

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:»

2. Քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված վարույթի կարգը պարտադիր է դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար:

Այլ օրենքներում պարունակվող քրեական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին»:

Կամ, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 1-ին և 6-րդ, 57-րդ հոդվածի 6-րդ, 53-րդ հոդվածի 4-րդ կետերի, համապատասխանաբար. «Զննիչը պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով իրականացնում է նախաքննություն»: «Զննիչն իրականացնում է նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ»: «Հետաքննության մարմինն իրականացնում է նաև սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ»: «Քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում դատախազն իրականացնում է նաև սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ»: Այսինքն՝ քննիչի, հետաքննության մարմնի աշխատակցի, դատախազի ամբողջ գործունեությունը դատավարական է:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների կիրառումը կարող է լինել միայն ու միայն դատավարական ձևով և քննիչը, հետաքննության մարմնի աշ-

խատակիցը, դատախազը և դատարանը հանցագործություն-ների քննության ընթացքում հատուկ գիտելիքներ կարող են կիրառել միայն մեկ, այն է՝ դատավարական ձևով:

Հանցագործությունների քննության ընթացքում փորձագետների կողմից հատուկ գիտելիքները նույնպես կիրառվում են դատավարական ձևով: Միաժամանակ նա օգտագործում է կրիմինալիստիկական և այլ քնազավառի հատուկ գիտելիքներ, հմտություններ և ունակություններ: Եթե փորձագետը քննչական գործողություններին ներգրավվում է մասնագետի կարգավիճակով, ապա նա՝ որպես փորձագիտական իհմնարկի աշխատակից, ձեռք է բերում մասնագետի դատավարական կարգավիճակ և հատուկ գիտելիքները նույնպես կիրառում է դատավարական ձևով:

Հատուկ գիտելիքների կիրառումը քրեական գործերի նախնական կամ դատական քննության յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ունի խիստ նպատակային նշանակություն. դա այս կամ այն օբյեկտի (իրադրության) գիտական հետազոտումն է, որը քննություն իրականացնող մարմնին կամ դատարանին հնարավորություն է տալիս ստանալ նոր փաստական տվյալներ:

Գիտության և տեխնիկայի զարգացումն ընդլայնում է հատուկ գիտելիքների կիրառման հնարավորությունները՝ նպաստելով քրեական դատավարության խնդիրների արդյունավետ իրականացմանը:

Հատուկ գիտելիքների կիրառման դատավարական ձևերի շարքում օգտագործվում են հատուկ գիտելիքների կիրառման դիապազոն (ծավալ), հատուկ գիտելիքների կիրառման ոլորտ և հատուկ գիտելիքների կիրառման դատավարական մակար-

դակ հասկացությունները, ինչպես նաև հատուկ գիտելիքների դասակարգումը երկու, երեք և ավելի ձևերի, որոնք իրենց մեջ ներառում են՝ փորձաքննությունների իրականացումը, մասնագետի մասնակցությունը քննչական գործողություններին, հատուկ գիտելիքների կիրառումն անմիջականորեն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, դատարանի կազմի կողմից՝ իրենց գործառույթներն իրականացնելիս, գործի քննությանը բարգմանչի, մանկավարժի ներգրավումը, ստուգումներ կատարելը, իրազեկ անձի տեղեկատվական գործունեությունը¹:

Հատուկ գիտելիքները քրեական դատավարությունում կիրառվում են 3 ոլորտներում.

1.Հատուկ գիտելիքների կիրառումը մինչև քրեական գործի հարուցումը:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, քննիչը, մասնավորապես, լիազորված է՝ «մինչև քրեական գործ հարուցելը նախապատրաստվող նյութերով կատարել դեպքի վայրի զննություն, հետազոտման համար վերցնել նմուշներ և նշանակել փորձաքննություն.»: Նշված դատավարական գործողությունները ինչպես տեսությունում, այնպես էլ պրակտիկայում ընդունված է համարել սկզբնական կամ անհետաձգելի գործողություններ: Այս ոլորտում լայնորեն

¹ Տե՛ս *Ծեռագիր Ա. Է.* Առջևադեմ առաջնահանձնությունների մասին օրենսդրությունը՝ առաջնահանձնությունների մասին օրենսդրությունը, 1978, էջ 25-26; *Առաջնահանձնությունների մասին օրենսդրությունը*, 1970, էջ 82; *Էջների Ա. Է., Ծեռագիր Ա. Ա.* Եղանակը՝ առաջնահանձնությունների մասին օրենսդրությունը, 1987, էջ 51; *Առաջնահանձնությունների մասին օրենսդրությունը*, 1992:

կիրառվում են հասուկ գիտելիքներ: Այսինքն, կարող ենք վստահաբար ասել, որ առանց հասուկ գիտելիքների կիրառման հնարավոր չէ պատկերացնել այս դատավարական գործողությունների արդյունավետ իրականացումը:

2.Հասուկ գիտելիքների կիրառումը նախնական քննության ընթացքում:

Այս փուլի, որն իր մեջ ներառում է ինչպես հետաքննությունը, այնպես էլ նախաքննությունը, որի նպատակներից է ապացույցների ձեռք բերումը: Իսկ ապացույցները հիմնականում ձեռք են բերվում քննչական գործողությունների իրականացման արդյունքում: Քննչական գործողությունների ընթացքում օրենքը նախատեսում է մասնագետի մասնակցությունը, իսկ որոշ դեպքերում նույնիսկ պարտադիր մասնակցությունը՝ օրինակ արտաշիրմման ժամանակ:

3.Հասուկ գիտելիքների կիրառումը դատական քննության ընթացքում:

Դատական քննության ընթացքում նույզես կարող են կիրառվել հասուկ գիտելիքներ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել փորձաքննություն նշանակելու մասին:

Դատական քննության ժամանակ կողմերն իրավունք ունեն միջնորդելու դատարանին փորձաքննություն նշանակելու, եթե նախաքննության ժամանակ փորձաքննություն չի նշանակվել:

Փորձագետի եզրակացությունը բավականաչափ պարզ կամ լրիվ չհամարվելու, ինչպես նաև փորձագետների միջև

տարածայնություններ լինելու դեպքում դատարանը կարող է նշանակել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն:

Իրավաբանական գրականությունում խոսվում է հատուկ գիտելիքների կիրառման երեք և ավելի ոլորտների մասին: Օրինակ Վ. Ի. Շիկանովի կարծիքով հատուկ գիտելիքների կիրառման ինքնուրույն ոլորտ է հանդիսանում այն խնդիրների իրականացումը, որոնք կապված են հանցազործությունների կանխման, խափանման և լուծման հետ, որն էլ իրենից ներկայացնում է հետաքննության մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեությունը¹:

Սակայն մեր կարծիքով քրեական դատավարությունում հատուկ գիտելիքները կիրառվում են վերը նշված երեք ոլորտներում:

Հատուկ գիտելիքները քրեական դատավարությունում և հետաքննության մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեությունում պետք է կիրառվեն օրենքի պահանջներին խիստ համապատասխան և պետք է հանգեն հետևյալին.

- Հատուկ գիտելիքները և համապատասխան գիտատեխնիկական միջոցների կիրառումը հնարավոր է, եթե դրա համար կամ անհրաժեշտ իրավական հիմքերը: Վերջիններու պետք է ուղղակիորեն նախատեսված լինեն օրենքով կամ անմիջականորեն բխեն օրենքից:
- Հատուկ գիտելիքները և գիտատեխնիկական միջոցները օգտագործելիս յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է անշեղորեն պահպանել այն կարգն ու պայմանները, որոնք նախատեսված են դատավարական օրենքով և ենթաօրենսդրական ակտերով:

¹ Տե՛ս **Ծեսան Ա. Է.** Անձնագիր նաև անձնագիր օգանությունը անձնագիր է նույնագույն անձնագրության համար համար կամ անհրաժեշտ պահպանել այն կարգն ու պայմանները, որոնք նախատեսված են դատավարական օրենքով և ենթաօրենսդրական ակտերով:

- Հասուկ զիտելիքներ և զիտատեխնիկական միջոցներ օգտագործող սուբյեկտների թվում կարող են հանդես գալ միայն այն անձինք, ովքեր լիազորված են օրենքով և ենթաօրենսդրական ակտերով:

Վ. Ի. Շիկանովի կարծիքով հասուկ զիտելիքները քրեական դատավարությունում կիրառվում են հետևյալ ձևերով.

- Հասուկ զիտելիքների կիրառումն անմիջականորեն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, դատարանի կազմի կողմից. սուբյեկտներ, որոնք քրեական դատավարության օրենսդրին համապատասխան պարտավոր են հակաքել, գնահատել և ստուգել ապացույցները:
- Հասուկ զիտելիքների կիրառումն իրազեկ անձի կողմից՝ առանց նրան քննչական գործողություններին ներգրավելու (օրինակ՝ խորհրդատվություն հասուկ հարցերի վերաբերյալ, տարրեր տեսակի տեղեկանքների ստացում):
- Ոչ դատական քննությունում արդյունքների կիրառումը (օրինակ՝ վարչական), ինչպես նաև առանձին օբյեկտների հետազոտման արդյունքները, որոնք ստացվել են նշված քննության ընթացքում կամ այլ պայմաններում (օրինակ՝ դիակի հետազոտման ախտաբանական-անատոմիական արդյունքները):
- Հասուկ զիտելիքների կիրառումը մասնագետի կողմից, որը քրեական դատավարության ընթացքում օժոված է դատավարական իրավունքներով ու պարտականություններով:
- Հասուկ զիտելիքների օգտագործումը փորձագետի կողմից, որը քրեական դատավարության ընթացքում օժոված է դատավարական իրավունքներով ու պարտականություններով:
- Հասուկ զիտելիքների օգտագործումը թարգմանչի և այն անձի կողմից, որը հասկանում է խոլ, համր անձանց նշանները:
- Քննիչի կամ դատարանի հանձնարարությամբ տեխնիկական կամ կամ այլ հետազոտություններ կատարելը¹:

¹ Տես ՕԵԿԱՄԱ Է. Էմ՝ 1 ընդհանական առօնական նույնության մասին օրենքը, 1976, էջ 7-8:

Բ. Մ. Բիշմանովի կարծիքով դատավարական ձևի սահմաններում հատուկ գիտելիքները կարելի է կիրառել հետևյալ ձևերով.

- *Մասնագետի մասնակցությունը դատավարական գործողություններին և դատավարական հարկադրանքի միջոցների կիրառելիս:*
- *Փորձաքննությունների իրականացումը:*
- *Հատուկ գիտելիքների կիրառումն անմիջականորեն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, դատարանի կազմի կողմից՝ ապացույցների հավաքման, հետազոտման և զնահատման գործառությների իրականացնելիս:*
- *Քննիչի կողմից սեփական հատուկ գիտելիքների կիրառումը կազմակերպա-տեխնիկական աշխատանքում, որոնք կապված չեն քննչական գործողությունների իրականացման հետ:*
- *Քննիչի կողմից սեփական հատուկ գիտելիքների կիրառումը պրոֆիլակտիկական հանձնարարականներ մշակելիս:*
- *Մասնագետի կողմից քննիչին տրվող տեղեկությունները:*
- *Մասնագետի կողմից քննիչին ցույց տրվող կազմակերպա-տեխնիկական աջակցությունը որոշակի աշխատանքների կատարմանը, որոնք կապված չեն քննչական գործողությունների իրականացման հետ¹:*

Հատուկ գիտելիքների և գիտա-տեխնիկական միջոցների օգտագործումը, կախված նրա կիրառման ոլորտից և այն ձևերից, որոնցով ենթարկվում է քրեական դատավարության խնդիրների իրականացմանը, ունի իր առանձնահատկությունները: Սակայն, կարևոր այն է, որ ստացված արդյունքները,

¹ Տե՛ս *Ածուծութեա Ա. Ի.* . Ենթած է ուժի առաջնահատկությունը կատարելու մասին օրենքը, որը հաստի կարգության է և ուժի մեջ մտնելու օրը՝ 2003 թվականի հունվարի 1-ին: Տարբերակը հաստի կարգության է և ուժի մեջ մտնելու օրը՝ 2003 թվականի հունվարի 1-ին:

դատավարական առումով, գնահատվեն դատավարության օրենքին համապատասխան:

Հատուկ գիտելիքների կիրառումը քրեական դատավարությունում պետք է տարբերել մի քանի դատավարական մակարդակներում:

Այսպես, Վ. Ի. Շիկանովը նշում է հատուկ գիտելիքների կիրառման երեք մակարդակ (աստիճան):

1. *հատուկ գիտելիքների կիրառումը քննիչի, դատախազի, դատարանի, մասնագետի կողմից,*
2. *տեղեկատվական քննութիւնների ժամանակակից օգտագործում,*
3. *հատուկ գիտելիքների օգտագործումը փորձաքննությունների ժնով¹:*

Ինչպես երևում է Վ. Ի. Շիկանովի դասակարգումից, քննիչի, դատախազի, դատարանի հատուկ գիտելիքները միևնույն հարթության վրա են դրված մասնագետի գիտելիքների հետ, ինչը ի սկզբանե նվազեցնում է մասնագետի գիտելիքների մակարդակը և համապատասխանաբար, նաև նրա դերը քրեական դատավարությունում:

Կարծում ենք, որ Վ. Ի. Շիկանովը դասակարգել է ոչ թե հատուկ գիտելիքների կիրառման մակարդակը, այլ դրանց իրագործման ձեր քրեական դատավարությունում: Հատուկ գիտելիքների կիրառման մակարդակը պետք է բխի մարդու՝ ցանկացած քնազավառի տեսական հատուկ գիտելիքների իրագործման կոնկրետ ունակություններից ու հմտություններից, որպեսզի նախնական քննության ընթացքում թույլ չտրվի

¹ Տե՛ս **Шиканов В.И.** Проблемы использования специальных познаний и научно-технических новшеств в уголовном судопроизводстве: Автореф. дис. ... д-ра юрид. Наук, М., 1980, էջ 5:

գիտատեխնիկական միջոցների կիրառման կազմակերպչական, դատավարական, տակտիկա-տեխնիկական սխալներ:

Մեր կարծիքով մասնագետի կողմից կիրառվող հատուկ գիտելիքները պետք է դրվի առանձին մակարդակի վրա, և պետք է տարբերել հատուկ գիտելիքների կիրառման ոչ թե երեք, այլ չորս մակարդակ:

Դատավարական մակարդակներից առաջինը կլինի հատուկ գիտելիքների և գիտա-տեխնիկական միջոցների կիրառումը անմիջականորեն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատարանի կազմի կողմից՝ կապված քննչական և այլ դատավարական գործողությունների իրականացման ընթացքում փաստական տվյալների հայտնաբերման և ամրագրման հետ: Հատուկ գիտելիքների կիրառումն առավել արտահայտված է այս մակարդակում:

Հաջորդ մակարդակում հատուկ գիտելիքը կիրառվում է իրազեկ՝ անձի կողմից, ով քրեական դատավարությունում ներգրավվում է որպես մասնագետ: Համաձայն գործող քրեադատավարական օրենսդրության դրույթների, մասնագետի խնդիրն է ապացույցներ հայտնաբերելիս, վերցնելիս և ամրապնդելիս օժանդակել հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին և դատարանին:

Երրորդ մակարդակն իրազեկ անձանցից, կազմակերպություններից, հիմնարկներից ստացված հարցա-տեղեկատվական բնույթի տեղեկությունների կիրառումն է: Եթե հիշատակված տեղեկությունները նախնական քննության մարմնի-

• Իրազեկ – 1. որևէ բանի մասին տեղեկություն ստացած, տեղյակ պահված,
2. իմացող, լսվատեղյակ, գիտակ, ծանոք, տե՛ս Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, Ա-Զ, էջ 506:

ները և դատարանը ստանում են պատշաճ ձևակերպված պաշտոնական փաստաթղթի տեսքով, ինչպես նաև եթե դրա համար պահպանված են դատավարության օրենքի պահանջները, ապա վերջիններս ապացուցման ընթացքում օգտագործվում են ընդիանուր իհմունքներով: Քննչական և դատական մարմինների հանձնարարությամբ ակտերի անցկացված տեխնիկական և այլ հետազոտումը կազմում են այս մակարդակի ապացուցողական տեղեկությունը:

Քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների օգտագործման դատավարական չորրորդ մակարդակն է կազմում իրազեկ անձի գիտելիքների օգտագործումը փորձաքննության ձևով:

Քննչական և դատական մարմինների կողմից առաջադրված հարցերի վերաբերյալ փորձագետի հետևողությունները, նրա կողմից արված եզրակացությունը դիտվում է որպես ապացույց:

Հետաքննության մարմինների կողմից հատուկ գիտելիքները և գիտատեխնիկական միջոցները լայնածավալ կիրառվում են նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում, որը ոստիկանության ֆունկցիաներից մեկն է: Նախաքննության մարմիններն օպերատիվ-հետախուզական նյութերը կարող են օգտագործել միայն օպերատիվ նպատակներով: Նշվածները քրեական դատավարությունում ապացուցողական նշանակություն չունեն:

Ոլորտի և դատավարական մակարդակի հստակ սահմանագատումը էականորեն հեշտացնում է շատ հարցերի ճիշտլուծում՝ կապված քրեական դատավարությունում հատուկ

գիտելիքների և կրիմինալիստիկայի գիտատեխնիկական միջոցների օգտագործման հետ:

Ստորև մենք կանգ կառնենք քրեական դատավարությունում հասուլ գիտելիքների կրառության մի ձևի վրա. դա իրազեկ անձանց ներգրավումն է մասնագետի դատավարական ֆունկցիաների կատարմանը:

Մինչինավորիսական ժամանակներում ռուսական քրեական դատավարությունում իրազեկ անձին հրավիրել են այն դեպքերում, «երբ գործի հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ է եղել հասուլ գիտելիքներ կամ փորձագործություն՝ գիտության, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում»¹:

ՀՀ քրեական դատավարությունում մասնագետի մասնակցության ինստիտուտն առաջին անգամ օրենսդրական ձևակերպում ստացավ ՀՍՍՀ 1961թ. քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 124¹):

Այս կապակցությամբ Հ. Մ. Պիվազյանը գրել է. «Ուսապորվիկայի 1961թ. Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է նաև մասնագետի մասնակցությունը քրեական դատավարությանը: Այս ինստիտուտը առաջին անգամ է իր օրենսդրական ձևակերպումը ստանում: Բայց չնայած դրան լայն տարածում է գտել պրակտիկայում: Անթույլատրելի է մասնագետ հասկացության նույնացումը փորձագետ հասկացության հետ»²:

¹ Տե՛ս Օնոնա օձի ընկանառ պոան ի ծի էջան անոնա, 1864թ. ի լուսական առաջին անոնա, 1910 թ. առաջին անոնա (Նոնա օձի պոան ի ծի էջան անոնա, 1911 թ. առաջին անոնա):

² Տե՛ս Պիվազյան Հ. Մ., Փորձաքննությունը ըստ Հայկական ՍՍՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի, «Դատական փորձաքննության հարցեր», Ժողովածու 1, Երևան, 1962, ԵՊՀ-ի հրատարակչություն, էջ 45:

Քրեական դատավարությունում քննչական գործողությունների իրականացման ժամանակ մասնագետի մասնակցությունը՝ իրենց մասնագիտությանը կամ հատուկ գիտելիքներին համապատասխան կարող է լինել պարտադիր և ֆակուլտատիվ։ Քննչական գործողությունների իրականացման ընթացքում մասնագետի պարտադիր մասնակցության դեպքեր կարող են լինել.

• *Դիակի արտաքին զննումը՝ նրա հայտնաբերման տեղում*

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի կարգավորում այս քննչական գործողության իրականացման կարգը, իետևաբար չի նախատեսում, որ տվյալ դեպքում դատաքժշկության բնագավառի բժիշկ մասնագետի պարտադիր մասնակցությունը, այլ միայն 217-րդ հոդվածով սահմանում է, որ «...քննիչը կատարում է տեղանքի, շինությունների, առարկաների, փաստաթղթերի, կենդանիների, մարդու կամ կենդանու դիակի զննում»։

Դիակի զննության առանձնահատկությունը պետք է լինի այն, որ դրան պարտադիր մասնակցի բժիշկ, որպես կանոն, դատական բժշկության բնագավառի մասնագետ։ Հետո միայն անհրաժեշտության դեպքում դիակի զննությանը ներգրավել այլ մասնագետներ։

Նույնիսկ դիակի արտաքին զննության իրականացման ընթացքում դատական բժշկության բնագավառի մասնագետի պարտադիր մասնակցությունը հայրենական հեղինակների կողմից իրավացիորեն համարվում է առանձնահատկություն։ «Դիակի զննության առանձնահատկությունն այն է, որ դրան պարտադիր մասնակցում է բժիշկ, որպես կանոն, դատական

բժշկության բնագավառի մասնագետ: Անհրաժեշտության դեպքում դիակի զննությանը կարող են ներգրավվել նաև այլ մասնագետներ¹:

ՀԽՍՀ 1961թ. քր. դատ. օր.-ում դիազննությունը նախատեսված էր առանձին հոդվածով (հոդված 171), որով սահմանված էր, որ «Դիակի արտաքին զննությունը նրա հայտնաբերման վայրում կատարում է քննիչը ընթերակաների ներկայությամբ և դատարժշկական բնագավառի մասնագետ բժշկի մասնակցությամբ, իսկ նրա մասնակցությունն անհնարին լինելու դեպքում՝ այլ բժշկի մասնակցությամբ»: Համանման հոդվածի կա նախատեսված ՌԴ գործող քր. դատ. օր.-ի 178-րդ հոդվածի 1-ին մասում (դիակի զննում: Էքսպումացիա):

Մեր կարծիքով պետք է համապատասխան լրացում կատարել ՀՀ քր. դատ. օր.-ի 218-րդ հոդվածում և ամրագրել, որ դիակի արտաքին զննության ժամանակ դատարժշկության բնագավառի մասնագետի մասնակցությունը պետք է պարտադիր լինի:

- *Արտաշիրմումը (Էքսպումացիա)*

Արտաշիրմումը որոշ հեղինակների կողմից իրավացիորեն չի ճանաչվում որպես ինքնուրույն քննչական գործողություն....դիակը թաղված տեղից հանելը ոչինչ չի ապացուցում, բացի նրանից, որ դիակն այնտեղ է....արտաշիրմումը պետք է դիտարկել որպես դիակի զննության, դատարժշկական փոր-

¹Տես Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, Երևան, 2010, էջ 140:

ձաքննության կամ ճանաչման ներկայացնելու տեխնիկական նախադրյալ¹:

Այս քննչական գործողությունը կատարվում է քննիչի կողմից և դատարժշկության բնագավառի մասնագետի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այլ մասնագետի մասնակցությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 219-րդ հոդվածի 2-րդ մաս): Պետք է նշել, որ ՈԴ քր. դատ. օր.-ով և ՀԽՍՀ քր. դատ. օր.-ով արտաշիրիմումը, որպես ինքնուրույն քննչական գործողություն, չի նախատեսված, այլ դա կազմում է «դիագնոսությանը» նախորդող գործողություն:

- *Մինչև 14 տարեկան անչափահաս վկայի հարցաքննությունը*

ՀԽՍՀ 1961թ. քր. դատ. օր.-ի հոդված 150-ի համաձայն՝ «Մինչև տասնորս տարեկան վկաներին հարցաքննելիս, իսկ քննիչի հայեցողությամբ նաև տասնորսից մինչև տասնվեց տարեկան վկաներին հարցաքննելիս, հրավիրվում է մանկավարժ»:

Անհրաժեշտության դեպքում կանչվում են նաև անչափահասի ծնողները կամ մյուս օրինական ներկայացուցիչները»: Նույնանման հոդված կա նախատեսված ՈԴ քր. դատ. օր.-ի հոդված 178-ում:

ՀՀ քր. դատ. օր.-ով այս քննչական գործողության իրականացման ժամանակ չեր պահանջվում մանկավարժի պարտադիր մասնակցությունը (Մինչև 14 տարեկան, իսկ քննիչի հայեցողությամբ՝ նաև մինչև տասնվեց տարեկան վկայի հարցաքննությունը կատարվում է օրինական ներկայացուցչի ներկա-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 141:

յությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 207-րդ հոդվածի 2-րդ մաս)), այլ պարտադիր է համարում միայն օրինական ներկայացուցչի ներկայությունը: Եվ միայն 2006 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՕ-104-Ն օրենքով կատարված փոփոխությունից հետո 207-րդ հոդվածը վերախմբագրվեց և 2-րդ մասում ամրագրվեց, որ «Մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անշափահաս վկայի կամ անշափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը»: Սակայն ՀՀ քր. դատ. օր.-ի ոչ 6-րդ (Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները), ոչ 76-րդ (տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչները) հոդվածներով չի սահմանում, թե ովքեր կարող են հանդես գալ որպես անշափահաս վկայի օրինական ներկայացուցիչներ:

Այս հարցը իր լուծումը կստանա, եթե ՀՀ քր. դատ. օր.-ի 76-րդ հոդվածում ավելացվի միայն «անշափահաս վկա» բառակապակցությունը:

• *Քննումը*

Անհրաժեշտության դեպքում քննումը կատարվում է դատարժկության քնազավառի մասնագետի կամ քժկի մասնակցությամբ: Քննիչն իրավունք չունի ներկա գտնվել մյուս սերին պատկանող անձին քննելիս, եթե քննումը գուգորդվում է այդ անձին մերկացնելու հետ: Այդ դեպքերում, քննիչի հանձնարարությամբ, քննումը կատարում է դատարժկության քնազավառի մասնագետը կամ քժիշկը (ՀՀ քր. դատ. օր.-ի 220 հոդ-

վածի 3-րդ և 4-րդ մաս): Նույնպիսի դրույթ կար նախատեսված նաև ՀԽՍՀ քր. դատ. օր.-ի հոդված 172-ում:

Խուլ, համբ կամ կույր մեղադրյալի հարցաքննությունը կատարվում է նրա նշանները հասկացող կամ նրա հետ նշաններով բացատրվելու ունակ անձի մասնակցությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 212-րդ հոդվածի 6-րդ մաս):

Հարկ է նշել, որ քննչական կամ դատավարական գործողությանը կոնկրետ մասնագետի պարտադիր մասնակցությունը չի բացառում նույն գործողությանը այլ մասնագետի մասնակցությունը (օրինակ՝ արտաշիրմման ժամանակ բացի դատաքննության մասնագետի պարտադիր մասնակցությունից քննիչն իրավունք ունի որպես մասնագետ իրավիրել սանիտարա-հակահամաճարակային բնագավառի մասնագետի):

Դատավարության օրենքի նորմերով օրենսդիրը հնարավորություն է նախատեսել քննչական գործողությունների իրականացման և դատական քննության ժամանակ մասնագետի՝ իր մասնագիտությանը և հատուկ գիտելիքներին համապատասխան, ոչ պարտադիր մասնակցության դեպքեր, այդ հարցի լուծումը թողնելով քննչական և դատական մարմինների հայեցողությանը: Մասնագետի ոչ պարտադիր մասնակցության դեպքերն են.

1. *Անիրաժեշտության դեպքում խուզարկությանը և առզրավմանը մասնակցում են բարգմանից և մասնագետ (ՀՀ քր. դատ. օր.-ի 227-րդ հոդվածի 2-րդ մաս):*
2. *Առանձին դեպքերում քննիչն իրավունք ունի փոստային, հեռագրական և այլ հաղորդագրությունները առզրավելու ժամանակ իրավիրել համապատասխան մասնագետ:*
3. *Չննություն կատարելու ժամանակ քննիչն իրավունք ունի իրավիրել համապատասխան մասնագետ (ՀՀ քր. դատ. օր.-ի 218-րդ հոդվածի 3-րդ մաս):*

4. Քննիչի հայեցողությամբ մասնագետ կարող է հրավիրվել նաև քննչական փորձարարության ժամանակ (ՀՀ քր. դատ. օր.-ի 242-րդ հոդվածի 2-րդ մաս):
5. Քննիչի կողմից ճայնազրության զննումը և լսումը անհրաժեշտության դեպքում կատարվում է մասնագետի մասնակցությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 241-րդ հոդվածի 6-րդ մաս):
6. Գույքի վրա կաղանք դնելիս հնարավորության դեպքում ներգրավվում է մասնագետ-ապրանքագետ (ՀՀ քր. դատ. օր.-ի 235-րդ հոդվածի 3-րդ մաս):
7. Անձնական խուզարկությունը կարող է կատարվել խուզարկողի հետ նոյն սեռի մասնագետի մասնակցությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 229-րդ հոդվածի 3-րդ մաս):
8. Անհրաժեշտության դեպքում քննիչը նմուշներ կարող է ստանալ փորձագետի կամ մասնագետի մասնակցությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 253-րդ հոդվածի 3-րդ մաս և 255-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ինչպես նկատում ենք, ՀՀ քր. դատ. օր.-ն ամրագրում է մասնագետի հնարավոր մասնակցությունը ոչ բոլոր քննչական գործողություններ իրականացնելիս: Մասնավորապես այդ ցանկի մեջ չեն մտնում առերեսումը, հարցաքննությունը, որտեղ մասնագետի մասնակցության անհրաժեշտություն ևս հնարավոր է: Օրինակ կարծում ենք արդյունավետ կլինի հոգեբան-մասնագետի մասնակցությունը առերեսամանը:

Այս օրինակները վկայում են, որ ոչ միշտ են իրավական նորմերն ամբողջությամբ նախատեսում անխուսափելի իրավիճակները: Գտնում ենք, որ քր. դատ. օր.-ն կամ պետք է լիարժեք անդրադառնա այս հարցին, կամ որոշակի շնախատեսի մասնագետի ֆակուլտատիվ մասնակցության դեպքերը, այլ բոլոր քննչական գործողությունների իրականացման ընթացքում հնարավորություն ընձեռի վարույթն իրականացնող

անձին անհրաժեշտությունն առաջանալու դեպքում հրավիրել համապատասխան ոլորտի մասնագետի:

Քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների առաջարկված ձևերը, ինչպես նաև կրիմինալիստիկական գիտելիքների, ունակությունների, հմտությունների օգտագործումը դատավարական գործունեության սահմաններում ստեղծում են առավել որոշակի դասակարգումներ, որոնք կարող են ունենալ ոչ միայն տեսական, այլ իրավակիրառական նշանակություն:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ հատուկ գիտելիքների կիրառման ձևերն իրենցից ներկայացնում են միայն քրեադատավարական օրենսդրությամբ բույսատրվող և քրեական դատավարության ընթացքում իրականացվող գիտատեխնիկական գործունեության տարրեր եղանակներ:

§ 4.Հատուկ գիտելիքների կիրառման ոչ ավանդական ձևերի ընդհանուր բնութագիրը

Վերջին ժամանակներս, մոտ երկու տասնամյակ, պայմանավորված հանցավորության որակական և ծավալային աճով, մասնագիտական գրականության մեջ հատուկ գիտելիքների կիրառման ավանդական ձևերին զուգահեռ լայնորեն խոսվում է նաև քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների ոչ ավանդական ձևերի կիրառման հնարավորության մասին: Խոսքը հատկապես վերաբերում է պոլիգրաֆի կիրառմանը,

հիանոսի ազդեցությամբ հարցաքննությանը և պայծառատես-ների հետ համագործակցությանը¹:

Փորձենք հակիրճ անդրադառնալ հատուկ գիտելիքների կիրառման հիշատակված ձևերին՝ քրեական դատավարությունում դրանց կիրառման արդյունավետության, նպատակահարմարության և դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Տասնամյակներ շարունակ պոլիգրաֆը կիրառվել է ի նպաստ Եվրոպայում հանցագործությունների դեմ տարվող պայքարի գործի՝ Ասիայի զարգացած երկրներում, Միացյալ Նահանգներում և այլուր: Մինչդեռ խորհրդային դասագրքերում այն խիստ վիճարկվում էր:

Սակայն հետխորհրդային ժամանակաշրջանում ռուսական գրականությունում կրկին ակտիվացան քրեական դատավարությունում պոլիգրաֆի կիրառման վերաբերյալ վիճարկումները: «Պոլիգրաֆի կիրառումը քրեական դատավարությունում ունի ինչպես կողմանակիցներ, այնպես ել հակառակորդներ: Իսկ ո՞վ է ճիշտ²»: «Մոտակա տարիներին քննչական պրակտիկայում կարմատավորվեն պոլիգրաֆները՝ սարք, որը արձագանքում է մարդու օրգանիզմի ստրեսային վիճակը³»:

¹ Տե՛ս Հետрадиционные методы в расследовании преступлений, Тезисы научно-практического семинара ВНИИ МВД России, 1994, *Նեժանի ժեռնական գործությունների պահպանության համարակալիքի առաջնային մեջությունից առաջանակագործության մասին սահմանադրություն*, Խորհրդային ԽՍՀ Վարչական կոմիտեի հրաման, 1994, համար 12:

² Տե՛ս Ենթադրության առաջնային մեջությունը, Խորհրդային ԽՍՀ Վարչական կոմիտեի հրաման, 1994, համար 12:

³ Տե՛ս Ենթադրության առաջնային մեջությունը, Խորհրդային ԽՍՀ Վարչական կոմիտեի հրաման, 1994, համար 12:

Հանցագործություններ քննելիս և բացահայտելիս պոլիգ-րաֆիկ ստուգումների նպատակը կամ խնդիրները կարելի է բնութագրել մի քանի ուղղություններով՝ կասկածյալների խմբից հավանական հանցագործի անձի ճշտում, հանցակազ-մի ճշտում, խմբակային հանցագործությունների դեպքում յու-րաքանչյուրի դերի ճշտում, բաքցված գողոնի, հանցագործութ-յան գործիքի, դիակի գտնվելու վայրի ճշտում, անհետ կորած անձի գտնվելու վայրի ճշտում, կեղծ ցուցմունքի ճշտում, ստացված ինֆորմացիայի իսկության ճշտում և այլն:

Սարքն ունի տարրեր տվյալներ՝ շնչառության, որոնք բա-ժանվում են պնևմատիկի և պեղուկերամիկի, տրեմոռի, զարկե-րակային ճնշման և այլն: Այդ տվյալներն ամրացվում են ստուգ-վողի մարմնի տարրեր մասերին՝ ձեռքի մատերին, կրծքավան-դակին, ոտքերին, որոնք թեստավորման ժամանակ գրանցում են անձի հոգեֆիզիոլոգիական վիճակը:

Պոլիգրաֆի հիմնական էությունն այն է, որ երբ մարդուն հարցեր են տալիս, այդ պահին հուզման հետևանքով անձի օրգանիզմում տեղի են ունենում որոշակի փոփոխություններ (շնչառության արագացում, արյան ճնշման և ջերմաստիճանի բարձրացումներ և այլն), իսկ սարքը ֆիքսում է մարդու օրգա-նիզմում տվյալ պահին տեղի ունեցող բոլոր փոփոխություննե-րը: Այն դեպքում, երբ փորձարկվողը հարցերին տալիս է սուտ պատճախաններ, սարքը ֆիքսում է դրա հետևանքով օրգա-նիզմի այն բոլոր փոփոխությունները, որոնք կապված են ան-ձի շնչառության, ճնշման, ջերմաստիճանի, և այլ սիմպտոմնե-րի հետ: Այդ պատճառով էլ պոլիգրաֆին երբեմն անվանում են նաև ստի դետեկտոր:

Ստուգումները նպատակահարմար է անցկացնել ձայնա-մեկուսացված, չեղոք գույն ունեցող սենյակում, օրվա առաջին կեսին:

Խորհուրդ չի տրվում և սպասված արդյունք չի էլ տա այն անձանց թեստավորումը, ովքեր՝

1. *ունեն սուր սրտանորային անբավարարվածություն,*
2. *գտնվում են հոլիուրյան երկրորդ շրջանում,*
3. *անշափահաս են. ծայրահեղ դեպքերում խորհուրդ է տրվում թեստավորումն անցկացնել մանկավարժների ներկայությամբ,*
4. *մտավոր հետամնաց են,*
5. *գտնվում են ալկոհոլի, թմրամիջոցի կամ հոգեկան ներգործություն ունեցող այլ դեղամիջոցի ազդեցության տակ,*
6. *գտնվում են ուժեղ հոգնածության վիճակում,*
7. *այդ պահին ունեն տարբեր սուր ցավեր,*
8. *գտնվում են պսիխոպարհիայի, շիզոֆրենիայի և էպիլեպ-սիայի սրացման փուլերում:*

Առաջին անգամ պոլիգրաֆները կիրառվել են ԱՄՆ-ում, իսկ Ռուսաստանում այն սկսվել է կիրառվել 1991 թվականից: Այժմ պոլիգրաֆ կիրառվում է աշխարհի շուրջ հիսուն երկրներում: Պոլիգրաֆի կիրառման արդյունքների արդյունավետությունը և հուսալիությունը արդեն 97 տոկոս է¹:

«Հարցաքննությունից ցուցմունքի գնահատման համար օգտագործվում է պոլիգրաֆը (ստի դետեկտոր), որը ֆիքսում է մարդու ֆիզիոլոգիական ռեակցիաները՝ առաջացած արտաքին հոգեկան գրգռիչներից, բայց որը, բնականաբար, ընդունակ չէ դիագնոզել ցուցմունքի անձշտությունը: Իսկ իր՝ պոլիգրաֆի օգտագործումը բուրժուական երկրների քրեական դատավա-

¹ Առավել մանրամասն տես՝ վերը նշված աշխատության էջ 188-193:

բությունում հարցաքննվողի վրա հոգեբանական ճնշում գործադրելու մեթոդներից մեկն է: Դեռևս 1958թ. քրեական դատավարությունում մարդու իրավունքների պաշտպանության պրոբլեմին նվիրված ՍԱԿ-ի սեմինարի բանաձևում ստիգմատները որակվեց որպես «վերադարձ միջնադարյան բարբարոսության և վիրավորանք մարդկային արժանապատվությանը»¹:

Սա այն դեպքում, երբ ներկա հեղինակներն առանց երկմտելու, անվարան նշում են, որ այդ սարքի օգնությամբ ձեռք են բերում տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս նեղացնել հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց շրջանակը, երևան համել կատարված հանցագործության այն փաստերը, որոնք նպաստում են նույնացնել մեղավոր անձանց և նախադրյալներ ստեղծել նրանց կողմից օբյեկտիվ, ճշմարիտ ցուցմունքներ տալու համար, բացահայտելու դրանցում տեղ գտած անձշտությունները, բացրողումները, հնարավորություն ստեղծելու լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար²:

Բայց դրա կողքին հնչում են նաև հետևյալ բնույթի դատողություններ. «...Հնարավո՞ր է արդյոք, որ օրենսդրական կարգավորման համակարգի մանրակրկիտ մշակմամբ և հսկողության պրակտիկ կիրառման բավական խիստ միջոցներով զար-

¹ Տե՛ս *Ի ձեռնութեան Ե. Օ. Ա օծական էեա այց աօցի ա, Էծեւ էի ձեռնութեա. 1 .., 1984, էջ 75-76:*

² Տե՛ս Նեաննութեան նա ձանութեայ, էծեւ էի ձեռնութեա ծանունակ մշակմամբ և հսկողության պրակտիկ կիրառման բավական խիստ միջոցներով զար-

գացած հասարակության մեջ թույլ տրվի կասկածելի գիտական հիմքով մեթոդ: Իհարկե, ոչ»¹:

Սակայն ՈԴ ՆԳՆ գՀԻ հատուկ բաժնում և Անվտանգության դաշնային ծառայությունում ներկայում հետազոտություններ են տարվում քրեական դատավարությունում պոլիգրաֆի կիրառման պայմանների, ձևերի և շրջանակների վերաբերյալ²: Այդ հետազոտությունների հիման վրա մշակվեց հրահանգ «Քաղաքացիներին հարցում անելիս պոլիգրաֆի կիրառման կարգի մասին», որը հաստատվեց Գլխավոր դատախազության, ՈԴ ԱԴԾ և ՆԳՆ կողմից 28.12.1994թ., իսկ ՈԴ ՆԳ նախարարը 1995թ. սեպտեմբերի 12-ին հրաման ստորագրեց (թիվ 353) «Ներքին գործերի մարմինների գործունեության մեջ պոլիգրաֆի ներդրումն ապահովելու մասին»: Իսկ 1995թ. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Դաշնային օրենքի ընդունմամբ պոլիգրաֆի կիրառմն ուղերատիվ-հետախուզական գործունեության մեջ ունեցավ նաև իրավական հիմնավորում³:

Եթե ընդհանրացնենք Ուստատանի Դաշնության դատավարագետների և կրիմինալիստների կարծիքները պոլիգրաֆի կիրառման նպատակահարմարության մասին, կստացվի, որ նրանց մեծ մասը բացասաբար է վերաբերվում դրան:

Ո. Ա. Բեկինի խմբագրությամբ 1998թ. հրատարակված ծավալուն դասագրքում նշված է առարկություններից մի քա-

¹ Տե՛ս *Ի եծե՞աձ Ա., Ծրբաթներ Պ.* Ի 1993 թվականի դաշնության դատավարագետների և կրիմինալիստների կարծիքները պոլիգրաֆի կիրառման նպատակահարմարության մասին, կստացվի, որ նրանց մեծ մասը բացասաբար է վերաբերվում դրան:

² Տե՛ս *Ի ածառական դաշնության պահպանի անձնագիր պահպանի անձնագիր* 1994:

³ Տե՛ս *Էծել եկանոնական պահպանի անձնագիր* 1999:

նիսը, որոնք հանգում են հետևյալին. «Քանը հասել է պոլիգ-րաֆը տաճանքի զործիք հայտարարելուն...», «փորձարկվո-ղին պատճառում է անհավատալի ֆիզիկական տառապանք-ներ», «կեղծ գիտական ճշմարտության բացահայտման և ռեակցիոն մեթոդ է», «նույնիսկ ուղղակի զուգահեռներ են տարվել ինկվիզիցիոն պրոցեսի և պոլիգրաֆի միջև»¹: Ըստ նույն աշխատանքի հեղինակների՝ նշված մասնագետները խորհուրդ են տալիս հաշվի առնել նաև պոլիգրաֆի միջոցով ստացված «ապացույցների» ռեակցիոն էությունը:

Պետք է նկատի ունենալ նաև, որ պոլիգրաֆի կիրառմամբ ստացված ռեակցիաները, ինչպես արդարացիորեն նկատում է Լ. Պ. Օհանյանը, որևէ առանձնահատկությամբ չեն բնութագր-վում, այսինքն՝ նրանք որևէ այնպիսի հատկանիշներ չեն պա-րունակում, որոնք ցույց կտային կատարված հարցումների պատասխանների սուտը կամ ճշմարտացիությունը: Ունակ-ցիաներ կամ դրանց փոփոխություններ կարող են առաջանալ և՛ վախից, և՛ ազնիվ հոգու ներքին ընդվզումից: Այդ պատճա-ռով էլ դրանք պետք է ծառայեն որպես սոուզվողի պատաս-խանները ճշգրտելու միջոց²:

Ըստ վերևում նշված Հրահանգի՝ պոլիգրաֆի կիրառմամբ սոուզվում է ցուցմունքը:

Հայրենական մասնագիտական գրականության մեջ նույնպես ձևավորվել է որոշակի մոտեցում պոլիգրաֆի կիրառ-ման ձևի և արդյունքների նշանակության նկատմամբ: Մենք ևս կիսում ենք Լ. Պ. Օհանյանի տեսակետն այս հարցի կա-պակցությամբ. «Քանի որ պոլիգրաֆի կիրառումն իրականաց-

¹ Տե՛ս *Ի աժաշօթաձ Ա. Ա.* Ի ու 1 հանդիպություն է առ 1966, էջ 391:

² Տե՛ս *Օհանյան Լևոն* Կրիմինալիստիկա, Երևան, 2004, էջ 496:

վելու է որպես քննչական գործողությունը (մասնավորապես՝ հարցաքննությունը) արդյունավետ իրականացնելու միջոց (հետազայռմ), ի լրումն գրականության մեջ եղած բազում կարծիքների, գտնում ենք, որ օրենքը պետք է նախատեսի այն կիրառել ստուգվողի համաձայնությամբ (գիտությամբ), իսկ նրա արդյունքները (ինչպես արտասահմանյան երկրներում, բացառությամբ ԱՄՆ որոշ նահանգների) չի գնահատվելու որպես ապացույց: Նշված երկրներում դրանք մեծ հաջողությամբ օգտագործվում են օպերատիվ-հետախուզական նպատակներով: Նույնը կարելի է իրականացնել մեզ մոտ»¹:

Ակնհայտ է, որ գիտության և տեխնիկայի զարգացումը նպաստում է ոչ միայն հանցագործությունների բացահայտմանը, այլ նաև դրանց կատարման եղանակներին: Բնականաբար հանցագործությունների քննության ժամանակ պետք է օգտագործել ժամանակակից մեթոդներ և տեխնիկական միջոցներ:

Եվ կրիմինալիատիկական տակտիկայի հանձնարարականներով վաղուց ուշադրություն էր դարձվում հարցաքննվողի հոգեֆիզիոլոգիական վիճակին՝ կախված նրան հարցաքննելու պահի, ընթացքի, բովանդակության և որոշ այլ հարցերի հետ: Մասնավորապես, երբ ակնհայտորեն պահը սպառնում է նրա մերկացմանը, սուս ցուցմունքի բացահայտմանը և այլն: Նշված վիճակի մասին են վկայում գունատվելը, կարմրելը, քրտնարտադրությունը, ձեռքերի կամ ողջ մարմնի դողը, ջուր կամ ծխախոտ խնդրելը և այլն: Մասնագետ-դատավարագետների և կրիմինալիստների մի մասը, որոնք ուսումնասիրել են

¹ Տե՛ս վերև նշված նշված աշխատության էջ 499-ը:

հարցաքննվողի հոգեֆիզիոլոգիական վիճակը, գտնում են, որ այն պետք չէ անտեսել, անհրաժեշտ է միայն ճիշտ գնահատել: Դրան կարող է նպաստել պոլիգրաֆի կիրառումը, եթե այն դրվի այնպիսի ուղու վրա, որը կբացառի նրա բովանդակության մեջ մտցնել հարցեր, որոնց պարզաբանումը հնարավոր կամ ուեալ չէ:

Ծես պոլիգրաֆի կիրառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հասկանալի պատճառներով չի նախատեսել, բայց կարծում ենք՝ պոլիգրաֆի առկայության պայմաններում, երբ այն կհավակնի մուտք գործել ՀՀ քննչական պրակտիկա և տեսականորեն նրա կիրառումը կընդունվի որպես տակտիկան հնարք, այն իր օրենսդրական կարգավորումը կստանա որպես հանցագործությունների քննության առաջադեմ, գիտատեխնիկական միջոց:

Մեր կարծիքով պոլիգրաֆը, որպես ժամանակակից գիտա-տեխնիկական միջոց, կարելի է կիրառել որոշակի դեպքերում, պաշտպանի ներկայությամբ և միայն հարցաքննվողի համաձայնությամբ, իսկ արդյունքն էլ չպետք է համարել որպես ապացույց, այլ այն կարող է քննիչի համար հանդիսանա որպես կողմնորոշիչ ինֆորմացիա:

Նշենք, որ ներպետական օրենսդրության վերլուծությունը ցույց տվեց, որ պոլիգրաֆը օրենքով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել օպերատիվ-հետախուզական գործունեության ժամանակ:

Ինչպես հայտնի է, օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում կարող են կիրառվել տարբեր տեսակի տեխնիկական միջոցներ, և համաձայն «Օպերա-

տիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝

- «1. *Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցների ցանկը լիազոր պետական մարմնի ներկայացմանը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*
2. *Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում կիրառվող հատուկ տեխնիկական միջոցները չպետք է վճառ պատճառեն մարդկանց կյանքին ու առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին:*
3. *Արգելվում է գաղտնի տեղեկություններ ստանալու համար նախատեսված (մշակված, ծրագրված, հարմարեցված) հատուկ տեխնիկական և այլ միջոցների օգտագործումը և օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումը սույն օրենքով չլիազորված պետական մարմինների, սոորարաժանումների կամ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից»:*

Իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր 2008 թվականի հուլիսի 31-ի N 810-Ն «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին» որոշմամբ հաստատել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը: Համաձայն նշված ցանկի 8-րդ կետի՝

«Տեխնիկական (այդ թվում՝ նաև ծրագրային) միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են ծպտյալ եղանակով մարդու հոգեֆիզիոլոգիական գործընթացների ակամա փոփոխության, անկեղծությունը բացահայտելու համար (պոլիգրաֆ),

ինչպես նաև ստանդարտ տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հարմարեցված կամ լրացուցիչ մշակված (ձևափոխված) են այդ նպատակների համար»:

Վերջին ժամանակներս մասնագիտական գրականության մեջ վիճարկվում է նաև քրեական դատավարությունում հիպոսի կիրառման հնարավորության հարցը:

1997 թվականին Լ. Պ. Գրիմակն ու Վ. Դ. Խարալեր համահեղինակությամբ հրատարակած գիտական հոդվածում բացահայտորեն հանդես են եկել հանցագործությունների քննության ընթացքում «քննչական հիպոսի» արդյունավետ կիրառման օգտին¹: Հեղինակները, ափսոսանքով փաստելով, որ հայրենական պրակտիկայում այս օպերատիվ մեթոդը մինչ այժմ լայն կիրառում չի ստացել, և վկայակոչելով արտասահմանյան աղբյուրները, նշում են. «Արտասահմանյան տվյալների համաձայն՝ քաղաքացիների հարցման ընթացքում «քննչական հիպոսի» կիրառումը հնարավորություն է տալիս հանցագոր դեպքի վերաբերյալ 77-80% լրացուցիչ տեղեկություններ ստանալ, ընդ որում, հանցագործությունների որոշ մասը բացահայտվում են միայն հիպոսի կիրառման շնորհիվ»²:

Նշված հեղինակները գործնական խնդիր են դնում հիպոսի միջոցով անձից՝ քրեական գործի՝ իր ընկալած հանգամանքների վերաբերյալ լրիվ և արժանահավատ տեղեկություններ ստանալ այն դեպքում, երբ նա չի կարողանում վերատադրել այդ տեղեկությունները՝ բնական մոռացման, ստրե-

¹ Տե՛ս *Ածել ՃԵ ԷՇ Ի., Օհաճեահ Ա. Ա.* “Նեանթանի նե ՃԵ Ի Շ” է յ ծանա ։ ա է ն ա ն ա ն ։ Ա ն ։ է յ ծ ա ն ։ 1997, № 4, է զ 46-49:

² Տե՛ս նշված աշխատության 47 էջը:

սային կամ տրավմատիկ քնույթի հիշողության կորստի հետևանքով:

Նմանատիպ դիրքորոշումն արդարացիորեն քննադատության է արժանացել Ա. Մ. Լարինի և Ա. Ռ. Ռատինովի կողմից. «Բնական մոռացությունն ու հիշողության ստրեսային կամ տրավմատիկ քնույթի կորուստը որակապես տարբեր իրավիճակներ են: Առաջինը հոգեկան քնական երևույթ է, երկրորդը՝ հիվանդագին վիճակ: Համապատասխանաբար տարբեր են և դրանց հայթահարման միջոցները: Մոռացած անձին կարելի է հիշեցնել. դրա համար քրեադատավարական օրենքը նախատեսում է այնպիսի գործողություններ, ինչպես հարցաքննողի մասնակցությամբ տեղազննությունը, ճանաչման ներկայացնելը, առերեսումը և այլն: Հիշողության ստրեսային կամ տրավմատիկ կորստով տառապողին անհրաժեշտ է բուժել: Նման խանգարումների բուժման մեթոդները բժշկության առարկայի մեջ են մտնում և ոչ քեզ՝ օպերատիվ-հետախուզական գործումներյան կամ քրեական դատավարության»¹:

Խնդրի ողջ էությունը հետևյալն է՝ քրեական դատավարությունում օգտագործման համար կարելի է արդյոք բույլատրել իհպնոսի կիրառմամբ ստացված տեղեկությունները: Այս հարցադրումն ունի մի քանի նշանակալից ասպեկտներ. այդ պայմաններում պահպանվո՞մ են մարդու իրավունքները, այդ եղանակով ստացված տեղեկություններն արժանահավա՞տ են, իհպնոսի կիրառումը համապատասխանո՞մ է քրեադատավարական օրենքի պահանջներին ու նպատակներին:

¹ Տես *Էածել Ա. Ի., Թածելի Ա. Թ.* Ծերութանքներ և ինքնազնական առջևության մասին, 1997, № 6, էջ 76-79:

Լ. Պ. Գրիմակն իր մենագրություններից մեկում նշված հիմնախնդիրը լուսաբանել է այլ կերպ, և մեր կարծիքով՝ արդարացի. «Հիպնոսի ենթարկվող անձի վարքագիծը դառնում է նմանողական և որպես հետևաճր բարձրանում է ներշնչողականության աստիճանը, քանի որ նա նմանատիպ բարդ և անծանոթ հանգամանքներում գործելու փորձի պակաս ունի. մարդը ստիպված է ուրիշի հանձնարարություններն ընկալել առանց քննադատական գնահատման՝ ամբողջությամբ ապավիճելով նրա փորձին: Այդ պատճառով առաջինի կամային հատկությունները կարող են բավական ուժեղ լինել, բայց դրանք չեն արտահայտվում «ղեկավարի» հետ փոխհարաբերություններում, այլ ուղղվում են վերջինիս կողմից թելադրվող գործողությունների իրականացմանը¹:»

Այս տեսակետին են նաև շատ տեսարաններ. այսպես, Լ. Շերտովը գտնում է. «Հիպնոսել մեկին, նշանակում է ներշնչման միջոցով նրան ենթարկել քո կամքին, քո ազդեցությանը²:»:

Անկասկած՝ հենց սա է հիպնոտիլի կողմից մարդու կամքի վրա ճնշում գործադրելը: Իսկ այնտեղ, որտեղ ճնշվում է կամքը, արդեն սուբյեկտիվ իրավունքի՝ որպես իր ցանկությամբ, իր շահերով գործելու երաշխավորված հնարավորության համար տեղ չկա: Ինչ-որ չափով նկատի ունենալով այս հանգամանքը՝ հետինակները (Լ. Պ. Գրիմակը, Վ. Դ. Խաբալը) առաջարկում են քննչական հիպնոսը պայմանավորել հարցվողի գրավոր

¹ Տե՛ս *Ածել ձե Է՛. Ի.*. Ենթադրված է, որ այս գործությունը համապատասխան է հիպնոտիլի վեհականությանը: Այս գործությունը կամքային է և անհամար առաջարկություն է համարվում:

² Տե՛ս *Օճառն է Է՛. Ածել ի է*, 1992, էջ 7, ինչպես նաև՝ *Ածել Ի. Է.*, 1992, էջ 1, ինչպես նաև՝ *Ածել Ի. Է.*, 1992, էջ 60, *Ի էծել ի է Է՛. Է.* Ներշնչության մասին հիպնոտիլի առաջարկությունը համապատասխան է հիպնոտիլի վեհականությանը:

համաձայնությամբ՝ ընձեռելով ընտրության հնարավորություն:

Սակայն, մեր կարծիքով, այստեղ նկատի չի ունեցվում, որ քննության՝ հոգեբանական լարվածության բնույթ կրող մքնությունում նմանատիպ ընտրությունը կարող է լինել նաև ոչ կամովին, օրինակ, եթե որպես «քննչական հիպնոսի» այլընտրանք քննիչն ակնարկի կալանքի ենթարկելու մասին:

Պակաս կարևոր չեն նաև մեկ ուրիշ հանգամանք. «Խորը հիպնոսը բնութագրվում է շրջակա միջավայրում կողմնորշման լրիվ բացակայությամբ և հետիփնոսային հիշողության կորսով¹»: Նման իրավիճակում հիպնոսի ենթարկվողը «քննչական հիպնոսի» ընթացքում չի կարող գիտակցել, թե որքանով է իրադրությունը համապատասխանում նրան, ինչին նաև համաձայնություն է տվել և, բնականաբար, չի կարող պաշտպանել իր իրավունքները:

Հարցուփորձ անելով հիպնոսի մեջ գտնվող անձին՝ հիպնոտողը տեղեկություններ փնտրելիս ոչնչով սահմանափակված չեն և անխուսափելիորեն շփվում է այնպիսի հանգամանքների վերաբերյալ խորը ենթագիտակցության մեջ պահպանվող տեղեկությունների հետ, որոնք անձը կցանկանար թաքցնել: Համաձայնվելով հիպնոսին՝ նա չի կարող կանխագուշակել, թե ինչ կարող է դուրս մղվել իր ենթագիտակցությունից: Սրա հետ կապված՝ «քննչական հիպնոսը», չնայած դրա ջատագովների առաջարկած «համաձայնության մասին ստորագրությանը», մեր կարծիքով, հանդիսանում է մասնավոր կյանքի, անձնական և ընտանեկան գաղտնիքի, ինքնամե-

¹ Տե՛ս *Ածե՛ս Ի. Ե.* Ի ուսան յնեօն ծածառ է՛, Ի ., 1974, էջ 60:

դադրման անձեռնմխելիության հետ կապված մարդու սահմանադրական իրավունքների խախտում:

Այսպիսով, «քննչական հիպնոսի» կիրառումը մարդու իրավունքների պաշտպանության դիրքերից բացարձակապես անթույլատրելի է:

Իսկ ինչպե՞ս է գնահատվում այս մեթոդը ստացված տեղեկությունների հուսալիության տեսանկյունից: Հիպնոսի ենթարկված անձի արտահայտություններում հիշողության մեջ պահպանված իրական դեպքերը միահյուսվում են ֆանտազիաներով, վախով, մտացածին ասոցիացիաներով, կանխազգացումներով, գաղտնի ցանկություններով: Ընդ որում, ենթագիտակցականը չի կառավարվում գիտակցության կողմից, ենթակա չէ տարբերակման, նույնացման և միանշանակ մեկնաբանության: Նաև հնարավոր չէ պարզել, թե հիպնոսի ենթարկված անձի ենթագիտակցության վրա ինչպե՞ս կարող են ազդել հիպնոսի սեանսի մասնակիցների վարքագծում արտահայտվող բախումները, տվյալ իրադրության այլ մանրութները և ինչպես դրանք կարտացոլվեն նրա արտահայտություններում:

Այսպիսով, հիպնոսին հատուկ շրջակա միջավայրում կողմնորոշման լրիվ բացակայությունն ու հետիփնոսային հիշողության կորուստն անհամատեղելի են ճիշտ ցուցմունքներ տարու և դրանց համար պատասխանատվություն կրելու ընդունակության հետ:

Նույն հեղինակներն առաջարկում են տեղեկություններ ստանալու համար «քննչական հիպնոսը» կիրառել. «միայն այն դեպքերում, երբ այլ մեթոդներն արդյունք չեն տալիս»: Գործնականում դա նշանակում է, որ հիպնոսին պետք է նախորդի այդ անձի սովորական հարցաքննությունը: Հեղինակ-

ները, հավանաբար, ուշադրության չեն արժանացնում այն, որ նախկինում գործում ընդհանրապես մասնակցություն չունեցող անձի մոտ նման «նախնական միջոցառումների» արդյունքում նրան տրվող հարցերը կարող են սխալ պատկերացումներ ստեղծել, իսկ հետո, արդեն խորը հիպնոսի վիճակում, ենթարկվելով հիպնոսողի կամքին, նա ենթագիտակցաբար կարտահայտի այդ պատկերացումները հիպնոսի ազդեցության տակ: Քրեական դատավարությունում «նման տեղեկությունների» օգտագործման վտանգավորությունն ակնհայտ է: Եվ վերջապես ընդունելով, որ հիպնոսային ներշնչման ուժեղ ազդեցությունը կարող է դասվել ֆիզիկական ազդեցության գործուների շարքին ամփուսափելիորեն կարող ենք նշել, որ հիպնոսային ներշնչանքն իրենից ներկայացնում է օրենքով արգելված ցուցմունքների կորզման ձևերից մեկը:

Վերջին ժամանակներս բուռն քննարկումների առիթ է ստեղծել նաև հանցագործությունների քննության ընթացքում պայծառատեսների ներգրավման հարցը¹: Որոշ հեղինակներ, կոնկրետ պրակտիկ օրինակներով, շեշտադրում են հանցագործությունների քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման նշյալ ձևի նպատակահարմարությունն ու արդյունավետությունը: Առայժմ գրեթե բոլոր տեսաբանները համակարծիք են, որ այս եղանակով ստացված տեղեկությունները չեն կարող հավակնել ապացուղական նշանակության: Ա. Ս. Լարինը ընդհանրապես հրաժարվում է այդպիսի տեղեկութ-

¹ Տե՛ս *Անձնագիր Ա., Էջան ձօռա Ի.* Նեանոնձական յեղոծանական, Նույնականության գաղափարական հարցերի քննության մեջ պահանջման հարցը, 1991, N 8. *Նեծուրի գիր Ա., Է., Նոծագության հարցը*, 1995, Եպիսկոպոսական ակադեմիա, Եղանակագիր Ա. Ի. 1996: 1996, Եպիսկոպոսական ակադեմիա, Եղանակագիր Ա. Ի. 1996:

յունները ընդունել ցանկացած ձևով՝ թե դատավարական, թե օպերատիվ-հետախուզական¹:

Միաժամանակ շատ տեսարաններ և իրավապահպան մարմինների աշխատակիցներ համաձայնում են, որ պայծառատեսների օգնությունը նպաստավոր է որպես օպերատիվ-հետախուզական տեղեկություն: Այս տեսակետը իրավական հիմնավորում է ստանում այնքանով, որ հեղինակները վկայակոչելով ՈԴ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքը, նշում են, որ օրենքը չի հստակեցնում, թե հատկապես ինչ **հասուկ գիտելիքներ** կարող են կիրառվել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականցնելիս, ինչն էլ հնարավորություն է տալիս «մասնագետ» տերմինը մեկնաբանել ընդարձակ: Վերջիններս գտնում են, որ պայծառատես-մասնագետի մասնակցությունը օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականցնելիս չի արգելվում հիշատակված օրենքով, և հետևաբար չի հակասում օրենսդրությանը²:

Որքան էլ որ այս եղանակի կիրառման օգտին արտահայտվողների կողմից բերված պրակտիկ օրինակները գայթակղիչ թվան, մեր մոտեցումն այս հարցի վերաբերյալ ամբողջությամբ բացասական է: Նախ նման վտանգվոր և անհայտ հմտությունները դժվար թե **հասուկ գիտելիք** կարելի է համարել: Հետևաբար և որքան էլ ընդարձակ մեկնաբանվի «մասնագետ» տերմինը, այն, մեր կարծիքով, երբեք չի կարող ներառել պայծառատես-մասնագետին՝ հատկապես երբ խոսքը վերաբերում է քրեադատավարական ոլորտին:

¹ Տե՛ս **Էջել Ա. Ի.** Էջել է առնենութեան է առնենութեան, Լ., 1996, էջ 178-179:

² Տե՛ս **Լ ձօ՞ւօէլ Ի. Ա., Էջել Ի ան Ի. Ի.** Էջել է առնենութեան է առնենութեան, Լ., 2001, էջ 10-11:

ՀՀ քր. դատ. օր.-ի 105 հոդվածը սահմանում է. «Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել...ժամանակակից զիտական պատկերացումներին հակասող մեթոդների կիրառման արդյունքում»: Այստեղ արդեն խոսքը վերաբերում է քննչական գործողությունների ընթացքում կիրառվող տակտիկական հնարքների կիրառման բույլատրելիությանը՝ պայմանավորված ոչ միայն դրանց՝ օրենքին համապատասխանությամբ, այլ նաև զիտական հիմնավորվածությամբ, որը հանդիսանում է դրանց օգնությամբ ձեռք բերված արդյունքների արժանահավատության երաշխիքը:

Պարզ է, որ մեր քրեադատավարական օրենքը չի տալիս տակտիկական հնարքների զիտական հիմնավորվածության սահմանումը: Գրականության մեջ տակտիկական հնարքների զիտական հիմնավորվածության տակ հասկացվում են՝

- ա) *հնարքների զիտականությունն ըստ դրա ծագման աղբյուրի (զիտական աշխատանքի արդյունք), կամ ստուգման միջոցի (պրակտիկայի հանձնարականների զիտական ստուգումը),*
- բ) *տակտիկական հնարքների համապատասխանությունը ժամանակակից զիտական պատկերացումներին, կրիսինալիստիկական տակտիկայի կամ այն զիտությունների ժամանակակից նվաճումներին, որոնցից փոխ են առնվել այդ հնարքների հիմնավորվածության փաստերը,*
- գ) *տակտիկական հնարքի կիրառման զիտական կանխատեսման, դրա արդյունքների ճշգրտության աստիճանի որոշման հնարքավորությունը,*

դ) տակտիկական հնարքների կիրառման առավել օպտիմալ պայմանների սահմանման նախապես հիմնավորվածության հնարավորությունը¹:

Այստեղից պարզ է դառնում քրեական դատավարությունում պայծառատեսների մասնակցության հակագիտականությունն ու անթույլատրելիությունը: Նույնը կարող ենք ասել նաև օպերատիվ-հետախուզական գործունեության վերաբերյալ:

Նշված ձևի կիրառման վտանգավորությունը, մեր կարծիքով, կայանում է նաև նրանում, որ այդ տեղեկությունները, ունենալով կողմնորոշիչ նշանակություն, կարող են սխալ ուղղությամբ ներկայացնել քննությանը՝ վարույթն իրականացնող անձի մոտ ձևավորելով կանխակալ տրամադրվածություն՝ գերազահատելով այդ տեղեկությունների նշանակությունը:

¹ Տե՛ս *Էջառօքօ Ա. Ի ., Առաջակա Ռ.Ն.* Օաժօնական պահանջման մասին օրենքը, 1997, էջ 7:

**ԳԼՈՒԽ II. ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆՆԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**§ 1. Դատական փորձաքննության և փորձագետի
եզրակացության էությունն ու նշանակությունը ՀՀ քրեական
դատավարությունում**

Աշխարհում գիտության և տեխնիկայի կատարելագործմանը գուգընթաց զարգանում են նաև հանցագործությունների և այլ իրավախասումների կատարման, մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարման եղանակներն ու միջոցները, ինչն էլ իր հերթին պահանջում է դրանց դեմ պայքարի գիտական մեթոդների, դատափորձագիտական տեխնոլոգիաների և համապատասխան դատավարական ինստիտուտների անընդհատ վերանայում և կատարելագործում: Ընդունում, հանցագործությունների դեմ պայքարի գործում չափանիկը կարևոր նշանակություն է ձեռք բերում ներպետական միջոցների (այդ թվում՝ դատափորձագիտական) համալրումը օտարերկրյա պետությունների դատափորձագիտական կառույցների, իրավապահ և արդարադատության մարմինների հնարավորություններով ու միջոցներով, ինչն, անշուշտ, իրականացվում է քրեական գործերով միջազգային իրավական օգնության ինստիտուտի շրջանակներում:

Փորձագիտական գործունեությունը և դրա արդյունքների օգտագործումը միջազգային բնույթի կամ միջազգային հան-

ցագործությունների քննության և բացահայտման գործում մի-
ջազգային իրավական համագործակցության եղանակներից
են: Այս առումով փորձագիտական գործունեության, դատա-
կան փորձաքննության և դրա արդյունքի՝ փորձագետի եզրա-
կացության հասկացության և հիմնական քննութագրիչների
սահմանումը կարևոր նշանակություն ունի գիտական ապա-
ցույցների ձեռքբերման և օգտագործման գործընթացում
քրեական գործերով միջազգային օգնության հնարավորութ-
յուններն ու եղանակները սահմանելու, և այդ կապակցությամբ
ծագող հարաբերությունների իրավական կարգավորման
առանձնահատկությունները քննութագրելու համար: Այդ նկա-
տառումներից ելնելով էլ սույն գլխի շրջանակներում քննարկ-
ման առարկա կդարձվեն փորձաքննության և փորձագետի եզ-
րակացության հիմնախնդիրները՝ շեշտը դնելով ինչպես Հա-
յաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային
օրենսդրության, դատաքննչական ու դատափորձագիտական
պրակտիկայի առանձնահատկությունների վրա:

Հայտնի է, որ դատական փորձագիտական գործունեութ-
յունն ըստ էության միտված է վարույթն իրականացնող մարմ-
նին որոշակի փաստական տվյալներով ապահովելուն, որոնք
որոշակի պահանջների բավարարման դեպքում ճանաչվում են
որպես ապացույցներ և դրվում գործով կայացվող այս կամ
այն որոշման հիմքում: Այս տեսանկյունից դատական փորձա-
գիտական-հետազոտական գործունեությունը սերտորեն
կապված է ապացույցն գործընթացի հետ, որն իրականաց-
վում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական
եզրակացություն տալու միջոցով: Սա նշանակում է, որ դատա-
կան փորձագիտական գործունեությունը՝ դատական փոր-

ձարննությունը, ապացուցողական գործունեության բաղկացուցիչ մասն է, որի նպատակն ի վերջո հետաքննության կամ նախաքննության մարմնին կամ դատարանին գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված փաստական տվյալներ տրամադրելն է¹:

Դատական փորձաքննությունը և քրեական, և քաղաքացիական դատավարության ինստիտուտ է, որն ուղղված է հատուկ գիտելիքների կիրառմամբ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալներ տրամադրելուն: «Փորձաքննություն» եզրույթն առաջացել է լատիներեն «expertus» բանից, որը նշանակում փորձառու, իրազեկ²: «Peritus»՝ լատիներենից բարզմանաբար նշանակում է՝ իրավասու, ճեռնիաս անձ, որոշակի ոլորտում փորձ ունեցող անձ³:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ դատական փորձաքննության հասկացության վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Այսպես, որոշ հեղինակներ այն բնութագրում են որպես հետազոտություն, որն իրականացվում է փորձագետի կողմից՝ հատուկ գիտելիքների բազայի հիման վրա⁴, կամ որպես հատուկ դատավարական գործողություննե-

¹Տե՛ս **Դավթյան Լ.** Հայոց լեզվով կատարված տեքստերի կրիմինալիստիկական հետազոտումը հեղինակին պարզելու նպատակով // Թեկն. ատեն., Երևան, 2010, էջ 116:

²Տե՛ս **Ենդոս Յ.** Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Երևան, 2007, էջ 30:

³Տե՛ս **Jeandos Յ.** Dictionnaire de droit criminel et pénal: dimension historique. Paris, 2011, էջ 79:

⁴Տե՛ս **Աննօնի Ա.Ա.** Կանոնադրության առաջարկները ՀՀ օրենսդրության մեջ ներմուծման մասին օրենքը, 1995, էջ 17:

թի համակցություն¹: Ա.Կ. Տրեուշնիկովը փորձաքննությունը դիտում է որպես փաստական հանգամանքների հետազոտման միջոց, որն իրականացվում է վերջիններիս վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով²:

Ա.Ա. Մոխովի կարծիքով՝ դատական փորձաքննությունը կարելի է դիտարկել նաև որպես դատավարության ինքնուրույն իրավական իմաստիտուտ, այսինքն՝ դատավարական նորմերի համակցություն, որոնք կարգավորում են փորձաքննության նշանակման, իրականացման և դրա արդյունքների գնահատման կապակցությամբ առաջացող հարաբերությունները: Դատական փորձաքննությունը կարելի է բնորոշել նաև որպես օրենքով նախատեսված դատավարական գործողությունների համակցություն³:

Ո.-Գ. Պետրոսյանի կարծիքով՝ դատական փորձաքննությունն ապացույցների հետազոտման, ընկալման և ստուգման գործընթացն է, իսկ եզրակացությունը՝ փորձագետի հետազոտման արդյունք, փատական հանգամանքներ պարզելու դատավարական միջոց⁴:

Այսպիսով, դատական փորձաքննությունն ապացուցման գործուն միջոց է, քանի որ այն վարույթն իրականացնող մարմնին հաղորդում է գիտահետազոտական բնույթի տեղեկատվություն՝ գործի նյութերը հատուկ գիտելիքների կիրառմամբ հետազոտելու համար: Այս առումով, փորձագետի

¹ Տե՛ս *Նաօթիճառ Օ.Ա.* Նույնականության մասին առաջարկությունը. Երևան, 2000, էջ 14:

² Տե՛ս *Օճախօթեալ Ի.Է.* Նույնականության մասին առաջարկությունը. Երևան, 2004, էջեր 265-267:

³ Տե՛ս *Ղարսյան Ա.*, Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական դատավարությունում // Դատական իշխանություն, Երևան, 2010, N 1-2 (126-127), էջեր 51-53:

⁴ Տե՛ս *Պետրոսյան Ռ.Գ.*, ՀՀ քաղաքացիական դատավարություն, Երևան, 2007, էջ 386:

Եզրակացությունը, ըստ ծագման աղբյուրի՝ խառն ապացույց է, քանի որ այն ձևավորվում է փորձագետի մասնակցությամբ՝ նրա հատուկ գիտելիքների կիրառմամբ և գործի նյութերի օգտագործմամբ:

Դատական փորձաքննության հատկանիշների վերաբերյալ հեղինակների կարծիքները տարբեր են: Այսպես, որոշ հեղինակներ (Յու.Կ. Օրլով, Մ.Կ. Տրեուշնիկով) դատական փորձաքննության հիմնական հատկանիշ են համարում դրա արդյունքը՝ եզրակացությունը, ոմանք՝ դատական փորձաքննության հատկանիշների շարքն են դասում դատական փորձաքննության օբյեկտը, սուրյեկտը և առարկան:

Սակայն մեր կարծիքով, դատական փորձաքննության հիմնական հատկանիշներն են հանդիսանում դատական փորձաքննության առարկան, օբյեկտը, սուրյեկտը և մեթոդիկան:

Դատական փորձաքննության հատկանիշներից առաջինը դրա *առարկան* է, այսինքն՝ այն փաստական տվյալները, որոնք ստացվում են փորձագիտական հետազոտության արդյունքում¹: Ընդ որում, դատական փորձաքննության առարկայի բովանդակությունն անհրաժեշտ է դիտարկել երկու տեսանկյունից՝ գիտական և գործնական: Սի կողմից՝ դատական փորձաքննության առարկա են հանդիսանում օբյեկտների հատկանիշների և դրանց փոխակերպումների օրինաչափությունները՝ կապված հանցագործության կատարման հետ, իսկ մյուս կողմից՝ դատական փորձաքննության առարկա են հանդիսանում հատուկ գիտելիքների հիման վրա բացահայտվող

¹ Տե՛ս **Միքայելյան Ս.**, Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական դատավարությունում // Իրավագիտության հարցեր, Երևան, 2001, N 4, էջ 135:

փաստացի տվյալները և քրեական կամ քաղաքացիական գործի նյութերի հետազոտությունը¹:

Դատական փորձաքննության հատկանիշներից է նաև դրա օբյեկտը: Իրավաբանական գրականության մեջ օբյեկտ ասելով հասկացվում են գործի նյութերում ամրագրված և օրենսդրությամբ նախատեսված տեղեկատվության աղբյուրները: Փորձաքննության օբյեկտ են ոչ միայն նյութական օբյեկտները՝ որպես տեղեկատվության կրողներ, այլ նաև կենդանի օրգանիզմները:

Ընդհանրապես փորձագիտական հետազոտության օբյեկտների հարցում հենակետային է համարվում Յու.Գ. Կորուխովի կողմից տրված բնորոշումը. «Փորձագիտական հետազոտության օբյեկտը նյութական առարկա է, որը պարունակում է փորձագիտական խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկատվություն. իրեղեն ապացույցներ, համեմատական հետազոտության համար օգտագործվող նմուշներ, գործի համար նշանակություն ունեցող այլ նյութեր»:

Ընդունված է փորձաքննության օբյեկտները բաժանել ըստ տարրեր հիմքերի: Ընդ որում, Տ.Վ. Ավերյանովան, Յու. Գ. Կորուխովը համարում են, որ փորձաքննության օբյեկտներն անհրաժեշտ է ընկալել որպես բարդ, դիմամիկ համակարգ, որը կազմված է երեք հիմնական տարրերից.

1. քննարկվող փաստի մասին տեղեկատվության նյութական կրիչներ,
2. փաստի մասին տեղեկատվության աղբյուրներ,
3. աղբյուրից կրիչին տեղեկատվության փոխանցման մեխանիզմ:

¹ Տե՛ս Ենթաքայան Վ.Գ., Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Երևան, 2007, էջեր 48-49:

Ե.Ռ. Ոսկինսկայան գտնում է, որ փորձաքննության օբյեկտների տարանջատումը պետք է իրականացնել ըստ այն օբյեկտների, որոնք կազմում են նույնացման (ինդենտիֆիկացման) գործընթացի խնդիրները. 1) մարդիկ, 2) կենդանիներ և բույսեր, 3) տարրեր նյութական օբյեկտներ, 4) փաստաթղթեր և այլն¹:

Ելնելով դատավարական նշանակությունից՝ փորձաքննության օբյեկտները լինում են.

1. *օբյեկտներ-իրեղեն ապացույցներ,*
2. *օբյեկտներ-համեմատական հետազոտման նմուշներ,*
3. *գործի նյութեր, որոնք պարունակում են փորձաքննության առարկային վերաբերող տեղեկություններ²:*

Հարկ է նշել, որ «համեմատական հետազոտման նմուշներ» հասկացությունը սերտորեն կապված է փորձաքննության և առարկայի, և օբյեկտի հասկացությունների հետ: Դրանք նյութական առարկա, օբյեկտներ են, որոնք ինչպես որակական, այնպես էլ քանակական առումով պիտանի են համեմատական հետազոտում իրականացնելու համար³:

Դատական փորձաքննության հաջորդ հատկանիշը փորձաքննության *սուբյեկտն* է փորձագետը: Վերջինս քրեական դատավարության մասնակիցներից մեկն է, որն իր դատավարական վիճակով առանձնանում է դատավարության մյուս մասնակիցներից և քրեական դատավարությանն օժանդակելու գործառույթի ուժով օժտված է իրավունքների և պարտա-

¹ Տե՛ս **Թվառելութեայ Ա.Բ.** Նօահանական կանոնադրության մասին մասնակիցների մասին օրենքը. ՀՀ օրենսդրություն, 2002 թվականի մայիսի 25-ին ընդունված և ուժի մեջ մտնելու օրը. Տե՛ս 9-10:

² Տե՛ս **Ահաջոյնութեան Օ.Ա., Ահաջոյնութեան Պ.Ա., Էլուստիք Ռ.Ա.** Նօահանական կանոնադրության մասին մասնակիցների մասին օրենքը. ՀՀ օրենսդրություն, 2003 թվականի մայիսի 25-ին ընդունված և ուժի մեջ մտնելու օրը. Տե՛ս 12-13:

³ Ավելի մանրամասն տե՛ս Ենթադրության վերաբերությունների արդի հիմնախնդիրները, Երևան, 2007, էջեր 50-54:

կանությունների որոշակի շրջանակով, որոնց ամբողջությունը կազմում է փորձագետի դատավարական կարգավիճակի բովանդակությունը քրեական դատավարությունում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի² 85-րդ հոդվածը տալիս է «փորձագետի» հետևյալ բնորոշումը.

«1. *Փորձագետը քրեական գործով չշահագրգռված այն անձնն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության դեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հասուն գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացնություն տալու համար: Փորձագետը կարող է նշանակվել դատավարության մասնակցի առաջարկած անձանցից:*

2. *Փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի բավարար հասուն գիտելիքներից:*

Դատական փորձաքննությունների բնորոշման գործում կարևոր նշանակություն ունի նաև դատավարձագիտական մեթոդը: Դատական փորձաքննության մեթոդները, որոնք իրենցից ներկայացնում են փորձագիտական գործնական խնդիրների լուծման համար նախատեսված գործողությունների, գործառնությունների համակարգ և հիմնվում են համապատասխան գիտական մեթոդների և կոնկրետ փորձագիտական խնդիրների լուծման փորձի վրա, կախված են ուսումնասիր-

¹ Ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ., ՀՀՊՏ 1998/22 (55), 21.09.98թ.:

ման օբյեկտի բնույթից: Ամենալայն իմաստով՝ մերողը նյութական իրականության, բնության ու հասարակական կյանքի երևույթների ուսումնասիրման միջոցներն ու հետազոտության նկատմամբ ունեցած վերաբերմունքն է: Դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է հետազոտական գործողությունների սկզբունքների համակարգ, որը նախատեսվում է իրականացնել որոշակի հաջորդականությամբ¹: !!

Դատական փորձաքննության մերողը մեծ նշանակություն ունի այն որպես հատուկ հետազոտություն բնութագրելիս: Մերողը կրում է սեռային բնույթ և բնորոշվում է փորձաքննության առարկայով և փորձագետի կողմից օգտագործվող հատուկ գիտելիքների համապատասխան ենթաճյուղով:

Դատական փորձաքննության մերողները բազմազան են, և դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները: Ընդ որում, մերողները փոխլրացնում են միմյանց և փոխկապակցված և փոխսպայմանավորված են միմյանցով:

Այսպիսով, քրեական դատավարությունում դատական փորձաքննությունը փորձագիտական եզրակացություն ստանալուն ուղղված քրեադատավարական նորմերով կարգավորվող գիտահետազոտական-ճանաչողական գործընթաց է՝ դրան բնորոշ սուբյեկտի, օբյեկտի, առարկայի և մերողիկայի առանձնահատկություններով, որն ամփոփվում է փորձագետի կողմից եզրակացություն կազմելով: Ըստ որում, այդ գործընթացը միջնորդավորված է հատուկ սուբյեկտի՝ փորձագետի գիտահետազոտական գործունեությամբ, որն իրականացվում

¹ Տե՛ս *Օհանյան Լ. Պ.*, Կրիմինալիստիկական մերողաբանություն. ընդհանուր դրույթներ // Պետություն և իրավունք, 2003, № 1 (19), էջ 8:

է հասուկ գիտելիքների կիրառմամբ՝ գործի համար նշանակություն ունեցող նոր տեղեկատվություն ստանալու նպատակով:

Գիտատեխնիկական միջոցների կիրառման հիմնական արդյունքը քրեական դատավարությունում արտահայտվում է փորձագետի եզրակացության միջոցով, որը քրեական գործով վարույթի ընթացքում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզաբանման համար օգտագործվում է որպես ապացույց:

Իրավաբանական գրականության մեջ փորձագետի եզրակացությունը բնորոշվում է որպես դատավարական փաստաթուղթ, որը բովանդակում է փորձաքննության նշանակման հիմքերը, փորձաքննության կատարման ընթացքն ու արդյունքները: Այն պարունակում է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալներ, որոնք քրեական գործի քննության ընթացքում կարող են օգտագործվել որպես ապացույցներ գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

Ընդ որում, փորձագետի եզրակացությունը տարբեր երկրներում տարբեր կերպ է անվանվում: Մասնավորապես, Ամերիկայի Սիացյալ Նահանգներում ընդունված է փորձագետի եզրակացությունն անվանել *expert testimony*¹, Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում և ընդհանոր իրավունքի այլ երկրներում՝ *expert report* կամ *expert opinion*²: Փորձագետի եզրակա-

¹ Տե՛ս **Henderson C.** Expert witness. In *Siegel J.A., Saukko P.J., Knupfer G.C. (Eds.) Encyclopedia of Forensic Sciences*. New York, 2000, Volume 2, էջեր 724-729:

² Տե՛ս **Freckleton I., Selby H.** Expert evidence. Holmes Beach, Florida, 1993, էջեր 1/5021-1/5026:

ցուրյան ապացուցողական նշանակությունը շեշտելու համար արտասահմանյան երկրներում օգտագործվում են նաև expert evidence, forensic evidence կամ scientific evidence եզրույթները¹: Բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե փորձագետի եզրակացությունն ինչ անվանում ունի այս կամ այն երկրում, թե՛ ռումանագերմանական, թե՛ անգլ-սաքսոնական իրավական համակարգերում այն քրեական գործով վարույթի ընթացքում օգտագործվում է որպես ապացույց:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով՝ փորձագետի եզրակացությունը դատավարական օրենսդրությամբ նախատեսված ապացույցի տեսակներից մեկն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարությունում որպես ապացույցներ թույլատրվում են՝

- 1) կասկածյալի ցուցմունքները.
- 2) մեղադրյալի ցուցմունքները.
- 3) սուժողի ցուցմունքները.

¹ Տե՛ս **Giannelli P.C., Imwinkelried E.J.** Scientific evidence, Virginia, 1986, էջեր 149-174:

4) վկայի ցուցմունքները.

4.1) տվյալ գործի մեղադրամքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամրաստանյալի ցուցմունքները.

5) դատավարությալի ցուցմունքները.

6) փորձագետի եզրակացությունը.

7) իրեղեն ապացույցները.

8) բնշական և դատական գործողությունների արձանագրությունները.

9) այլ փաստաթղթերը»:

Այսպիսով, ՀՀ քրեադատավարական իրավունքը փորձագետի եզրակացությունը դիտում է որպես ապացույցի ինքնուրույն տեսակ¹:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են իրեն առաջադրած հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է՝ գործի համապատասխան նյութերը հետազոտելով»:

¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը փորձագետի ցուցմունքն անարդարացիորեն չի դիտում որպես ապացույցի ինքնուրույն տեսակ: Այդ առնչությամբ մենք լիովին համակարծիք ենք ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի հետինակների հետ՝ փորձագետի ցուցմունքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով որպես ապացույցի առանձին տեսակ ամրագրելու անհրաժեշտության առումով և լիովին կիսում ենք դրա վերաբերյալ վերջիններին կողմից բերված հիմնավորումները (տե՛ս ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգ, կետեր 6.8-6.13):

Փորձագետի եզրակացության վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով տրված այս բնորոշումը բավականին համընդգրկուն է և համալիր կերպով արտացոլում է ապացույցի այս տեսակի բոլոր հիմնական հատկանիշները: Փորձագետի եզրակացության հասկացության հստակ սահմանումը կարևոր նշանակություն ունի ապացույցի այս տեսակի ձեռքբերման և օգտագործման դատավարական կարգի ճիշտ որոշման համար քրեական գործերի բնության գործընթացում՝ ինչպես ներպետական մակարդակով, այնպես էլ քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում:

Հարկ է նշել, որ քրեական գործով վարույթի ընթացքում փորձագետի եզրակացության օգտագործումն անխօնական կապված է մարդու իրավունքների պաշտպանության հետ: Փորձագետի եզրակացության և մարդու իրավունքների պաշտպանության միջև կապը միջնորդավորված է փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությամբ. փորձագետի եզրակացությունը քաղաքացիական, վարչական, քրեական, արքիտրաժային կամ այլ գործերով վարույթում, որտեղ բննարկվում են մարդու իրավունքներին և օրինական շահերին առնչվող բազմաբնույթ հարցեր, օգտագործվում է որպես ապացույց, որն այլ ապացույցների հետ համակցությամբ հիմնավորում է մարդու իրավունքների խախտման առկայությունը կամ բացակայությունը, խախտման բնույթն ու ծանրության աստիճանը, հասցած վնասի չափն ու դրա վերականգնման հնարավորությունները և այլն: Այս առումով, փորձագետի եզրակացությունն ու մարդու իրավունքները փոխկապակցված են ապացուցման իրավունքի ինստիտուտի միջոցով, որը կա-

նոնակարգում է փորձաքննության նշանակման և կատարման, ինչպես նաև դրա արդյունքի՝ փորձագետի եզրակացության ձեռքբերման և գնահատման հետ կապված իրավահարաբերությունները՝ որպես քրեական դատավարության նպատակների նվաճման և խնդիրների լուծման միջոցներից մեկը:

Անկասկած, որակական փոփոխությունների է ենթարկվել գործող քրեադատավարական օրենսդրության ամբողջ բովանդակությունը: Դա տեղի է ունեցել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կոնցեպտուալ իրավական գաղափարներով սահմանվող հարցերի առաջադրման շնորհիվ, որը ներառվել է քրեական դատավարության ոլորտ՝ հատուկ գիտելիքների միջոցով: Այսպես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում սահմանվում է յուրաքանչյուրի իրավունքը՝ անկախ, անկողմնակալ դատարանի կողմից գործի իրավարակային արդարացի քննությունը ողջամիտ ժամկետում: Հայաստանում այս իրավունքի իրագործման երաշխիք է հանդիսանում դատավարության մրցակցային ձևը: Մրցակցության սկզբունքի գործնական իրագործումն է հանդիսանում ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը (1998թ.), որով կարգավորվում է քննչական և դատավարական գործողությունների իրականացման կարգը՝ հիմնված դատավարության մեղադրական և պաշտպանական գործառույթներն իրականացնող սուբյեկտների իրավունքների սահմանման վրա, ընդ որում, նշանակալիորեն կերպով մեծացել են պաշտպանի իրավունքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդված):

Դատավարության մրցակցության, անձի իրավունքների անձնումխելիության, իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու, անմեղության կանխավարկածի, դատավարության ցանկացած փուլում պրոֆեսիոնալ իրավաբանական օգնության և պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների հիմքում ընկած են այնպիսի դատավարական նորմեր, որոնք կարգավորում են քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների օգտագործման և, առաջին հերթին, դատական փորձաքննության ինստիտուտը:

Գիտնականների մոտ ոչ միանշանակ վերաբերմունք է ձևավորվել փորձաքննությունների իրականացման ընթացքում մրցակցության սկզբունքի նկատմամբ, ընդ որում, կարծիքները և դրական¹ են, և՝ բացասական²:

Ինչպես հայտնի է, դատական փորձաքննության անցկացման մրցակցության սկզբունքն ավելի մեծ կիրառություն ունի դատավարության անգլո-սաքսոնական համակարգ ունեցող երկրներում: ԱՊՀ-ի մոդելային քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է, որ կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունի իր իսկ նախաձեռնությամբ և իր հաշվին անցկացնել այլնտրանքային փորձաքննություն և այդ անձանց պահանջով փորձագետի եզրակացությունը կարող է կցվել քրեական գործին (ԱՊՀ մոդելային քրեական դատավարության օրենսգրքի հոդված 289):

¹Տե՛ս Ածերա Ա. Ա., Ի ծիօանոնական նա յծնաեալ ո ոօահաան ի յենի ածնեշն, Լ էնի, 1963, Աæօն աեւ է Լ . Լ ., Աæնոնական յծնաեալ ո ոօահաան ի յենի ածնեշն, Լ էնի, 1982:

²Տե՛ս Նահեօնեան Ա. Լ ., Ի յծնաեալ օան յենա յա յծնաան, Լ ., 1961; Աæենեան Ջ. Ն., Էօծն էծն էն յեն յենոնական օ. 3, Լ ., 1997, էջ 117:

Քանի որ փորձագետի եզրակացությունը հանդիսանում է քրեական գործի ապացույցներից մեկը, ուստի դատական փորձաքննության նշանակումը և իրականացումն առնչվում է դատավարության մասնակիցների որոշակի իրավունքներին: Բացի դրանից, դատական փորձաքննությունը հանդիսանում է օբյեկտիվ տեղեկությունների աղբյուր, որն ստացվում է հատուկ գիտելիքների շնորհիվ: Ուրեմն պետք է խոսել ոչ թե փորձաքննության մրցակցության, այլ քրեական դատավարությանը մասնակցող կողմերի մրցակցության մասին: Արանից ելնելով, կարելի է ենթադրել, որ փորձաքննության իրականացման ժամանակ կիրառվող մրցակցության սկզբունքի հանդեպ դրական վերաբերունքը կնպաստի դատավարության բոլոր մասնակիցների հավասարության սկզբունքի ռեալ իրականացմանը: Մրցակցության սկզբունքը համարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գլխավոր արժանիքներից մեկը, և, լինելով նոր և քիչ ուսումնասիրված, կարիք ունի կատարելագործման՝ նորմերի բովանդակության, դրանց ներքին փոխսկապակցվածության իմաստով:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված քրեական դատավարության խնդիրները և նպատակներն ամբողջապես ուղղված են մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, հանցագործությունից տուժած անձանց իրավունքների վերականգնմանը, առանց անհրաժեշտության և օրինական հիմքերի անձին քրեական պատասխանատվության ենթարկելու, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակումների բացառմանը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական դատավարությունն իրականացվում է՝ ապահովելու համար՝

- 1) անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից.
- 2) անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ:

Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝

- 1) քրեական օրենսգրքերով չբոլլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի.
- 2) ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի.
- 3) ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման»:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված վերոշարադրյալ նպատակների և խնդիրների կենսագործումը, ըստ Էության, իրականացվում է ապացուցողական գործունեության իրականացման ճանապարհով, առանց որի դատական իշխանության իրացումը, մասնավորապես՝ սոցիալական վեճերի լուծումը, անհնարին է: Այդ իսկ պատճառով ապացուցումը և ապացույցները, ըստ նախկին և ներկա դատավարա-

գետների, միշտ եղել և մնում են քրեական արդարադատության առանցքը¹:

Այսպիսով, փորձագետի եզրակացության ձեռքբերման և օգտագործման դատավարական արդյունավետ կարգավորումը և փորձագետի եզրակացությանն առնչվող ապացուցման իրավունքի ինստիտուտի կատարյալ դրույթների սահմանումը մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիքներ են քրեական դատավարությունում և կարևոր նախադրյալներ են հանդիսանում քրեական գործերով փորձաքննության կատարմանք և փորձագետի եզրակացության օգտագործմանք պայմանավորված իրավական օգնության կազմակերպման համար:

Ապացուցումը կամ ապացուցողական գործունեությունն ըստ էության ճանաչողական գործունեության տեսակ է, որի հիմնական նպատակը նախկինում տեղի ունեցած դեպքի և դրա հանգամանքների առավել լրիվ վերականգնումն է: Շանաչողական գործունեությունն իր հերթին օբյեկտիվ իրականության փաստերի ընկալումն է, իսկ ապացուցման՝ որպես ճանաչողական գործունեության տեսակի, նպատակն էլ ճշմարտության բացահայտումն է:

Մասնագիտական գրականության մեջ ճշմարտությունը բնութագրվում է գլխավորապես որպես մտքերի և օբյեկտիվ իրականության փաստերի համապատասխանություն³: Այս առումով ճշմարտությունը ձևով սուբյեկտիվ է, բովանդակութ-

¹ Տե՛ս **Шейфер С.А.** Доказательства и доказывание по уголовным делам: проблемы теории и правового регулирования. М., 2009, էջ 16:

² Տե՛ս **Эйсман А.А.** Заключение эксперта: (структурно и научное обоснование). М., 1967, էջ 98; Судебная почерковедческая экспертиза. **Под ред. Е.Д. Добровольская, А.И. Манцеветова, В.Ф. Орлова.** М., 1971, էջ 313:

յամբ՝ օբյեկտիվ: Զևով սուբյեկտիվ է, որովհետև գիտելիքը սուբյեկտի՝ մարդու գիտելիքն է: Առանց մարդու գիտելիք չի կարող լինել: Ծշմարտությունը բովանդակությամբ օբյեկտիվ է, որովհետև ծշմարտության կամ գիտելիքի բովանդակությունը պայմանավորված է օբյեկտիվ իրականությամբ:

«Ծշմարտությունը հոգևոր արժեք է, հոգևորի այն տարրը, որը շատ ավելի է կոչված ապահովելու մարդու և առարկայական աշխարհի, սուբյեկտի և օբյեկտի կապն ու միասնությունը: Ծշմարտությունը գիտելիքի, ասել է, թե մտքի հատկությունն է: Առարկան չի կարող լինել ճիշտ կամ սխալ: Առարկայի մասին գիտելիքը կարող է լինել ճիշտ կամ սխալ: Գիտելիքը ճիշտ է, եթե այն արտացոլում է առարկան այնպես, ինչպես այն իրականում գոյություն ունի... »¹:

Ծշմարտության բացահայտումը՝ որպես ապացուցման նպատակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում անմիջականորեն նշված չէ, չնայած քրեադատավարական օրենսդրությամբ դա անուղղակիորեն ենթադրվում է: Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ինչպես կտեսնենք ստորև, շատ պետություններ իրենց դատավարական օրենսդրությամբ հստակ ամրագրել են ծշմարտության բացահայտումը որպես վարույթն իրականացնող մարմնի կողմից իրականացվող ապացուցողական գործունեության առաջնային նպատակ:

Ինչպես արդեն նշել ենք, դատական փորձագիտական գործունեությունն ապացուցողական գործունեության բաղկացուցիչ մասն է, որի հիմնական նպատակը հետաքննության

¹ Տե՛ս **Շաքարյան Հր.**, Փիլիսոփայություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2005, էջ 157:

կամ նախաքննության մարմնին կամ դատարանին գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված փաստական տվյալներ տրամադրելն է ճշմարտության բացահայտման համար, տվյալներ, որոնք փորձագետի եզրակացության մեջ շարադրված մտքերի՝ իրականությանը համապատասխանության ուժով վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն կտան ճշմարիտ հետևություններ անել գործով որոնվող փաստերի վերաբերյալ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է»:

Այսպիսով, գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու, այսինքն՝ ճշմարտությունը վեր հանելու նպատակը թխում է մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, որը քրեական դատավարությունում իրականացվում է ապացույցներ (այդ թվում՝ փորձագետի եզրակացություն) հավաքելու, ստուգելու և գնահատելու ճանապարհով:

Ի տարբերություն ՀԽՍՀ 1961թ. քրեական դատավարության օրենսգրքի, փորձագետի եզրակացության մեջ նորամուծություն է համարվում այն, որ օրենքով սահմանվում է, թե «...ովքեր են մասնակցել, քրեական գործի որ նյութերն է փորձագետն օգտագործել, ինչպիսի իրեղեն ապացույցներ, նմուշներ և այլ օբյեկտներ են հետազոտվել, ինչպիսի հետազոտութ-

յուններ են կատարվել, ինչպիսի մերողներ են կիրառվել, առաջարկած հարցերի հիմնավորված պատասխանները, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ» (ՀՀ ՔԴՕ հոդված 250-ի 2-րդ մաս): Ելնելով պրակտիկ փորձից, գտնում ենք, որ ցուցումն այն մասին, որ «Փորձագետի եզրակացությանը պետք է կցվեն հետազոտված իրեղեն ապացույցները, նմուշները և այլ նյութեր, ինչպես նաև փորձագետի հետևությունները պարզաբանող լուսանկարները, սխեմաները», անհրաժեշտ է հենց փորձագետի եզրակացության բովանդակության լրիվության համար, ինչպես նաև նրա հետազա գնահատման ընթացքում այդ մասի հարցերը հանելու համար (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 250-ի 3-րդ մաս):

Մեր քրեադատավարական օրենսդրությունում բացակայում է փորձագիտական հետազոտության օրյեկտների հասկացությունը, դրանց տեղափոխման կարգը և դրանց հետ վերաբերվելու պայմանները: Տեղին կիմի նշել հետևյալ հասկացությունը՝ օգտագործելով օրյեկտների հայտնի սահմանումը. «Փորձագիտական հետազոտության օրյեկտը նյութական առարկա է, որը պարունակում է փորձագիտական խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկատվություն. իրեղեն ապացույցներ, դիակ, համեմատական հետազոտության համար օգտագործվող նմուշներ, քրեական գործի այլ նյութեր»¹: Նորմում պետք է նշել, որ փորձագիտական հետազոտության օրյեկտների հավաստիությունը և թույլատրելիությունը երաշխավորում է փորձաքննությունը նշանակած մարմինը:

¹ Տես Աճեմել Ռ. Ն., Էջել էի աճեննենա, Օ-ան նե նե հածո-նի ծահա ։ ի է ։, 1999, էջ 127:

Որակյալ փորձագիտական հետազոտության նախապայման է հանդիսանում նմուշների իմացարանական (գնուեղողգիական) և իրավաբանական բնույթի պարզաբանումը: Սրանից ենթելով ենթադրում ենք, որ անհրաժեշտ է ավելի մանրամասն դիտարկել «համեմատական հետազոտման նմուշներ» հասկացությունը:

«Համեմատական հետազոտման նմուշներ» հասկացությունը փորձագետի հետազոտական գործունեության հիմնական գործոններից մեկն է և բավականին մեծ տեսական և գործնական հետաքրքրություն է առաջացնում: «Համեմատական հետազոտման նմուշ» հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա են տարբեր տեսակետներ: Իհարկե, յուրաքանչյուր հրատարակված սահմանում պարունակում է «համեմատական հետազոտման նմուշ» հասկացության ճիշտ ընկալման համար հիմնական որոշում¹: Կարծում ենք՝ ոչ բոլոր առաջարկված սահմանումներին կրելի է համաձայնել:

Սկզբնական ձևակերպումներում օգտագործված եզրույթները այնքան էլ հաջող չեն, որոնցում կամ որպես համեմատական նյութ օգտագործվող ոչ բոլոր օբյեկտներն են ներառված, կամ էլ բնորոշման բովանդակությունն անցնում է «նմուշ»

¹ Տե՛ս **Ածել Ա. Ա.**, Ի ձանական օգտագործված եզրույթները այնքան էլ հաջող չեն, որոնցում կամ որպես համեմատական նյութ օգտագործվող ոչ բոլոր օբյեկտներն են ներառված, կամ էլ բնորոշման բովանդակությունն անցնում է «նմուշ»:

հասկացության սահմանները: Միևնույն ժամանակ սահմանումը չի պարունակում «նմուշ» հասկացությունը՝ առարկաների առումով, կամ էլ մեկնաբանությունը հաշվի չի առնում այն բոլոր քննչական գործողությունները, որոնց ընթացքում կարող են նմուշներ վերցվել¹:

Մեզ թվում է, որ հետագա փորձները հեռու են ընդունելի տարրերակ լինելուց: Այսպես, համեմատական հետազոտման նմուշ ասելով հասկացվում է «...նյութական օբյեկտ, որն անկանած սերում է այլ օրյեկտից և հանդիսանում է նրա մասը կամ արտացոլում է նրա հատկությունները, որն ստացվում է հատուկ հետազոտությունների անցկացման համար, ճանաչվող օրյեկտի սեռային (խմբային) պատկանելության վերականգնման և ինքնության ճանաչման նպատակով, ինչպես նաև քննվող հանցագործության այլ հանգամանքների վերականգնման համար»²:

Նշենք, որ այլ օրյեկտից անկանած ծագելու դեպքում ոչ բոլոր համեմատելի օրյեկտները կարող են համարվել նմուշներ: Օրինակ՝ ձայնագրվածքը (Փոնոզրաման) մարդու ձայնի ձայնագրումն է մազնիսային կրիչի վրա, և այն չի ծագում այլ օրյեկտից: Նմանապես, եթե դատաձգարանական փորձաքննության իրականացման ընթացքում որպես համեմատական

¹ Տե՛ս **Աօէ՛տ Ա. Ա.**, Ի ձանական օրանուն է պահանջման պահանջման անկանած ծագելու դեպքում ոչ բոլոր համեմատելի օրյեկտները կարող են համարվել նմուշներ: Օրինակ՝ ձայնագրվածքը (Փոնոզրաման) մարդու ձայնի ձայնագրումն է մազնիսային կրիչի վրա, և այն չի ծագում այլ օրյեկտից: Նմանապես, եթե դատաձգարանական փորձաքննության իրականացման ընթացքում որպես համեմատական

² Տե՛ս **Աօէ՛տ Է. Է.**, Ի մասնակի անձական օրանուն է պահանջման պահանջման անկանած ծագելու դեպքում ոչ բոլոր համեմատելի օրյեկտները կարող են համարվել նմուշներ: Օրինակ՝ ձայնագրվածքը (Փոնոզրաման) մարդու ձայնի ձայնագրումն է մազնիսային կրիչի վրա, և այն չի ծագում այլ օրյեկտից: Նմանապես, եթե դատաձգարանական փորձաքննության իրականացման ընթացքում որպես համեմատական

Այսուհետեւ ներկայացվի հրազեն, ապա այն չի ծագում այլ օրինակութիւն, այլ պատրաստված է արտադրական պայմաններում դրաբես սկզբնական օրինակութ, և այդ դեպքում կիամեմատվեն հրազենի շափանիշները:

Եղած ձևակերպումների մեջ ամենահակիրճը և ճշգրիտն է համարվում հետևյալ սահմանումը. «Նմուշներն առարկաներ են, որոնք ստեղծվել կամ փոփոխվել են իրեղեն ապացույցների ձևավորման եղանակին նման ձևով և հենց այդ օբյեկտի ազդեցության տակ¹»:

Վերը նշված սահմանումներում տրված է նմուշի կարևոր բնութագիր՝ համեմատելի օբյեկտի հատկությունների և նշանների առկայությունը նմուշում: Խսկապես, անկախ նրանից՝ դրանք ստեղծվել են, թե ստացվել այլ օբյեկտից, նմուշը պետք է պարունակի համեմատության համար բավարար և օգտակար վկայություն՝ տրված սեռային (խմբային) ինքնության վերականգնման կամ հետազոտվող օբյեկտի հետ կապված նրա ինքնության ճանաչման նպատակով:

Նկատի ունենք կրիմինալիստիկական նշանակություն ունեցող տեղեկատվությունը, որն առկա է նմուշում: Հիմնվելով վերջինիս վրա՝ կարծում ենք, որ համեմատական հետազոտման նմուշը նյութական աշխարհի օբյեկտ է, որն իր մեջ կրում է կրիմինալիստիկական նշանակություն ունեցող տեղեկատվություն, ինչը բավարար է և պիտանի ինքնության կամ այլ հանգամանքների հաստատման համար:

Գրականության մեջ քննարկման առարկա է հանդիսանում համեմատական հետազոտման նմուշների դատավարա-

¹ Stiu Í ÓDEÁR P. É., ÁÍ I NÁL ÉÍ ÁE+ÁNEÁY NÓUNÍ I NÓU E Í ÓDÍ ÓDAÑNÓÁEÚM ÁY ÓIH ÓI A ÍÁDÁCÓÍ ÁA ÄEY NÓDAÁÍ ÓDAEÚM I ÁÍ ENÓPÉAÄÍ ÁAÍ EY. ÓDOÓAÚ ÁÍ ÈÈÑNÁ, ÁUÍ. 5, I., 1973, t9 178:

կան բնույթի խնդիրը: Գործող օրենսդրությունը չի սահմանում, թե արդյոք դրանք ինքնուրույն ապացույցի արժեք ունեն: Գոյություն ունեն երկու տեսակետներ: Ըստ առաջինի՝ համեմատական հետազոտման նմուշներն ապացույցի ինքնուրույն տեսակ են և բնորոշվում են որպես իրեղեն ապացույցի տարատեսակ¹: Համաձայն երկրորդի՝ համեմատական հետազոտման նմուշներն ինքնուրույն ապացույցի արժեք չունեն²:

Սեր կարծիքով, պետք է ելնել հենց իրեղեն ապացույց հասկացությունից: Ըստ ծագման բնույթի իրեղեն ապացույց են հանդիսանում իրեղեն օբյեկտները, որոնք ծագել են հանցագործության ընթացքում կամ օգտագործվել են հանցագործության իրականացման ժամանակ, հանցագործության նախապատրաստվելիս և այլն: Ենթադրում ենք, որ համեմատական հետազոտման նմուշների ձևը կախված է հենց օբյեկտի բնույթից: Նմուշների սահմանման ժամանակ կարելի է հիմք ընդունել ձևավորման գործընթացը:

Նմուշները, որոնք հատուկ ձեռք են բերվել համեմատական հետազոտման իրականացման համար, իրեղեն ապացույց չեն: Չի կարելի իրեղեն ապացույցների թվին դասել այն օբյեկտները, որոնք ծագել են մինչև հետազոտվող դեպքի տե-

¹ Տե՛ս **Աճօ՛ւ Ա. Ա.**, Ի ձանական անունու օրոշումը և նույնականացման համար, իրեղեն ապացույց չեն: Վեպը 168-169; **Աճօ՛ւ Ա. Ա.**, Նույնականացման համար օբյեկտների անունու օրոշումը և նույնականացման համար, իրեղեն ապացույց չեն: Վեպը 32; **Ի ածօ՛նօւ Է. Է. Է.**, Եղանակ անունու օրոշումը և նույնականացման համար, իրեղեն ապացույց չեն: Վեպը 148, **Ճածօ՛ն Դ. Ա.**, Նույնականացման համար օբյեկտների անունու օրոշումը և նույնականացման համար, իրեղեն ապացույց չեն: Վեպը 10, Ի 1959, էջեր 208-209:

² Տե՛ս **Աճօ՛ւ Ջ. Ն.**, Եղանակ անունու օրոշումը և նույնականացման համար, իրեղեն ապացույց չեն: Վեպը 166-167; **Աճօ՛ւ Ա. Է. Է.**, Նույնականացման համար օբյեկտների անունու օրոշումը և նույնականացման համար, իրեղեն ապացույց չեն: Վեպը 45-49, **Աճօ՛ւ Ա. Ա.**, Ի 1992, էջեր 5; **Նաշօ՛ն Ա. Ա.**, Նույնականացման համար օբյեկտների անունու օրոշումը և նույնականացման համար, իրեղեն ապացույց չեն: Վեպը 12, էջեր 15:

ի դասեւալը և կապված չեն դրա հետ: Համեմատական հետազոտման նմուշները միայն առանձին դեպքերում կարող են լինել իրեղեն ապացույցներ, եթե մինչ այդ նրանք բնորոշվել են որպես այդպիսին:

Փորձագետի եզրակացությունը քրեական գործերով սի-
ջազգային իրավական օգնության շրջանակներում օգտա-
գործվում է որպես ապացույց և ծառայում է հանցագործութ-
յունների քննության գործընթացում հանրային շահերի պաշտ-
պանության միջոց։ Այն ձեռք է բերվում պետությունների կամ
միջազգային կառույցների իրավասու մարմինների համապա-
տասխան հանձնարարությունների հիման վրա կատարվող
փորձաքննությունների արդյունքում կամ հանցագործություն-
ների քննության պրոցեսում։ Բացի այդ, միջազգային իրավա-
կան օգնության վերաբերյալ նորմերի կիրառելիությունը կա-
րող է պայմանավորված լինել նաև գործի նյութերում առկա
փորձագիտական եզրակացությունների օգտագործման
անհրաժեշտությամբ։

Հարկ է նշել, որ հանցագործությունների քննության գործընթացը և դրանում փորձաքննության և փորձագետի եզրակացության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ և այլ պետությունների, ինչպես նաև միջազգային մարմինների ու կազմակերպությունների միջև քրեական գործերով միջազգային համագործակցության վերաբերյալ կնքված մի շարք երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի, իսկ միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում՝ դիվանագիտական ճանապարհ ձեռք բերված փոխպայմանագրածորդության հիման վրա: Ընդ որում, քրեական գործերով իրավական օգնության հետ կապված միջազգային

հարաբերությունների կարգավորման ելակետային դրույթները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգլուխ։ Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգլուխ 54-54^{3-րդ} գլուխներն ամբողջապես նվիրված են քրեական գործերով միջազգային իրավական օգնությանը (Քրեական գործերով իրավական օգնությունը միջազգային պայմանագրերին համապատասխան՝ Գլուխ 54, Քրեական գործերով իրավական օգնությունը միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում՝ Գլուխ 54¹, Իրավական օգնության հարցերով հարաբերությունները միջազգային մարմինների հետ՝ Գլուխ 54²):

Մարդու իրավունքների պաշտպանության գործում, այդ բվում՝ քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում, փորձագետի եզրակացության դերն ու նշանակությունը պարզելու համար հատկապես կարևոր նշանակություն են ձեռք բերում հատուկ գիտելիքների էռության բացահայտումը, փորձաքննության նշանակման դատավարական կարգի սահմանումը, ինչպես նաև փորձագետի եզրակացության գնահատման պարզաբանումը քրեական դատավարությունում՝ ՀՀ օրենդրությանը, ՀՀ դատաքննչական և դատավորակիտական պրակտիկային համապատասխան՝ հաշվի առնելով տարբեր իրավական համակարգերի երկրների օրենսդրության ու դատաքննչական և դատավորակիտական պրակտիկայի և միջազգային իրավական կարգավորումների առանձնահատկությունները։ Ընդ որում, քրեական գործերով արդյունավետ միջազգային իրավական օգնությունը հնարավոր է միայն քննարկվող ոլորտում ՀՀ ներպետական օրենսդրության համապատասխան բերությունների վերացման,

անհրաժեշտ լրացումների կատարման և միջազգային իրավական կարգավորումների ու օտարերկրյա իրավունքի հաշվառմամբ ազգային իրավունքի ներդաշնակ զարգացման պարագայում:

§ 2. *Փորձագետը որպես քրեական դատավարության առանձնահատուկ սուբյեկտ*

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ քր.դատ. օր.-ի 85-րդ հոդվածը սահմանում է, որ.

«1. *Փորձագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին իր համաձայնությամբ, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացնություն տալու համար։ Փորձագետը կարող է նշանակվել դատավարության մասնակցի առաջարկած անձանցից։*

2. *Փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների։*

3. *Քրեական գործով վարույթին իրավաբանական հարցերով փորձագետը չի ներգրավվում։*»

Հոդվածի 4-րդ մասում շարադրված են փորձագետի պարտականություններն ու դրանք չկատարելու հետևանքները, ինչպես նաև նրա իրավունքները:

Փորձագետի, որպես քրեական դատավարությունում հատուկ գիտելիքներ կիրառող սուբյեկտի, դատավարական կարգավիճակի ճիշտ ընկալման համար նախ և առաջ նպատակահարմար ենք համարում անդրադառնալ քրեական դատավարությունում մասնագետի և փորձագետի կողմից իրականացվող հետազոտությունների տարրերություններին:

Նշված երկու սուբյեկտների գործունեությունը տարրերվում է ինչպես բովանդակային, այնպես էլ ձևական առումներով: Փորձագետի կողմից իրականացվող հետազոտությունը, քրեադատավարական օրենսդրությանը, համապատասխան կարող է դիտվել որպես հատուկ գիտելիքների օգտագործման ձևերից մեկը:

Փորձագետի կողմից իրականացվող հետազոտության արդյունքներով կազմվում է եզրակացություն, որը համարվում է ապացույց: Մասնագետի աշխատանքը շարադրվում է համապատասխան քննչական գործողության արձանագրություն մեջ: Հետևաբար, առանց քննչական գործողության այդ աշխատանքի արդյունքն ապացույցի ուժ չունի:

Այնուամենայնիվ, առանցքային տարրերությունը վերը նշված սուբյեկտների դատավարական կարգավիճակի առանձնահատկությունն է: Բացի դրանից, մասնագետի և փորձագետի գործունեությունը քրեական դատավարությունում տարրեր նպատակներ է հետապնդում: Մասնագետը մասնակցում է քննչական գործողությունների կատարմանը: Վերջինիս օժանդակությունը հատկապես կարևորվում է սկզբնական և

անհետաձգելի քննչական գործողությունների կատարման ժամանակ: Համապատասխանաբար, մասնագետն օժանդակում է իրերի, առարկաների և փաստաթղթերի հայտնաբերմանը, վերցնելուն և ֆիքսմանը, որոնք կարող են նաև հավանական իրեղեն ապացույցներ դառնալ: Իսկ դրանց հետագա հետազոտությունը նոր տեղեկություններ ու հանգամանքներ պարզելու նպատակով իրականացնում է փորձագետը՝ փորձագիտական հետազոտության միջոցով: Վերոնշյալ տարբերությունները բխում են փորձագետի և մասնագետի իրավունքների դատավարական կարգավորումից: ՀՀ քրեադատավարական օրենսդրության նորմերով փորձագետին տրվում է լրիվ ինքնուրույնություն փորձաքննության կատարման համար, մինչդեռ մասնագետին թույլ չի տրվում անցնել իրեն տրված առաջադրանքի սահմանները, նա գործում է քրեական գործով վարույթն իրականացնող անձի ցուցումների շրջանակներում: Դրանով իսկ մասնագետը սահմանափակվում է իր գործողություններում: Այսպիսով, մասնագետի գործունեության օրենսդրական կարգավորումը սահմանափակում է նրա դատավարական ինքնուրույնությունը, որն էապես տարբերում է նրան փորձագետից: Փորձաքննության իրականացումն ինքնուրույն դատավարական գործողություն է: Մասնագետը գործում է միայն տարբեր քննչական գործողությունների շրջանակներում: Մասնագետի՝ որպես դատավարական սուբյեկտի սահմանման ժամանակ այդպիսի նորմ չի նախատեսվում, նրա մասնակցությունը քննչական գործողությունների կատարմանը տեղի է ունենում նույն ձևով, ինչ այլ անձանց դեպքերում: Քննչական գործողություններ իրականացնելիս մասնագետի մասնակցությունը հիմնականում կայանում է

հետքերի հայտնաբերման ու զննության, փորձագետին ուղղվելիք հնարավոր հարցերի շրջանակը որոշելիս քննիչին օգնելու, նմուշներ ընտրելու մեջ: Մասնագետի բոլոր գործողությունները գրանցվում են քննչական գործողության արձանագրությունում, որը, ինչպես և փորձագետի եզրակացությունը, ապացույց է հանդիսանում: Ընդ որում, մասնագետի մասնակցությունն այնպիսի քննչական գործողություններին, ինչպիսիք են՝ խորարկությունը, զննությունը, քննչական փորձարարությունը և այլն, անշոշտ, էական նշանակություն է ունենում դրանց կատարման արդյունավետության բարձրացման համար: Մինչդեռ փորձագետի եզրակացությունն ապացույցի ինքնուրույն տեսակ է, ուստի դրա ձևակերպումը պետք է համապատասխանի որոշակի կանոնների: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ օրենսդիրը մանրամասն կարգավորում է փորձարնենության նշանակման և իրականացման գործընթացները:

Փորձագետի դատավարական կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված՝ հարկ ենք համարում անդրադառնալ փորձագետի կարգավիճակին առնչվող մյուս կարևոր հարցին: Այն դրսերքում է հետևյալում, որ ՀՀ քր.դատ. օր.-ի 252-րդ հոդվածի ուժով փորձագետի եզրակացությունն ստանալուց հետո փորձաքննություն նշանակած պաշտոնատար անձն իրավունք ունի հարցաքննել փորձագետին, եթե եզրակացությունը բավարար չափով պարզ չէ, ունի բացեր, որոնք լրացնելու համար չեն պահանջվում լրացուցիչ հետազոտություններ կամ անհրաժեշտություն է առաջացել ճշտելու փորձագետի կողմից կիրառված մեթոդները և հասկացությունները: Փորձագետի հարցաքննությունը կատարվում է ՀՀ քր.դատ. օր.-ի 205-րդ, 206-րդ և 209-րդ հոդվածների պա-

հանջները պահպանելով, այսինքն՝ վկայի հարցաքննության կանոններով: Թեև, ի տարբերություն նախկին քրեադատավարական օրենսդրության, երբ փորձագետի հարցաքննության համար առանձին նորմ սահմանված չէր, և կարիքի դեպքում վերջինս հրավիրվում էր որպես վկա, ներկայումս հարցը կարգավորվել է, այնուամենայնիվ, հարցի նման կարգավորումը չի կարելի իրավաչափ համարել: Փորձագետը և վկան դատավարական տարբեր կարգավիճակներ ունեն, քրեական գործով վարույթին ներգրավվում են տարբեր հիմքերով և նպատակներով, հետևաբար՝ տարբեր են նաև նրանց հարցաքննության առարկաները¹: Այդ պատճառով, առավել տրամաբանական է, որ ապացույցների տեսակների մեջ փորձագետի եզրակացությունը համարվի նաև նրա ցուցմունքներով:

Փորձագետին չի կարելի հարցաքննել մինչև նրա կողմից եզրակացություն ներկայացնելը: Փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը:

Ընդհանրապես, քրեական դատավարությունում փորձագետի կարգավիճակը, դերն ու նրա գործունեության առանձնահատուկ բնույթը պայմանավորված են վերջինիս կողմից տրվող գրավող ակտով, այն է՝ եզրակացությամբ:

Փորձագետի և մասնագետի դատավարական կարգավիճակի առանձնահատկությունների պարզաբանման համար կարևոր նշանակություն ունի «մասնագետ» հասկացության պարզաբանումը, որն իրավաբանական գրականության մեջ ընկալվում է տարբեր կերպ:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Երևան, 2003, էջ 195:

Մասնավորապես, Վ. Ա. Սնետկովը նպատակահարմար է գտնում քրեադատավարական օրենքով նախատեսված կարգով հետազոտությանը մասնակցող իրազեկ անձանց անվանել դատական մասնագետներ, ինչպես ընդունված է այլ դատավարական հասկացությունների համար՝ «դատական փորձաքննություն», «դատական փորձագետ», «դատական պացույց» և այլն¹: Դատական մասնագետների դասին Վ. Ա. Սնետկովը դասում է նաև փորձագիտական կրիմինալիստիկական ենթաբաժանմունքների աշխատակիցներին, որոնք պետք է իրականացնեն իրենց մասնագիտական պարտականությունները քննչական գործողությունների ընթացքում:

Փորձաքրեագիտական ստորաբաժանման աշխատակիցը պետք է ունենա մասնագիտական հատուկ պատրաստվածություն, որը նրան թույլ կտա իրագործել մասնագետի գործառույթները: Փորձաքրեագիտական ստորաբաժանման մասնագետի պլոտեսիոնալ կարգավիճակի հիմքն են կազմում նրա գործառութային պարտավորությունները, որոնք ամրագրված են ի պաշտոնե:

Է. Բ. Մելնիկովան մասնագետ է համարում այն անձին, որն ունի հետաքննության կամ նախաքննության համար անհրաժեշտ հատուկ գիտելիքներ, շահագրգուված չէ գործի ելքով, ներգրավված է քննչական գործողությունների իրականացմանը, ցուցաբերում է գիտատեխնիկական օգնություն ցանկացած ձևով, բացառությամբ փորձագիտական եզրակացության,

¹ Տե՛ս Սնետկով Վ. Ա., Դեյտельность экспертизно-криминалистических подразделений органов внутренних дел по применению экспертизно-криминалистических методов и средств в раскрытии и расследовании преступлений, Մ., 1996, էջ 7:

դեկավարվում է հետաքննություն կատարող անձի կամ քննիչի կողմից՝ քննչական գործողություններ իրականացնելիս¹:

Մասնագետի ապացուցողական գործունեության դատավարական առանձնահատկությունը, ըստ Վ. Դ. Արսենևի, շատ դեպքերում կայանում է նրա գործունեության՝ որևէ ինքնուրույն ձևակերպված արդյունքի բացակայությամբ: Մասնագետի գործունեությունը (դատավարական առումով), այսպես ասած՝ միաձուլվում է դատարանի և քննիչի գործունեությանը, նրա գործողությունների մասին վկայում են միայն քննչական գործողության (դատական նիստի) արձանագրության նշումները, ինչպես նաև քննչական գործողության արձանագրությունում նրա ստորագրությունը²:

Քրեական դատավարությունում մասնագետի մասնակցության ինստիտուտն առաջին անգամ իր օրենսդրական ձևակերպումն ստացավ 1961թ. ՀՍՍՀ ՔԴՕ-ում: Սակայն չեն սահմանվել «մասնագետ» հասկացության բովանդակությունը, նրա իրավունքներն ու պարտականությունները: «Օրենսգիրքը, նախատեսելով մասնագետի մասնակցությունը դատավարությանը, բոլորովին չի խոսում նրա իրավունքների և պարտականությունների մասին: Դա պատահականություն չպետք է համարել: Օրենսդրքը մասնագետին չի դիտում որպես դատավարությանը մասնակցող ինքնուրույն անձ, այլ դիտում է որպես հետաքննություն կատարող անձի կամ քննիչի օգնական, որը կոչված է իր կոնսուլտացիաներով ու բացատրությունում նրա գործունեությանը»:

¹ Ст. Мельникова Э. Б., Участие специалиста в следственных действиях, М., 1964, § 24-25:

² Ст. Арсеньев В. Д., Понятие специалиста и некоторые вопросы его компетенции в советском уголовном процессе, Организационно-правовые проблемы судебной экспертизы, Сб. науч. тр. ВНИИСЭ, М., 1982, § 34:

յուններով օգնելու նշված պաշտոնատար անձանց, նրանց կողմից կատարվող քննչական գործողությունները նպատակալաց և արդյունավետ դարձնելու համար»¹:

Քրեական դատավարությունում հասող գիտելիքների օգտագործման տեսության և պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնագետն ընկալվում է որպես այնպիսի անձ, որը ներգրավվում է միայն առանձին, օրենքով նախատեսված քննչական և դատավարական գործողությունների կատարմանը:

ՀՀ քր.դատ. օր.-ի 84-րդ հոդվածով, ի տարբերություն ՀՍՍՀ ՔԴՕ-ի նորմերի (հոդված 124¹), ընդլայնվել են մասնագետի իրավունքներն ու պարտականությունները: Մինչդեռ քրեադատավարական օրենսդրությունում, ինչպես արդեն նշվել է, չկա հատուկ գիտելիքների բովանդակության պարզաբանում, որոնց պետք է տիրապետի մասնագետը:

Համաձայն ՀՀ քր.դատ. օր.-ի նորմերի, քննչական գործության իրականացման արդյունքում կազմվում է արձանագրություն, որի մեջ նշվում են քննչական գործողությանը մասնակցող յուրաքանչյուր անձի անունը, ազգանունը, հայրանունը, դատավարական կարգավիճակը, պետք է լրիվ արտացոլվեն տեղեկություններ մասնագետի, նրա գործողությունների, ինչպես նաև քննչական գործողություններն իրականացնելիս օգտագործված գիտատեխնիկական միջոցների, դրանց օգտագործման պայմանների ու կարգի, այն օբյեկտների մասին, որոնց նկատմամբ կիրառվել են այդ միջոցները և ստացված արդյունքները: Սակայն օրենսդրությամբ կարգավորված չէ

¹ Տե՛ս Դատական փորձաքննության հարցեր, ժողովածու 1, ԵՊՀ, Երևան, 1962, էջ16:

մասնագետի մասին տեղեկությունների ձևակերպման և ներմուծման կարգը: Որպես կանոն, քննիչը նշում է տեղեկություններ մասնագետի պաշտոնի, կրթության, որակավորման և գործունեության բովանդակության մասին և նրա ստորագրության վավերացման մասին:

Որպես մասնագետ անձի ներգրավման մասին որոշումը մեր քրեադատավարական օրենսդրությամբ չի կարգավորվում: Համաձայն ՀՀ քր.դատ. օր.-ի 55-րդ հոդվածի չորրորդ մասի 12-րդ կետի՝ քննիչը լիազորված է գործին մասնակից դարձնել մասնագետների, իսկ քննչական գործողություններին մասնագետի մասնակցության կարգը որոշվում է նշված օրենսդրի այն հոդվածներով, որոնք սահմանում են կոնկրետ քննչական գործողության իրականացման կարգն ու պայմանները:

Կարևոր է նաև մասնագետին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը: Ն. Ա. Սելիվանովն արդարացիորեն նշում է. «Առաջին հայացքից այդպիսի հարցը կարող է ակադեմիական թվալ: Սակայն իրականում այդպես չէ: Իրազեկան անձը, օգնելով քննիչին, սկզբունքորեն գործիք չէ իր գործողությունների արդյունքների գիտակցական աղավաղման հնարավորություններից»¹:

Ի տարբերություն փորձագետի, մասնագետը եզրակացություն չի կազմում, նրա կարծիքը չի կարող հավասարվել փորձագետի եզրակացությանը: Սակայն օբյեկտների նախնական հետազոտությամբ մասնագետը կարող է տեղեկութ-

յուններ ներկայացնել հանցագործության կատարման հանգամանքների, հանցագործության գործիքների և այլ տվյալների մասին:

Բոլոր դեպքերում, քննչական գործողության արդյունքների ստացման ու դրանց գնահատման «պատասխանատուն» վարույթն իրականացնող անձնն է: Ուստի, մեր կարծիքով, մասնագետի պատասխանատվության հարցը լուծելիս պետք է հաշվի առնել վերջինիս մասնակցության աստիճանը, գործողությունների ու ստացված արդյունքների (հետևանքների) միջև պատճառական կապը և այլն:

Չննարկումների առիթ է հանդիսանում այն հարցը, թե արդյոք հնարավոր և նպատակահարմար է մասնագետի գործունեության արդյունքները ձևակերպել տեղեկանքի տեսքով:

Այսպես, Յու. Կ. Օրլովն անթույլատրելի է համարում ձևակերպման այնպիսի տարբերակի ներմուծումը, ինչպիսին մասնագետի տեղեկանքն է¹: Ս. Ա. Վելիչկինի և Դ. Ա. Տուրչինի կարծիքով՝ մասնագետի կողմից տեղեկանքի կազմման իրավական հիմք է ծառայում օրենքում ամրագրված այն դրույթը, ըստ որի մասնագետն իրավունք ունի արձանագրությանը կցելու ենթակա այնպիսի հայտարարություն անել, որը կապված է ապացույցների հայտնաբերման, վերցնելու և ամրապնդման հետ, ինչպես նաև պարզաբանումներ տալ իր կողմից կատարված գործողությունների վերաբերյալ²:

¹ Տե՛ս Օրлов Յ. Կ., Производство экспертизы в уголовном процессе, М., 1982, էջ 28:

² Տե՛ս Վеличкин С. А., Турчин Д. А., Участие специалиста в производстве следственных действий, Проблемы борьбы с преступностью, Омск, 1976, էջ 93-100:

Վ. Ն. Մախովի կարծիքով՝ նպատակահարմար է ՀԴՕ-ում կատարել լրացումներ, որոնք բույլ կտան իրազեկ անձանց ցուցմունքները դիտել որպես ապացույց¹:

Որոշ տեսարանների կարծիքով՝ մասնագետի ակտը պետք է համարել որպես ապացույցի ինքնուրույն աղբյուր²:

Միևնույն ժամանակ չի կարելի համաձայնել այն տեսարանների հետ, որոնք գտնում են, որ մասնագետի գործունեությունը ոչ մի ապացուցողական նշանակություն չունի³: Մասնագետի գործունեության բոլոր արդյունքները ֆիքսվում են համապատասխան քննչական գործողության շրջանակներում: Դրանով իսկ դրանք համարվում են քննչական գործողության արձանագրության որոշակի մասը, այսինքն՝ «...մասնագետի օգնությամբ ստացված տվյալները կազմում են ապացույցների աղբյուրի օրգանական մասը»⁴:

Ինչպես նշում է Յու. Կ. Օրլովը՝ «մասնագետի կողմից ուսումնասիրության կատարման պայմաններին են պատկանում հետևյալները.

1. մասնագետի գործունեությունը լրացնում է քննիչի գործունեությունը և անկախ հանդես չի գալիս,

¹ Տե՛ս Լ. Ա. Ի., Եղի հայութական քաղաքականության մասին օրենքը՝ 1999 թվականի մայիսի 20-ի մասին, ՀՀ օրենքի շահագործման մասին օրենքը՝ 1999 թվականի մայիսի 20-ի մասին:

² Տե՛ս Արմեն Առաքելյան Ա. Օ., Եղի օրենքի մասին օրենքի մասին օրենքը՝ 1999 թվականի մայիսի 20-ի մասին, ՀՀ օրենքի շահագործման մասին օրենքը՝ 1999 թվականի մայիսի 20-ի մասին:

³ Տե՛ս Մածով Վ. Ա., участие специалиста в следственном действии, М., 1975, էջ 3:

⁴ Տե՛ս Մельникова Э. Б., участие специалистов в следственном действии, М., Юридическая литература, 1964, էջ 66:

2. մասնագետը եզրակացություն չի տալիս և ընդհանրապես չի ծնակերպում ոչ մի հետևողություն, որի ապացուցողական նշանակություն կունենա գործի համար: Նրա ամրող գործունեությունն ընթանում է այն քննչական գործողության շրջանակներում, որին նա մասնակցությունն է ունենում,
3. մասնագետների գործունեության արդյունքներն ինքնուրույն ապացուցի նշանակություն չունեն, բայց հանդես են գալիս որպես համապատասխան քննչական գործողության արձանագրության բաղկացուցիչ մաս»¹:

Ինչպես վերը նշվեց, նոր քրեադատավարական օրենսդրությունում, ի տարբերություն նախկինի, տրվում է փորձագետի և մասնագետի դատավարական իրավասության սահմանների առավել հատակ բնորոշում: Սակայն իրավաբանական գրականությունում փորձագետի և մասնագետի գործունեության տարբերակման, մասնագետի գործառույթների ընդլայնման, դրանց իրականացման իրավական ձևի փոփոխության հարցերը մնում են հույժ արդիական: Դա տեղի է ունենում պրակտիկ գործունեության պահանջով, որը բովանդակային առումով առկա է փորձագետների կողմից կատարվող հետազոտության մեջ, դուրս չի գալիս օրենկանի ուսումնասիրմանն ուղղված գործողությունների իրազործման սահմաններից: Կան նաև այլ պատճառներ, որոնք հիմք են հանդիսացել քրեական դատավարությունում մասնագետի և փորձագետի կողմից օգտագործվող հատուկ գիտելիքների սահմանագատման հարցի մանրամասն քննարկման համար:

Հիմնականում մասնագետի գործունեության հետազոտական ոլորտի հարցերը ծագում են՝ կապված, այսպես կոչված,

¹ Տե՛ս Օրлов Յ. Կ., Производство экспертизы в уголовном процессе, М., 1982, էջ 25:

որակյալ զննում կատարելու հետ: Ինչպես հայտնի է, դեպքի տեղի գննության նպատակները չեն սահմանափակվում միայն իրեղեն ապացույցների հայտնաբերմամբ: Զննության ընթացքում լուծվում են նաև այլ խնդիրներ, այդ թվում՝ դեպքի իրադրության և գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերականգնումը: Այսպես, դեպքի տեղի գննության ընթացքում մասնագետը, զննելով, օրինակ, սեղանի վրա հայտնաբերված բաժակը, կարող է պարզել՝ դրա վրա ձեռքի հետքեր կա՞ն, ինչպես և որ ձեռքով են դրանք թողնվել, պիտանի են, արդյոք, նույնացման համար: Միևնույն ժամանակ, եթե այդ բաժակը վերցվել է առանց մասնագետի այդպիսի մանրամասն ուսումնասիրության, ապա փորձագետին փորձաքննության նշանակման ընթացքում կառաջադրվեն այդ հարցերը: Ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում տարբերությունը զիտելիքների օգտագործման ձևի ու տարբերակների՝ տվյալ անձանց դատավարական դիրքի մեջ է:

Գոյություն ունի փորձագետի և մասնագետի գործունեության որոշակի առանձնահատկություն, որը չկա դատավարության մասնակից այլ անձանց աշխատանքում: Օրինակ՝ իրեղեն ապացույցների գննության, կամ համեմատական հետազոտման նմուշների ստացման ժամանակ մասնագետի գործունեությունը շատ կողմերով է նման փորձագետի գործունեությանը:

Մասնագետի և փորձագետի գործունեության հիմնական տարբերությունը բովանդակային բնույթ է կրում: Քանի որ մասնագետի համար օրենքով չի պահանջվում եզրակացություն տալը, նա պարտավոր չէ իրականացնել իր կողմից հետազոտվող օբյեկտների հատուկ ուսումնասիրություն:

Փորձագետի կողմից կատարվող հետազոտությունը, քրեադատավարական օրենսդրությանը համապատասխան, կարող է դիտվել որպես հատուկ գիտելիքների օգտագործման ձև։ Կատարելով գիտական հետազոտություն՝ փորձագետը բացահայտում է օբյեկտի հատկությունները, իրականացնում դրանց գիտական մեկնաբանությունը և այդ հիմքի վրա ձևակերպում նոր քրեագիտորեն նշանակություն ունեցող տեղեկություն։

Մասնագետի պարագայում՝ վերջինիս գործողությունները հիմնականում կրում են կողմնորոշող, օգնող, օժանդակող նշանակություն։ Մասնագետը քննչական գործողության իրականացման ժամանակ գտնվում է քննությունը վարող մարմնի ենթակայության ներքո և, վերջապես, մասնագետի գործողության արդյունքներն արտացոլվում են քննչական գործողության արձանագրության մեջ։

Փորձագետի իրավական դրությունը (կարգավիճակը) ՀՀ քր.դատ. օր.-ի նորմերի վերլուծության համաձայն սահմանվում է հետևյալ կերպ։

- ◆ փորձագետի ողջ գործունեությունը կանոնակարգվում է օրենսդրությամբ,
- ◆ փորձագետը դատավարության ինքնուրույն մասնակից է՝ հանդես գալով դրա մյուս սուրյեկտներից անկախ,
- ◆ նրա գլխավոր գործառույթը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված փորձաքննության օրյեկտների եւ գործի նյութերի հետազոտությունների հիման վրա եզրակացություն տալն է,
- ◆ փորձագիտական հետազոտության նպատակը, հատուկ գիտելիքների կիրառմամբ, օրյեկտի ուսումնասիրման հիման վրա ապացուցական փաստերի հաստատումն է,
- ◆ փորձագետն ազատված է անհրաժեշտ տեղեկատվության հավաքման պատասխանատվությունից եւ պետք է միայն

- գործառի իրեն տրամադրված նյութերը, սակայն իրավունքը ունի փորձաքննությունը նշանակած անձից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն, որը պարտավոր է բավարարել փորձագետի միջնորդությունը,
- ◆ փորձագետը գործի նյութերը հետազոտում է միայն իր առջեւ դրված հարցերի առումով, իր իրավասության սահմաններում,
 - ◆ փորձագետի եզրակացությունում շարադրված փաստերի ապացուցողական նշանակությունը գնահատվում է ինչպես ըստ էության, այնպես էլ ըստ դատավարական ձև:

Այդ պահանջներից թեկուզե մեկից փորձագետի շեղվելը նրա եզրակացությունը զրկում է ապացուցողական նշանակությունից:

Փորձագետի գործունեությունը բնորոշում են. ինքնուրույնությունը, անհատականությունը, անձնական պատասխանատվությունն իր կողմից կատարված աշխատանքի արդյունքների համար:

Փորձագետի ինքնուրույնությունն արտահայտվում է նրանում, որ նա, իր իրավասությունների սահմաններում, ազատ է հետազոտությունների կատարման մեթոդիկաների ընտրության հարցում: Սակայն այդ ինքնուրույնությունը հարաբերական է, քանի որ նրա կողմից ընտրված՝ հետազոտության մեթոդները եւ միջոցները չպետք է խախտեն իրեղեն ապացույցների հետ վարվելու կանոնները, դատավարության մասնակիցների իրավունքներն ու ազատությունները, համապատասխանեն համամարդկային բարոյական նորմերին:

Փորձագետի ինքնուրույնությունը նշանակում է նաև հետազոտություն կատարելիս նրա ենթակայության բացակայություն, որպես մասնագետ՝ իր իրավասության շրջանակներում հարցերը լուծելիս անկախ պետք է լինի անմիջական

ղեկավարի, քննիչի, դատավորի, գործի հարցում շահազրին անձանց ազդեցությունից:

Փորձագետը կարող է միջնորդություն հարուցել իրեն լրացնիչ նյութեր տրամադրելու վերաբերյալ, որոնց բացակայությունը կամ դժվարացնում, կամ էլ բացառում է հետազոտության կատարումը: Նա կարող է առաջարկել քննիչին կատարել այս կամ այն քննչական գործողություններ (ավելի հաճախ՝ զննումներ)՝ լրացնիչ նյութերի հայտնաբերման, վերցման և փորձագետին տրամադրման համար, ինչպես նաև միջնորդել տվյալ քննչական գործողություններին մասնակցելու վերաբերյալ, որպեսզի որպես մասնագետ օգնություն ցուցաբերի քննիչին:

Փորձագետն անձամբ է կատարում փորձագիտական հետազոտությունը եւ ըստ դրա արդյունքների ձեւակերպում հետևությունները:

Փորձագետի իրավասությունը՝ կոնկրետ տեսակի, ձևի և ենթատեսակի դատական փորձաքննության տեսությանը և մեթոդիկային տիրապետելն է: Ընդունված է տարբերել փորձագետի իրավասության գիտական և սուրյեկտիվ կողմերը: Փորձագետի գիտական իրավասությունը հատուկ գիտելիքների ծավալն է, որոնց պարտավոր է տիրապետել դատական փորձաքննության տվյալ տեսակի, ձևի, ենթատեսակի յուրաքանչյուր ներկայացուցիչ: Հնարավոր է փորձագետի իրավասությունը ողջ տեսակի, ձևի սահմաններում:

Կոնկրետ անձի իրավասության սուրյեկտիվ կողմը կոնկրետ ձևի, ենթատեսակի փորձաքննությունների տեսությանը եւ մեթոդիկային տիրապետելու աստիճանն է: Այն կախված է տվյալ անձի փորձից, նրա բազային եւ հատուկ կրթությունից:

(ինչի մասին փորձագետը սովորաբար նշում է իր եզրակացության ներածական մասում), նոր մեթոդների ու մեթոդիկաների նրա խնացությունից:

Փորձագետի ձեռնհասությունը փորձաքննության առարկային վերաբերող առաջադրված հարցերը լուծելու ունակությունն է: Այն որոշվում է նրա կրթության և մասնագիտական պատրաստվածության մակարդակով, ինչպես նաև հետազոտությունների տվյալ բնագավառում աշխատանքի փորձով: Փորձագիտական հիմնարկներում փորձագետի ձեռնհասությունն ստուգվում և հավաստվում է համապատասխան որակավորման հանձնաժողովների կողմից, որն ստուգված անձին տալիս է ինքնուրույնաբար որոշակի տեսակի փորձաքննություններ կատարելու իրավունքի համապատասխան փաստաթուղթ (թույլտվություն):

Օրենսդիրը փորձագետին օժտել է իրավունքներով, որոնք պետք է փորձագետի համար ստեղծեն իրական հնարավորություններ և պայմաններ նրա վրա դրված պարտականությունների կատարման համար:

Փորձագետի իրավական կարգավիճակի վերաբերյալ դատողություններ անելիս անհրաժեշտ է պարզաբանել փորձագետի դատավարական իրավունքներն ու պարտականությունները:

Քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ փորձագետն օժտված է հետևյալ իրավունքներով.

- ծանոթանալ գործի՝ փորձաքննության առարկային վերաբերող նյութերին,

- միջնորդություն հարուցել եզրակացություն տալու համար իրեն անհրաժեշտ լրացուցիչ նյութեր տրամադրելու վերաբերյալ,
- հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ դատարանի բույստվությամբ մասնակցել հարցաքննություններին եւ այլ քննչական ու դատական գործողություններին եւ տալ փորձաքննության առարկային վերաբերող հարցեր,
- եթե առաջադրված հարցերը փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից դուրս են կամ նրան ներկայացված նյութերը բավարար չեն եզրակացություն տալու համար, գրավոր ձեռով հայտնել փորձաքննություն նշանակած մարմնին եզրակացություն տալու անհնարինության մասին,
- բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի գործողությունները եւ որոշումները,
- պահանջել փորձաքննության կատարման հետ կապված ծախսերի հատուցում,
- իր եզրակացությունում մատնացույց անել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները, որոնց վերաբերյալ նրան հարցեր չեն առաջադրվել:

Իրավունքների հետ մեկտեղ, օրենքը նախատեսում է փորձագետի պարտականությունների համակարգը՝ կապված դատական փորձաքննության նշանակման եւ կատարման հետ:

Նախևառաջ, փորձագետը պարտավոր է ներկայանալ փորձաքննությունը նշանակած անձի (մարմնի) կանչով եւ իր անունից տալ առաջադրված հարցերի առումով կատարված հետազոտությունների հիման վրա եզրակացություն՝ այն հաստատելով իր ստորագրությամբ (ՀՀ քր.դատ. օր.-ի, հոդվ. 250):

Փորձագետը պարտավոր է տալ օբյեկտիվ եզրակացություն իրեն առաջադրված հարցերի վերաբերյալ։ Նախ՝ օբյեկտիվությունը ենթադրում է գործի ելքով նրա լիովին ոչ շա-

հագրգրությունը, ապա՝ հետազոտությունների՝ համակցությամբ, արդյունքների վերաբերյալ հասուն գիտելիքների և ներքին համոզմունքների գնահատման հիման վրա եզրակացություն տալը և գիտականորեն հիմնավորված մեթոդիկաների կիրառումը:

Փորձագետի վրա է դրված նաև դատական նիստում իր տված եզրակացությունը հրապարակելու պարտականությունը, եթե նա հրավիրվում է նիստի:

Քրեադատավարական օրենքով նախատեսված է փորձագետի պարտականությունը՝ ներկայանալ փորձաքննություն նշանակած անձի կանչով, ինչպես նաև պատասխանատվություն կրել իր պարտականությունների կատարումից խոսափելու կամ անհարգելի պատճառներով չներկայանալու համար:

Փորձագետը պատասխանատվություն է կրում ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար:

Փորձագետի վրա դրված է պարտականություն՝ ապահովել փորձաքննության օրյեկտների ամբողջականությունը: Եթե ենթադրվում է այնպիսի մեթոդների օգտագործում, որոնք կարող են հանգեցնել օրյեկտի լիովին կամ մասնակի ոչնչացման կամ էական փոփոխության, որի կապակցությամբ կրացառվի կրկնակի հետազոտության հնարավորությունը, փորձագետը պետք է այդ մասին տեղեկացնի փորձաքննությունը, փորձագետը խաթարող նման մեթոդներ:

Եթե փորձագետը չի կարող տալ եզրակացություն, նա պետք է դա հիմնավորի իր դիրքորոշումը պարզաբանող համապատասխան փաստարկներով եւ տեղեկություններով:

Այդպիսի փաստարկների թվին են դասվում՝ որոշման մեջ փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից դուրս, ինչպես եւ՝ իրավունքի բնագավառին առնչվող հարցերի առկայությունը, առաջադրված հարցերին պատասխան տալու անհնարինությունը՝ կապված փորձագետի կողմից ներկայացվող բնագավառում գիտելիքների վիճակի, օբյեկտների հետազոտության անհրաժեշտ մեթոդների բացակայության հետ:

Այսպիսով, կարելի է հավաստել, որ փորձագետը քրեական դատավարությունում ունի հատուկ դատավարական կարգավիճակ, որը բխում է վերջինիս մասնագիտական գիտելիքների, հմտությունների և դերակատարության առանձնահատկություններից:

§ 3. *Փորձագետի եզրակացության գնահատման իրավական*

Կարգավորումը և գիտական չափանիշները

Դատական փորձագիտական գործունեությունն ըստ էության ուղղված է վարույթն իրականացնող մարմնին որոշակի փաստական տվյալներով ապահովելուն, որոնք որոշակի պահանջների բավարարման դեպքում ճանաչվում են որպես ապացույցներ և դրվում գործով կայացվող այս կամ այն որոշման հիմքում: Այս տեսանկյունից փորձագիտական գործունեությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի, այն է՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքնե-

թի կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով:

ՀՀ քր. դատ. օր.-ի 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևողություններն են իրեն առաջադրված հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է՝ գործի համապատասխան նյութերը հետազոտելով»:

Դատական փորձաքննության արդյունք հանդիսացող փորձագիտական եզրակացությունը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, գնահատվում է վարույթն իրականացնող մարմնի՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կողմից, որն իրականացվում է ապացույցների գնահատման ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով ապացույցի այս աղբյուրի առանձնահատկությունները:

ՀՀ քր. դատ. օր.-ի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, քույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարության տեսանկյունից»:

Հարկ է նշել, որ ապացույցի գնահատման հասկացության և դրա բովանդակության վերաբերյալ գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Այսպես, Ռ.Ս. Բելկինն ապացույցների գնահատումը բնութագրում է որպես մտավոր տրամաբանական գործընթաց, որն ուղղված է որոշելու ապացույցների քույլատրելիությունն ու վերաբերելիությունը, դրանց միջև կապի առկայությունը և այդ կապի բնույթը, ապացույց-

ների նշանակությունն ու ճշմարտության բացահայտման գործում դրանց օգտագործման հնարավորությունները¹:

Մեկ այլ սահմանման համաձայն՝ փորձագետի եզրակացության գնահատումը ենթադրում է կոնկրետ գործով վարույթն իրականացնող մարմնի մոտ ներքին համոզմունքի ձևավորում եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության, ինչպես նաև դրանում արված հետևությունների ապացուցողական նշանակության վերաբերյալ²:

Հաշվի առնելով իրավաբանական գրականության մեջ արտահայտված կարծիքները՝ փորձագետի եզրակացության գնահատումը կարելի է սահմանել որպես հետաքննության մարմնի, քննիչի, դատարանի կամ դատախազի մտավոր տրամարանական գործունեություն, որի արդյունքում գնահատող սուրյեկտի մոտ ձևավորվում է ներքին համոզմունք եզրակացության բույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության, գիտական հիմնավորվածության վերաբերյալ, հետևություններ են արվում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման գործում փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստական տվյալների դերի և նշանակության մասին:

Փորձագետի եզրակացության գնահատման հարցում հաստկապես կարևոր նշանակություն ունի գնահատող սուրյեկտի մոտ ներքին համոզմունքի ձևավորումը: Մասնագիտական գրականության մեջ ներքին համոզմունքը դիտվում է որպես ա-

¹ Տե՛ս **Белкин Р.С.** Собирание, исследование и оценка доказательств. М., 1966, էջ 65:

² Տե՛ս Судебно-почерковедческая экспертиза. *Под ред. Е.Д. Добропольская, А.И. Манцветова, В.Ф. Орлова.* М., 1971, էջ 314:

պացույցների գնահատման մեթոդ, հնարք, սկզբունք, որպես գնահատման չափանիշ կամ արդյունք¹: Ընդ որում, որոշակի անհայտ փաստը փորձագետը պարզում է իրեն հայտնի այլ փաստերի հետազոտության արդյունքում՝ իր ներքին համոզմունքին համապատասխան²: Վարույթն իրականացնող մարմինն իր հերթին ներքին համոզման է գալիս փորձագետի եղակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու հնարավորության վերաբերյալ:

Պետք է նկատել, որ գրականության մեջ փորձագետի եղակացության գնահատման վերաբերյալ օգտագործվում են տարբեր եզրույթներ. մի դեպքում՝ խոսվում է եզրակացության գնահատման «տարբերի»³, մեկ այլ դեպքում՝ գնահատման «չափանիշների»⁴, երրորդ դեպքում՝ փորձագետի եզրակացության գնահատման «տեսակետների»⁵ (կողմերի) մասին: Ընդ որում, շատ հաճախ նշված եզրույթները միաժամանակ օգտագործվում են փորձագետի եզրակացության գնահատման ենթակա միևնույն հատկանիշը մատնանշելու համար:

Կարծում ենք, վերը նշված հասկացությունները, չնայած սերտորեն փոխկապակցված լինելուն, միաժամանակ էականորեն տարբերվում են: Ուստի անհրաժեշտ է նշված հասկա-

¹ Учебником в тб'у **Новик В.В.** Криминалистические аспекты доказывания по уголовным делам: проблемы теории и практики. СПб, 2005, էջեր 354-365:

²Տե՛ս **Соколовский З.М.** Оценка заключений криминалистической экспертизы письма. М., 1959, էջ 13:

³Տե՛ս **Сахнова Т.В.** Судебная экспертиза. М., 2000, էջեր 253-254:

⁴Տե՛ս **Притузова В.А.** Оценка заключения криминалистической экспертизы вышестоящим судом. М., 1960, էջ 8:

⁵Տե՛ս, оրինակ, **Новик В.В.**, նշված աշխատ., էջեր 365-376:

ցուքյունները որոշակիորեն տարանջատել միմյանցից, հստակեցնել դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը:

Փորձագետի եզրակացության գնահատման «տարրեր», մեր կարծիքով, եզրակացության՝ գնահատման ենթակա այն հատկանիշները կամ կողմերն են, որոնց միաժամանակյա առկայությունը պարտադիր է փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու համար: Այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը հանգեցնում է փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակության կորստին:

Փորձագետի եզրակացության գնահատման «չափանիշներ» գիտությամբ և պրակտիկայով մշակված այն կողմնորոշիչներն են, որոնց գնահատման արդյունքում վարույթն իրականացնող մարմնի մոտ ձևավորվում է ներքին համոզմունք փորձագետի եզրակացության այս կամ այն տարրի առկայության կամ բացակայության մասին: Այլ կերպ ասած՝ եզրակացության գնահատման չափանիշները ծառայում են դրա տարրերի գնահատման նպատակին: Այդ չափանիշները հանդես են զայխ որպես փորձագետի եզրակացության՝ գնահատման ենթակա տարրերի առկայության կամ բացակայության որոշման պայմաններ:

Մասնագիտական գրականության մեջ, ինչպես նշեցինք, շատ դեպքերում փորձագետի եզրակացության գնահատման տարրերն ու չափանիշները չեն տարանջատվում և դրանք ներկայացվում են միասնական թվարկով: Այսպես, Ե.Ի. Գալյաշինան փորձագետի եզրակացության գնահատման գործընթացում առանձնացնում է գնահատման ենթակա հետևյալ տարրերը.

- փորձաքննության նշանակման և կատարման դատավարական կամ կարգը,
- փորձագետի եզրակացության կազմման ճշտությունը և դրա մեջ օրենքով նախատեսված բոլոր ռեկվիզիտների առկայությունը,
- փորձագետի ձեռնհասությունը,
- գործի ելքով փորձագետի շահագրգուածությունը,
- հետազոտության ներկայացված օրյեկտների ձեռքբերման և պահպանման դատավարական կարգի պահպանումը,
- փորձագետի եզրակացության արժանահավատությունը, դրանում շարադրված հետևողությունների գիտական հիմնավորվածությունը, պատճառաբանվածությունը, հետևողությունների համապատասխանությունը կատարված հետազոտություններին, կիրառված մեթոդիկաների արժանահավատությունը և մեթոդների հիմնավորվածությունը,
- գիտական հիմնավորվածության ստուգումը, որը ենթադրում է հետևողությունների տրամաբանական կազմը կատարված հետազոտությունների հետ,
- փորձագետին ներկայացված նյութերի ամրողականությունը¹:

Այլ հեղինակներ փորձագետի եզրակացության գնահատումը բաժանում են երկու փոխկապակացված մասերի՝

- ա) փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության, պատճառաբանվածության, մրա հետևողությունների մանրամասն, բազմակողմանի և օրյեկտիվ ստուգումը,
- բ) փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստերի ապացուցողական նշանակության որոշումը, գործով ձեռք բեր-

¹ Տե՛ս **Галиашвили Е.И.** Назначение, производство и оценка заключения судебной экспертизы, http://www.rusexpert.ru/books/cena_slova3/029.htm, (20.04.2010):

ված այլ ապացույցների հետ դրանց կապի և հարաբերության պարզումը¹:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է տարանջատել փորձագետի եզրակացության գնահատման ենթակա տարրերը և յուրաքանչյուր տարրի համար առանձնացնել դրա գնահատման համապատասխան չափանիշները: Այս տեսակետից, փորձագետի եզրակացության գնահատումը, կարծում ենք, ներառում է գնահատման ենթակա երեք հիմնական տարրերի ամբողջություն՝

- ա) փորձաքննության նախապատրաստման, նշանակման և կատարման դատավարական կարգի պահպանման (եզրակացության՝ որպես ապացույցի թույլատրելիության) գնահատումը,
- բ) եզրակացության արժանահավատության և գիտական հիմնավորվածության գնահատումը,
- շ) եզրակացության մեջ շարադրված փաստերի՝ որպես ապացույցների վերաբերելիության, եզրակացության տեղի և նշանակության գնահատումը գործով ձեռք բերված այլ ապացույցների շարքում:

Այս տարրերից յուրաքանչյուրն ունի դրա բովանդակությունը կազմող որոշակի չափանիշների համակարգ, որոնց գնահատմամբ որոշվում է փորձագետի եզրակացության վերը թվարկված տարրերի բովանդակությունը, դրանց առկայությունը կամ բացակայությունը և, ի վերջո, դրա ապացուցողական նշանակությունն ու գործով կայացվող որոշման հիմքում դնելու հարցը: Ընդ որում, այդ տարրերը սերտորեն փոխկապակցված և փոխպայմանավորված են, և դրանցից մեկի գնա-

¹ Տե՛ս Судебно-почерковедческая экспертиза. Под ред. Е.Д. Добровольская, А.И. Манцветова, В.Ф. Орлова. М., 1971, էջ 314:

հաստման արդյունքներն ազդում են մյուսի գնահատման արդյունքների վրա:

Փորձագետի եզրակացության գնահատման տարրերն ու չափանիշները քննարկելիս, կարծում ենք, անհրաժեշտ է նաև որոշակիորեն անդրադառնալ ՀՀ-ում և այլ երկրներում փորձագետի եզրակացության գնահատման իրավական կարգավորմանը:

Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետություն փորձագիտական գործունեությունը կարգավորող առանձին միասնական օրենք մինչ այսօր ընդունված չէ: Այս ոլորտը մեր երկրում կարգավորվում է դատավարական օրենսգրքերով, առանձին օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, ինչը, ինչպես բազմիցս քննարկվել է մասնագիտական գրականության մեջ¹, բավարար չէ հասարակական կյանքի այս բնագավառը միասնական, համապարփակ և որակյալ կարգավորման ենթարկելու համար: Ճիշտ է, դատավարական օրենսգրքերով կարգավորված են փորձաքննություն նշանակելու և կատարելու, ինչպես նաև փորձագետի եզրակացության գնահատման հետ կապված հարցերը, սակայն, կարծում ենք, փորձագիտական գործունեության միասնական իրավական կարգավորման բացակայությունն ազդում է, նախ՝ փորձագիտական գործունեության կազմակերպական ապահովման և, վերջին հաշվով՝ փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու արդյունավետության վրա: Այս առումով ՀՀ-ում փորձագիտական գործունեության միասնական իրավական

¹ Տե՛ս **Ենթարկյան Վ.Գ.**, Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Եր., 2007, Էջ 5; **Գավթյան Լ.**, Հայոց լեզվով կատարված տեքստերի կրիմինալիստիկական հետազոտումը հեղինակին պարզելու նպատակով // Թեկն. ատենախոս., Երևան, 2010, Էջեր 121-123:

կարգավորման հիմնախնդիրը խիստ արդիական է, որի հրատապ լուծումը կնպաստի մեր երկրում այդ գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ երաշխիքներ ստեղծելով ՀՀ փորձագիտական գործունեության համակարգման և փորձաքննությունների առավել որակյալ կազմակերպման համար, ինչն էլ իր հերթին կնպաստի փորձագետի եզրակացության զիտական հիմնավորվածության և արժանահավատության ապահովմանը, եզրակացության նշանակության ընդլայնմանը և քրեական, քաղաքացիական, վարչական և այլ գործերով ապացույցի այս աղբյուրի լայնորեն կիրառմանն ու գործերի ճիշտ լուծմանը:

Նոյն համատեքստում նշենք, որ արտասահմանյան երկրներում փորձագիտական գործունեության իրավական կարգավորումները տարբեր են: Այսպես, ԱՄՆ-ում, Ավստրալիայում, ՌԴ-ում համապատասխան ոլորտի հարաբերությունները կարգավորվում են առանձին իրավական ակտերով, Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում՝ դատավարական օրենսդրությամբ, Մեծ Բրիտանիայում՝ ընդհանուր իրավունքի սկզբունքներով և այլն:

Ուստանանի Դաշնությունում պետական փորձագիտական գործունեությունը կարգավորվում է 2001 թվականին ընդունված՝ «Ուստանանի Դաշնությունում պետական դատական-փորձագիտական գործունեության մասին» օրենքով¹, որը սահմանում է Ուստանանի Դաշնությունում քրեական, քաղաքացիական և վարչական գործերով պետական փորձագիտական գործունեության իրավական հիմքերը, կազմակերպ-

¹ Здравоохранение и социальное развитие Российской Федерации в 2001 году. Указ Президента Российской Федерации от 31 мая 2001 г. № 73-УЗ "О государственной судебно-экспертной деятельности в Российской Федерации":

ման սկզբունքները և այդպիսի գործունեության իրականացման հիմնական ուղղությունները: Ընդ որում, դատավարության առանձին տեսակների առանձնահատկությունների հաշվառմամբ՝ փորձաքննությունների նշանակման, կատարման և դրանց արդյունքների օգտագործման հարցերը կարգավորվում են համապատասխան դատավարական օրենսգրքերով¹:

ԱՄՆ-ն առաջին երկրներից մեկն է, որտեղ դատական նախադեպերի հիման վրա մանրամասնորեն մշակվել են փորձագետի եզրակացության գնահատման իրավական չափորոշիչներ: Այսպես, 1975թ. ԱՄՆ Գերազույն դատարանի կողմից ընդունված և Կոնգրեսի կողմից հաստատված Դատական ապացույցների վերաբերյալ դաշնային կանոնների² 702-րդ - կանոնի համաձայն՝ «Եթե գիտական, տեխնիկական կամ այլ հատուկ գիտելիքները կօգնեն փաստերը որոշող անձին փաստական տվյալները հասկանալու կամ վիճելի հարցը լուծելու գործում, իր գիտելիքների, հմտությունների, փորձի, ուսուցման կամ կրթության ուժով որպես փորձագետ որակավորված անձը կարող է համապատասխան փաստական տվյալի մասին

¹ Учебник по вопросам назначения судебной лингвистической экспертизы: Для судей, следователей, дознавателей, прокуроров, экспертов, адвокатов и юрисконсультов / Под ред. проф. М.В. Горбачевского. М., 2004, էջ 7:

² ԱՄՆ Դատական ապացույցների վերաբերյալ դաշնային կանոնների և դրա փոփոխությունների հիմքն են կազմում մի շարք դատական նախադեպեր, որոնք եական նշանակություն ունեն փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հարցում: Մասնավորապես, այդ դատական նախադեպերն են՝ USA Supreme Court, Frye v. United States, 293 F. App. D.C. Cir. 1923; Daubert v. Merrell Dow Pharmaceuticals, Inc. 509 U.S. 579, 1993; General Electric Co. v. Joiner, 522 U.S. 136, 1997; Kumho Tire Company v. Carmichael 526 US, 137, 1999 (ուն Կանոնների պաշտոնական վեր-կայքը՝ USA Federal Rules of Evidence, <http://federalevidence.com/rules-of-evidence>, (20.04.2010)):

վկայություն տալ եզրակացության կամ այլ ընդունելի ձևով,
եթե՝

- ա) փորձագետի հետևությունները հիմնված են բավարար զի-
տական տվյալների վրա,
- բ) եզրակացությունը վստահելի սկզբունքների և մեթոդների արդ-
յունական է,
- գ) փորձագետը համապատասխան սկզբունքներն ու մեթոդնե-
րը ճշգրտուել են գործի փաստերի նկատմամբ»¹:

Տարբեր երկրների համապատասխան օրենսդրական ակ-
տերի համեմատությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ում գործող
հասուն գիտելիքների կիրառմամբ ձեռք բերված ապացույց-
ների թույլատրելիության և արժանահավատության գնահատ-
ման չափանիշներն ամենալիատն են և բավականին մանրա-
մասնորեն սահմանում են փորձագետի եզրակացության գնա-
հատման հիմնադրույթները:

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ա-
զատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի
4-ին Հռոմում ստորագրված Եվրոպական կոնվենցիային, ա-
պա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատա-
կան պրակտիկայում փորձագետի եզրակացության գիտական
հիմնավորվածության և դրա զնահատման միջազգային իրա-
վական երաշխիքը դիտվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ա-
ռաջին կետի՝ արդար դատաքննության իրավունքի շրջանակ-
ներում²: Այդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշ-
վում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտակա-

¹ Տե՛ս **Solan L.M., Tiersma P.M.** Author Identification in American Courts. “Applied Linguistics”. Oxford, 2004, Volume 25, Number 4, էջ 453:

² Տե՛ս **Livia E.M.P. Jakobs, Wim J.J.M. Sprangers.** A European View on Forensic Expertise and Counter-Expertise. “Criminal Law Forum”. Amsterdam, 2000, Volume 11, Number 3, էջեր 375-392:

նությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ոճի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաշառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և իրապարակային դատաքննության իրավունք»:

Եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում¹ հատուկ նշել է, որ անկողմնակալ փորձագետի կողմից կազմված գիտականորեն հիմնավորված փորձագիտական եզրակացությունը յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի մասն է²:

Հանցագործությունների քննության գործընթացում փորձագետի եզրակացության դերն ու նշանակությունը որոշելու համար անհրաժեշտ է քննարկել դրա՝ զնահատման ենթակա տարրերի և չափանիշների բովանդակությունը և դրանց նշանակությունը:

Ինչպես արդեն նշել ենք, փորձագետի եզրակացության՝ զնահատման ենթակա առաջին տարրը փորձաքննության նախապատրաստման, նշանակման և կատարման դատավարական կարգի պահպանման (եզրակացության բույլատրելիության) գնահատումն է: Այն ըստ Էության բխում է ապացույցնե-

¹ Տե՛ս, օրինակ, Brandstetter v. Austria, 28 August 1991; Eskelinen and others v. Finland, 8 August 2006; Kamasiński v. Austria, 19 December 1989 գործերով Եվրոպական դատարանի վճիռները (*Livia E.M.P. Jakobs, Wim J.J.M. Sprangers. A European View on Forensic Expertise and Counter-Expertise. "Criminal Law Forum". Amsterdam, 2000, Volume 11, Number 3, էջեր 375-392*); Կրեուզը ընդդեմ Լեհաստանի գործով վճիռը 19.06.2001 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու, **Խմբ. Դ. Ավելացույցան**, Եր., 2006, էջեր 9-36):

² Մանրամասն տե՛ս նաև **Մելքոնյան Գ.**, Ապացույցների բույլատրելիության եվրոպական չափանիշները // Պետություն և իրավունք, 2008, No 4 (42), էջեր 14-19:

թի թույլատրելիության օրենսդրական ընդհանուր պահանջից, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթից, որն արգելում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

Ապացույցի ձեռքբերման դատավարական կարգի պահպանվածության՝ փորձագետի եզրակացության թույլատրելիության տեսանկյունից, ստուգվում է, թե արդյո՞ք որպես փորձագետ է նշանակվել համապատասխան բնագավառում ձեռնիստ և գործով չշահագրգռված անձը (ՀՀ քր. դատ օր. հոդվ. 85-ի 1-ին մաս), չկա՞ն, արդյոք, փորձագետին բացարկ հայտնելու հիմքեր (ՀՀ քր. դատ օր. հոդվ. 97), պահպանվե՞լ է փորձաքննություն նշանակելու և կատարելու դատավարական կարգը (ՀՀ քր. դատ օր. հոդվածներ 243-252), փորձագետին բացատրվե՞լ են նրա իրավունքներն ու պարտականությունները, փորձագետը նախազգուշացվե՞լ է եզրակացություն տալուց իրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին (ՀՀ քր. դատ օր. հոդվ. 248-ի 2-րդ մաս, հոդվ. 249-ի 2-րդ մաս), փորձագետի եզրակացության կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանո՞ւմ են, արդյոք, քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջներին (ՀՀ քր. դատ օր. հոդվ. 250-ի 2-րդ մաս) և այլն: Այս և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ դրույթները փորձագետի եզրակացության թույլատրելիության գնահատման հիմքերն են, և դրանց չպահպանումը հանգեցնում է փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիությանը:

Փորձագետի եզրակացության քույլատրելիությունը գնահատելիս պետք է ստուգել նաև, թե փորձագիտական հետազոտության ներկայացված օբյեկտները, համեմատական նմուշները կամ այլ նյութերը ձեռք բերելիս պահպանվե՞լ են, արդյոք, քրեադատավարական օրենսդրության պահանջները, և այդ նմուշները կարո՞ղ են, արդյոք, գործով օգտագործվել որպես քույլատրելի ապացույցներ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է «քունավորված ծառի պտուղների մասին» հայտնի կանոնին, որի համաձայն՝ օրենքի խախտմամբ կատարված քննչական գործողության արդյունքում պետք է անքույլատրելի ճանաչել ոչ միայն տվյալ քննչական գործողության արձանագրությունը, այլ նաև դրա ընթացքում ձեռք բերված բոլոր նյութերն ու դրանց հետազոտման արդյունքները¹: Օրինակ՝ անքույլատրելի պետք է ճանաչել ոչ միայն օրենքի խախտմամբ կատարված խուզարկության կամ առգրավման արձանագրությունը և դրա արդյունքում ձեռք բերված իրեղեն ապացույցները, այլ նաև դրանց փորձագիտական հետազոտության արդյունքում տրված փորձագետի եզրակացությունը: Կամ՝ անքույլատրելի է ոչ միայն բռնությամբ, սպառնալիքով կամ խարեւությամբ (ՀՀ քր. դատ. օր. հոդվ. 105-ի, 1-ին մասի 1-ին կետ) համեմատական հետազոտության համար ձեռքբերված նմուշների, այլ նաև դրանց կապակցությամբ տրված փորձագետի եզրակացության օգտագործումը որպես ապացույց և այլն:

¹ Մանրամասն տես՝ **Մելքոնյան Զ.**, Ապացույցների քույլատրելիության պայմանների ընդհանուր բնուրագիրը // Երավագիտության հարցեր, 2005, № 4, էջեր 47-55. **Դոկտորյան Հ.**, Ապացույցներն անքույլատրելի ճանաչելու դատավարական կարգն ու հետևանքները // Պետություն և իրավունք, 2002, № 1 (15), էջեր 42-53:

ճիշտ է, «քունավորված ծառի պտուղների մասին» կանոն անմիջականորեն իր ամրագրումը չի ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, սակայն պրակտիկայում այն լայնորեն կիրառվում է: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում, կասկածի տակ դնելով դատաքիմիական փորձաքննության եզրակացության արժանահավատության հարցը, նշում է. «Ինչ վերաբերում է փորձագետի կողմից անձամբ ավտոմեքենայից վերցված մանրաբելի նմուշին, որը նույնացվել է տուժողի հագուստի մանրաբելերի հետ, ապա պետք է քննարկման առարկա դարձվի այն հարցը, թե ավտոմեքենայից նմուշ վերցնելիս արդյո՞ք պահպանվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 253-256 հոդվածներով նախատեսված հետազոտման համար նմուշներ ստանալու վերաբերյալ օրենսդրության պահանջները և ըստ այդմ որոշել փորձաքննության եզրակացության այդ մասը մեղադրող ապացույց դիտելու կամ չդիտելու հարցը»¹:

Կամ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը 16.12.2009թ. թիվ ԵԶՌԴ/0295/01/08 գործով գտել է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է անթույլատրելի ճանաչված ապացույցներից անմիջականորեն բխող այլ ապացույցների անթույլատրելիության հարցի վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր²:

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու, հատ. 3, Եր., 2001, էջ 195, մեջբերումն ըստ ՀՀ Սելրուժյանի, Ապացույցների բույլատրելիության պայմանների ընդհանուր բնուրագիրը // Իրավագիտության հարցեր, 2005, № 4, էջ 54:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 16.12.2009թ. թիվ ԵԶՌԴ/0295/01/08 որոշումը (չի հրապ.), կետեր 17-19:

Փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի օգտագործումը գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման նպատակով էապես կախված է հաջորդ տարրի՝ եզրակացության արժանահավատության և գիտական հիմնավորվածության գնահատումից: Վերջինն էլ իր հերթին հիմք է հանդիսանում ապացույցի այս աղբյուրի ապացուցողական նշանակության գնահատման համար:

Նախ՝ հարկ է նշել, որ եզրակացության արժանահավատության¹ ներքո ընդունված է հասկանալ եզրակացության ճշմարտացիությունը՝ դրանում շարադրված հետևությունների համապատասխանությունն օբյեկտիվ իրականությանը²: Փորձագետի եզրակացությունը ճիշտ է՝ նշանակում է դրանում շարադրված մտքերը համապատասխանում են օբյեկտիվ իրականության փաստերին³:

Վ.Ա. Պրիտուղովայի կարծիքով՝ «Փորձագետի եզրակացությունը գնահատելիս՝ անհրաժեշտ է ելնել ոչ միայն փորձագետի կողմից պարզված փաստից, այլ նաև այդ փաստի արժանահավատությունից, այսինքն՝ փորձագետի հետևություններն անհրաժեշտ է դիտարկել դրանց հիմնավորվածության տեսանկյունից»⁴:

¹ Հարկ է նշել, որ ՀՀ քր. դատ. օր. 127-րդ հոդվածի 2-րդ մասում ապացույցի գնահատման տարրերի մեջ ապացույցի արժանահավատությունն անարդարացիորեն չի հիշատակվում, ի տարբերություն ՈԴ քր. դատ. օր. 88-րդ հոդվածի 1-ին մասի, որտեղ ապացույցի արժանահավատությունը դիտվում է որպես ապացույցի գնահատման ենթակա ինքնուրույն տարր:

² Տե՛ս Судебная почерковедческая экспертиза. *Под ред. Е.Д. Добровольская, А.И. Манцеветова, В.Ф. Орлова.* М., 1971, էջ 313:

³ Տե՛ս Эйсман А.А. Заключение эксперта: (структурно и научное обоснование). М., 1967, էջ 98:

⁴ Տե՛ս *Примузовea B.A.*, նշված աշխատ., էջ 15:

Ասվածը նշանակում է, որ փորձագետի եզրակացության արժանահավատությունը սերտորեն կապված է դրա գիտական հիմնավորվածության տարրի հետ: Փորձագետի եզրակացության մեջ շարադրված հետևությունները կարող են լինել ճիշտ, այսինքն՝ համապատասխանեն օբյեկտիվ իրականությանը, սակայն հիմնավորված չլինեն: Միևնույն ժամանակ, այդ հիմնավորվածությունը պետք է լինի գիտական, քանի որ համապատասխան հետևությունների հանգելու համար փորձագետն օգտագործում է որոշակի բնագավառի հատուկ գիտելիքներ: Պարզ ասած՝ փորձագետի եզրակացության արժանահավատության գնահատումն ըստ էության իրականացվում է առաջին հերթին դրա գիտական հիմնավորվածության գնահատման ճանապարհով:

Այս առնչությամբ տեղին է S.Վ. Սախնովայի մոտեցումը, որը եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատումը դիտում է որպես եզրակացության արժանահավատության գնահատման բաղկացուցիչ մաս¹: Ըստ այս հեղինակի՝ «Գնահատել փորձագետի եզրակացության արժանահավատությունը՝ նշանակում է գնահատել փորձագետի հետևությունների համապատասխանությունն իրականությանը և այս տեսանկյունից (նշանակում է գնահատել՝ հ.ի.՝)՝ փորձագետի կողմից կիրառված մեթոդիկայի հուսալիությունը»: Ըստ որում, եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատումը որպես եզրակացության արժանահավատության գնահատ-

¹ Տե՛ս **Сахннова Т.В.** Судебная экспертиза. М., 2000, М., 2000, էջ 254:

ման բաղադրատարը դիտելու մոտեցումը հատկապես լնդունված է քրեալատավարական դոկտրինայում¹:

Եզրակացության արժանահավատության գնահատման բովանդակությունը ներառում է նաև կիրառված մեթոդների հուսալիությունը², իսկ կիրառված մեթոդների հուսալիությունն ինքնին, ինչպես կտեսնենք ստորև, եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման շափանիշներից է: Ընդ որում, գրականության մեջ, հաշվի առնելով փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության փոխադարձ կապն ու փոխապայմանավորվածությունը, շատ դեպքերում գիտական հիմնավորվածության փոխարեն օգտագործվում է «գիտական արժանահավատություն» եզրույթը³:

Հարկ է նաև նկատել, որ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունն ու արժանահավատությունը սերտորեն կապված են նաև գնահատման ենթակա առաջին տարրի՝ եզրակացության թույլատրելիության հետ: Փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի թույլատրելիությունը կարևոր պայման է դրա արժանահավատության գնահատման համար: Եթե խախտվել է եզրակացության թույլատրելիության օրենսդրական պահանջը, ապա այդ եզրակացությունը չի կարող համարվել արժանահավատ ապացույց: Օրինակ՝ փորձագետի եզրակացության արժանահավատությունը կախված է այն մեթոդների արժանահավատությունից, որոնք կիրառվել

¹ Տե՛ս **Orlov Ю.К.** Производство экспертизы в уголовном процессе. М., 1982, էջեր 72-76:

² Տե՛ս **Orlov Ю.К.** Заключение эксперта и его оценка по уголовным делам.

М., 1995, էջ 4:

³ Տե՛ս, օրինակ, **Примузова В.А.**, նշված աշխատ., էջ 21:

են հետազոտության ժամանակ: Այս առումով ՀՀ քր. դատ. օր.-ի 105-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է. «Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ ... ժամանակակից գիտական պատկերացումներին հակասող մեթոդների կիրառման արդյունքում»: Քրեադատավարական այս նորմը փորձագետի եզրակացության բույլատրելիությունը կանխորոշող պահանջներից է, որի բովանդակությունը վկայում է փորձագետի եզրակացության բույլատրելիության, արժանահավատության և գիտական հիմնավորվածության տարրերի փոխադարձ կապի և հարաբերակցության մասին:

Միևնույն ժամանակ, փորձագետի եզրակացության բույլատրելիության պահանջի առկայությունը դեռևս չի նշանակում դրա արժանահավատության պահանջի պահպանում: Այլ կերպ ասած՝ եզրակացությունը բույլատրելի ճանաչելը չի կանխորոշում դրա արժանահավատության առկայությունը. բույլատրելիությունն անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ փորձագետի եզրակացությունն արժանահավատ ապացույց ճանաչելու համար: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ փաստական տվյալներն ինչպիսի արժանահավատ տեղեկատվություն ել պարունակեն, ինչ չափով ել որ համապատասխանեն արտացոլվող իրականությանը, միևնույն է, չեն կարող ապացույց ճանաչվել, եթե չեն անցել պատշաճ իրավական ընթացակարգ և չեն ստացել օրենքով սահմանված դատավարական ձև¹: Այսպիսով, փորձագետի եզրակացության բույլատրելիությունը պահպանում է առաջնահարությունը:

¹ Տե՛ս **Ղուկասյան Հ.**, Ապացույցների բույլատրելիության որոշ հիմնահարցեր // Պետություն և իրավունք, 2001, № 4 (14), էջ 44:

յան գնահատման այս երկու տարրերը սերտորեն փոխկապակցված լինելով՝ չեն փոխարինում մեկը մյուսին և գնահատվում են առանձին չափանիշների հաշվառմամբ։ Ընդունմամբ քույլատրելիության պահանջի խախտումը կասկածի տակ է դնում փորձագետի եզրակացության արժանահավատությունը։

Պետք է նշել, որ գրականության մեջ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության կամ գիտական արժանահավատության բովանդակության մեջ հիմնականում ներառվում են՝

- ա) *փորձագետի կողմից ընտրված հետազոտության մերողների ջմարտացիությունը,*
- բ) *դրանց համապատասխանությունը գիտության և տեխնիկայի զարգացման ժամանակակից մակարդակին,*
- գ) *հետազոտության փուլերի տրամարանական հաջորդականությունը և այլն¹:*

Որոշ հեղինակներ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության բովանդակությունը կազմող հատկանիշները ներկայացնում են ավելի մանրամասն թվարկով։ Ըստ այդ հեղինակների՝ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը գնահատելիս ստուգվում է, թե՝

- ա) *տվյալ փորձաքննությունն ունի², արդյոք, անհրաժեշտ գիտական հիմքեր,*
- բ) *փորձաքննությունը հիմնված է գիտական տվյալների և փորձագետի հատուկ գիտելիքների վրա,*
- գ) *փորձագետի հետևողունները համապատասխանում են, արդյոք, իրականացված հետազոտություններին, տրամարա-*

¹ Մանրամասն տես՝ *Примузов В.А.*, նշված աշխատ., էջ 21; *Сахнова Т.В.*, նշված աշխատ., Մ., 2000, էջ 254:

- նորեն կսպա՞ծ են, արդյոք, հետազոտության բովանդակությունը ունեն ու դրա արդյունքում արված հետևողությունները,
- դ) փորձագետի կողմից կիրառվե՞լ են հետազոտության առավել արդյունավետ մեթոդներ, դրանք համապատասխան՝ են, արդյոք, զիտուրթյան և տեխնիկայի զարգացման ժամանակակիցից մակարդակին և զիտուրթյան վերջին նվաճումներին,
- ե) հետազոտության ներկայացված նյութերը բավարար են, արդյոք, որոշակի հետևողությունների հանգելու համար,
- զ) ճիշտ են, արդյոք, բացահայտվել և գնահատվել հետազոտվող օբյեկտի հատկանիշներն ու էությունը:

Ինչպես փորձագետի եզրակացության գնահատման ենթակա մյուս տարրերի, այնպես էլ եզրակացության գիտական հիմնավորվածության բովանդակությունը որոշվում է որոշակի չափանիշներից ելնելով: Կարելի է առանձնացնել փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հետևյալ չափանիշները.

- ա) փորձագետի ճեղնահասությունը, փորձաքննության կատարումը համապատասխան փորձաքննության առարկայի սահմաններում,
- բ) փորձաքննության ներկայացված օբյեկտի և համեմատական հետազոտության նմուշների անհրաժեշտ և բավարար քանակի ու որակի առկայությունը,
- շ) փորձագիտական հետազոտության ժամանակ կիրառված մեթոդիկայի արժանահավաստությունը, հետազոտությունների և հետևողությունների միջև տրամաբանական կայի առկայությունը,
- դ) կատարված հետազոտությունների և եզրակացության լրիւթյունը:

¹ Ст. **Калиновский К.Б.** Заключения эксперта / Особенности оценки заключения эксперта, <http://kalinovsky-k.boom.ru/b/td-1973-13.htm>, (17.04.2010):

Փորձագետի Եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման առաջին չափանիշը փորձագետի *Ճեղահաստիքան և տվյալ գործով նշանակված փորձաքննության առարկայի* գնահատումն է:

Հայտնի է, որ փորձագետի ճեղահաստիքունը փորձաքննության առարկային վերաբերող առաջադրված հարցերը լուծելու ունակությունն է, որը հիմնված է փորձագետի հատուկ գիտելիքների վրա¹: Ինչպես արդեն նշել ենք, մասնագիտական գրականության մեջ «հատուկ գիտելիքներ» ասելով՝ գիտավորապես նկատի է առնվում գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառում գիտական տվյալների ամբողջությունը, որոնց տիրապետում են հասարակության առանձին անդամներ՝ համապատասխան մասնագետները:

Այսպիսով՝ փորձագետի Եզրակացության գիտական հիմնավորվածությունը գնահատվում է համապատասխան բնագավառում նրա հատուկ գիտելիքների բավարարության սոուզմամբ, որը կազմում է նրա ճեղահաստիքան բովանդակությունը:

Եզրակացության գիտական հիմնավորվածությունը գնահատելիս՝ վարույթն իրականացնող մարմինը պարզում է նաև, թե փորձագետը փորձաքննությունը կատարե՞լ է, արդյոք, իր հատուկ գիտելիքների շրջանակներում: Այս առումով սոուզվում է, թե փորձագետը դուրս չի^o եկել, արդյոք՝

- ա) համապատասխան փորձաքննության առարկայի սահմաններից,*
- բ) համապատասխան բնագավառում իր ճեղահաստիքան սահմաններից:*

¹ Տե՛ս **Դավթյան Ա.Գ.** Էկսպերտիզա в гражданскои процессе. М., 1995, էջեր 19-20:

Առաջին դեպքում փորձագետի եզրակացությունը չի կարող գիտականորեն հիմնավորված համարվել, եթե փորձագետի կողմից լուծվել են հարցեր, որոնք նշանակված փորձաքննության առարկային չեն վերաբերում: Օրինակ՝ եթե փորձագետի կողմից լուծվել են իրավական բնույթի հարցեր կամ տրվել են իրավական գնահատականներ: Ընդ որում, շատ դեպքերում դատական փորձագիտական պրակտիկայում փորձաքննություն նշանակող մարմինն ինքն է այդպիսի հարցեր առաջադրում փորձագետին՝ պահանջելով պատասխանել, օրինակ, տրված փաստաթղթի «օրինական» կամ «կեղծված» լինելու հարցին¹: Բոլոր դեպքերում փորձագետը պետք է խուսափի իրեն առաջադրված հարցերին իրավական գնահատականներ տալուց:

Այս կապակցությամբ S. Վ. Ավերյանովան գրում է. «Դատական պրակտիկային հայտնի են փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելուց հրաժարվելու բազմաթիվ դեպքեր այն հիմքով, որ փորձագետն իր հետևողությունները հիմնավորելիս դուրս է եկել համապատասխան գիտության սահմաններից և իրեն վերապահել է դատական և քննչական մարմինների ֆունկցիաներ՝ գնահատելով գործում առկա ապացույցները»²:

Փորձագետը նշանակված դատական փորձաքննության առարկայի սահմաններից կարող է դուրս գալ նաև այն դենապ-

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ արդարադատության նախարարության ՓԿ արխիվ, փորձա-գիտական վարույթներ՝ թիվ 03-116/1421, 30.10.1998թ., ըստ թիվ 70901598 քրեական գործի. թիվ 03-144/1723, 21.12.1998թ., ըստ թիվ 44202498 քրեական գործի. թիվ 03-20/291, 13.03.1998թ., ըստ թիվ 14101398 քրեական գործի և այլն:

² Տե՛ս *Аверьянова Т.В.* Субъекты экспертной деятельности // Вестник криминалистики. М., 2001, Вып. 2, էջ 33:

քում, երբ հետևություններ է անում մեկ այլ փորձաքննության առարկային վերաբերող հարցերի մասին (օրինակ՝ երբ հեղինակագետ-փորձագետը եզրակացության մեջ նշում է, որ վիճելի տեքստում կատարված ձեռագրի հատկանիշները չեն պատկանում դրա հեղինակին):

Երկրորդ դեպքում փորձագետի եզրակացությունը գիտականորեն հիմնավորված չէ, եթե փորձագետի կողմից լուծված հարցերը վերաբերում են նշանակված փորձագիտությանը, սակայն դուրս են տվյալ փորձագետի ձեռնիասության սահմաններից, այսինքն՝ տվյալ հարցը դուրս է տվյալ փորձագետի հատուկ գիտելիքների շրջանակներից:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հաջորդ չափանիշը փորձաքննության մերկայացված վիճելի և համեմատվող օբյեկտների անհրաժշտ և բավարար ծավալի և որակի առկայությունն է: Այս առումով փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը մեծապես կախված է հետազոտության ներկայացված վիճելի օբյեկտի բնույթից և ծավալից, ինչպես նաև համեմատական տեքստերի որակից և քանակից:

Ինչպես արդեն նշել ենք, փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունն զգալիորեն կախված է փորձագիտական հետազոտության մեթոդիկայից: Կրիմինալիստիկան և քրեադատավարական գրականության մեջ բազմիցս տարակարծությունների տեղիք է տվել վարույթն իրականացնող մարմնի կողմից փորձագետի եզրակացության գիտա-

կան հիմնավորվածության գնահատման հնարավորության հարցը՝ կիրառված մեթոդիկայի տեսանկյունից¹:

Այսպես, փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման, մասնավորապես՝ կիրառված մեթոդիկայի ճշտության գնահատման հնարավորության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են երկու հակառիք մոտեցումներ:

Առաջին մոտեցման կողմնակիցները գտնում են, որ վարույթն իրականացնող մարմինն ի վիճակի չէ ճիշտ գնահատելու փորձագետի կողմից կիրառված մեթոդների գիտական հիմքերը, կիրառված մեթոդի ընտրության ճշտությունը, դրանց համապատասխանությունը գիտատեխնիկական զարգացման ժամանակակից մակարդակին՝ վարույթն իրականացնող սուբյեկտի կողմից համապատասխան բնագավառում հատուկ գիտելիքներին չտիրապետելու պատճառով: Ըստ այս խմբի մեջ մտնող հեղինակների՝ վարույթն իրականացնող սուբյեկտը կարող է ընդամենը գնահատել փորձագետի եզրակացության լրիվությունը, պարզել, թե փորձագետը պատասխանե՞լ է, արդյոք, իրեն առաջադրված բոլոր հարցերին, որոշել այդ պատասխանների բնույթը, ստուգել փորձագետի կողմից փորձաքննություն կատարելիս դատավարական պահանջներին հետևելը և եզրակացությունը կազմելիս դրա մեջ օրենքով պահանջվող բոլոր ռեկվիզիտները շարադրելը: Այս կարծիքին են

¹ Տե՛ս *Byul C.M.* Особенности оценки заключения идентификационной судебно-автороведческой экспертизы следователем и судом // Криминалистика и судебная экспертиза. К., 1982, Вып. 24, Էջեր 81-82:

Ա.Ի. Վինդերգ¹, Ռ.Ս. Բելկինը², Ե.Ռ. Ռոստովսկայան³, Ա.Ռ. Բելկինը⁴ և ուրիշներ:

Գիտնականների մյուս խումբը, ի տարբերություն առաջին մոտեցման, գտնում է, որ սխալ է կարծել, թե դատավորն ու քննիչը չեն կարող գնահատել եզրակացության տեսական հիմքերն ու կիրառված որոշակի մեթոդիկաներն այն պատճառաբանությամբ, թե դատավարության այդ սուբյեկտուները փորձաքննությունների առանձին կարգերի և տեսակների տեսության և մեթոդիկաների բնագավառում հատուկ գիտելիքների չեն տիրապետում⁵:

Կարծում ենք, փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության, մասնավորապես՝ կիրառված մեթոդիկայի ճշտության գնահատման հնարավորությունը հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի կողմից բացառելու մոտեցումն արդարացի չէ: Ծիշտ է, առանձին տեսակի փորձաքննությունների բնագավառի հատուկ գիտելիքներին խորապես տիրապետում են համապատասխան ոլորտի մասնագետները, սակայն դա չի նշանակում, որ

¹Տե՛ս **Виндерг А.И.** Криминалистическая экспертиза письма. М., 1940, էջ 141:

²Մանրամասն տե՛ս **Белкин Р.С.** Криминалистика: проблемы, тенденции, перспективы. От теории – к практике. М., 1988, էջեր 43-56:

³Տե՛ս **Россинская Е.Р.** Комментарий к федеральному закону «О государственной судебно-экспертной деятельности в Российской Федерации». М., 2002, էջ 107:

⁴Տե՛ս **Белкин А.Р.** Теория доказывания. М., 1999, էջեր 233-236:

⁵Տե՛ս **Шейфер С.А.** Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение. Самара, 2004, էջ 204-207; **Шляхов А.Р.** Назначение и производствосудебных экспертиз: пособие для следователей, судей и экспертов, М., 1988, էջեր 51-62; **Пашинский В.В.** Оценка достоверности заключения эксперта // Судебная экспертиза, 2009, № 1 (17), էջ 5:

վարույթն իրականացնող մարմինն ի վիճակի չէ գնահատելու փորձագետի կողմից կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածությունը, կիրառված մեթոդի հիմքում ընկած գիտական դրույթների ճշտությունը և դրանց համապատասխանությունը գիտության և տեխնիկայի զարգացման ժամանակակից մակարդակին:

Բանն այն է, որ, նախևառաջ, վարույթն իրականացնող մարմինը որոշակի չափով տիրապետում է կրիմինալիստիկայի գիտության հիմնադրույթներին, կրիմինալիստիկական նույնացման տեսությանը, ինչպես նաև առանձին տեսակի փորձաքննությունների տեսական հիմքերին, որոնք հնարավորություն են տալիս այդ հիմնադրույթներից ելնելով՝ որոշել փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը:

Այս կապակցությամբ տեղին է նաև Զ.Մ. Սոկոլովսկու մոտեցումը, ըստ որի՝ գրի (այդ թվում նաև գրավոր խոսքի՝ հ.խ.) կրիմինալիստիկական հետազոտության հիմքում ընկած են այնպիսի գիտական դրույթներ, որոնք կազմում են փորձաքննության այս տեսակի էությունը: Այդ գիտական դրույթները կրում են ընդհանուր բնույթ և իրենց համակցությամբ կազմում են գրի միջոցով անձին նույնացնելու տեսական հիմքերը: Դրանց համընդհանուր և անվիճելի բնույթը վարույթն իրականացնող մարմնին թույլ չի տալիս կասկածի տակ դնել այդ դրույթների գիտական հիմնավորվածությունը¹:

Երկրորդ՝ եզրակացության մեջ մասնագիտական եզրութաբանության հետ միաժամանակ ոչ մասնագիտական հասկացությունների օգտագործումը, համապատասխան եզրույթ-

¹ Տե՛ս *Соколовский З.М.*, նշված աշխատ., էջ 22:

ների բացատրությունն ու պարզաբանումը, եզրակացության բովանդակության կառուցվածքային բոլոր մասերի շարադրումը հստակ, մատչելի, պարզ ու հասկանալի ձևակերպումներով՝ վարույթն իրականացնող մարմնի համար հնարավորություն են ստեղծում լուծելու փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հարցը:

Երրորդ՝ փորձագետի եզրակացության մեջ գրականության այն աղբյուրների մատնանշումը, որոնք օգտագործվել են փորձագետի կողմից հետազոտություններ կատարելիս, կարևորագույն միջոցներ են փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման համար: Բանն այն է, որ եզրակացությունը գնահատելիս դրա գիտական հիմնավորվածության առնչությամբ հարցեր ծագելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը կարող է օգտվել գրականության համապատասխան աղբյուրներից: Բացի դրանից՝ փորձագետի եզրակացությանը կցվող հավելվածները, սխեմաները, լուսանկարները, գծագրերն օգնում են հեշտությամբ ընկալելու կիրառված մեթոդների բովանդակությունը և համոզվելու դրանց գիտական հիմնավորվածության և արժանահավատության հարցում:

Փորձագետի եզրակացության հետազոտական մասում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, որպեսզի կարելի լինի հասկանալ հետազոտության էությունը, գնահատել հետազոտության արդյունքները: Դա վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն կտա համոզվելու հետազոտման մեթոդիկայի ամբողջակա-

նության ու գիտական հիմնավորվածության, դրա կիրառման ճշտության հարցում¹:

Չորրորդ՝ մեր օրենսդրությամբ նախատեսված է փորձաքննությունների նշանակման ու կատարման այնպիսի կարգ և փորձագետի եզրակացության այնպիսի կառուցվածք, որը վարույթն իրականացնող մարմնին ըստ Էության հնարավորություն է տալիս ապահովելու և գնահատելու եզրակացության գիտական հիմնավորվածությունը: Օրինակ՝ եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման ապահովման կարևոր միջոց է հանդիսանում փորձագետի հարցաքննությունը, լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունները՝ պարզելու համար կիրառված մեթոդիկաների էությունը: Դատավարական այս ինստիտուտներն ըստ Էության ոչ միայն ուղղված են փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության ապահովմանը, այլ նաև վարույթն իրականացնող մարմնին եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հնարավորություն ընձեռելուն²:

Կարծում ենք՝ վարույթն իրականացնող մարմինն ի վիճակի է որոշակի հետևությունների հանգելու փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության, մասնավորապես՝ կիրառված մեթոդիկայի գիտական հիմքերի և դրա ճշտության կապակցությամբ: Փորձագետի կողմից համապատասխան մեթոդների կիրառման վերաբերյալ բերված փաս-

¹ Տե՛ս **Ենգիբարյան Վ.**, Փաստարդերի տեխնիկա-լրիտմինալիստիկական հետազոտման ընթացքի և արդյունքների ամրագրումը // Պետություն և իրավունք, 2002, № 1 (15), էջեր 66-67:

² Տե՛ս **Шեյֆեր С.А.** Следственные действия. Основания, процесуальныи́й порядок и доказательственное значение. Самара, 2004, էջեր 206-207; **Аверьянова Т.В.** Судебная экспертиза: курс общей теории. М., 2007, էջեր 454-459:

տարկներն ու հիմնավորումները, կարծում ենք, բավարար են փորձագետի հետևորթունների գիտական հիմնավորվածության և արժանահավատության վերաբերյալ գնահատող սուբյեկտի մոտ որոշակի ներքին համոզմունքի ձևավորման համար:

Փորձագետի եզրակացությունը գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է ստուգի, թե փորձագետի եզրակացության հիմքում ընկա՞ծ են համապատասխան բնագավառի անհրաժեշտ գիտական տվյալներ, և արդյո՞ք փորձագետի եզրակացությունը հիմնված է փորձագետի հատուկ գիտելիքների վրա: Եթե փորձագետի եզրակացությունը հիմնված է համապատասխան բնագավառում կասկածելի գիտական տվյալների և վիճահարույց դրույթների վրա, այն չի կարող գիտականորեն հիմնավորված համարվել և դրվել գործով կայացվող որոշման հիմքում:

Այս առումով տեղին է մեջբերել Ա.Ի. Վինքերգի կարծիքը, ըստ որի՝ «Սխալ մեթոդիկան տանում է սխալ հետևորթունների. փորձագետի եզրակացությունը, որը հիմնված է հետազոտությունների ոչ ճիշտ մեթոդների վրա, չի կարող լիարժեք ապացույց համարվել»¹:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը գնահատելիս՝ վարույթն իրականացնող մարմինը որոշում է նաև, թե կիրառվե՞լ են, արդյոք, անհրաժեշտ բոլոր մեթոդները և արդյո՞ք այդ մեթոդները բավարար են հետազոտվող օբյեկտների հատկանիշների բացահայտման ու գնահատման և վիճելի փաստի կամ փաստերի վերաբերյալ

¹ Տե՛ս *Виндерг А.И.* Криминалистическая экспертиза в советском уголовном процессе. М., 1956, էջ 145:

որոշակի հետևության հանգելու համար: Փորձագետի եզրակացությունը չի կարող գիտականորեն հիմնավորված համարվել, օրինակ, եթե վիճելի և համեմատվող օբյեկտների անջատ հետազոտությանը չի հաջորդել դրանց ընդհանուր և մասնավոր հատկանիշների համեմատական հետազոտությունը, կամ եթե համեմատական հետազոտության արդյունքում փորձագետը չի գնահատել համընկնող և տարբերվող հատկանիշների նույնացման արժեքը: Փորձագետի եզրակացությունը գիտականորեն հիմնավորված չի կարող համարվել նաև այն դեպքում, եթե օբյեկտների համընկնող հատկանիշների նույնության վերաբերյալ դրական հետևության հանգելուց հետո փորձագետը չի հիմնավորում տարբերվող հատկանիշների տարբերության պատճառները և այլն:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հաջորդ կարևոր չափանիշը *եզրակացության տրամաբանվածությունն* է՝ կատարված հետազոտությունների և եզրակացության միջև փորձագետի հետևությունների տրամաբանական կապի առկայությունը, դրանում իմաստային հակասությունների բացակայությունը՝ ներքին անհակասականությունը: Այս առումով փորձագետի եզրակացությունը կարող է համարվել գիտականորեն չհիմնավորված, եթե, օրինակ, (վերլուծության) անալիզի և (համադրության) սինթեզի միջև առկա է տրամաբանական հակասություն, կամ երբ վերլուծությունում նկարագրվում են համընկնող բոլոր հատկանիշները, իսկ սինթեզում արվում է՝ բացասական հետևություն: Ընդ որում, փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հարցում թեև հիմնական նշանակություն ունի եզրակացության հետազոտական

մասը, քանի որ այդ բաժնում լստ էության շարադրվում են հետազոտման բուն ընթացքն ու արդյունքները, այնուամենայնիվ, եզրակացության գիտական հիմնավորվածությունը և ապացուցողական արժեքը գնահատվում է եզրակացության բոլոր կառուցվածքային մասերի հետ մեկտեղ¹:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման կարևոր չափանիշ է հանդիսանում *հետազոտությունների և եզրակացության լրիվությունը*: Եզրակացության լրիվությունը գնահատելիս՝ վարույթն իրականացնող մարմինն ստուգում է, թե փորձագետն օգտագործե՞լ է, արդյոք, փորձաքննության ներկայացված բոլոր վիճելի և համեմատվող օբյեկտները, կիրառե՞լ է, արդյոք, տարբեր, միմյանց փոխլրացնող մեթոդներ՝ իրեն առաջադրված բոլոր հարցերին արժանահավատ պատասխաններ տալու համար, արդյո՞ք փորձագետը պատասխաննել է իրեն առաջադրված բոլոր հարցերին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև իր իրավասության մեջ մտնող, փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով, որոնց կապակցությամբ իրեն հարցեր չեն առաջադրվել:

Հետազոտությունների լրիվության և, դրանով իսկ, եզրակացության գիտական հիմնավորվածության ապահովման կարևորագույն իրավական երաշխիքներից մեկն օրենքով նախատեսված այն դրույթն է, համաձայն որի՝ փորձագետը կարող է եզրակացություն տալ ոչ միայն իրեն առաջադրված հարցերի, այլ նաև իր իրավասության շրջանակների մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ

¹ Տե՛ս **Ենգիբարյան Վ.Գ.**, “Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները”, Եր., 2007, Էջ 104:

եկած հանգամանքների վերաբերյալ (ՀՀ քր. դատ. օր. հոդված 85-ի, 4-րդ մաս, 2-րդ և 4-րդ կետեր): Այս դրույթն ըստ էության ուղղված է փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության ապահովմանը, որն իրականացվում է հետազոտությունների լրիվությունն ապահովելու ճանապարհով:

Այն դեպքում, եթե առաջադրված հարցերին պատասխանելու անհնար է, փորձագետը շարադրում է այդ հարցերին պատասխանելու անհնարինությունը և դրա հիմնավորված պատճառները (օրինակ՝ ներկայացված օբյեկտների կամ նմուշների ծավալի անբավարարությունը կամ նմուշների անհամապատասխանությունը և այլն): Եթե ներկայացված նյութերն անբավարար են կամ հարցի լուծումը դուրս է փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից, փորձագետի եզրակացությունը պետք է բովանդակի առաջադրված բոլոր կամ որոշ հարցերին պատասխանելու անհնարինության մասին հիմնավորում (ՀՀ քր. դատ. օր. հոդված 250, մաս 4):

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման վերը թվարկված չափանիշները սերտորեն կապված են միմյանց հետ և փոխայմանավորված են միմյանցով: Այդ չափանիշներից մեկի կամ մյուսի գնահատականն ազդում է մյուս չափանիշների գնահատման արդյունքների վրա, ինչն էլ իր հերթին որոշիչ է փորձաքննության արդյունքում կազմված փորձագիտական եզրակացության գիտական հիմնավորվածության հարցում դրական կամ բացասական հետևողյան հանգելու համար:

Այսպիսով, փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը նշանակում է, որ այն կատարվել է համապատասխան բնագավառի գիտական հիմքերին և մերողիկա-

ներին համապատասխան, Եզրակացության մեջ շարադրված հետազոտությունների և փորձագետի հետևողությունների միջև առկա է տրամարանական կապ, հետազոտությունները կատարվել են փորձագետի ձեռնահասության և համապատասխան փորձագիտական հետազոտության առարկայի շրջանակներում, վիճելի և համեմատական հետազոտության ներկայացված որակյալ նյութերի բավարար քանակության օգտագործմամբ, դրանց նույնացման հատկանիշների լրիվ հետազոտմամբ և նույնացման արժեքի հաշվառմամբ:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից փորձագետի Եզրակացության՝ գնահատման ենթակա հաջորդ տարրը *Եզրակացության մեջ ապացույցների վերաբերելիությունն ու գործով ձեռք բերված այլ ապացույցների շարքում շարադրված փաստական տվյալների ապացուցողական նշանակությունն* է: Փորձագետի Եզրակացության արժանահավատության գնահատումն իրականացվում է ոչ միայն Եզրակացության վերը նշված հատկանիշների գնահատման միջոցով, այլ նաև փորձագետի Եզրակացությունը գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ համադրելու ճանապարհով: Այս առումով կարևոր նշանակություն ունի փորձագետի Եզրակացության ապացուցողական նշանակության և գործով ձեռք բերված այլ ապացույցների շարքում դրա տեղի և դերի որոշումը: Հարկ է նշել, որ համապատասխան գործերով փորձագետի Եզրակացության ապացուցողական նշանակությունը հավասարաթեք է այլ ապացույցների ապացուցողական նշանակությանը: Ընդ որում, գործով ձեռքբերված այլ ապացույցների հետ համադրումը և ապացույցների ամբողջ համակցությամբ փորձագետի

Եզրակացության գնահատումը դրա արժանահավատության կարևորագույն երաշխիքներից են:

Փորձագետի եզրակացությունը վարույթն իրականացնող մարմնի կողմից սկզբում գնահատվում է վերը քննարկված տարրերի և չափանիշների տեսանկյունից, ապա՝ գործով ձեռք բերված այլ ապացույցների համակցության մեջ: Ապացույցների համակցությամբ փորձագետի եզրակացության գնահատումը եզրակացության արժանահավատության գնահատման միջոց է:

Փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց կարող է օգտագործվել, եթե այն ճանաչվում է *վերաբերելի* ապացույց, այսինքն՝ եթե փորձագետի եզրակացությունը պիտանի է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատելու համար:

Հարկ է նկատել, որ փորձագետի եզրակացության վերաբերելիության և քույլատրելիության տարրերը սերտորեն փոխկապակցված և փոխայնանավորված են: Եզրակացության քույլատրելիության հարցը ծագում է միայն այն դեպքում, եթե այն վերաբերում է գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքներին, իսկ վերաբերելի կարող է ճանաչվել միայն քույլատրելի եզրակացությունը: Ընդ որում, փորձագետի եզրակացության վերաբերելիությունը ենթադրում է դրա կազմ ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների հետ, որը գնահատվում է գործով ձեռք բերված այլ ապացույցների համակցության մեջ:

Կրիմինալիստիկական, դատավորձագիտական և դատավարական գրականության մեջ, քննարկելով ընդիանրապես փորձագետի եզրակացության՝ որպես *ապացույցի տեղմայլ* այլ

ապացույցների շարքում, զատվում են որոշակի առանձնահատկություններ, որոնցով փորձագետի եզրակացությունը տարբերվում է ապացույցների մյուս տեսակներից: Այդ առանձնահատկություններն են. նախ՝ փորձագետի եզրակացությունը տրվում է զիտական հետազոտություն կատարելու արդյունքում, ուստի նման հետազոտությունը կատարվում է հատուկ զիտելիքների տիրապետող անձի կամ անձանց կողմից, այսինքն՝ կիրառվում են հատուկ զիտելիքներ, և, վերջապես, ապացուցողական տեղեկատվությունը տրվում է եզրակացություն՝ գրավոր ակտ կազմելու միջոցով¹:

Փորձագետի եզրակացության՝ վերը բարկված առանձնահատկություններով պայմանավորված՝ որոշ հեղինակներ այն դիտում են որպես ապացույցի առանձնահատուկ տեսակ, որն ունի որոշակի առավելություններ այլ ապացույցների նկատմամբ: Միաժամանակ, կա նաև տեսակետ, համաձայն որի՝ թեև փորձագետի եզրակացությունը վերը նշված հատկանիշներով պայմանավորված՝ մյուս ապացույցների նկատմամբ ունի որոշակի առավելություններ, այնուամենայնիվ, դա հիմք չէ փորձագետի եզրակացությունը գնահատել որպես մյուս տեսակի ապացույցների նկատմամբ առավելություն ունեցող հատուկ, բացառիկ ապացույց²:

Մեր կարծիքով, թեև փորձագետի եզրակացությունը կազմվում է որոշակի բնագավառի հատուկ զիտելիքների օգտագործմամբ՝ համապատասխան հետազոտություններ կատարելու ճանապարհով, առանձին դատավարական փաստա-

¹ Տե՛ս **Ճաշտյան Ա.Ի.** Էկսպերտիզա в гражданскои процессе. М., 1995, էջ 67:

² Մանրամասն տե՛ս **Ենթարայյան Վ.Գ.**, Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Եր., 2007, էջ 101:

թուղթ՝ եզրակացություն տալու միջոցով, այնուամենայնիվ, չպետք է այն դիտել որպես ապացույցի առանձնահատուկ տեսակ:

Բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ, ի տարբերություն ապացույցի այլ տեսակների, փորձագիտական եզրակացության ձևավորման համար քրեական դատավարության մեջ ներգրավվում է նոր առանձնահատուկ սուրյեկտ՝ փորձագետը, որն իր մասնագիտական պատրաստվածության ուժով ի վիճակի է հետևողություններ անել գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքների մասին, որոնց պարզաբանումը պահանջում է որոշակի բնագավառի հատուկ գիտելիքներ: Պատահական չէ, որ հատուկ գիտելիքների կիրառման անհրաժեշտության պարագայում փորձագետի մասնակցությունը դատավարությանը պարտադիր է նույնիսկ այն դեպքում, եթե վարույթն իրականացնող մարմինը տիրապետում է համապատասխան բնագավառի հատուկ գիտելիքների: Այս առումով ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածը սահմանում է. «...Հետաքննության մարմնի աշխատակցի, բննիչի, դատախազի, մասնագետների, ընթերականների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:

Այլ ապացույցների շարքում փորձագետի եզրակացության տեղի հարցը քննարկելիս, կարծում ենք, կարելի է առանձնացնել դրա դատավարական և ճանաչողական նշանակությունը և հարցը քննարկել այդ երկու տեսանկյուններից:

Դատավարական նշանակության տեսանկյունից փորձագետի եզրակացության, ինչպես և մյուս ապացույցների ապա-

ցուցողական արժեքը, որոշվում է այլ ապացույցների համակցությամբ դրա գնահատման արդյունքում: Այս առումով ՀՀ քրդատ. օր.-ի 25-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

Փորձագետի եզրակացության մեջ առկա անձշտությունները և դրա ապացուցողական նշանակության գնահատման անհրաժեշտությունը հատկապես ծագում է այն ժամանակ, երբ փորձագետի եզրակացությունը հակասում է գործով անվիճակին հաստատված ապացույցներին¹: Պետք է նկատի ունենալ, որ այլ ապացույցներին հակասելու փաստն ինքնին չի նշանակում, որ փորձագետի եզրակացությունն արժանահավատ չէ, այլ անհրաժեշտ է այն համարել այլ ապացույցների հետ և ապացույցները գնահատել գործով ձեռք բերված այլ ապացույցների բավարար համակցությամբ: Այս մասին է վկայում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դատական պրակտիկան²:

¹ Տե՛ս *Соколовский З.М.*, նշված աշխատ., Մ., 1959, էջ 57:

² ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 17.02.2009թ. թիվ ՎԲ-01/09 որոշման (ՀՀՊՏ 2009/27 (693) 27.05.09թ.) 37-րդ կետով սահմանված է. «...Ինչ վերաբերում է վերաբնիշ դատարանի այն պատճառաբանությանը, թե սպանության դեպքը 2002թ. մարտի 13-ի գիշերը՝ ժամը 00-ի սահմաններում, կատարված լինելու փասորը չի համընկնում տուժողի դիակի դատարժշկական փորձաքննության եզրակացությամբ վերջինիս մահվան վրա հասնելու տվյալներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

Ասվածը նշանակում է՝ անկախ նրանից, որ փորձագետի եզրակացությունը որոշակի բնագավառում կիրառված գիտելիքների արդյունքում ստացված՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն է, այնուամենայնիվ, հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը չեն կարող կանխակալ մոտեցում ցուցաբերել փորձագետի եզրակացությանը՝ որպես առավել կարևոր ապացույցի տեսակի:

Շանաշողական առումով փորձագետի եզրակացությունը գործի հանգամանքների և փաստերի գիտական մեկնաբանությունն է, ընդ որում, այն փաստերի ու հանգամանքների, որոնց ուսումնասիրությունն ու պարզաբանումը պահանջում են որոշակի բնագավառի հատուկ գիտելիքներ: Այս տեսակետից, հատուկ գիտելիքների կիրառման արդյունքում կազմվող փորձագիտական եզրակացության տեղը մեծ է համապատասխան հանգամանքների պարզաբանման գործում: Առանց հատուկ գիտելիքների կիրառման, փաստորեն, շատ հանգամանքներ կմնան շրացահատված և չպարզաբանված: Այս իմաստով փորձագետի եզրակացության ճանաչողական նշանակությունն անփոխարինելի է, սակայն սա չի նսենացնում մյուս ապացույցների դերն ու նշանակությունը քրեական դատավարությունում: Միևնույն ժամանակ, ճանաչողական առումով որոշ գործերով փորձագետի եզրակացությունը կարող է վճռորոշ դեր կատարել գործի քննության ընթացքի և, ընդհանրապես, դրա բացահայտման համար:

առաջին ատյանի դատարանը փորձագետի եզրակացությունը գնահատել է՝ *հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ»:* (Ընդգծումը մերն է՝ Լ.Դ.): Տե՛ս նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008թ. թիվ ԱՎԴ2/0059/01/08 (ՀՀՊՏ 2009/2 (668) 14.01.09). 30.08.2007թ. թիվ ՎԲ 135/07 (ՀՀՊՏ 2007/54 (578) 07.11.07թ.) որոշումները:

Որոշ դեպքերում նույնիսկ այն կարող է հանդիսանալ հիմնական ապացույցը գործի հանգանաճների բացահայտման համար: Բոլոր դեպքերում՝ թե՛ փորձագետի եզրակացությունը, թե՛ մյուս ապացույցներն ի վերջո ուղղված են անցյալի՝ դեպքի կամ դրա առանձին մանրանասների (դետալների) վերականգնմանը, և այդ գործընթացում դրանցից յուրաքանչյուրն ունի իր հատուկ տեղն ու նշանակությունը, ինչը բացառում է փորձագետի եզրակացության՝ այլ ապացույցների նկատմամբ առավելություն ունենալու հանգանաճը:

Այսպիսով, փորձագիտական եզրակացության՝ որպես ապացույցի գնահատումը հետաքաննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կողմից իրականացվում է գործով ձեռք բերված բոլոր ապացույցների համակցությամբ՝ առանց դրանցից մեկին կամ մյուսին առավելություն տալու:

Տ.Վ. Սահմանվայի խոսքերով՝ «Այն հավասար է հավասար ների մեջ»¹:

Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությունը քննարկելիս անհրաժեշտ ենք համարում որոշակիորեն անդրադառնալ նաև փորձագետի *հավանական եզրակացության* ապացուցողական նշանակության հարցին:

Հայտնի է, որ կրիմինալիստիկական, դատավորական և դատավարական գրականության մեջ բազմիցս տարակարծությունների տեղիք է տվել փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակության հարցը²:

¹ Տե՛ս *Сахнова Т.В.*, նշված աշխատ., էջ 251:

² Տե՛ս, օրինակ, *Давтян А.Г.* Էկспертиза в гражданском процессе. М., 1995, էջ 73; Уголовный процесс. *Под общей ред. К.Ф. Гуценко*. М., 1996, էջ 125; *Безленкин Б.Т.* Уголовный процесс России. Общая часть и досудебные стадии (курс лекции). М., 1998, էջ 104:

Նշված հարցի հետ կապված՝ ինչպես հայտնի է, գրականության մեջ արտահայտվել են տարբեր մոտեցումներ: Առաջին մոտեցման կողմնակիցները գտնում են, որ փորձագետի հավանական եզրակացությունն ունի ապացուցողական նշանակություն. այն նույնպես ապացույց ¹: Այս հեղինակների հակառակորդները ժխտում են փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակությունը², իսկ երրորդ խումբ հեղինակները գտնում են, որ փորձագետի հավանական եզրակացությունը կարող է օգտագործվել միայն որպես անուղղակի ապացույց, ուստիև՝ ունենալ որոշակի ապացուցողական արժեք³: Այսպիսով, ծագում է փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակության որոշման հարցը:

Նախ՝ հարկ է նշել, որ հավանականությունը որոշակի տեղեկատվության վրա հիմնված պնդման կամ ենթադրության ճշմարտացիության մեջ զնահատող սուբյեկտի հավատի (ներքին համոզմունքի) աստիճանն է: Ենթադրությունը, պնդումը կամ վարկածն ինքնին կարող է լինել ճիշտ կամ սխալ, արժանահավատ կամ ոչ արժանահավատ⁴:

Համոզմունքի հավանականության աստիճանը կախված է այն վարկածներից և տեղեկատվությունից, որոնք օգտագործ-

¹ Տե՛ս **Винберг А.И.** Криминалистическая экспертиза в советском уголовном процессе. М., 1956, էջեր 127-134; **Оганян Л.П.** Вероятное заключение эксперта в системе доказательств. Еր., 1970, էջ 15:

² Տե՛ս **Рахунов Р.Д.** Теория и практика экспертизы в советском уголовном процессе. М., 1953, էջ 208:

³ Տե՛ս **Сахнова Т.В.**, նշված աշխատ., էջ 235:

⁴ Տե՛ս **Robertson B., Vignaux G.A.** Interpreting Evidence: Evaluating Forensic Science in Courtroom. Chichester, 1995, էջ 14; **Aitken C.G.** Statistical Interpretation of Evidence. In **Siegel J.A., Saukko P.J., Knupfer G.C. (Eds.)** Encyclopedia of Forensic Sciences. New York, 2000, Volume 2, էջեր 717-718:

վում են հետևության հավանականությունը գնահատելու համար: Հետևաբար, համապատասխան հետևության կամ պնդման հավանականությունը կարող է այլ կերպ գնահատվել որոշակի փաստական տվյալների օգտագործման դեպքում, իսկ առանց դրանց օգտագործման՝ այլ կերպ:

Կարծում ենք, փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակության բացառման մոտեցումն արդարացի չէ: Մեր կարծիքով, փորձագետի հավանական եզրակացությունը գործով կարող է ունենալ որոշակի ապացուցողական նշանակություն և օգտագործվել որպես անողջակի ապացույց: Բանն այն է, որ ինչպես փորձագետի որոշակի (կատեգորիկ)՝ հաստատող կամ ժխտող, այնպես էլ հավանական եզրակացությունը գնահատվում է ապացույցների ամբողջ համակցությամբ: Ջրեաղատավարական՝ վերն արդեն քննարկված պահանջի համաձայն՝ ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Այս առումով դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն փորձագետի որոշակի եզրակացությանը, չպետք է դրան մյուս ապացույցների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում (ՀՀ քր. դատ. օր. հորդ. 25-ի, 2-րդ մաս): Այսպիսով, փորձագետի եզրակացությունը, անկախ հավանական կամ որոշակի լինելուց, պետք է համարվի գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ և գնահատվի ապացույցների ամբողջ համակցությամբ:

Իհարկե, այլ հարց է, որ փորձագետի հավանական եզրակացությունը, վարույթն իրականացնող մարմնին վիճելի փաս-

տի վերաբերյալ ներքին համոզման հանգեցնելու հնարավորության տեսանկյունից, ավելի «քոյլ» է, քան որոշակի եզրակացությունը։ Այս առումով, ինչպես դիպուկ կերպով նշում է Լ.Պ. Օհանյանը՝ «որոշակի և հավանական եզրակացությունների միակ տարբերությունն այն է, որ որոշակի եզրակացությունը վարույթն իրականացնող մարմնին ավելի է մոտեցնում որոնվող ճշմարտությանը»¹։

Այսպիսով, հավանական եզրակացությունը, ինչպես և որոշակին, նույնապես կարող է գործով օգտագործվել որպես գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ ներքին համոզունք ձևավորելու միջոց գնահատող սուբյեկտի համար։ Օրինակ՝ եթք հեղինակագետ-փորձագետը եզրակացության հետևողունների մասում նշում է, որ հավանական է, որ վիճելի տեքստի հեղինակը կասկածյալն է (այսինքն՝ հավանական է նաև, որ վիճելի տեքստի հեղինակը կասկածյալը չէ), ճանաչողական առումով ապացուցողական նվազ նշանակություն ունի, քան այն եզրակացությունը, որտեղ փորձագետը որոշակի կերպով հետևություն է անում տեքստի կոնկրետ հեղինակի մասին։ Այնուամենայնիվ, հեղինակագետ-փորձագետի հավանական եզրակացության մեջ շարադրված ենթադրական դատողությունները կարող են գործով օգտագործվել որպես *անուղղակի ապացույցներ* տեքստի հեղինակի կամ դրա կատարման հանգամանքների և պայմանների վերաբերյալ։

Ապացույցների տեսությունից հայտնի է, որ ապացույցներն ուղղակի և անուղղակի բաժանելու համար հիմք է այն

¹ Տե՛ս **Оганян Л.П.** Вероятное заключение эксперта в системе доказательств. Еր., 1970, էջ 10:

հանգամանքը, թե տվյալ ապացույցը հնարավորություն է տալիս փաստերի գոյության կամ բացակայության մասին անել միայն որոշակի⁹, թե՝ մի քանի հավանական հետևողություններ: Ընդ որում, անուղղակի ապացույցները միշտ էլ ապացուցողական փաստերի հայտնաբերման միջոց են, իսկ ուղղակիներն այն փաստերի, որոնք մտնում են ապացուցման առարկայի մեջ¹:

Այլ կերպ ասած, ապացուցողական փաստերը դատավարությունում իրավաբանական չհամարվող փաստեր են, միջանկյալ փաստական տվյալներ, որոնք իրենց համակցությամբ վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն են տալիս հանգելու որոշակի ներքին հանոգմունքի գործի համար նշանակություն ունեցող իրավաբանական՝ նյութաիրավական և դատավարական փաստերի գոյության կամ բացակայության կապակցությամբ: Ընդ որում, ապացուցողական փաստերից յուրաքանչյուրն առանձին վերցրած չի կարող ինքնուրույն հաստատել գործի լուծման համար նշանակություն ունեցող այս կամ այն հանգամանքը, սակայն մի քանի ապացուցողական փաստերի հաստատումը համապատասխան անուղղակի ապացույցների օգտագործմամբ հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին կամ դատարանին հնարավորություն է ընձեռում որոշակի հետևողական հանգելու գործով իրավաբանական փաստերի մասին:

Հետևաբար, փորձագետի հավանական եզրակացությունը գործով կարող է օգտագործվել որպես անուղղակի ապացույց

¹ Տե՛ս **Դիլամդյան Ս., Հարությունյան Ա., Ղաղմյան Գ.** և **ուրիշներ,** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունք: Ընդհանուր մաս, Եր., 2006, էջեր 289-290. **Բաղայան Է.,** Ապացույցները, դրանց դասակարգումը // Իրավագիտության հարցեր, 1998, № 2, էջեր 97-100:

հայտնաբերելու և հաստատելու համար մի շարք միջանկյալ, ապացուցողական փաստեր, որոնք էլ իրենց հերթին կարող են օգտագործվել գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

Օրինակ՝ դատական հեղինակագիտական հետազոտության դիրքերից նկատենք, որ եթե վիճելի տեքստի կոնկրետ հեղինակին որոշակիորեն նշելու փոխարեն հեղինակագետ-փորձագետը տեքստի լեզվական և մտավոր հատկանիշների հետազոտության արդյունքների հիման վրա հետևություններ է անում, օրինակ, հեղինակի սոցիալական (խմբային) պատկանելության մասին՝ արձանագրելով հեղինակի խոսքի պատկանելությունը հայերենի այս կամ այն բարբառին, ապա դրանով անուղղակիորեն հաստատում է այդ բարբառը կրող կասկածյալի՝ դեպքին հնարավոր մասնակցության փաստը, որը պետք է հաստատվի գործով ձեռք բերված այլ ապացույցների համակցությամբ:

Այսպիսով, փորձագետի հավանական եզրակացությունը, ինչպեսն՝ որոշակին, գործով որպես ապացույց օգտագործելու համար պետք է համադրել գործով ձեռք բերված այլ փաստական տվյալների հետ և գնահատել ապացույցների ամբողջ համակցությամբ: Առանց այլ ապացույցների համակցությամբ զնահատելով՝ փորձագետի հավանական եզրակացության՝ որպես անուղղակի ապացույցի օգտագործումը՝ մեղադրանքը հաստատելու համար, անթույլատրելի է: Իհարկե, փորձագետի հավանական եզրակացությունն ինքնին, առանց այլ ապացույցների համակցությամբ, կարող է ունենալ որոշակի տակտիկական նշանակություն: Այն կարող է նախանշել քննության իրականացման սահմաններն ու նեղացնել հնարա-

վոր այն անձանց շրջանակը, որոնք կարող են ենթադրվել որպես վիճելի տեքստի հեղինակներ և, դրանով իսկ, հիմք հանդիսանալ այդ անձանց վերաբերյալ վարկածներ կառուցելու և նրանց նկատմամբ քննություն իրականացնելու համար:

Պետք է ավելացնել նաև, որ փորձագետի հավանական եզրակացությունը վարույթն իրականացնող մարմնին գործի համար նշանակություն ունեցող հանգամանքի վերաբերյալ որոշակի ներքին համոզմունքի համգեցնելու նշանակության տեսանկյունից ճիշտ է, զիջում է որոշակի եզրակացությանը, սակայն այդ հանգամանքը չի նսեմացնում հավանական փարձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությունը քրեական դատավարությունում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ ժամանակակից կրիմինալիստիկայում մեծ տարածում է գտել վիճակագրական վերլուծությունների և հավանականությունների տեսության օգտագործումը: Բանն այն է, որ դատական փորձագիտական գործունեությունն ըստ էության ուղղված է այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության հավանականության որոշմանը: Այլ կերպ ասած՝ փորձագետի խնդիրն է հետազոտվող օբյեկտների վերաբերյալ որոշակի վարկածի հավանականության հաստատումը կամ հերքումը, որը, ի վերջո, գնահատվում և վերջնականորեն որոշվում է դատարանի կողմից:

«Եթե դատարանը ձգտում է գործ ունենալ փաստերի հետ, ապա գիտությունը փաստերի հետ քիչ առնչություն ունի: Այն վերջին հաշվով կապված է հավանականության հետ»¹:

¹ Տե՛ս **Olsson J.** Forensic Linguistics: An Introduction to Language, Crime, and the Law, Published by Continuum International Publishing Group, London, 2004, էջ 45:

Այս առումով փորձագիտական գործունեության արդյունք հանդիսացող փորձագիտական եզրակացությունը դատարանի համար միայն խորհրդատվական բնույթ ունեցող հավանական ենթադրություն է, որը կոչված է օժանդակելու վերջինիս հատուկ գիտելիքներ պահանջող հանգամանքների պարզաբանման գործում: Բացի դրանից, դատարանի խնդիրն ինքնին բացարձակ ճշմարտության բացահայտումը չէ, այլ այնպիսի ճշմարտության, որը հաստատվում է գործով ձեռք բերված ապացույցների վրա հիմնված դատարանի ներքին համոզմունքի ուժով: Հետևաբար, փորձագետի եզրակացությունն այն միջոցներից մեկն է միայն, որը թույլ է տալիս դատարանին ձևավորելու իր ներքին համոզմունքն օրյեկտիվ իրականության կապակցությամբ, իսկ փորձագիտական եզրակացության գիտական հիմնավորվածությունը փորձագետի հետևությունների այն հիմնական հատկանիշն է, որի հիման վրա դատարանը համոզվում է փորձագետի հավանական ենթադրության ճշմարտացիության հարցում:

Ինչպես արդեն նշել ենք, ժամանակակից կրիմինալիստիկայում հատուկ գիտելիքների կիրառման արդյունքում գործի հանգամանքների վերաբերյալ հետևությունների ձևավորման և գնահատման գործում մեծ տարածում է ստացել վիճակագրական վերլուծությունների և հավանականությունների տեսության կիրառումը: Ընդ որում, կրիմինալիստիկայում վիճակագրությունը կիրառվում է գործի քննության երկու փուլերում, որոնցից յուրաքանչյուրում այն կատարում է տարրեր դեր: Առաջինը՝ գործի մինչդատական քննության փուլն է, որտեղ վիճակագրությունն օգտագործվում է օգնելու նախնական քննությանը, մասնավորապես՝ մինչև կասկածվող անձի նույ-

նացումը՝ փաստական տվյալների և հետազոտության համար համեմատական նմուշների ձեռք բերման գործում, երկրորդը դատական քննության փուլն է, որտեղ դատական վիճակագրությունը կիրառվում է ապացույցների մեկնաբանման ու գնահատման գործընթացում¹:

Ինչպես նշեցինք, դատական քննության ընթացքում, ինչպես նաև փորձագետի եզրակացության գնահատման գործում վիճակագրական մաթեմատիկական վերլուծությունները, ըստ Էության, ուղղված են չափելու հետազոտությունների արդյունքում արված հետևությունների՝ իրականությանը համապատասխանելու հավանականության աստիճանը: Այլ կերպ ասած՝ կրիմինալիստիկական վիճակագրությունը թույլ է տալիս որոշել առաջ քաշված վարկածների ճշմարտացիության հավանականության աստիճանն ու հետևություններ անել սխալ վարկածների հերքելիության հնարավորության աստիճանի մասին²:

Հավանականությունը որոշակի տեղեկատվության վրա հիմնված պնդման կամ Ենթադրության ճշմարտացիության մեջ մեր հավատի աստիճանի իրատեսական չափն է: Ենթադրությունը, պնդումը կամ վարկածն ինքնին կարող է լինել ճիշտ կամ սխալ: Ընդ որում, որոշակի Ենթադրության ճշմարտա-

¹ Տե՛ս **Altken C.G.G.** Statistics in Forensic Science. Part I. An Aid to Investigation. "Problems of Forensic Science". Institute of Forensic Research in Krakow, 2006, Volume LXV, էջեր 53-67:

² Տե՛ս **Altken C.G.G.** Statistical Interpretation of Evidence. In Siegel, J. A., Saukko, P. J., and Knupfer, G. C. (Eds.). Bayesian Analysis, Encyclopedia of Forensic Sciences. New York, 2000, Volume 2, էջեր 717-718:

ցիության մասին մեր հավատի աստիճանը չափվում է դրա հավանականության գնահատականի միջոցով¹:

Հավանականության արժեքը կախված է այն ենթադրություններից և տեղեկատվությունից, որոնք օգտագործվում են այն գնահատելու համար: Հետևաբար, համապատասխան ենթադրության կամ պնդման հավանականությունը կարող է մի դեպքում այլ կերպ գնահատվել որոշակի փաստական տվյալների կամ ապացույցների օգտագործման պարագայում, իսկ մեկ այլ դեպքում՝ առանց դրանց օգտագործման՝ այլ կերպ:

Ժամանակակից կրիմինալիստիկայում լայնորեն կիրառվում են հավանականության գնահատման վիճակագրական տարրեր մեթոդներ և տեսություններ, սակայն հատկապես ընդունելի է փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի ճշմարտացիության հավանականության որոշման «Բայեսյան» տեսությունը կամ «Բայեսյան օրենքը»:

Տեսությունը կրում է դրա հիմնադիր 18-րդ դարի բրիտանացի մաթեմատիկոս Թ. Ո. Բայեսի անունը, որը ձևակերպեց որոշակի փարկածի (հիպոթեզի) ճշմարտության հավանականության որոշման իր բանաձևը:

Բայեսյան տեսությունը արժեքավոր նշանակություն ունի անկանխատեսելի, ոչ ստույգ և անորոշ իրադրությունների կամ հարաբերությունների վերլուծության գործում: Այն օգտագործողին օգնում է ոչ միայն նկարագրելու հիմնախնդիրն ու դրա կառուցվածքի հետ կապված տեղեկատվությունն ամբողջապես, այլ նաև որոշակիորեն հաշվարկել որոշակի պնդման

¹ Տե՛ս Robertson B., Vignaux G.A. Interpreting Evidence: Evaluating Forensic Science in Courtroom, Chichester, 1995, էջ 14:

ճշմարտացիությունը կամ՝ մեկ ապացույցի ճշմարտացիությունը մյուսի նկատմամբ¹:

Հաշվի առնելով փորձագիտական եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման գործում Բայեսյան տեսության հիմնադրույթների կիրառման մեծ նշանակությունը և այն հանգամանքը, որ ՀՀ փորձագիտական, քննչական և դատական պրակտիկային ընդհանրապես հայտնի չեն հավանականությունների տեսության հնարավորություններն ու միջոցները, մասնավորապես՝ Բայեսյան տեսությունը, անհրաժեշտ ենք համարում համառոտ ներկայացնել դրա հիմնական էությունն ու կիրառման առանձնահատկությունները դատական փորձագիտական գործունեության մեջ և ապացուցման գործընթացում:

Բայեսյան տեսությունը տրամաբանական հնարքների ամբողջություն է, որը ցույց է տալիս, թե ինչպես է անհրաժեշտ լրացնել որոշակի վարկածի (հիպոթեզի) մասին մեր գիտելիքները՝ դրանք նոր ապացույցների հետ միավորելով: Կրիմինալիստիկայում Բայեսյան օրենքն արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$O(H_p|E) = \frac{P(E|H_p)}{P(E|H_d)} \times O(H_p)$$

որտեղ՝

Օ-ն մեղադրանքի կողմի վարկածի (հիպոթեզի) հավանականությունն է,

¹ Մամրամասն տես՝ **Taroni F., Garbolino P.** Bayesian Networks and the Evaluation of Scientific Evidence: a Theoretical Approach. “Problems of Forensic Science”. Volume XLVI, 2001, էջ 174:

Ե-ն գիտական ապացույցը (փորձագետի եզրակացության մեջ՝ հետևողություն-ներում շարադրված փաստական տվյալները),

H_p-ն՝ մեղադրանքի կողմի վարկածն (հիպոթեզն) է,

H_a-ն՝ պաշտապանության կողմից ներկայացվող վարկածը (հիպոթեզը),

P-ն՝ հավանականությունը:

Օ (H_p)-ն նշանակում է մեղադրանքի կողմի վարկածի (հիպոթեզի) հավանականությունը՝ նախքան փորձագիտական եզրակացության (գիտական ապացույցի) ներկայացումը («նախնական հավանականություն»):

Պարզ ասած՝ որևէ վարկածի ձևավորումն ու ներկայացումը մենք սկսում ենք վարկածի մասին մեր ունեցած նախնական գիտելիքներից, որոնք հանդես են գալիս որպես դրա օգտին խոսող «նախնական հավանականությունները» (prior odds): «Նախնական հավանականություններն», ըստ Էռիքյան, մեր պնդումներն են՝ առանց ապացույցների: Ըստ որում, գիտական ապացույցները կամ փորձագետի հետևողություններն ինքնին հանդես են գալիս որոշակի պնդման կամ վարկածի ձևով:

Օ(H_p/E)-ն նշանակում է մեղադրանքի օգտին մեղադրական կողմի վարկածի հավանականությունը փորձագիտական եզրակացության (գիտական ապացույցի) ներկայացումից հետո: Վերջինս հայտնի է որպես «հետագա հավանականություն» անվամբ (posterior odds): Այսինքն՝ «հետագա հավանականությունն» առաջ քաշված վարկածի օգտին խոսող հավանականություններն են, որոնք ստացվում են նոր ապացույցները հաշվի առնելուց հետո: «Հետագա հավանականությունն» ստանալու համար անհրաժեշտ է «նախնական հավանակա-

նությունը» բազմապատկել «հարաբերական հավանականությամբ» (likelihood ratio: LR):

Այն գործակիցը, որը նախնական հավանականությունը վերափոխում է հետագա հավանականության, արտահայտվում է հետևյալ կոտորակով.

$$\frac{P(E|H_p)}{P(E|H_d)}$$

Այս հարաբերությունն անվանվում է «հարաբերական հավանականություն» (likelihood ratio: LR) կամ «Բայեսյան գործակից»: «Հարաբերական հավանականություն» վիճակագրական եզրույթը բառացիորեն նշանակում է «...ավելի հավանական է, քան...»¹:

Քրեական դատավարությունում դա արտահայտվում է հետևյալ հարաբերությամբ.

*փաստական տվյալի հավանականությունը, եթե մեղադրամքի կողմի վարկածն է ճշմարիտ /
փաստական տվյալի հավանականությունը, եթե պաշտպանության կողմի հիպոթեզն է ճշմարիտ:*

Այսպիսով, հավանականության Բայեսյան տեսությունը մեկնաբանվում է այսպես.

մեղադրամքի օգտին վարկածի հետագա հավանականություն = հարաբերական հավանականություն x մեղադրամքի օգտին վարկածի նախնական հավանականություն:

¹ Տե՛ս Aitken, C. G. G. Interpretation of the Value of Evidence. “Problems of Forensic Science”. Volume XLVI, 2001, էջ 20:

Ապացույցը, որն օգտագործվում է այս կամ այն ենթադրության հավանականությունը գնահատելու գործընթացում, անվանվում է «հավանականությունների պայման»: Բոլոր հավանականությունները պայմանական են և պայմանավորված են օգտագործված փաստական տվյալներով:

Հարաբերական հավանականությունը կոչվում է նաև ապացույցի արժեք, որը նշանակվում է V տառով: Եթե V-ն մեծ է 1-ից¹, ապա մեղադրանքի կողմի վարկածի հավանականությունն է մեծ, եթե V-ն փոքր է 1-ից, ապա պաշտպանության կողմի վարկածի հավանականությունն է մեծ:

Քրեական դատավարությունում փորձագետի խնդիրը միայն հարաբերական հավանականության պարզումն է, իսկ դատարանի և վարույթն իրականացնող մարմնի խնդիրը՝ հետագա հավանականության որոշումը:

Այս առումով փորձագետն ապացույցները գնահատում է երկու հնարավոր այլընտրանքային տեսանկյուններից.

- a) ապացույցի հավանականությունը, եթե մեղադրանքի կողմից առաջարկվող վարկածն է ճիշտ,
- b) ապացույցի հավանականությունը, եթե պաշտպանության կողմից առաջարկվող վարկածն է ճիշտ²:

Կարծում ենք՝ փորձագետի եզրակացության գնահատման գործում հավանականությունների տեսության դրույթների կիրառումը ՀՀ դատաքննչական և փորձագիտական գործունեության մեջ առավել խորը ուսումնասիրման կարիք ունի, քանի որ, ինչպես ցույց է տալիս օտարերկրյա պետություննե-

¹ Այստեղ 1-ը նշանակում է ընդամենը մեկ հավանականության հնարավորությունը:

² Տե՛ս *Aitken C.G.G.* Interpretation of the Value of Evidence. “Problems of Forensic Science”. Volume XLVI, 2001, էջ 15:

թի փորձը, նման դրույթների կիրառումն առավելապես բարձրացնում է փորձագիտական եզրակացությունների որակը և դրանով իսկ նպաստում արդարադասության խնդիրների հաջող կենսագործմանը:

**ԳԼՈՒԽ III. ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՀԵՌԱԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**§1. Հատուկ գիտելիքների արդյունավետության բարձրացման
քրեականակարական և կրիմինալիստիկական ասպեկտները**

Հանցագործությունների քննության արդյունավետությունը սերտորեն կապված է իրավապահպան մարմինների գործունեությունում ժամանակակից գիտության և տեխնիկայի ձեռքբերումների ներդրման հետ։ Այս պայմաններում մեծանուն է մասնագետների գործունեության նշանակությունը, ովքեր, ինչպես նշում է Վ. Յա. Կոլդինը, լրացնում են փորձագետի, քննիչի, դատարանի գիտատեխնիկական հնարավորությունների բացերը՝ ապահովելով ապացուցման իրավաբանական և տեխնիկական էլեմենտների էլ ավելի սերտ միասնությունը¹։

Հայտնի է, որ հանցագործությունների քննության որակը զգալիորեն կախված է քննչական գործողություններ իրականացնելիս կրիմինալիստական տեխնիկա և հատուկ գիտելիքներ կիրառելու քննիչի կարողություններից։

Քննչական գործողություններին մասնակցող մասնագետներն են ընդլայնում ստացվող փաստական տվյալների ծավալն ու բարձրացնում դրանց որակը, ինչն էլ հնարավորություն է տալիս առավել լիարժեք ու բազմակողմանի գնահատել

¹ Ст. Колдин В.Я. Идентификация, и ее роль в установлении истины по уголовным делам, М, 1969, т.9 103,

գործի համար նշանակություն ունեցող երևոյթների ու առարկաների փոխադարձ կապը:

Մասնագետների շմասնակցնելը այն քննչական գործողություններին, որտեղ նրանց օգնությունը կունենար զգալի նշանակություն, կարող է հանգեցնել ապացույցների ոչ լրիվ վերհանմանը, դրանց ոչ բավարար ամրագրմանը և այլն:

Ինչպես նշում է Ն. Ա. Սելիվանովը, մասնագետը օգնում է քննիչին լուծելու երկու չափազանց կարևոր խնդիր. նախ ձեռք բերել և գործի մեջ ներդնել դատական ապացույցներ, որոնք հաճախ ունենում են քննության համար որոշիչ նշանակություն, և երկրորդ՝ ստացված տվյալներով իրականացնել բավարար հիմնավորված և նպատակալաց քննության պլանավորում՝ ճշգրիտ որոշելով ապացույցների հավաքման աշխատանքների ուղղությունը¹:

Քանի որ հաճախ քննչական գործողություններից կամ կոնկրետ քննչական գործողությանը մասնակցած մասնագետից է զգալիորեն կախված քրեական գործի ճակատագիրը, որոշիչ հետքերի և այլ իրեղեն ապացույցների հայտնաբերումը, ապա ներկայումս անհրաժեշտություն է առաջացել մշակելու հանցագործությունների քննության և բացահայտման համար տեխնիկա-կրիմինալիստիկական ապահովման հայեցակարգ (կոնցեպցիա):

Նման բազմաթիվ տեսակետներ կան նաև կրիմինալիստիկական գրականությունում: Ըստ Ա. Ֆ. Վոլինսկու, այդպիսի հայեցակարգի ստեղծումը պետք է իրականացվի երկու մակարդակով.

¹Տե՛ս **Селиванов Н.А.** Привлечение специалистов к расследованию. Обзор практики по материалам следственных органов прокуратуры, М, 1973, էջ 3-5:

1.Հանցագործության քննություն կատարող սուբյեկտների համար կրիմինալիստիկական տեխնիկայի կիրառման մշտական պատրաստվածության պայմանների ստեղծում,

2.Նշված պայմանների իրազործումը հանցագործության քննության և բացահայտման յուրաքանչյուր դեպքի համար, ինչը ենթադրում է քննիչների, օպերատիվ և այլ քննչական մարմինների աշխատակիցների գործունեության տակտիկատեխնիկական և կազմակերպչական-մեթոդական ապահովածությունը, ինչպես նաև փորձագետների անմիջական մասնակցությունը քննչական գործողություններին¹:

Նաև միաժամանակ փորձագետների ու մասնագետների դերի բարձրացման խնդիր է դրվում, որոնց գործունեությունը առավել ցայտուն պետք է արտահայտվի փորձաքննությունների և հատուկ ուսումնասիրությունների իրականացման ժամանակ՝ կրիմինալիստիկական հաշվառումներ, առանձին քննչական գործողություններ կատարելիս (տեղազննություն, խուզարկություն, փորձարարություն), ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործողություններում նրանց մասնակցության ձևերի ժամանակ:

Հայեցակարգի իրազործումը ենթադրում է մասնագետների, հատկապես կրիմինալիստ-մասնագետների առավել լայն մասնակցությունը հանցագործությունների կանխման, քննության և բացահայտման գործընթացներին: Մասնագետների գործունեության կատարելագործմանն ուղղված նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ նրանք, ինչպես նշում է Վ. Ն. Մախովը, ստանում են առավել լիարժեք ու օբյեկտիվ

¹Տե՛ս Կրiminалистика. Սանդղակ. Ուժի մեջ մտնելու օրը. Խոհեմարտ Ա. Փառագաղցուն, Երևան, 1999, էջ 64-68:

նախնական ինֆորմացիա հանցագործության հանգամանքների մասին, ընկալում են այն փաստերը, որոնք քննիչը չի արտացոլել կամ չէր պատրաստվում արտացոլել արձանագրության մեջ, ձեռք է բերում այնպիսի ինֆորմացիա, որը կորչում է կամ կարող է կորչել քննչական գործողությունների հանգույցներում կամ դրանց միջև ընկած ժամանակահատվածում, հատկապես, եթե զննությունը կատարում է մի քննիչը, մեկ այլ քննիչ էլ իրականացնում է մյուս քննչական գործողությունները: Բացի այդ, մասնագետներին հասու է այն ինֆորմացիան, որը քննիչը չի ֆիքսում՝ որպես երկրորդային համարելով կամ չկարևորելով:

Քննիչը որպես ապացույց հավաքված ինֆորմացիայից ֆիքսում է առավել կարևոր փաստերը¹:

Նախաքննությանը մասնագետների մասնակցության դատավարական կարգավորման անհրաժեշտությունը դիտարկելիս, նշված խնդրից բացի կա նաև մեկ այլ հարց, որը պարզաբանում է պահանջում: Այդ հարցը կապված է քննիչի կողմից սեփական հատուկ գիտելիքների կիրառման ձևի սահմանման իրավական չհստակեցվածության հետ: Այսպես, ներկայումս կրիմինալիստիկան նախնական քննություն իրականացնող անձանց դիտարկում է որպես իրենց հատուկ գիտելիքները (այդ թվում նաև տեխնիկա-կրիմինալիստիկական ուսակությունները) կիրառող դատավարական սուբյեկտների²: Այս կա-

¹ Տե՛ս **Махов В.Н.** Теория и практика использования знаний сведущих лиц при расследовании преступлений: Дис. ... д-ра. юрид. Наук, М, 1993, էջ 244:

² Տե՛ս **Белкин Р.С.** Криминалистика; проблемы, тенденции, перспективы. От теории к практике, М., 1988, էջ 48, Он же. Курс советской криминалистики, М., 1979, Том 3, էջ 53:

պակցությամբ Վ. Ե. Սիդորովը նշում է, որ հանցագործությունների քննության և բացահայտման ժամանակ օրենքը սահմանում է տեխնիկական միջոցների կիրառման երեք դատավարական ձև՝ տեխնիկական միջոցների կիրառումը անմիջապես քննիչի, քննչական գործողությունների իրականացմանը մասնակցող մասնագետի կողմից, և փորձագետի կողմից¹:

Այսինքն՝ հատուկ գիտելիքների կիրառման դատավարական ձևերին վերաբերում են քննիչի կողմից սեփական հատուկ գիտելիքների կիրառումը, մասնագետի մասնակցությունը քննչական գործողություններին և փորձաքննության իրականացումը:

Որոշ գիտնականներ² խոսելով իրենց հատուկ գիտելիքները կիրառող անձանց մասին, նրանց թվին են դասում ոչ միայն քննիչներին, մասնագետներին և փորձագետներին, այլ նաև դատախազներին (այդ թվում նաև դատախազ-կրիմինալիստներին) և դատավորներին՝ ապացույցների հավաքման, հետազոտման և գնահատման իրենց դատավարական ֆունկցիաները կատարելիս:

Բնական է՝ քննիչը հատուկ գիտելիքներին բավարար կարող է չտիրապետել, բացի այդ, տարբեր դատավարական

¹ Ст. Сидоров В.Е. Раскрытие преступлений по горячим следам, М., 1979, № 27, Он же. Начальный этап расследования: организация, взаимодействие, тактика, М., 1992, № 41:

² Ст. Лазарева Л.В. Использование специальных познаний при раскрытии и расследовании преступлений, связанных с незаконным оборотом синтетических наркотических средств// Вестник криминалистики / Отв. ред. Филиппов А.Г. М., 2000, Вып. 1, № 62, Криминалистика: Учеб. для вузов / Под ред. Р.С. Белкина, М., 1999, № 399; Матусинский С.В. Использование специальных познаний для установления механизма происшествия: Дис. ... канд. юрид. Наук, М., 1994, № 90:

գործառույթներ իրականացնելիս միաժամանակ հանդես գալ և քննիչի դերում, և այն անձի, ով տիրապետում է հասուկ գիտելիքների, բացասարար կանորադառնա քննչական գործողության կատարման արդյունավետության վրա: Ուրեմն հանցագործությունների քննությանը մասնագետի օգնության օգտագործումը այսօրվա կյանքի իրատապ պահանջն է: Դատավարական առումով քննիչները իրենց գիտելիքների կիրառման ժամանակ չեն համարվում մասնագետներ, բայց, փաստորեն, երբ նրանք հանցագործության նյութական հետքերի և այլ իրեղեն ապացույցների որոնման, հայտնաբերման, ֆիքսման և վերցման ժամանակ ինքնուրույն կիրառում են տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցներ և մեթոդներ, նրանք իրականացնում են գործունեություն, որը նման է մասնագետ-կրիմինալիստի աշխատանքին:

Ինչպես իրավացիորեն նշում են գիտնականները¹, անգամ այն դեպքում, երբ քննիչը մասնագետի մակարդակով տիրապետում է հասուկ գիտելիքների, նա իրավունք չվետը է ունենա փոխարինել մասնագետին կամ փորձագետին, քանի որ ակնհայտ է, որ հնարավոր չէ զնահատել այդպիսի ուսումնասիրության արդյունքները նույն անաշառությամբ, ինչպես երբ այդ ապացույցները ստացվել են անկախ աղբյուրներից: Այս կապակցությամբ Ա. Յու. Շտրոմարը գրում է. «Օրեական դատավարության ընթացքում իրազեկ անձանց ներգրավումը բոլոր դեպքերում անհրաժեշտ է անգամ անկախ նրանից, թե քննիչը տիրապետում է հասուկ գիտելիքների թե ոչ: Անօրինական կլինի ինքը՝ անձը, ով իրականացնում է հանցագոր-

¹ Տե՛ս **Петрухин И.Л.** Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М, 1964, էջ 35:

ծուրյան քննություն, կիրառի տեխնիկական միջոցներ, բանի որ նա միաժամանակ չի կարող ապացուցողական փաստերի ինքնուրույն գրանցման նպատակով կիրառել տեխնիկա, կատարել նմանօրինակ ուսումնասիրություններ և ապացույցներին տալ գնահատական¹: Տվյալ տեսակետը կիսում են նաև այլ գիտնականներ²:

Հատուկ գիտելիքների կիրառումը դիտարկվում է միայն այդ նպատակով պատրաստված անձանց զործունեության շրջանակներում: Որպես կանոն, այդպիսի անձիք են համարվում փորձագետները, որոնք հաճախ հանդես են գալիս որպես մասնագետներ: Ա. Յա. Պալիաշվիլին նշել է, որ «հատուկ գիտելիքների կիրառման սուրյեկտ կարող է հանդիսանալ փորձագետը, մասնասգետը և ցանկացած այլ իրազեկ անձ, բայց ոչ քննիչը կամ դատարանը»³:

Գրականության մեջ կա նաև կարծիք, համաձայն որի՝ նախաքննություն իրականացնող անձի կողմից հանցագործության հետքերի և իրեղեն ապացույցների հետազոտումը հնարավոր չէ առանց նրանց կողմից հասուն գիտելիքների կիրառման, որոնք իրականացվում են դատավարական ձևով:

¹ Տե՛ս **Штромас А.Ю.** Деятельность сведущих лиц в советском уголовном процессе, М., 1964, էջ 6:

² Տե՛ս **Арсеньев В.Д.** Основы теории доказательств в советском уголовном процессе, Иркутск, 1970, էջ 82, **Гольдман А.М.** Правовые основания и формы применения специальных познаний в советском уголовном процессе // Вопросы экспертизы в работе защитника, Л, ЛГУ, 1970, էջ 27, **Сорокотягин К.Н.** Криминалистические проблемы использования специальных познаний в расследовании преступлений, Дис. ... д-ра юрид. Наук, Екатеринбург, 1992, Прил. 3, էջ 5:

³ Տե՛ս **Палиашвили А.Я.** Правовые проблемы экспертизы в советском уголовном процессе: Автореф. дис. ... д-ра юрид. наук., Тбилиси, 1968, էջ 8:

Տվյալ տեսակետը պաշտպանող գիտնականները¹ ենթադրում են, որ տվյալ հետազոտությունների արդյունքները քննչական գործողությունների արձանագրություններում արձանագրելուց հետո կարող են համարվել ապացույցներ, ըստ այդմ էլ այդպիսի դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն չի առաջանալ:

Մի խումբ գիտնականների² կարծիքով էլ քննիչի կողմից սեփական հատուկ գիտելիքների կիրառման դատավարական

¹ Ste'u *Варфоломеева Т.В., Полевой И.С.* О формах и приделах криминалистического исследования производных вещественных доказательств // Применение научных методов при расследовании преступлений и изучении преступности, М., 1973, Ч. I. Вып.1, № 206, *Винберг А.И.* Некоторые актуальные вопросы советской криминалистики // Советское государство и право, М., 1962, № 5, № 48-49, *Дулов А.В.* Права и обязанности участников судебной экспертизы, М., 1969, № 33-34: *Кысляков В., Корниенко И.* Предварительные исследования в работе следователя // Социалистическая законность, 1972, № 4. № 64-66: *Колдин В.Я.* Судебная идентификация как доказывание тождества // Вопросы криминалистики, М., 1962, № 6-7, № 31-32, *Соколовский З.М.* О применении следователем криминалистических знаний при исследовании вещественных доказательств //Советское государство и право, 1975, № 1, № 69-73:

² Ste'u *Колесниченко А.Н.* Научные и правовые основы расследования отдельных видов преступлений: Автoref. дис. ... д-ра юрид. Наук, Харьков, 1967, № 19, *Рябов Э.В.* Значение предварительного исследования доказательств при осмотре места происшествия для выдвижения следственных версий и проведения оперативно-розыскных мероприятий // Вопросы уголовно-процессуального законодательства: Сб. науч. ст. / Под ред. В.П. Малкова, Казань, 1969. № 135-136, *Закатов А. А.* Об использовании специальных познаний следователем в расследовании преступлений // Вопросы повышения эффективности и качества предварительного следствия: Материалы Всесоюзного совещания работников следственного аппарата МВД СССР, г. Воронеж, 11-13 апреля 1977, Волгоград, 1979, № 189, *Морозов Г.Е.* Участие специалистов в стадии предварительного расследования: Автoref. дис. ... канд. юрид. Наук, Саратов, 1977, № 8-9, *Орлов Ю.К.* Производство экспертизы в уголовном процессе: Учеб. пособие., М, 1982, № 5-6, *Грузкова В.Т.* К вопросу о соотношении следственного осмотра, экспертизы и предварительного исследования документов -

հիմնական պայմանը պետք է լինի դեղուկտիվ ընկալման փաստ, այլ ոչ եզրահանգման հիմք՝ հիմնված հատուկ գիտելիքների վրա:

Նախնական քննություն իրականացնող անձանց կողմից հատուկ գիտելիքների կիրառման ձևի հստակ ցուցումի բացակայությունը հանգեցնում է գիտնականների կողմից տվյալ հարցի ընկալման տարբերությունների: Նշված սուբյեկտների կողմից սեփական հատուկ գիտելիքների կիրառումը չի կարելի ընկալել որպես իրենց գործունեության դատավարական ձև, քանի որ այդ ժամանակ նրանք պետք է դիտարկվեն որպես մասնագետներ, ինչը կհանգեցնի իրենց դատավարական կարգավիճակի փոփոխության:

Վ. Ա. Ժբանկովը խոսելով քննիչների կողմից ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու իրավունքի մասին, որպես այդ պրոցեսի պարտադիր պայման նշում էր նրանց կրիմինալիստիկական պատրաստվածության անհրաժեշտությունը: Նա գրել է. «Փորձագետը, որպես կանոն, նմուշների համեմատական հետազոտումը իրեղեն ապացույցների հետ կատարում է փորձաքննություն իրականացնելիս: Նմուշների նման համեմատումը, որոնք արտացոլում են այլ նյութական օբյեկտների մասնակի արձանագրման նշույլներ, քննիչը չի կարող կատարել, նույնիսկ եթե նա ունի համապատասխան կրիմինալիստիկական պատրաստվածություն¹»:

вещественных доказательств // Криминалистика и судебная экспертиза, Сб. науч. Раб, Киев, 1969, Вып. 6, т. 100:

¹ Ст. 4 **Жбанков В.А.** Образцы для сравнительного исследования в уголовном судопроизводстве: Учеб. пособие / Под ред. Р.С. Белкина, М., 1969, т. 2, 7-8:

Որոնողական-իդենտիֆիկացման գործունեություն իրականացնող մյուս սուբյեկտներին, ովքեր տիրապետում են հատուկ գիտելիքներին, ոչ միայն չպետք է իրավունք տրվի ինքնուրույն կիրառելու տեխնիկական միջոցներ, այլ այդ նպատակով պարտադիր օգտագործել այն անձանց հատուկ գիտելիքները, ովքեր քրեական դատավարությունում հանդես են գալիս որպես մասնագետներ:

Ըստ Վ. Սերովի, քրեական գործերի քննությանը մասնագետների պարտադիր մասնակցության անհրաժեշտությունը պայմանավորող օբյեկտիվ պատճառներից են՝

1. Քննչական գործողությունների բարդությունը՝ կապված զիտուրյան և տեխնիկայի ընդհանուր զարգացման հետ:

2. Կրիմինալիստիկական տեխնիկայի զգալի առաջընթացը:

3. Փորձաքննությունների նոր տեսակների ի հայտ գալը, որոնք պայմանավորված են այնպիսի օբյեկտների հետազոտմամբ, որոնց հայտնաբերելը, ֆիքսելը և վերցնելը կապված է հասուկ գիտելիքների ու հմտությունների հետ¹:

Ժամանակակից քննիչները, ըստ մեզ, չպետք է իրավունք ունենան ինքնուրույն կիրառելու տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցներ ու մեթոդներ՝ հանցագործության նյութական հետքեր ու այլ իրեղեն ապացույցներ որոնելու, հայտնաբերելու, ֆիքսելու, վերցնելու և նախնական զննության համար: Մեր կարծիքը հիմնվում է այն բանի վրա, որ նրանց կողմից տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցների ու մեթոդների ինքնուրույն կիրառումը կարող է վճասել, կամ ոչնչացնել հանցագոր-

¹ Տե՛ս **Серов В.А.** Использование научно-технических познаний и средств в доказывании по уголовным делам: Дис. ... канд. юрид. Наук, М., 1979, էջ 126:

ծության նյութական հետքերն ու այլ իրեղեն պացույցները, այդ պատճառով էլ բոլոր դեպքերում էլ տվյալ անձանց կողմից տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցների ու մեթոդների կիրառման անհրաժեշտության դեպքում նրանք պետք է օգտագործեն մասնագետի գիտելիքները:

Աշխատանքի նման կազմակերպումը թույլ կտա նախնական քննություն իրականացնող անձին իր ուժերը կենտրոնացնել իրականացվող քննչական գործողության դատավարական ու կազմակերպչական-տակտիկական հարցեր որոշելու վրա: Ինչպես իրավացիորեն նշում են Ի. Ֆ. Գերասիմովը և Ե. Պ. Խշենկոն, տեղազննության ընթացքում նյութական հետքերի ու իրեղեն ապացույցների հայտնաբերման աշխատանքների իրականացումը մասնագետ-կրիմինալիստի կողմից քննիչին հնարավորություն կընձեռնի առավելագույնս կենտրոնանալ՝ վերլուծել տեղի ունեցածը, առաջադրել վարկածներ, օգտագործել դեպքի տեղի կազմակերպչական-տակտիկական նշանակությունը¹:

Ապացույցների հետ աշխատելու գիտա-տեխնիկական միջոցների ու մեթոդների բարդացումը թույլ չի տալիս քննիչին տիրապետելու բոլոր կրիմինալիստիկական հանձնարարականներին, այդ պատճառով էլ պետք է քննիչին հնարավորինս ազատել ապացույցների հետ տարկող բոլոր տեխնիկական միջոցառումներից՝ կրիմինալիստիկական տեխնիկայի կի-

¹ Տե՛ս *Герасимов И.Ф., Ищенко Е.П.* Тактические аспекты применения научно-технических средств при собирании доказательственной информации // Теория и практика собирания доказательственной информации техническими средствами на предварительном следствии, Сб. науч. Трудов, Киев, 1980, էջ 184-185:

բառման բոլոր պարտականությունները դնելով մասնագետ վրա:

Ինչպես նշում են Վ. Գ. Գայդաշը և Ս. Լ. Նովոժիլովը, տեխնիկական միջոցների կիրառումը քննչական գործողությունների ընթացքում առավել արդյունավետ է այն ժամանակ, եթե այն իրականացնում է մասնագետը, ով հնարավորություն ունի զնահատելու ստացված ողջ ինֆորմացիան, «ֆիլտրելու–գոլելու» այն և մշակված արդյունքները տրամադրելու կիրառման նախաձեռնողին (օպերատիվ աշխատակցին կամ քննչական կառույցին)¹:

Քննիչը պետք է հաշվի առնի, որ տեխնիկա–կրիմինալիստիկան միջոցների ու մեթոդների կիրառման արոցեսն աշխատատար է, պահանջում է որոշակի ժամանակ, ինչը պետք է տրամադրել մասնագետին: Դրա համար քննիչը նախապես պետք է մասնագետից պարզի մոտավոր ժամանակը, որն անհրաժեշտ է տվյալ տեխնիկա–կրիմինալիստիկական միջոցը կիրառելու համար: Այդ ժամանակահատվածում քննիչը չպետք է շտապեցնի մասնագետին, այլ կարող է զբաղվել իրականացվող քննչական գործողության կազմակերպչական–տակտիկական և դատավարական հարցերով: Սակայն տեխնիկա–կրիմինալիստիկական մեթոդների կիրառումը մասնագետի կողմից քննիչին չպետք է ազատի որոնողական ակտիվ գործողություններ կատարելուց: Քննիչի և մասնագետի միաժամանակյա աշխատանքը, եթե մասնագետը իրականացնում

¹ Стін Гайдаш В.Г., Новожилов С.Л. Технические средства организации информирования в процессе выявления, раскрытия и расследования преступлений// Теория и практика собирания доказательственной информации техническими средствами на предварительном следствии, Сб. науч. Трудов, Киев, 1980, № 59-60:

է նյութական հետքերի հայտնաբերում, ֆիքսումն ու վերցնում, իսկ քննիչը վերահսկում է այդ գործընթացը՝ նկարագրելով այդ ամենն արձանագրության մեջ, դառնում է նրանց համագործակցության արդյունավետության գրավականը:

Հանցագործության նյութական հետքերի ու այլ իրեղեն ապացույցների վերցման պրոցեսում մասնագետը պետք է իրականացնի դրանց ֆիքսումն ու փաթեթավորումը, իսկ քննիչը պետք է միայն լրացնի փաթեթի պահանջվող ոեկվիգիտները: Եթե համեմատական հետազոտման համար նմուշները վերցնելու անհրաժեշտություն է առաջանում, ապա այդ գործողությունը պետք է իրականացնի միայն մասնագետը:

Ինչպես նշում է Ս. Մ. Սիրկով՝ «Հետքերի պիտանելիության հարցը նպատակահարմար է լուծել դեպքի տեղում¹»:

Հայտնի է, որ նախնական քննության ընթացքում հատուկ գիտելիքները ներկայումս կիրառվում են ոչ միայն մասնագետի կողմից, քայլ նաև սուրյեկտների, որոնք փաստացի տիրապետում են հատուկ գիտելիքներին: Այս դեպքում անհրաժեշտ է մշակել որոշակի մեխանիզմ, որով կորոշվի, թե ովքեր կարող են հանդես գալ որպես մասնագետներ:

Ներկայումս ՀՀ-ում փորձագետների որոկավորման հարցը որևէ օրենքով կարգավորված չէ, այլ միայն գործում է «Հայատանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում դատական փորձագետի որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության

¹ Ст. 6 Сырков С.М. Эффективнее использовать в раскрытии и расследовании преступлений возможности эксперто-криминалистической службы // Бюллетень ГСУ МВД ССР, М, 1989, №5, с. 49:

նախարարի 28.02.2000թ. թիվ 151 հրամանը¹, որն էլ վերաբեր-
վում է միայն ՀՀ արդարադատության նախարարության հա-
մակարգում փորձագիտական որոշակի մասնագիտությամբ
դատական փորձագետի որակափորում շնորհելուն: Այսինքն
ՀՀ-ում գործող դատական փորձագետներին որակափորելու
միասնական կարգ գոյություն չունի: Մեր կարծիքով այս հար-
ցը խիստ հրատապ է, քանի որ հաճախ հանցագործության
փաստի առկայությունը կամ բացակայությունը կախված է
լինում փորձագետի եզրակացությունից:

Գտնում ենք, որ ՀՀ-ում անհրաժեշտ է ստեղծել մշտապես
գործող անկախ որակափորման հանձնաժողով, որտեղ էլ
պետք է որակափորվեն ՀՀ բոլոր փորձագիտական հիմնարկ-
ների փորձագետները: Այդ հանձնաժողովի կազմի մեջ պետք
է ներգրավվեն ներկայիս փորձագիտական հաստատություն-
ների հեղինակավոր աշխատակիցներին, կրիմինալիստիկա-
կան տեխնիկայի, դատական բժշկության և այլ ոլորտի
գիտնականների:

Նշված հանձնաժողովի աշխատանքներին կարող է, եր-
բեմն էլ պետք է նախորդի այն փորձագետների լրացուցիչ
տեխնիկա-կրիմինալիստիկական նախապատրաստություն,
որոնց հասուկ գիտելիքները պետք է գնահատվեն: Այդպիսի
նախապատրաստություն կարող է իրականացվել մասնագի-
տացված փորձագիտական հաստատությունների կամ ուսում-
նական հաստատությունների բազայի հիման վրա, կամ էլ

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում դատական փորձագետի որակափորման կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 28.02.2000թ. թիվ 151 հրամանը, ՀՀԳՆԱԾ 2000/3 (45), 31.03.00թ.:

պետք է ստեղծվի հատուկ դպրոց: Նշված նախապատրաստության ժամանակ տեղի է ունենում տեխնիկա-կրիմինալիստիկական հնարավորությունների ձեռք բերում կամ վերականգնում, ինչը թույլ է տալիս դրանք հետագայում ինքնուրույն կիրառել:

Տվյալ հանձնաժողովը պետք է պարզի նախնական քննություն իրականացնող անձանց մոտ հատուկ գիտելիքների առկայությունը, այսինքն՝ հանցագործության նյութական հետքերի և այլ իրեղեն ապացույցներ որոնելիս, հայտնաբերելիս, ֆիքսելիս, վերցնելիս տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցները ինքնուրույն կիրառելու կարողություններն ու հմտությունները:

ՀՀ քր. դատ. օր.-ում անհրաժեշտ ենք համարում ավելացնել նոր դրույթ, համաձայն որի՝ «Ղննչական գործողությունների իրականացման ժամանակ տեխնիկական միջոցներ կարող է կիրառվել միայն դրա համար հատուկ գիտելիքների, ունակությունների ու հմտությունների տիրապետող և համապատասխան թույլտվություն ունեցող անձի կողմից»:

Սահմանումից պարզ է դառնում, որ քննիչներն ընդհանրապես զրկված չեն լինի տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցներ ինքնուրույն կիրառելու հնարավորությունից, այսինքն այն քննիչները, ովքեր տիրապետում են հատուկ գիտելիքների, անցել են համապատասխան դասընթացներ կամ առանց դրա հանձնել են որակավորման քննություններ և վերոնշյալ հանձնաժողովի կողմից ստացել են համապատասխան թույլտվություն, նրանք իրենց կողմից իրականացվող այն քննչական գործողությունների ընթացքում, որտեղ կիրառվում

են տեխնիկական միջոցներ, կարող են կատարել առանց մասնագետ ներգրավվելու:

Իսկ եթե նախնական քննություն իրականացնող անձը չի տիրապետում հանցագործության հետքերի ու այլ իրեղեն ապացույցների որոնման, հայտնաբերման, ֆիքսման, վերցման տեխնիկական միջոցներին՝ սակայն անհրաժեշտ է կիրառել նշված միջոցները, չունի համապատասխան թույլտվություն, քննչական գործողություններին պարտադիր պետք է ներգրավի մասնագետի:

Անհրաժեշտ ենք նաև համարում ՀՀ քր. դատ. օր.-ում մտցնել ինքնուրույն գլուխ՝ «հատուկ գիտելիքների կիրառումը քրեական դատավարությունում» վերնագրով և հույսով ենք, որ քրեական դատավարական օրենքի մշակման գործընթացում արժանի տեղ կհատկացվի քրեական գործով ճշմարտության վերհանման ընթացքում կիրառվող հատուկ գիտելիքներին: Առաջարկվող գլուխը, մեր կարծիքով, պետք է սահմանի հատուկ գիտելիքների, որպես մասնագետ և փորձագետ հանդես եկող սուրյեկտների հասկացությունները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, նշանակելու կամ ներգրավվելու կարգը, դրույթ այն մասին, որ եթե քննչական գործողության ընթացքում պետք է կիրառվեն գիտատեխնիկական միջոցներ և քննիչը չունի համապատասխան թույլտվություն, ապա մասնագետի մասնակցությունը պետք է պարտադիր լինի, գիտատեխնիկական միջոցների հասկացությունը, քննչական գործողության ավարտին մասնագետի կողմից կազմվող տեղեկանքի պարտադիր լինելը, այդ տեղեկանքի բովանդակությունում ամրագրվող պարտադիր տվյալների սահմանումը:

Մասնագետների դատավարական վիճակի կատարելազործումը, ըստ մեզ, անբաժան է հանցագործությունների քննության, բացահայտման և կանխման գործընթացների մշտական տեխնիկա-կրիմինալիստիկական ուղեկցման իրագործումից:

Առաջարկվող գլխով մասնագետների գործունեության առավել կարգավորումը, քրեադատավարական և կրիմինալիստիկական-տակտիկական նոր մոտեցման անհրաժեշտությունը, մեր կարծիքով, պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնք են՝

1.Տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցների ու մեթոդների ընդհանուր բարդացումը, որոնք նախնական հետազոտման ընթացքում կիրառում են հանցագործության նյութական հետքերը կամ այլ իրեղեն ապացույցները որոնելու, հայտնաբերելու, ֆիքսելու և վերացնելու ժամանակ:

2.Նախնական քննություն իրականացնող անձանց անպատրաստ լինելը ինքնուրույն կիրառելու տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցներ ու մեթոդներ՝ պայմանավորված օրյեկտիվ կամ սուրյեկտիվ պատճառներով:

3.Նախնական քննություն իրականացնող անձանց առավելագույն հնարավորություններ ընձեռելու անհրաժեշտությունը՝ իրենց ուժերը և ուշադրությունը կենտրոնացնելու իրավական և կազմակերպչական-տակիիկական խնդիրների լուծման վրա, որոնք առաջանում են, ինչպես առանձին քննչական գործողության, այնպես էլ ողջ նախնական քննության ընթացքում:

4.Հանցագործության նյութական հետքերի կամ այլ իրեղեն ապացույցների որոնման, հայտնաբերման, ֆիքսման ու

վերցման տեխնիկա-կրիմինալիստիկական գործընթացի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:

Այսպիսով՝ նախնական քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման կարգը պետք է որոշվի ոչ թե նախնական քննություն իրականացնող անձի սուբյեկտիվ ցանկությամբ, այլ հստակ իրավական նորմերով և տակտիկական-կրիմինալիստիկական հանձնարարականներով, որոնք սահմանում են քննչական գործողություններին մասնագետների մասնակցության պայմաններն ու նրանց կողմից իրենց հատուկ կրիմինալիստիկական գիտելիքների կիրառման կարգը:

Քննիչներին տեխնիկական միջոցների կիրառումից ազատելով և նրանց ուժերը և ուշադրությունը քննչական գործողության տակտիկայի, վարկածներ առաջադրելու, օպերատիվ աշխատակիցների հետ համագործակցության կազմակերպման վրա կենտրոնացնելով միայն կրարձրանա քննչական գործողության արդյունավետությունը: Առավել ևս դա առավել ցայտուն կլինի այն դեպքում, երբ նախնական քննությունը վարող անձը չի տիրապետում հատուկ գիտելիքների:

Գտնում ենք, որ նախնական քննության մարմինների գործունեության մեջ մեր առաջարկների ներդրումը, որոնք ուղղված են հանցագործության նյութական հետքերի և իրեղեն ապացույցների ձեռքբերման (որոնման, հայտնաբերման, ֆիքսման, վերցման) ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման գործընթացին, դրական ազդեցություն կրողնեն իրականացվող քննչական գործողության որակի ու ամբողջականության վրա:

**§ 2. Դատական փորձաքննությունների նշանակման
քրեադատավարական հիմնախնդիրները և
զարգացման ուղղությունները**

Դատական փորձաքննության էությանն առնչվող հարցերից մեկն էլ դրա դատավարական բնույթի մասին հարցն է: Դրա հետ կապված՝ անհրաժեշտ է տարբերել փորձաքննության նշանակման դատավարական ձևը՝ փորձաքննության կատարման դատավարական ձևից: Փորձաքննության նշանակման դատավարական ձևը քրեական դատավարության որոշակի փուլում փորձաքննություն նշանակելու կարգն է: Փորձաքննության կատարման դատավարական ձևը փորձաքննության կազմակերպման կարգն է՝ փորձագիտական կազմակերպության և/կամ փորձագետի կողմից:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ փորձաքննությունը նշանակում են հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդվ. 243): Այսինքն, ըստ գործող քրեադատավարական օրենսդրության՝ փորձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա: Փորձաքննության նշանակման համար փաստական հիմք է հանդիսանում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման համար հատուկ գիտելիքների կիրառման անհրաժեշտությունը: Փորձաքննության կատարման իրավական հիմքը փորձաքննությունը նախաձեռնող մարմնի որոշումն է՝ այս կամ այն տեսակի փորձաքննությունը նշանակելու մասին:

ՀՀ քր. դատ. օր.-ի 244-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական հետապնդման մարմինը փորձաքննություն նշանակելու մասին կայացնում է որոշում, որում պետք է նշվեն՝ փորձաքննությունը նշանակելու հիմքերը, փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները և այլ օբյեկտները՝ նշելով՝ երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են դրանք հայտնաբերվել կամ ձեռք բերվել, իսկ քրեական գործի նյութերով փորձաքննություն կատարելիս՝ տեղեկություններ, որոնց վրա կարող են հիմնվել փորձագետի հետևողությունները, փորձագետին առաջադրված հարցերը, փորձագիտական հիմնարկի անվանումը կամ անձի ազգանունը, որին հանձնարարված է փորձաքննության կատարումը»:

Կապված փորձաքննության նշանակման և կատարման կարգի հետ՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված են երկու հիմնական եղանակներ՝ փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկում (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդվ. 248) և փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկից դուրս (ՀՀ քր. դատ. օր.հոդվ. 249):

Այսպես, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 248-րդ հոդվածի՝
«1. Քննիչը փորձաքննություն նշանակելու մասին իր կայացրած որոշումը, հետազոտման օբյեկտը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև քրեական գործն ուղարկում է փորձագիտական հիմնարկի դեկանարիմ: Փորձաքննության կատարմանը մասնակցում է այն փորձագետը, որը նշված է որոշման մեջ: Եթե որոշման մեջ կոնկրետ փորձագետ նշված չէ, ապա փորձագիտական հիմնարկի դեկանարը պետք է որոշի, թե սվյալ փորձագիտական հիմնարկի որ փորձագետն է կատարելու փորձաքննությունը:

2. Փորձագիտական հիմնարկի դեկանարը փորձագետին ժամութացնում է սույն օրենսգորի 85 հոդվածով նախատեսված

նրա իրավունքներին ու պարտականություններին, նախազգուշացնում է եղրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եղրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին, կազմակերպում է փորձաքննության կատարումը, սակայն իրավունքը չունի փորձագետին տալ ցուցումներ, որոնք կանխորշում են հետազոտությունների ընթացքը և հետևողությունների բովանդակությունը:

3. Քննիչն իրավունք ունի ներկա գոտնվելու փորձաքննություն կատարելիս:

Դատաքննության փորձաքննության ընթացքում դիահերձում կատարելիս, որպես կանոն, ներկա է գտնվում քննիչը:

Քննիչի համաձայնությամբ և փորձագետի բույլտվությամբ փորձաքննությանը կարող են մասնակցել նաև դատավարության մասնակիցները, եթե դա չի խոչընդոտի գործի քննությանը»:

ՀՀ քր. դատ. օր.-ի 249-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե փորձաքննությունը կատարվում է փորձագիտական հիմնարկից դուրս, ապա քննիչը փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելուց հետո իր մոտ է կանչում այն անձին, ում հանձնարարված է փորձաքննությունը, հավաստիանում է նրա ինքնության և ձեռնիհասության մեջ, պարզում է փորձագետի հարաբերությունները կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, դատավարության այլ մասնակիցների հետ և ստուգում է, թե չկան արդյոք փորձագետին բացարկ հայտնելու հիմքեր:

2. Փորձաքննություն նշանակած անձը փորձագետին հանձնում է փորձաքննություն նշանակելու մասին որոշումը, բացատրում է սույն օրենսգրքի 85 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնում է եղրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու, ինչպես նաև ակնհայտ կեղծ եղրակացություն տա-

լու համար սահմանված պատախանատվորյան մասին։ Այդ գործողությունները կատարելու մասին քննիչը կազմում է արձանագրություն, որն ստորագրվում է փորձագետի և հաստատվում է քննիչի կողմից։ Արձանագրության մեջ նշվում են նաև փորձագետի արած հայտարարությունները և նրա միջնորդությունները։ Փորձագետի միջնորդությունները մերժելու մասին փորձաքննություն նշանակած անձը կայաց- նում է պատճառաբանված որոշում։

3. *Փորձաքննություն նշանակող անձը կասկածյալին, մեղադր- յալին, տուժողին, վկային ներկայացնում է փորձագետին, եթե անհրաժեշտ է հետազոտել նրանց մարմինը կամ հոգե- կամ վիճակը կամ եթե փորձաքննությանը նրանց մասնակ- ցելն անհրաժեշտ է։*

Այսպիսով՝ ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրութ- յան համաձայն՝ փորձաքննությունը նշանակվում է հետաքն- նության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա և ենթակա է կատարման փորձագիտական հիմ- նարկում կամ փորձագիտական հիմնարկից դուրս՝ գործի հա- մար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ բա- ցահայտելու անհրաժեշտությունից ելնելով, որոնք բացահայ- տելու համար անհրաժեշտ է հասուլ գիտելիքների կիրառում։

Դատական փորձաքննության նշանակման և կատարման կարգի հետ կապված՝ կարծում ենք, նախևառաջ, քննարկման առարկա պետք է դարձնել արտադատական փորձաքննութ- յան ինստիտուտը։ Հարցն անհրաժեշտ է քննարկել այդ և «փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկից դուրս» ինստիտուտների հարաբերակցության և տարբերակ- ման դիրքերից։ Բանն այն է, որ տեսության մեջ և պրակտիկա- յում հաճախ շփոթում են «արտադատական փորձաքննութ-

յուն» և «փորձագիտական հիմնարկից դուրս փորձաքննություն» եզրույթները¹:

Հարկ է նշել, որ փորձաքննության նշանակման կարգի ուսումնասիրությունն արտադատական և փորձագիտական հիմնարկից դուրս կատարվող փորձաքննության համեմատության տեսակետից՝ պայմանավորված է քրեական դատավարությունում կողմերի հավասարության, մրցակցության և արդար դատաքննության քրեադատավարական սկզբունքներով, որոնք իրենց արտացոլումն են գտել ՀՀ Սահմանադրության մեջ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Ըստ որում, քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում փորձագետի եզրակացության օգտագործումն իր հերթին խարսխվում է նշված սկզբունքների վրա: Ուստի այս առումով փորձաքննության նշանակման կարգի ուսումնասիրությունն առավել քան կարևոր է:

Հարկ է նկատել, որ «արտադատական փորձաքննություն» հասկացությունը և «փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկից դուրս» հասկացությունը միարժեք չեն: Եթե «արտադատական փորձաքննություն» հասկացությունը ենթադրում է փորձագիտական հետազոտություն, որն իրականացվում է գործով վարույթից դուրս դատավարության մասնակցի (մասնավորապես՝ կասկածյալի, մեղադրյալի կամ պաշտպանի) պատվերով այս կամ այն մասնագետի կամ մասնագիտացված իրավաբանական անձի (այդ թվում՝

¹ Տե՛ս **Ի ծեֆա Բ. Է.** Չաեցի անդամ յե՞նի ածծա է աճա 1 օան էա. 1 ., 1995, էջեր 17-19:

պետական կամ ոչ պետական փորձագիտական հիմնարկի) կողմից՝ առանց վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնության, միջնորդության կամ այլ միջամտության և չունի դատավարական բնույթ, ապա «փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկից դուրս»՝ ընդամենը նշանակում է փորձաքննության կատարումը որևէ ֆիզիկական անձի կամ կազմակերպության կողմից, որը փորձագիտական հիմնարկ չէ: Ըստ որում, «փորձագիտական հիմնարկից դուրս փորձաքննությունը», ըստ քրեական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի իմաստի՝ բոլոր դեպքերում կատարվում է վարույթն իրականացնող մարմնի՝ փորձաքննություն նշանակելու նասին որոշման հիման վրա՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ: Այլ կերպ ասած՝ եթե արտադատական և դատական փորձաքննությունների տարրերակման հիմքը փորձաքննությունը նախաձեռնողն է, ապա փորձագիտական հիմնարկից դուրս և փորձագիտական հիմնարկում փորձաքննությունների տարրերակման չափանիշը՝ փորձաքննությունը կատարողը:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի տալիս «փորձագիտական հիմնարկ» եզրույթի բնորոշումը, մինչդեռ ՈԴ- քրեական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 60-րդ կետի համաձայն՝ փորձագիտական հիմնարկ է համարվում պետական դատավորական գիտական հաստատությունը կամ այլ հիմնարկը, որին վստահված է փորձաքննություն իրականացնել¹:

¹ Ծառ դեպքերում դատարանը կամ քրեական հետապնդման մարմինները նշում են, որ փորձաքննության հարցերին կարող են որակյալ պատասխաններ տալ միայն պետական փորձագիտական հիմնարկները, ինչպիսիք են, օրինակ, Արդարադատության նախարարությանը կից գործող փորձա-

Կարծում ենք՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության մակարդակով անհրաժեշտ է հստակեցնել փորձագիտական հիմնարկի հասկացությունը, ինչը հնարավորություն կտա ոչ միայն միմյանցից սահմանազատել փորձագիտական հիմնարկները ոչ փորձագիտական հիմնարկներից, փորձագիտական հիմնարկները՝ փորձագիտական կամ ոչ փորձագիտական կազմակերպություններից, ինչպես նաև տարանջատել փորձագիտական հիմնարկից դուրս կատարվող փորձաքննությունից:

Իրավաբանական գրականության մեջ՝ կապված արտադատական փորձաքննության հետ, կան տարբեր տեսակետներ: Այսպես, Մ.Կ. Տրեուշնիկովը, կախված այն հանգանաքից, թե որ մարմինն է նշանակում փորձաքննություն, տարբերակում է դատական և արտադատական (գերատեսչական) փորձաքննությունները¹:

Տարբեր երկրներում արտադատական փորձաքննության հետ կապված հարաբերությունները տարբեր կերպ են կարգավորված: Օրինակ՝ ՌԴ օրենսդրությամբ նախատեսված է արտադատական փորձաքննություն նշանակելու հնարավորությունը, որի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ՌԴ դատավարական օրենսգրքերով, այլ նաև առանձին օրենքներով և այլ իրավական ակտերով: ՌԴ օրենսդրության համաձայն՝ փորձաքննությունը կարող է անցկացվել ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական փորձագիտական հիմնարկներում («Ռուսաստանի Դաշնությունում

գիտական կենտրոնները (տես Ա.Ի. Շիրազ. «Անձնագիրը և անձնագիրը՝ նույնականացնելու համար» // <http://kraspubl.ru/content/view/208/64>, 02.06.2011):

¹ Տես Մ.Կ. Տրեուշնիկով. Համաձայն անձնագրի պահպանության օրենսդրության դատավարական ակտերում («Ռուսաստանի Դաշնությունում անձնագրի պահպանության օրենսդրության մասին» օրենք, 2005 թ., հայել 2005 թ. օգոստի 20 թ.)

պետական դատավորձագիտական գործունեության մասին» Ո-Դ դաշնային օրենքը (31.05.2001, № 73-Փ3.), հոդվ. 41), ինչպես փորձագիտական հիմնարկում, այնպես էլ հիմնարկից դրւու (Ո-Դ քր. դատ. օր.-ի 199-րդ հոդվածի, 1-ին և 4-րդ մասեր): Ընդ որում, Ո-Դ օրենսդրությամբ արտադատական փորձաքննությունը կարող է իրականացնել ցանկացած անձ, ով տիրապետում է հասող գիտելիքների՝ անկախ աշխատանքի վայրից (Ո-Դ. քաղ. դատ. օր.-ի հոդվ. 79, Ո-Դ. քր. դատ. օր.-ի հոդվ. 57 և Ո-Դ վարչ. դատ. օր.-ի հոդվ. 55)¹:

Արտադատական կամ, այսպես կոչված, պայմանագրային փորձաքննությունների պրակտիկան կիրառվում է նաև Գերմանիայում (մասնավոր փորձաքննություն - das Privatgutachten)², ԱՄՆ-ում³ և այլ երկրներում:

Գերմանիայում արտադատական կամ մասնավոր փորձաքննությունը դիտվում է որպես փորձաքննության հատուկ տեսակ, որը բնորոշ է հատկապես գերմանական քաղաքացիական դատավարությանը, որտեղ տնօրինչականության սկզբունքը արտահայտվում է նրանում, որ կողմերը մինչև դատարան դիմելն ինքնուրույն կարող են դիմել փորձագետի օգնությանը: Գերմանիայի դատարանակազմությունում մասնավոր փորձագետի ինստիտուտի գոյությունը կարելի է համարել մրցակցության սկզբունքի արդյունք, որտեղ փորձագետ նշա-

² Stiu Ádaðaþýr A.A. Áðaæðaí nœðéé ið í ðið óanñi çáððáaæsí úðo Þóðrái; ó=áá. i í ñi áéa; I . 2008, tþg 77:

³ Վիճակագրությունը հիմնված է պաշտոնական տվյալների վրա, որոնք հրապարակվել են 2006թ. (ավելի մանրամասն տես՝ ծանոթագրությունը՝ նոհանակագիրը՝ N 1(17) 2010):

նակելու իրավունքը պատկանում է ոչ միայն դատարանին, այլև գործին մասնակցող անձանց: Սի կողմից, այս ինստիտուտը դիտվում է որպես գործին մասնակցող անձանց իրավունքների ընդլայնում, իսկ մյուս կողմից՝ այն բավականին թեթևացնում է դատարանի աշխատանքը՝ խնայելով դատավարական ժամկետները¹:

Ի տարբերություն ՌԴ-ի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների, Հայաստանի Հանրապետությունում բացակայում են արտադատական փորձաքննության նորմատիվ իրավական կարգավորումները: Չնայած ՀՀ դատավարական օրենսդրությամբ (քրեական, քաղաքացիական, վարչական) ամրագրված չեն մասնավոր փորձագետի ինստիտուտը, այնուամենայնիվ, դատական պրակտիկայում բազմաթիվ են այնպիսի դեպքերը, երբ գործի քննության ընթացքում պաշտպանության կողմը վարույթն իրականացնող մարմնին է ներկայացնում «փորձագետի եզրակացություն», որը ձեռք է բերել ինքնուրույն, առանց վարույթն իրականացնող մարմնի որոշման՝ այս կամ այն մասնագետի կամ մասնագիտացված կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Միաժամանակ՝ ՀՀ դատական պրակտիկայում փորձագիտական մասնագիտացված հաստատությունների կողմից արտադատական փորձաքննությունների իրականացման արդյունքում տրված փորձագիտական եզրակացությունների օգտագործումը համարվում է թույլատրելի²: Ընդ որում, դատական պրակտիկայում այդ եզրակացություններն օգտա-

¹ Տե՛ս Գражданский процесс зарубежных стран, под ред. А.Г. Давтян, М., 2009, էջեր 79-80:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-168 (ՎԴ) գործով 23.04.2008թ. որոշումը, 4-րդ կետ:

գործվում են որպես ապացույցներ՝ փորձագետի եզրակացության ձևով, և որպես փորձագետի եզրակացություն գնահատվում են մյուս ապացույցների համակցությամբ:

Հիշյալ հարցի հետ կապված՝ պետք է քննարկման առարկա դարձնել ապացույցի այս տեսակի առաջացման (փորձագետի եզրակացության ձեռքբերման) իրավաչափությունը և դրա հավաստիությունը, գործի քննության ընթացքում արտադրատական կարգով ձեռք բերված փորձագիտական եզրակացությունը որպես ապացույց օգտագործելու հնարավորություններն ու դրա բույլատրելիության սահմանները:

Նախ՝ չպետք է մոռանալ, որ փորձագետը նախազգուշացվում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվության մասին: Հետևաբար, փորձագետը քրեական պատասխանատվության սպառնալիքի ներքո արդեն կաշկանդված է կեղծ եզրակացություն տալու հարցում, ինչը բավարար երաշխիք է փորձագետի օրյեկտիվության, անաշառության ապահովման և, դրանով իսկ, նրան վստահելու համար:

Սակայն, արդյո՞ք արտադատական կարգով «նշանակված» փորձագետը նախազգուշացվում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, և արդյո՞ք նման նախազգուշացումը կարող է առաջացնել իրավական հետևանքներ:

Այս առումով, անհրաժեշտ է նախ անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում քաղաքացիական գործով սուտ ցուցմունք տալու, քրեական գործով վկայի կամ տու-

ժողի կողմից սուտ ցուցմունք տալու, քրեական կամ քաղաքացիական գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու (ընդգծումը մերն է՝ հ.խ.), թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար¹:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն՝ փորձաքննությունը նշանակում են հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը (վարույթն իրականացնող մարմինը)²:

Կամ, ՀՀ քր. դատ. օր.-ի 85-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Փորձագետը քրեական գործով չշահագրգոված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության դեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար։ Փորձագետը կարող է նշանակվել դատավարության մասնակցի առաջարկած անձանցից»³։

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Դատարանում որպես

¹ Մանրամասն տես **Առաքելյան Ս., Գարուզյան Ա. և ուրիշներ**, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հասուն մաս (4-րդ հրատ., լր. և փոփ.), Եր., 2004, էջեր 846-850:

² Փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի հետ կապված մանրամասն կիսումի ստորև:

³ Հասուն գիտելիքների պատկանելության բնագավառների սպառիչ թվարկման վոլուստն, որի մասին արդեն խոսել ենք նախորդ պարագրաֆում, այս հոդվածում նույնպես բնագավառներն անհրաժեշտ է շարադրել ոչ սպառիչ թվարկով:

փորձագետ կարող է հանդես գալ համապատասխան որակա-
վորում ունեցող¹ և սույն օրենսգրքով նախատեսված դեպքե-
րում և կարգով դատարանի կողմից նշանակված անձը»:

ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օ-
րենսգրքերի վերը նշված դրույթներից հետևում է, որ անձը
փորձագետի կարգավիճակ է ձեռք բերում հետաքննության
մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի կամ դատարանի
համապատասխան որոշումը կայացնելու պահից: Այդ պահով
է պայմանավորված փորձագետի իրավունքների իրականաց-
ման և պարտականությունների կատարման սկիզբը, այդ
թվում նաև՝ փորձաքննություն կատարելու և եզրակացություն
տալու պարտականությունը: Այլ կերպ ասած՝ առանց գործի
քննությունն իրականացնող մարմնի որոշման՝ դատավարա-
կան օրենսգրքերի իմաստով փորձաքննության (դատական
փորձաքննության) մասին խոսելն ավելորդ է: Փորձագետի եզ-
րակացությունը, որը ստացվել է դատավարական օրենսդրութ-
յամբ սահմանված կարգավորման շրջանակներից դուրս, փոր-
ձագետի եզրակացության՝ որպես ապացույցի ինքնուրույն
տեսակի կարգավիճակ ունենալ չի կարող, քանի որ այդպիսի
փորձաքննություն իրականացրած անձինք չունեն փորձագե-
տի կարգավիճակ այդ բառի դատավարական իմաստով, չու-
նեն այն իրավունքները և պարտականությունները, որոնք
փորձագետի համար նախատեսված են դատավարական
օրենքով, չեն նախազգուշացվում ակնհայտ կեղծ եզրակա-
ցություն տալու համար նախատեսված քրեական պատաս-

¹ Տե՛ս, օրինակ, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում դատական փորձագետի որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 28.02.2000թ. թիվ 151 հրամանը, ՀՀԳՆԱԾ 2000/3 (45), 31.03.00թ.:

խանատվության մասին: Հետևաբար, այդպիսի փորձաքննության արդյունքը դատարանը չի կարող ընդունել որպես փորձագետի եզրակացություն:

Վերը շարադրվածը նշանակում է, որ գործով փորձագիտական եզրակացություն տված անձը, որը նշանակվել է ոչ թե վարույթն իրականացրած անձի կողմից, այլ որպես այդպիսին ընտրվել է դատավարության մասնակցի կողմից արտադատական կարգով՝ պայմանագրային հիմունքներով, առանց դատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգի պահպանման, իր դատավարական կարգավիճակով չի կարող համարվել փորձագետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով և, հետևաբար, նաև՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության (քրեական կամ քաղաքացիական գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալը) հատուկ սուբյեկտ: Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի դիսպոզիցիայից հետևում է, որ այս հանցակազմն առկա է միայն այն դեպքում, եթե փորձագետի կողմից կեղծ՝ իրականությանը չհամապատասխանող եզրակացությունը տրվել է կոնկրետ քաղաքացիական կամ քրեական գործով, հակառակ դեպքում քննարկվող հանցակազմը բացակայում է:

Այսպիսով, արտադատական կարգով ընտրված փորձագետը քրեական պատասխանատվություն չի կրում ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար և, հետևաբար, չի նախազգուշացվում հնարավոր քրեական պատասխանատվութ-

յան մասին: Նման պայմաններում, փաստորեն, արտադատական կարգով ընտրված փորձագետի եզրակացության արժանահավատության ապահովման օրենսդրական համապատասխան երաշխիքը բացակայում է, քանի որ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելը փորձագետի օբյեկտիվության, անաշառության առաջնային նախապայմաններից է:

Միևնույն ժամանակ ծագում է արտադատական կարգով ձեռք բերված փորձագիտական եզրակացությունը դատավարական օրենսդրությամբ նախատեսված ապացույցների այս կամ այն տեսակների շարքը դասելու անհրաժեշտությունը, քանի որ այդ եզրակացությունը դրանում գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակելու ուժով պետք է օգտագործվի որպես ապացույց:

Կարծում ենք՝ քրեական դատավարությունում արտադատական կարգով ձեռք բերված և պաշտպանության կողմից վարույթն իրականացնող մարմնին ներկայացված փորձագիտական եզրակացությունը քրեական գործով վարույթի ընթացքում հետաքննության մարմնի, քննիչի կամ դատարանի կողմից կարող է ճանաչվել և օգտագործվել որպես «այլ փաստաթուղթ» ապացույցի տեսակ:

ՀՀ քր. դատ. օր.-ի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները»:

Ինչ վերաբերում է քաղաքացիական դատավարությանը, ապա քաղաքացիական դատավարությունում արտադատական կարգով ձեռք բերված փորձագիտական եզրակացությունը կարող է օգտագործվել որպես *գրավոր ապացույց*: Այս տեսանկյունից, արդարացի է Մ.Կ. Տրեուշնիկովի տեսակետը, ըստ որի՝ արտադատական փորձաքննությունների արդյունքում ձեռք բերված փորձագետի եզրակացությունը քաղաքացիական և արքիտրաժային դատավարություններում դիտվում է որպես գրավոր ապացույց և ենթարկվում է գրավոր ապացույցներին բնորոշ ստացման, հետազոտման և գնահատման ռեժիմին¹:

Վերը շարադրվածը նշանակում է, որ եթե փորձաքննությունը կատարվել է վարույթն իրականացնող մարմնի կողմից չնշանակված անձի կողմից՝ առանց պահպանելու դատավարական օրենսդրությամբ նախատեսված պահանջը, ապա իրականացված հետազոտությունը, դատավարական օրենսգրքերի իմաստով, չի կարող համարվել դատական փորձաքննություն: Հետևաբար, նման հետազոտության արդյունքում տրված փորձագիտական եզրակացության ձեռքբերման, հետազոտման և գնահատման նկատմամբ դատական փորձաքննությանը վերաբերող ռեժիմի տարածումը չի կարող արդարացի համարվել:

Միաժամանակ, պետք է հաշվի առնել նաև, որ եթե այլ փաստաթղթերի կամ գրավոր ապացույցների ձեռքբերման և հետազոտման ռեժիմի կիրառումը արտադատական փորձաքննության արդյունքում կազմված փորձագիտական եզրա-

¹ Տե՛ս *Третяничков М.К.* Судебные доказательства, М., 2005, էջ 205:

կացության նկատմամբ առավել նպատակահարմար է, ապա նույնը չի կարելի ասել այդ եզրակացության գնահատման մասին: Բանն այն է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից փորձագետի եզրակացության գնահատման ենթակա հատկանիշ է հանդիսանում եզրակացության գիտական հիմնավորվածությունը կամ, այսպես կոչված՝ եզրակացության գիտական արժանահավատությունը: Այսինքն՝ գիտական հիմնավորվածության հատկանիշը փորձագիտական եզրակացության, այլ ոչ թե այլ փաստաթրին կամ գրավոր ապացույցին բնութագրական հատկանիշ է:

Ընդ որում, գիտական հիմնավորվածությունը գնահատելիս հաշվի է առնվում փորձագետի կողմից կիրառված մեթոդների վստահելիությունը, փորձագետի ձեռնիասությունը, փորձաքննության կատարումը փորձաքննության առարկայի շրջանակներում¹ և այլն: Ահա այս չափանիշներով որևէ այլ փաստաթուղթ կամ գրավոր ապացույց չի կարող գնահատվել, քանի որ թվարկված հատկանիշները բացառապես փորձագետի եզրակացությանը բնութագրական հատկանիշներ են: Հարց է առաջանում՝ արդյո՞ք արտադատական փորձաքննության արդյունքում ձեռք բերված փորձագիտական եզրակացությունը պետք է գնահատել որպես այլ փաստաթուղթ կամ գրավոր ապացույց, թե՝² որպես փորձագիտական եզրակացություն: Կարծում ենք, քննարկվող հարցի լավագույն լուծումը որոշակի միջին տարրերակի ընտրությունն է. այդ եզրակացությունների ձեռքբերման և հետազոտման նկատմամբ

¹ Մասնրամասն տես՝ **Դավթյան Լ. Զ.**, Հեղինակագետ-փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության գնահատումը վարույթն իրականացնող մարմնի կողմից // Օրինականություն, Երևան, 2010, № 60, էջեր 23-30:

կիրառել այլ փաստաթղթերին կամ գրավոր ապացույցներին, իսկ գնահատման հարցում՝ փորձագետի եզրակացությանն առնչվող դրույթները:

Նույն համատեքստում, հարկ է նկատել, որ եթե արտադատական փորձաքննության կարգով ստացված փորձագիտական եզրակացության գիտական հիմնավորվածությունը կասկած է հարուցում արժանահավատության տեսանկետից, աա հարց է առաջանում՝ համապատասխան եզրակացության մեջ շարադրված փաստերի հիմնավորվածությունը ճշտելու համար ինչպիսի^o փորձաքննություն է անհրաժեշտ նշանակել՝ սկզբնակա՞ն, լրացուցի՞չ, թե՞ կրկնակի: Մեր կարծիքով, նման դեպքերում պետք է նշանակվի ոչ թե լրացուցիչ կամ կրկնակի, այլ սկզբնական փորձաքննություն: Բանն այն է, որ ինչպես արդեն նշել ենք, քանի որ արտադատական փորձաքննության ժամանակ փորձագետները չեն նախազգուշացվում ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, փորձաքննությունը չի անցկացվում որոշակի դատավարական կարգով, փորձաքննությունը չի կրում դատավարական բնույթ, հետևարար, նման փորձաքննությունը դատավարական օրենսդրության իմաստին համապատասխան փորձաքննություն համարվել չի կարող և պետք է նշանակել սկզբնական, այլ ոչ թե լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն, քանի որ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունները բոլոր դեպքերում հաջորդում են սկզբնական փորձաքննությանը: Բացի դրանից, կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն նշանակվում է միայն սկզբնական եզրակացության ոչ բավարար չափով լրիվ, պարզ, անարժանահավատ կամ հակասական լինելու դեպքում: Այսինքն՝ եթե

սկզբնական փորձաքննությունը՝ որպես այդպիսին, քրեադատավարական օրենսդրությանը համապատասխան չի իրականացվել, հետևաբար, չի տրվել փորձագիտական եզրակացություն, որի հակասականությունը, անբավարությունը կամ ոչ պարզությունը կարող է հիմք հանդիսանալ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու համար: Ստացվում է՝ նշված դեպքում անհրաժեշտ է նշանակել սկզբնական փորձաքննություն:

Անփոփելով արտադատական փորձաքննության ինստիտուտի վերաբերյալ քննարկումը՝ ավելացնենք, որ ներկայիս ինստեգրման ժամանակաշրջանում, եթք զարգանում է պետությունների համագործակցությունը քրեական, քաղաքացիական, ընտանեկան և այլ գործերով իրավական օգնության շրջանակներում, մեծանում են արտադատական փորձաքննությունների կիրառման և դրանց արդյունքների օգտագործման հնարավորությունները: Ուստի դատավարական օրենսդրությամբ արտադատական փորձաքննության նախատեսումն ու արդյունավետ կարգավորումը չափազանց կարևոր նշանակություն ունեն քրեական և այլ գործերով ՀՀ միջազգային համագործակցության խթանման և օտար-երկրյա ու միջազգային իրավունքին համահունչ ՀՀ օրենսդրության զարգացման համար: Այդ առումով, կարծում ենք, ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ (նաև քաղաքացիական) անհրաժեշտ է նախատեսել և իրավական կարգավորման ենթարկել նաև արտադատական փորձաքննությունը և դրա արդյունքում ձեռք բերված փորձագիտական եզրակացության օգտագործման հետ կապված իրավահարաբերությունները՝ հաշվի առնելով միջազգա-

*յին փորձն ու օտարերկրյա պետությունների իրավունքի և
պրակտիկայի զարգացման հեռանկարները:*

Քննարկելով փորձաքննություն նշանակելու կարգի առանձնահատկությունները՝ հարկ է անդրադառնալ նաև ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուր-յեկտների շրջանակին: Այդ շրջանակի հստակ սահմանումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն ներպետական մակարդակով հանցագործությունների քննության գործընթացում, այլ նաև քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում փորձաքննության նշանակման, կատարման և փորձագետի եզրակացության ձեռքբերման և գնահատման գործում:

ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածի համաձայն՝ «Փոր-ձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի աշ-խատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա, եթք քրեական գործով նշանակություն ունեցող հանգանանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հե-տազոտությունների մեթոդիկայի, քննազավառներում հատուկ գիտելիքներ: Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետների, լճարականների հատուկ գի-տելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:

Նշված քրեադատավարական դրույթում, փաստորեն, փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուր-

յեկտների շրջանակի մեջ ՀՀ օրենսդիրն ընդգրկել է *հետաքննության մարմնի աշխատակցին,քննիչին և դատախազին*:

Անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե որքանո՞վ է ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ամբողջական և ճիշտ թվարկել փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների՝ փորձաքննության նախաձեռնողների շրջանակը, նշված սուբյեկտների շրջանակի մեջ ընդգրկված են, արդյոք, նման իրավասություն ունեցող բոլոր սուբյեկտները, ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածում նշված չեն, արդյոք այնպիսի սուբյեկտներ, որոնք իրենց դատավարական կարգավիճակից ելնելով դատական փորձաքննություն նշանակելու իրավասություն չունեն:

Ինչպես նշեցինք, ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածում փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող առաջին սուբյեկտը *հետաքննության մարմնի աշխատակցին* է: Նշված հոդվածից կարելի է ենթադրել, որ հետաքննության մարմնի պետք փորձաքննություն նշանակելու լիազորությանք օժտված չէ, քանի որ այդ հոդվածում օրենսդիրը սահմանափակվել է ընդամենը հետաքննության մարմնի աշխատակցի մասին նշումով: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսդրի վերլուծությունը ցույց է տալիս, որ հետաքննության մարմնի պետք նույնական օժտված է փորձաքննություն նշանակելու իրավասությամբ:

ՀՀ քր. դատ. օր.-ի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Հետաքննության մարմինը՝*

- *մինչև քրեական գործ հարուցելը նախապատրաստվող նյութերով կատարում է դեպքի վայրի զննություն, հետազոտման համար վերցնում է նմուշներ և նշանակում փորձաքննություն (ՀՀ քր. դատ. օր. 57 հոդվ. 2-րդ մասի 2-րդ կետ):*
- *քրեական գործ հարուցելոց հետո հանցագործություն կատարած անձին հայտնաբերելու, հանցագործության հետքերը*

հայտնաբերելու և ամրապնդելու ուղղությամբ կատարում է քննչական անհետածգելի գործողություններ՝ զննություն, խուզարկություն, նաև ակազրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների լուսն, առջրավում, քննում, կասկածյալի ձերքակալում ու հարցաքննություն, տուժողների և վկանների հարցաքննություն, առերեսում, նշանակում է փորձաքննություն (ՀՀ քր. դատ. օր. 57 հոդվ. 2-րդ մասի 5-րդ կետ) (ընդգծումները մերն են՝ հ.ի.):

ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածում տեղ գտած հիմնական հասկացություններին համապատասխան՝ հետաքննության մարմինը քրեական դատավարության օրենսգրքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետը և աշխատակիցներն են (ՀՀ քր. դատ. օր. 6 հոդվ. 27-րդ կետ):

Այսինքն՝ ըստ ՀՀ քրեադատավարական օրենսդրության տրամաբանությամբ «հետաքննության մարմին» հասկացությունը ներառում է հետաքննության մարմնի պետին և աշխատակիցներին: Ընդ որում, հետաքննության մարմնի պետն ապահովում է հետաքննության մարմնի լիազորությունների կատարումն անձանք և հետաքննության մարմնի աշխատակիցների միջոցով (ՀՀ քր. դատ. օր. 57 հոդվ. 1-ին մաս):

Բացի դրանից, ՀՀ քր. դատ. օր.-ի 57-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում թվարկվում են հետաքննության մարմնի բացառիկ իրավասությունները, որոնք բացառապես պատկանում են վերջինիս:

Այսպես, քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու, կասկածյալին ձերքակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու, այն վերացնելու կամ փոփոխելու, համապատասխան քննչական գործողությունը և այլ գործությունները, որոնք պատկանում են վերջինիս:

յուններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար դատարանին միջնորդությամբ դիմելու, գործը քննիչին հանձնելու մասին հետաքննություն կատարող անձի կողմից կայացված որոշումները հաստատվում են հետաքննության մարմնի պետի կողմից (ՀՀ քր. դատ. օր. 57 հոդվ. 3-րդ մաս):

Հետաքննության մարմնի պետն իրավունք ունի հետաքննության մարմնի աշխատակցին հանձնարարել հանցագործության դեպքով կատարել հետաքննություն, նրան տալ պարտադիր գրավոր ցուցումներ առանձին քննչական գործողություններ կատարելու մասին, գործը մի աշխատակցից հանձնել մյուսին, գործի քննությունը հանձնարարել մի քանի աշխատակիցների, մասնակցել հետաքննության կատարմանը և անձամբ կատարել հետաքննություն (ՀՀ քր. դատ. օր. 57 հոդվ. 4-րդ մաս):

Այսինքն՝ բացի հետաքննության մարմնի աշխատակցին բնութագրական լիազորություններն իրականացնելուց, հետաքննության մարմնի պետն իրավասու է կատարել նաև վերը թվարկված բացառիկ իրավասությունները, որոնք հետաքննության մարմնի աշխատակիցն իրականացնելու իրավասություն չունի:

Այսպիսով, վերը շարադրված հոդվածներից հետևում է, որ հետաքննության մարմնի պետը, որպես հետաքննության մարմնին, իրավունք ունի անձամբ իրականացնել հետաքննություն, այդ թվում՝ նշանակել փորձաքննություն ինչպես մինչև քրեական գործ հարուցելը, այնպես էլ դրանից հետո: Հետևաբար, ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածում հետաքննության մարմնի պետին չնախատեսելը որպես փորձաքննություն նշանակելու

իրավասությամբ օժտված սուրյեկտի, կարծում ենք, ՀՀ քրեա-
դատավարական օրենսդրության բացքողումներից է: Ուստի,
նշված հոդվածում փորձաքննությունը նախաձեռնող սուր-
յեկտների շրջանակն անհրաժեշտ է լրացնել հետաքննության
մարմնի պետով կամ հոդվածում անհրաժեշտ է պարզապես
նշել ոչ թե հետաքննության մարմնի աշխատակից, այլ հե-
տաքննության մարմին:

Փորձաքննություն նշանակելու քննիչի իրավասությունը
լիովին հիմնավորված է, այդ իսկ պատճառով, կարծում ենք,
այդ հարցի լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն չկա,
քանի որ քննիչը, որպես նախաքննության մարմին, քրեական
գործն իր վարույթն ընդունելուց հետո գործի բազմակողմանի,
լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն
ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշում-
ներ, քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին հա-
մապատասխան իրականացնել քննչական և այլ դատավա-
րական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ
քրեական դատավարական օրենքով նախատեսվում է դատա-
րանից ստանալ թույլտվություն: Քննիչը պատասխանատվութ-
յուն է կրում քննչական և այլ դատավարական գործողություն-
ներն օրինական ու ժամանակին կատարելու համար (ՀՀ քր.
դատ. օր. 55 հոդվ. 3-րդ մաս):

Փորձաքննությունը նախաձեռնելու իրավասություն ունե-
ցող սուրյեկտների հետ կապված՝ հատկապես անհրաժեշտ է
քննարկման առարկա դարձնել դատախազի իրավասությունը
փորձաքննություն նշանակելու հարցում:

ՀՀ քր. դատ. օր.-ի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
«Դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված

պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները: «Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը կոչվում է մեղադրող»:

Հայտնի է, որ ՀՀ դատաիրավական բարեփոխումների արդյունքում էապես վերանայվեցին նաև դատախազության գործառույթների համակարգը, վերջինիս տեղի ու դերը պետական մարմինների համակարգում¹: 2007թ. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի² ընդունումից և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի փոփոխություններից հետո դատախազությունը զոկվեց քննություն իրականացնելու իր ավանդական գործառույթից, և դատախազությանը վերապահվեց ընդամենը քրեական հետապնդման, քննության նկատմամբ հսկողություն իրականացնելու և դատավարական դեկավարման գործառույթները:

Այսպես, մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28.11.07թ. ՀՕ-270-Ն փոփոխությունները³, օրենսգրքի 53-րդ - հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում էր, որ «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝ ... անձամբ քննել գործը լրիվ ծավալով՝ օրենսգրքի դրույթներին

¹ Մանրամասն տե՛ս **Դիրամյան Ս., Հարուբյոնյան Ա., Ղազիմյան Գ., Շոկասյան Հ., Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները**, Եր., 2009, էջեր 269-273:

² Ընդունվել է 22.02.2007թ., ուժի մեջ է մտել 01.05.2007թ., ՀՀՊՏ 2007/9 (543), 11.04.07թ.:

³ Տե՛ս ՀՀՊՏ 2007.12.26/66(590):

համապատասխան՝ նախաքննության ընթացքում ընդունելով անհրաժեշտ որոշումներ և իրականացնելով քննչական և այլ դատավարական գործողություններ...»:

Այսինքն՝ մինչև քրեադատավարական օրենսդրության 28.11.2007թ. համապատասխան փոփոխությունները ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը դատախազին լիազորում էր անձամբ իրականացնել քննչական գործողություններ, այդ թվում՝ նշանակել փորձաքննություն: 28.11.2007թ. օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչվեց, ինչի հետևանքով դատախազությունը զրկվեց ինքնուրույն քննչական գործողություններ կատարելու, այդ թվում՝ փորձաքննություն նշանակելու իրավասությունից:

Ստացվում է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածի 1-ին մասում փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շարքում դատախազին նախատեսելը հակասում է դատախազության դերին և նրա կողմից իրականացվող՝ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված գործառույթներին: *Ուստի ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածի 1-ին մասում դատախազին որպես փորձաքննության նշանակման նախաձեռնող սուբյեկտ նախատեսելու անհրաժեշտություն չկա, և անհրաժեշտ է նշված դրույթից դատախազին համել փորձաքննություն նախաձեռնողների շրջանակից:* Կարծում ենք, նշված սուբյեկտների շարքում դատախազի նախատեսումը ՀՀ օրենսդրի անհետևողականության արդյունք է, քանի որ դատախազի գործառույթների վերանայման արդյունքում օրենսդրական փոփոխություններից հետո համապա-

տասխան փոփոխություններ չեն կատարվել նաև այլ հոդվածներում, այդ թվում՝ նշված հոդվածում:

Իրենից հետաքրքրություն է ներկայացնում այն, թե դատարանը չի¹ մտնում, արդյոք, ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փորձաքննություն նախաձեռնողների շարքում:

ՀՀ քր. դատ. օր.-ի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը լիազորված է իր նիստերում քննել և լուծել ստացված գործերը և նյութերը:

Միցակցային դատավարության պայմաններում քրեական գործերի քննության գործընթացում մեղադրանքի և պաշտպանության իրավահակասար կողմերի ակտիվ մասնակցությամբ ընթացող դատավարությունում ՀՀ դատարանը հանդես է գալիս անկախ արքիտրի դերում, որի հիմնական գործառույթը գործի ըստ էության լուծումն է¹: Միևնույն ժամանակ, գործի դատական քննության փուլում դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ: Այս կապակցությամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 331-րդ հոդվածի 3-րդ մասը դատարանին իրավունք է վերապահում սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել վկաներ կանչելու, փորձաքննություն նշանակելու, այլ ապացույցներ պահանջելու մասին: Այսինքն՝ նշված հոդվածում ուղղակիորեն խոսվում է դատարանի՝ փորձաքննություն նշանակելու իրավասության մասին: Բացի դրանից, քրեա-

¹ Տե՛ս Դիլանյան Ս., Հարությունյան Ա., Ղազինյան Գ. և ուղիւնելու, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունք: Ընդհանուր մաս, Եր., 2006, էջեր 289-290:

կան գործի քննության և լուծման գործընթացում դատարանն իրականացնում է ՀՀ քր. դատ. օր.-ի 121-րդ հոդվածով նախատեսված դատական գործողություններ, որոնց արդյունքներն արտահայտվում են համապատասխան դատական գործողությունների արձանագրություններում, որոնք ել քրեական գործով վարույթի ընթացքում կարող են օգտագործվել որպես ապացույցներ գործով ճշմարտությունը բացահայտելու համար: Ընդունում, հատուկ գիտելիքներ պահանջող հանգամանքները հաստատելու անհրաժեշտության դեպքում դատարանն իրավասություն է նշանակել փորձաքննություն և դրա կատարումը հանձնարարել համապատասխան բնագավառի մասնագետին փորձագիտական եզրակացություն ստանալու համար՝ այն գործով որպես ապացույց օգտագործելու նպատակով: Այսինքն՝ դատարանի համար դատական գործողություններ իրականացնելու իրավասություն նախատեսելը և փորձաքննություն նշանակելու իրավունք չնախատեսելն անտրամաբանական են ու հակասական: Հետևարար, ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածի 1-իմ մասում փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակն անհրաժեշտ է լրացնել նաև դատարանով, առավել ևս, եթե հաշվի առնենք, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 331-րդ հոդվածի 3-րդ մասում ուղղակիորեն խոսվում է փորձաքննություն նշանակելու՝ դատարանի իրավասության մասին:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք, ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«Փորձաքննությունը կատարվում է **հետաքննության** մարմնի, **քննիչի**, **դատարանի** որոշման հիման վրա, եթե քրեա-

կան գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի, կամ այլ բնագավառներում հատուկ գիտելիքներ: Հետաքննության մարմնի, քննիչի, դատարանի, մասնագետների, ընթերականների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:

Ընդ որում, նույն սուբյեկտների շրջանակն անհրաժեշտ է նախատեսել նաև լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունները կարգավորող քրեադատավարական դրույթներում՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 251-րդ հոդվածում, քանի որ այդ դրույթներում որպես լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն նշանակելու իրավասությամբ օժտված սուբյեկտներ են թվարկված դարձյալ հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը և դատախազը:

Նույն համատեսքում, ՀՀ քր. դատ. օր.-ի 248-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, որոնք կարգավորում են փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկում, 249-րդ հոդվածի 1-ին մասում, որը կարգավորում է փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկից դուրս, ինչպես նաև փորձագետի հարցաքննությունը կարգավորող ՀՀ քր. դատ. օր.-ի 252-րդ հոդվածում խոսքը վերաբերում է միայն քննիչին: Այնինչ, ինչպես արդեն քննարկել ենք ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածը, փորձաքննության նախաձեռնող սուբյեկտներ են հանդիսանում նաև հետաքննության մարմինը և դատարանը: Ուստի նշված հոդվածներում, քննիչից բացի, անհրաժեշտ է համապատասխան իրավասություններով օժտել նաև հետաքննության մարմնին և դատարանին:

ՀՀ քր. դատ. օր.-ի 244-րդ հոդվածում, որը կարգավորում է փորձաքննություն նշանակելու մասին որոշման կառուցվածքն ու բովանդակությունը, նման որոշում կայացնելու իրավասությամբ օժտել է քրեական հետապնդման մարմնին: ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 22-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդման մարմիններն են՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը: Փաստորեն, ՀՀ քր. դատ. օր.-ի 244-րդ հոդվածն անարդարացիորեն փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելու իրավասությամբ օժտել է դատախազին և նման որոշում կայացնելու իրավասությունից զրկել դատարանին:

Այսպիսով, փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի վերաբերյալ քրեադատավարական դրույթները, մեր կարծիքով, բոլորովին հակասական են, թերի ու անկատար, ուստի վերանայման կարիք ունեն: Այդ հակասականության վերացման առաջին ճանապարհը արտադատական փորձաքննության ինստիտուտի նախատեսումն է և դրա մանրամասն իրավական կարգավորումը, ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածում փորձաքննություն նշանակող սուբյեկտների հստակ և լրիվ շրջանակի ամրագրումն է: Ընդ որում, փորձաքննության նշանակման հետ կապված այլ հոդվածներում այդ սուբյեկտների ամբողջական շարքը անընդհատ թվարկելուց և կրկնություններից խուսափելու համար առաջարկում ենք ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածում՝ քրեադատավարական հիմնական հասկացություններում փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտներին կոչել փորձաքննություն նախաձեռնող կամ փորձաքն-

Առողջում նշանակող անձ¹: Այսպիսի մոտեցումն իրավաբանական տեխնիկայի առումով առավել մատչելի կդարձնի քրեադատավարական համապատասխան դրույթների կիրառումը:

**§ 3. Դատական փորձաքննությունների արդի վիճակը և
զարգացման հեռանկարները Հայաստանի
Հանրապետությունում**

Պետք է նշել, որ գործնականում արդարադատության և իրավապահ մարմինները, փորձաքննություններ նշանակելիս, հաճախ են զգում անհրաժեշտ տեղեկատվության պակաս:

Հասարակական հարաբերությունների զարգացման արդի շրջանում տարրեր գիտությունների համագործակցության և ինտեգրման գործընթացներն աննախադեպ ծավալների են հասել: Ընդ որում, դա տեղի է ունենում առանց հաշվի առնելու, թե այս կամ այն երկիրը ինդրուստրիալացման ու արդիականացման ինչ ճանապարհ է անցել:

Դեպի տեղեկատվական հասարակություն անցման ներկա փուլում բազմաթիվ ներքին ու արտաքին մարտահրավերներին ու ճգնաժամային երևույթներին դիմակայելու, հայունուն, հաճախ ոչ կառուցողական տեղեկատվական հոսքերի բացասական ազդեցությունը չեզոքացնելու կամ գոնե բուլաց-

¹ Ուշագրավ է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 249-րդ և 250-րդ հոդվածներում խոսվում է «փորձաքննություն նշանակած» և «փորձաքննություն նշանակող անձի» մասին: Ցավոք, օրենսդիրը չի հստակեցրել փորձաքննություն նշանակող անձի օրենսդրական հասկացությունը, և այդ նույն հասկացությունը չի կիրառել բոլոր անհրաժեշտ դեպքերի համար:

նելու, հանցավորության այդ թվում՝ կիրեռհանցավորության աճը կանխելու առումով, մեծ են սպասելիքները հատկապես գիտությունից¹:

Հարկ է նշել, սակայն, որ շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում, այս հիմնախնդրի լուծմանն ուղղված ջանքերը հեռու են բավարար լինելուց: Պատճառն այն է, որ տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների տարածման ու զարգացման արդի պայմաններում կատարելագործվում են նաև հանցագործությունների կատարման եղանակները: Իսկ տեղեկատվության շրջանառության դեմ ուղղված ոտնձգություններն այնքան շատ դրսորումներ են ստացել և այնքան բազմաթիվ են, որ օրախնդիր է դարձել տեղեկատվական անվտանգության գծով լայն պրոֆիլի մասնագետների պատրաստման հարցը:

Արդի պայմաններում անձի, հասարակության և պետության անվտանգությունն էականորեն կախված է տեղեկատվական անվտանգության ապահովումից, և այդ կախվածությունը մեծանում է գիտատեխնիկական առաջընթացին զուգահեռ:

Կիրեռհանցագործությունների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանք կատարվում են ոչ թե իրական կյանքում, այլ վիրտուալ միջավայրում²: Այդ իսկ պատճառով դրանց կատարման հետքերը չեն մնում նյութական օբյեկտների վրա և արտահայտվում են ոչ թե հետք առաջացնող օր-

¹ Տե՛ս *Оհանջյան Լ. Պ., Քիմակցյան Ա.Լ.* Կրիմինալիստիկայի նվաճումների օգտագործման հնարավորությունները տեղեկատվական անվտանգության ոլորտում // Պետություն և իրավունք, Երևան, ՀՀ իրավաբանների միություն, 2009, № 4 (46), էջ 4:

² Տե՛ս *Старостина Е. В., Фролов Д. Б.* Зашита от компьютерных преступлений и кибертерроризма. Москва, 2005, էջ 5:

յեկտների արտապատկերների տեսքով, այլ մնում են համակարգիչների, այլ սարքերի և համակարգչային տեղեկույթի մեքենայական կրիչների վրա:

Իրավիճակը բարդանում է այն առումով, որ համաշխարհային մեծածավալ կիրեռտիրույթում (ինտերնետ և այլ ցանցեր) կատարվող հանցավոր ոտնագույթյան փաստն ինքնին շատ դժվար է գրանցել (ֆիքսել). սահմանված չեն դրա համար ահնամաթեշտ այնպիսի տեխնիկական չափորոշիչներ, որոնք ունեն համընդհանուր կիրառություն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության համար առավել արդիական է պայքարը թշնամաբար տրամադրված պետություններից եկող հաքերական հարձակումների, վիրուսաբեր ծրագրերի տարածման ու նմանատիպ այլ քայլքայիշ գործողությունների դեմ¹:

Նման իրավիճակում հասարակությունն ակնկալում է իրեն սպառնացող երևույթների ու գործընթացների կանխման ու խափանման գործուն, գիտականորեն հիմնավորված, արդյունավետ լուծումներ:

Ելնելով հանցավորության դեմ պայքարի պահանջներից՝ այդ պայքարի տարբեր կողմերը և ուղղություններն ուսումնասիրող գիտություններն ու տեսությունները գտնվում են մշտական զարգացման ու որոնումների վիճակում: Դրա նպատակն է գտնել հանցավորության դեմ պայքարի տեսական և գործնական հիմնախնդիրների առավել արդյունավետ լուծումներ, որոնք թույլ կտան դյուրացնել և կատարելազործել իրավա-

¹Տե՛ս *Մարտիրօսյան Ս.* Վօռօսք կիբեռեզօնությունների պահանջներին // Տեղեկատվական անվտանգություն. «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր. № 2, 2008, էջ 6-8:

պահպան մարմինների աշխատանքը, ստեղծել հանցավոր ուսնագություններից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, հասարակության և պետության շահերի պաշտպանության հուսալի երաշխիքներ:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող փորձաքննությունների տարբեր տեսակներ գտնվում են զարգացման տարբեր մակարդակներում: Դրանցից մի քանիսը գոյություն ունեն տասնամյակներ շարունակ, մի քանիսը նոր են ստեղծվել, մյուսները՝ դիտարկվում են դատական փորձաքննությունների ընդհանուր զարգացման հեռանկարում: Այս ենթատեքստում հարկ է նաև նկատի ունենալ նոր փորձաքննությունների իրականացման և դրանց փոխակերպման գործընթացի զարգացումը՝ փորձաքննությունների նոր տեսակների ի հայտ գալը, փորձաքննությունների ձևերի փոխակերպումն ինքնուրույն տեսակների:

Այդ պահանջով էլ պայմանավորված անհրաժեշտ է Հայաստանում զարգացնել հասուլ գիտելիքների լայն կիրառումը և փորձագիտական հիմնարկների զարգացումն ու զինումը ժամանակակից տեխնիկական միջոցներով:

Հայաստանի Հանրապետությունում այժմ գործում են մի քանի փորձագիտական կենտրոններ. ՀՀ ԱՆ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, ՀՀ ԱՆ «Հայաստանի Հանրապետության դատական բժշկության գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ՀՀ Ոստիկանության «Հայաստանի Հանրապետության ոստիկանության փորձաքրեագիտական վարչություն» ՊՈԱԿ-ը, ՀՀ Պաշտպանության նախարարության «Ռազմական ոստիկանության փորձագի-

տական բաժին» ՊՈԱԿ-ը և ԵՊՀ «Կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների պրոբլեմների հետազոտման գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ը:

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպութունը որպես կրիմինալիստիկայի գիտահետազոտական լաբորատորիա կազմակերպվել է ԵՊՀ-ում՝ կառավարության 1959թ. ապրիլի 25-ի N149 որոշմամբ: 1966 թվականից այն անցել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի իրավաբանական հանձնաժողովի, իսկ 1971 թվականին՝ Արդարադատության նախարարության ենթակայության տակ: 1998 թվականին այն վերանվանվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոն» պետական հիմնարկ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N1933-Ն որոշմամբ նշված պետական հիմնարկը վերակազմավորվել է որպես «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության¹:

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության նպատակներն են հանդիսանում փորձագիտության զարգացումը, փորձաքննությունների, այլ գիտահետազոտական, գիտատեխնիկական, գի-

¹ Տե՛ս ««Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոն» պետական հիմնարկը «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 26.11.1998թ. թիվ 744 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»»ՀՀ կառավարության 28.11.2002թ. թիվ 1933-Ն որոշում, ՀՀՊՏ 2002/60 (35), 30.12.02թ.:

տամեթողական աշխատանքների կազմակերպումը և կատարումը, հետազոտությունների գործող մեթոդիկաների համակարգումը, նորերի մշակումը, դրանց փորձարկումը և գործածության համար երաշխավորումը՝ դատական փորձագիտական հետազոտությունների մեթոդական միասնականությունն ապահովելու համար, փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստումը և կատարելագործումը, ինչպես նաև սահմանված կարգով նրանց որակավորման հավաստումը:

Այժմ Կենտրոնում կատարվում են դատական փորձաքննություններ 14 ուղղություններով¹:

2004թ. հուլիսի 22-ին ՀՀ Կառավարության N 1127-Ն որոշմամբ՝ 2001 թվականի հունիսի տասնմեկին ՀՀ Կառավարության և ԱՍՍ Կառավարության միջև ստորագրված «Թմրամիջոցների հսկողության և իրավապահ ոլորտներում համագործակցության մասին» միջկառավարական համաձայնագրի շրջանակներում հիմնադրվեց ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը²:

ՀՀ ԳԱՍ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ստեղծման հիմնական նպատակներն են հանդիսացնել:

- բրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող փորձաքննությունների իրակա-

¹ Տե՛ս <http://justexpert.am/ARM/Table.html>, 10.03.2010:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 24.07.2004թ. թիվ 1127-Ն որոշում, ՀՀՊՏ 2004/47 (346), 01.09.04թ.:

նացման ոլորտում ժամանակակից գիտափորձնական մեթոդների, գիտատեխնիկական միջոցների մշակումը, փորձարկումը և ներդրումը,

- *իրավասու մարմինների կողմից նշանակված փորձաքննությունների ապահովմանն ու բարելավմանը նպատակական, գիտատեխնիկական, գիտափորձնական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը,*
- *փորձաքննությունների համար եղակետային տվյալներ ձեռք բերելու պարտականությունները և փորձաքննությունները նշանակելու լիազորությունը ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցումն ու վերապատրաստումը,*
- *դատական փորձագիտական հետազոտությունների մեթոդական միասնականությունն ապահովելու նպատակով հետազոտությունների գործող մեթոդիկաների համակարգում, նորերի մշակում, դրանց փորձարկում և գործածության համար երաշխավորում,*
- *փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստում և կատարելագործում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց որակավորման հավաստում¹:*

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում կազմակերպվում են նաև դատական փորձագիտությանը և փորձաքննությունների զարգացմանը նվիրված միջազգային սեմինարներ²: «Փորձաքննությունների ազգային բյուրո»

¹ Տե՛ս <http://www.nbe.am/hy/history>, 19.09.2010:

² Սույն թվականի մարտի 22-ից մինչև ապրիլի 1-ը ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության և Փորձաքննությունների ազգային բյուրոյի կողմից կազմակերպվել էին միջազգային սեմինար-դասընթացներ՝ «Փորձաքննության օգտագործումը իրավապահ և դատական մարմինների կողմից» թեմայով, որին նաևնակցում էի նաև ես: Սեմինար-դասընթացներին մասնակցում էին ՀՀ Գլխավոր դատախազության դատախազներ, ՀՀ Ընդհանուր իրավասության դատարանների նախագահներ և դատավորներ, ՀՀ Զինվորական դատախազության դատախազներ, ՀՀ Դատավանական դեպարտամենտի ներկայացուցիչներ, փաստաբաններ:

ՊՈԱԿ-ի և Երևանի պետական համալսարանի միջև 2010թ. մարտի 4-ին կնքվել է պայմանագիր գիտական և ուսումնակրթական աշխատանքների շրջանակներում համագործակցության մասին: Մասնավորապես՝ պայմանագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն մի շարք մասնագիտությունների գծով գիտահետազոտական, գիտագործական և ուսումնակրթական բնագավառներում, օգտագործելով երկու կազմակերպությունների գիտառուսումնական և մասնագիտացված լաբորատորիաների բազաները, հաշվի առնելով, որ այդ մասնագիտությունների գծով Հայաստանում իրականացվում են համապատասխան դատական և ոչ դատական փորձաքննություններ:

Համանման պայմանագիր է կնքվել նաև Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի միջև:

2009թ. հոկտեմբերի 19-ին «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին սերտիֆիկացնող մարմնի՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից շնորհվել է համապատասխանության սերտիֆիկատ, որով հավաստվում է այն, որ կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ ներդրված համակարգերը համապատասխանում են ISO 9001:2008 «Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ» միջազգային ստանդարտի պահանջներին:

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի գործունեության առարկան է հանդիսանում փորձագիտության բնագավառում գիտահետազոտական, գիտառուսումնական, գիտամեթոդական, գիտափորձնական-վերլուծական աշխա-

տանքների կատարումը, որն իրականացվում է համաձայն կանոնադրությամբ ամրագրված հետևյալ հիմք հիմնական տեսակի գործառույթների համաձայն.

- **Գիտական աշխատանք՝ փորձաքննությունների իրականացման ողբարությունների մեջակումներ, փորձարկումներ և ներդրում,**
- **Իրավասու մարմինների կողմից նշանակված փորձաքննությունների կազմակերպում և իրականացում,**
- **լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում՝ փորձաքննությունների համար եղակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցում և վերապատրաստում,**
- **գիտական աշխատանք՝ դատական փորձագիտական ողբարությունների կանոնակարգմանը և զարգացմանը նախատակառողկած մեթոդաբանության մշակում,**
- **լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում՝ փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստում և կատարելագործում, ինչպես նաև ՀՀ օրենադրությամբ սահմանված կարգով նրանց որակավորման հավաստում:**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» N 1127-Ն, նշված որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու 2005 թվականի հունիսի 23-ի N 867-Ն և վերոնշյալ որոշման մեջ նոր լրացումներ կատարելու և քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոն ստեղծելու 2009 թվականի հունիսի 11-ի N 638-Ն որոշումների՝ կազմակերպության հիմնական գործառույթներն են՝

ա) քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող փորձաքննությունների իրականացման ոլորտում ժամանակակից գիտափորձնական մեթոդների, գիտատեխնիկական միջոցների մշակումը, փորձարկումը և ներդրումը,

բ) իրավասու մարմինների կողմից նշանակված փորձաքննությունների ապահովմանն ու բարելավմանը նպատակառության գիտահետազոտական, գիտատեխնիկական, գիտափորձնական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը,

գ) փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցումն ու վերապատրաստումը,

դ) դատական փորձագիտական հետազոտությունների մեթոդական միասնականությունն ապահովելու նպատակով հետազոտությունների գործող մեթոդիկաների համակարգում, նորերի մշակում, դրանց փորձարկում և գործածության համար երաշխավորում,

ե) փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստում և կատարելագործում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց որակավորման հավաստում:

զ) հանցավորություն ծնող պատճառների ու պայմանների ուսումնասիրում, հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնքներ միջոցառումների գիտական մշակում և իրավասու մարմինների համար վերջիններիս ներդրման հետ կապված համապատասխան առաջարկությունների նախապատրաստում,

է) իրավաստեղծ լիազորությունների ունեցող մարմինների ո-
րոշմամբ իրավական ակտերի նախագծերի քրեարանական փոր-
ձաքննությունների կազմակերպում և իրականացում,

ը) պետական կառավարման, տեղական ինքնակառավար-
ման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կող-
մից ներկայացվող փաստաբերի քրեարանական հետազո-
տությունների կատարում,

թ) զանգվածային լրատվամիջոցների կողմից նախապատ-
րաստվող (նախապատրաստված) հաղորդումների, իրավաբա-
նումների քրեարանական հետազոտությունների կատարում,

ժ) քրեարանական հետազոտությունների իրականացման
համար անհրաժեշտ վիճակագրական, տնտեսագիտական, հո-
գերանական, քաղաքագիտական, սոցլոգիական և հասարակա-
կան այլ գիտությունների բնագավառներում հարցումների, մշա-
կումների, վերլուծությունների կազմակերպում¹:

2009թ. հունվարից «Փորձաքննությունների ազգային բյու-
րո» ՊՈԱԿ-ում գործում են փորձագիտական տարրեր բաժին-
ներ, որոնք իրականացնում են դատական փորձաքննություն-
ներ արդեն իսկ 26 փորձագիտական ուղղություններով և փոր-
ձաքննությունների հետևյալ տեսակներով՝ ձեռագրաբանա-
կան, փաստաբերաբանական, հեղինակային, ֆոտոտեխնի-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1127-Ն որոշման մեջ փոփախություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 23.06.2005թ. թիվ 867-Ն որոշում, ՀՀՊՏ 2005/45 (417), 15.07.05թ., «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1127-Ն որոշման մեջ և լրացումներ կատարելու և քրեարանության կիրառման հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոն ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 11.06.2009թ. թիվ 638-Ն որոշում, ՀՀՊՏ 2009/32 (698), 24.06.09թ.:.

կական, դիմանկարային, տեսա- առողջոճայնագրառման, հետքաբանական, ձգաբանական, պայթյունատեխնիկական, նյութագիտական, սննդային, կենսաբանական /հողագիտական/, իրդեհատեխնիկական, շինարարա-տեխնիկական, ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի, տրանսպորտային հետքաբանական, տնտեսագիտական, ապրանքագիտական, համակարգչա-տեխնիկական, մշակութային արժեքների, հոգեբանական, դատաքննչական, դատաքննիչական (տոքսիկոլոգիական):

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում 2010թ. ընթացքում ներդրվել են նաև մի շարք նոր, հանրապետությունում մինչ այդ չկիրառվող, սակայն եվրոպական զարգացած երկրներում և ԱՄՆ-ում կիրառվող փորձաքննությունների տեսակներ՝ դեպքի վայրի փորձաքննություն, մարդու կողմից քողնված հոտային հետքերի նույնացման հետ կապված և այլն: Նախատեսվում է համակարգչա-տեխնիկական, ֆուտուրիստիկական, դիմանկարային, տեսա և առողջոճայնագրառման փորձաքննությունների տեսակների շրջանակներում ներդնել և հետազայում զարգացնել մի շարք նորագույն տիպի փորձաքննություններ (օրինակ ճանապարհա-տրանսպորտային պատահարների համակարգչային մոդելավորման մեթոդի օգտագործմամբ, տարբեր տեսակի հետքերի և փորձանմուշների համակարգչային նույնականացման և այլն), ինչպես նաև ԴՆԹ նույնականացման փորձաքննությունների բաժանմունքի ձևավորումը սկզբնական շրջանում բժշկա-կենսաբանական փորձաքննությունների բաժնի կազմում, իսկ հետագա տարիներին՝ առանձին, ինքնուրույն դատագենետիկա-

կան փորձաքննությունների բաժնում, օգտագործելով գենետիկական գիտության ողջ հզոր պոտենցիալը հանցագործությունների դեմ պայքարի շրջանակներում իրականացվող տվյալ կարևորագույն գործառույթի լիարժեք ապահովման նպատակով: Փորձագիտական ոլորտի կարիքներից ելնելով՝ 2010թ. ընթացքում առանձնակի կարևորություն կտրվի նաև հեղինակային փորձաքննությունների շրջանակներում մտավոր սեփականության իրավունքի հետ կապված փորձաքննությունների նոր ենթատեսակների ներդրմանը, այդ թվում ստեղծագործական (մտավոր) պրոդուկտի, գովազդի, ապրանքապիտակների հետ կապված և այլն¹:

Կարևոր է նշել նաև, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտագործնական աշխատանքների ուղղությամբ 2005-2008թթ. ընթացքում սերտ համագործակցություն է ծավալվել ԱՄՆ-ի այնպիսի հեղինակավոր փորձագիտական կառույցների հետ, ինչպիսիք են AAFS-ն (Դատական փորձագիտության ամերիկյան ակադեմիան), ASCLAD-ը (Քրեաֆորձագիտական լաբորատորիաների տնօրենների ամերիկյան ընկերակցությունը), ինչպես նաև Եվրոպական առաջատար կառույցի՝ ENFSI-ի (Դատական փորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի) հետ: Այդ համագործակցությունն ապահովել է զգալի չափով վերը նշված հայ-ամերիկյան միջկառավարական համաձայնագրի շրջանակներում ընձեռված հնարավորությունների և ցուցաբերած աջակցության շնորհիվ:

¹Տե՛ս <http://www.nbe.am/hy/history>, 21.09.2010:

Այդ կապակցությամբ հարկ է նաև նշել, որ կազմակերպության գիտական աշխատանքների պատշաճ կազմակերպման ապահովման և կանոնակարգման նպատակով կազմակերպությունում դեռևս 2006 թվականի հուլիսի 10-ից գործում է Գիտական խորհուրդ, որի կազմում ընդգրկված են բացի կազմակերպությունում աշխատող գիտական աստիճան ունեցող աշխատակիցներից նաև Հայաստանի Հանրապետության այլ առաջատար գիտական կառույցներում աշխատող ճանաչված գիտնականներ և փորձագետներ: Կարևոր է նշել, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում ներկայում գործում է Գիտական խորհուրդ՝ հաստատված ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության կողմից:

Այժմ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում գործում են դատական փորձաքննությունների մի շարք 16 բաժիններ¹:

- 1.Զգարանական
- 2.Տնտեսագիտական և հաշվասպահական
- 3.Հետրարանական
- 4.Շինարարատեխնիկական և ճարտարագիտատեխնիկական
- 5.Ֆուտուրեխնիկական, դիմանկարային, տեսս և առողին ձայնագրական
- 6.Ապրանքագիտական
- 7.Նյուրագիտական
- 8.Սննդային, հողագիտական և կենսաբանական
- 9.Ջեռագրաբանական, հեղինակային և փաստաթղթաբանական
- 10.Մշակութարանական

¹ Մանրամասն տե՛ս <http://www.nbe.am>

11. ԾՏՊ հանգամանքների, տրամսպորտային միջոցների
տեխնիկական վիճակի և տրամսպորտա-տեխնիկական
12. Համակարգչատեխնիկական՝ հետևյալ ենթատեսակներով
13. Պայթունատեխնիկական և հրդեհատեխնիկական
14. Հողերանական
15. Դատարձվական
16. Բժշկակենասրանական

2000 թվականին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կրիմինալիատիկայի կարիքնետի բազայի հիման վրա ստեղծվեց Կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների պրոբլեմների հետազոտման գիտագործնական կենտրոնը՝ ք, Երևան, Կիևյան 1^ա հասցեում:

«Սակայն նշենք, որ աշխատանքները դատական փորձաքննությունների պրոբլեմներով գրաղվող գիտահետազոտական լաբորատորիա ստեղծելու ուղղությամբ շդադարեցին, և միայն 21-րդ դարում ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկանալիավարության, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի, ինչպես նաև ԵՊՀ ռեկտորատի համատեղ ջանքերի շնորհիվ իրավաբանական ֆակուլտետի կրիմինալիստիկայի կարիքնետի բազայի հիման վրա ստեղծվեց Կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների պրոբլեմների հետազոտման գիտագործնական կենտրոնը»¹:

Ներկայումս ՀՀ Ոստիկանության համակարգում նույնպես գործում է քրեափորձագիտական վարչություն, որտեղ կատարվում են տարբեր փորձաքննություններ:

¹Տե՛ս Ենթերարյան Վ. Գ. «Փաստաբերերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման պրոբլեմները», Երևան, 2002, դիս. էջ 38-39:

Ներքին Գործերի Նախարարության համակարգում կրի-մինալիստիկական փորձաքննությունները կատարվում են փորձաքրեագիտական բաժնի փորձագետների կողմից: Փոր-ձաքրեագիտական բաժինը հիմնադրվել է դեռևս ՆԳ համա-կարգում գործող Գիտատեխնիկական բաժնի բազայի հիման վրա, որը հետագայում վերանվանվեց օպերատիվ-տեխնիկա-կան բաժին, ներկայում՝ փորձաքրեագիտական բաժին¹:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ Հայաստա-նում ներկայում հատուկ գիտելիքների կիրառումը դատա-կան փորձաքննությունների ժամանակ, գտնվում է բավարար, սակայն զարգացման փուլում: Այդ է վկայում ՀՀ փորձագի-տական կենտրոններում նոր բաժինների, բաժաննունքների և այլ ստորաբաժանումների կազմավորումը, օրինակ՝ շինարա-րա-տեխնիկական և ճարտարագիտա-տեխնիկական փոր-ձաքննությունների բաժինը, որը կապահովի նաև Էլեկտրոնա-յին, մեխանիկական և խառը սարք-սարքավորումների փոր-ձաքննությունների կատարումը, հոգեբանական ներազդեցութ-յունների և հոգեբանա-լինգվիստիկական փորձաքննություն-ների բաժինը, նախատեսվող ԴՆԹ նույնացման փորձաքն-նությունների բաժնի ձևավորումը, որն օգտագործելով գենե-տիկական գիտության ողջ հզոր պոտենցիալը՝ հանցագոր-ծությունների դեմ պայքարում նոր առաջընթաց կզրանցի Հայաստանի Հանրապետությունում:

Նույնիսկ արդեն ՀՀ Կառավարության 2010 թվականի փետրվարի 4-ի թիվ 84-Ն որոշմամբ փորձաքննությունների

¹Տե՛ս՝ **Հովհաննիսյան Բ. Մ.** Սովետական Հայաստանում դատական փորձաքննությունների զարգացման որոշ հարցեր, ՀՍՍՀ-ում դատական փորձաքննությունների արդյունավետության բարձրացման ուղիները և ժամանակակից հնարավորությունները, Երևան, 1984, էջ 80:

կատարման ծառայությունների միավորի նախահաշվային պետական պատվերով 2010 թվականին նախատեսվել է՝ Դատագենետիկական (ԴՆԹ-նույնացման) 18 և Լինզվիստիկական 17 փորձաքննությունների իրականացում¹:

Կապված աշխարհում գիտության և տեխնիկայի զարգացման հետ, այդ թվում տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց օգտագործմամբ կատարվող հանցագործությունների աճի հետ, Հայաստանում օրախնդիր է տեղեկատվական անվտանգության գծով լայն պրոֆիլի մասնագետ-փորձագետների պատրաստման հարցը: Տեղեկատվական-տեխնիկական անվտանգությանն ուղղված ոտնագությունների դեմ պայքարում էական դեր կարող է խաղալ այդ ոլորտում հատուկ գիտելիքների զարգացումը:

Հաշվի առնելով նշված հանգամանքը, մեր կարծիքով, արդի փուլում անհրաժեշտ է կիրեռհանցագործությունների քննության և բացահայտման ժամանակ մեծ տեղ հատկացնել այս ոլորտի հատուկ գիտելիքների կիրառման վրա: Դրանց դեմ պայքարի կատարելագործման կարևոր ուղղությունը պետք է լինի կրիմինալիստիկական փորձագիտական հնարավորությունների զարգացումը և համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին:

Մեր կարծիքով պետք է առանձնացնել ժամանակակից պայմաններում տեղեկատվական-տեխնիկական անվտանգության ապահովման ուղղությամբ հատուկ գիտելիքների կի-

¹ Տե՛ս «Փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով Հայաստանի Հանրապետության Դատախազության կողմից 2010 թվականին իրականացվող պետական պատվերի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 04.02.2010թ. թիվ 84-Ն որոշում, ՀՀՊՏ 2010/7 (741), 17.02.10թ.:

րառման հնարավորությունների օգտագործման ժամանակա-
կից կանխարգելիչ տեխնիկական միջոցների ու մեթոդների
մշակում ու կիրառում, և այս բնագավառում հատուկ փորձա-
գիտական գիտելիքների օգտագործում ու հետազա կատարե-
լագործում, որի լուծման կարևոր նախապայմաններից առաջ-
նայինը ժամանակակից եղանակներով փորձագիտական
կադրերի պատրաստման և վերապատրաստման միասնական
համակարգի ներդրումն է:

Վ. Ենգիբարյան, Լ. Դավթյան, Ա. Չախոյան

**ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
(ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆԴԻՔ-
ՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՇՆԱԿԱՐՆԵՐԸ)**

Գիտական խմբագիր՝
Տեխն. խմբագիր՝
Կազմի ձևավորող՝

**Վահե ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
Արարատ ԹՈՎՍԱՍՅԱՆ
Գագիկ ՍԱՐՈՅՅԱՆ**



«Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝(+374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am

